

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

A MODERN ENGLISH GRAMMAR



ՓՅՈՒՆԻԿ

ԵՐԵՎԱՆ «ՓՅՈՒՆԻԿ» 1995

H.A. TOKMAJIAN

A MODERN

ENGLISH GRAMMAR

PYUNIK PUBLISHING HOUSE

Հ.Ա. ԹՈՔՄԱՋՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՓՅՈՒՆԻԿ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ժամանակակից անգլերենի քերականության սույն ձեռնարկը նախատեսված է բուհերի ուսանողների, դիմորդների և ընդհանրապես անգլերեն լեզուն ուսումնասիրողների համար: Այն կարող է ծառայել որպես տեղեկագիրք անգլերենի մասնագետներին:

Սույն աշխատանքը անգլերենի քերականության համեմատաբար ծավալուն առաջին հայերեն շարադրանքն է:

Ձեռնարկը բովանդակում է անգլերենի ձևաբանության և շարահյուսության հիմնական երևույթները, որոնց զգալի մասը ներկայացված է հայերենի համադրությամբ: Քերականական կանոնները պարզաբանող լեզվական կաղապարները հեղինակավոր բառարաններից վերցված անգլերենի լավ մոլւշներ են: Օրինակների մեծ մասը թարգմանված է հայերեն, ինչը կօգնի ավելի լավ ըմբռնելու դիտարկվող նյութը:

Օրինակները վերցված են հիմնականում հետևյալ բառարաններից՝ Hornby A.S. Oxford Advanced Learner's Dictionary of Current English (1980), Longman Dictionary of Contemporary English (1978): Օրինակներ կան նաև Thomson A.G. and Martinet A.V. A Practical English Grammar (1980), Gordon E.M., Krylova I.P. A Grammar of Present Day English (1986), Gordon I. Practical Punctuation (1981) ձեռնարկներից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից	5
Անգլերենի քերականական կառուցվածքի բնորոշ գծերը	10
Ձևաբանություն	
Խոսքի մասերն անգլերենում .	11
Գոյական անուն	13
Թիվ	14
Հոլով	19
Գոյականի շարահյուսական կիրառությունները	22
Հոդ	23
Անորոշ հոդ	23
Որոշիչ հոդ	25
Հոդի բացակայությունը .	28
Հոդի տեղը	33
Ածական անուն	35
Գոյականացված ածականներ	39
Ածականի շարահյուսական կիրառությունները	40
Դերանուն	41
Անձնական դերանուններ	41
Ստացական դերանուններ	43
Ցուցական դերանուններ	45
Անդրադարձ դերանուններ .	46
Շեշտող դերանուններ . . .	48
Փոխադարձ դերանուններ	48
Հարցական դերանուններ	49
Կապակցող դերանուններ	51
Անորոշ դերանուններ	54
Որոշյալ դերանուններ	62
Ժխտական դերանուններ	67
Թվական անուն .	68
Բայ	72
Բայի հիմնական ձևերը	73
Ժամանակ և կերպ	74
The Indefinite Forms	76
The Present Indefinite	76
The Past Indefinite	82
The Future Indefinite	86
The Future Indefinite-in the-Past	88

The Continuous Forms	89
The Present Continuous	89
The Past Continuous	92
The Future Continuous	94
The Future Continuous-in-the-Past	96
The Perfect Forms	97
The Present Perfect	97
The Past Perfect	101
The Future Perfect	105
The Future Perfect-in-the-Past	106
The Perfect Continuous Forms	107
The Present Perfect Continuous	107
The Past Perfect Continuous	109
The Future Perfect Continuous	111
The Future Perfect Continuous-in-the-Past	112
Ժամանակների համաձայնեցում	113
Սեռ	116
Եղանակ .	120
Եղանակավորող բայեր .	131
Can	131
May	134
Must	138
To Have to	140
To Be to	141
Ought to	142
Shall	144
Should .	145
Will .	147
Would	149
Need	151
Dare	152
Used to	153
Բայի անդեմ ձևեր	154
Ինֆինիտիվ	155
Ինֆինիտիվի շարահյուսական կիրառությունները .	156
Գերունդ	163
Գերունդի շարահյուսական կիրառությունները	170
Բայական գոյական	173

Ածական դերբայ (I և II դերբայներ)	174
I դերբայի շարահյուսական կիրառությունները	177
II դերբայի շարահյուսական կիրառությունները	183
Սակբայ	186
Սակբայի շարահյուսությունը	190
Եղանակավորող բառեր	192
Նախդիր	194
Շաղկապ	206
Բառ - մասնիկ	210
Ձայնարկություն	211
Շարահյուսություն	
Նախադասություն	213
Պարզ նախադասություն	213
Նախադասության անդամներ	220
Նախադասության գլխավոր անդամներ	220
Ենթակա	220
Ստորոգյալ	223
Ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնությունը . .	226
Նախադասության երկրորդական անդամներ	228
Խնդիր	229
Պարագա	231
Որոշիչ	235
Բացահայտիչ	236
Նախադասության առանձնակի անդամներ	237
Նախադասության բազմակի անդամներ	238
Նախադասության անկախ տարրեր	239
Շարահյուսություն	240
Բարդ նախադասություն	243
Բարդ համադասական նախադասություն	243
Բարդ ստորադասական նախադասություն	244
Ենթակա երկրորդական նախադասություն	244
Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասություն . .	245
Խնդիր երկրորդական նախադասություն	245
Ժամանակի պարագա երկրորդական նախադասություն	246
Տեղի պարագա երկրորդական նախադասություն	246
Պատճառի պարագա երկրորդական նախադասություն	246
Նպատակի պարագա երկրորդական նախադասություն	247
Ձիջական երկրորդական նախադասություն	247
Հետևանքի երկրորդական նախադասություն	247
Ձևի պարագա երկրորդական նախադասություն	248
Համեմատության երկրորդական նախադասություն	248

Պայմանի պարագա երկրորդական նախադասություն	248
Որոշիչ երկրորդական նախադասություն	252
Բացահայտիչ երկրորդական նախադասություն	253
Ուղղակի և անուղղակի խոսք	254
Կետադրություն	260
Վերջակետ	260
Հարցական նշան	260
Բացականչական նշան	261
Ստորակետ	261
Կրկնակետ	265
Միջակետ	265
Անջատման գիծ	266
Փակագծեր	267
Չակերտներ	267
Ուրիշի ուղղակի խոսքի կետադրությունը	268
Մեջբերումների կետադրությունը	268
Տողադարձ	269
Հավելված 1 Անկանոն բայեր	270
Հավելված 2 Անգլերենի բայի կերպաձևաանակալին ձևերի աղյուսակ	276
Մատենագրություն	278

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ

Լեզուներն ըստ քերականական կառուցվածքի լինում են համադրական (սինթետիկ) և վերլուծական (անալիտիկ): Համադրական են կոչվում այն լեզուները, որոնցում բառերի քերականական իմաստներն արտահայտվում են քերականական վերջածանցների (վերջավորությունների) և ներքին թեքման (բառարմատի հնչյունափոխության) միջոցով: Վերլուծական լեզուներում բառերի քերականական իմաստներն արտահայտվում են օժանդակ բառերի և նախադասության մեջ բառերի դասավորության միջոցով:

Ժամանակակից անգլերենը հիմնականում վերլուծական լեզու է, ուստի նրանում բառերը նախադասության մեջ իրար հետ կապելու համար շատ կարևոր են նախդիրները և բառերի դասավորությունը: Անգլերենն ունի բավականին կայուն շարադասություն. օրինակ՝ *The man killed the bear* նախադասության ենթակայի և խնդրի տեղերը փոխելու դեպքում (*The bear killed the man*) կստացվի, որ ոչ թե մարդը սպանեց արջին, այլ արջը՝ մարդուն:

Լինելով հիմնականում վերլուծական լեզու, ժամանակակից անգլերենը պահպանել է հին անգլերենից եկող ոչ մեծ թվով քերականական վերջավորություններ և ներքին թեքման դեպքեր: Օրինակ՝ համադրական լեզվին բնորոշ վերջավորություններ են՝ բայի Present Indefinite ձևի եզակի երրորդ դեմքի -s վերջավորությունը (*speaks*), կանոնավոր բայերի Past Indefinite ձևի -ed վերջավորությունը (*worked*), գոյականների հոգնակի թվի -s վերջավորությունը (*books*) և այլն: Հիմնականում ներքին թեքման միջոցով են կազմվում անկանոն բայերի Past Indefinite ձևը (*speak - spoke, sing - sang*), ոչ մեծ թվով գոյականների հոգնակի թվի ձևը (*man men, tooth teeth, mouse - mice*) և այլն:

ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (MORPHOLOGY)

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ (PARTS OF SPEECH IN ENGLISH)

Լեզվի բառերը բաժանվում են բառաքերականական խըմբերի, որոնք կոչվում են խոսքի մասեր:

Անգլերենի խոսքի մասերն են՝

- | | |
|------------------|-----------------------|
| 1. գոյական անուն | 7. եղանակավորող բառեր |
| 2. ածական անուն | 8. նախդիր |
| 3. դերանուն | 9. շաղկապ |
| 4. թվական անուն | 10. բառ-մասնիկ |
| 5. բայ | 11. հոդ |
| 6. մակբայ | 12. ծայնարկություն |

Խոսքի մասերը տարբերվում են միմյանցից իմաստով, ձևով և շարահյուսական գործառնությով. այսպես՝ գոյականը, որպես խոսքի մաս, անվանում է առարկա, բայը ցույց է տալիս գործողություն կամ վիճակ, ածականը հատկանիշ և այլն: Գոյականն ունի թվի և հոլովի ձևեր, բայը՝ եղանակի, ժամանակի, կերպի, սեռի և այլ ձևեր, ածականը՝ համեմատության ձևեր և այլն: Նախադասության մեջ գոյականը հիմնականում լինում է ենթակա կամ խնդիր, բայը՝ ստորոգյալ, ածականը՝ որոշիչ կամ վերադիր և այլն:

Լեզվի բառերը, լինելով տարբեր խոսքի մասեր, բաժանվում են լիիմաստ և սպասարկու բառերի: Լիիմաստ են կոչվում նյութական իմաստ արտահայտող այն բառերը, որոնք ցույց են

տալիս առարկա, հատկանիշ, գործողություն և վիճակ: Սրանք հանդես են գալիս որպես նախադասության գլխավոր կամ երկրորդական անդամներ: Սպասարկու բառեր են այն բառերը, որոնք չունեն նյութական իմաստ և չեն կարող լինել նախադասության ինքնուրույն անդամներ: Նրանք կամ արտահայտում են բառերի հարաբերությունը նախադասության մեջ, կամ ծառայում են ճշգրտելու նախադասության որևէ բառի իմաստը: Անգլերենում լիիմաստ բառեր են՝ գոյականը, ածականը, դերանունը, թվականը, բայը, մակբայը: Սպասարկու բառեր են հոդը, նախդիրը և շաղկապը:

Բառերի բաժանումը լիիմաստ և սպասարկու բառերի ունի իր դժվարությունները: Դեռևս չկա որոշակի կարծիք անգլերենի մյուս խոսքի մասերը ներկայացնող բառերի լիիմաստ կամ սպասարկու լինելու մասին: Բացի դրանից, լիիմաստ բառեր հանդիսացող մի շարք բայեր կարող են հանդես գալ նաև որպես սպասարկու բառեր, երբ նրանք գործածվում են որպես օժանդակ բայեր: Սույն աշխատությունում եղանակավորը բառերը և բառ-մասնիկը դիտվում են որպես սպասարկու բառեր, մինչդեռ որոշ քերականական ձեռնարկներում նրանք ներկայացված են որպես լիիմաստ բառեր մակբայի կազմում:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ (THE NOUN)

1. Առարկա ցույց տվող բառերը կոչվում են գոյական անուն: Անգլերենում, ինչպես և հայերենում, գոյականները բաժանվում են հատուկ և հասարակ անունների: Հատուկ անուններ են անձնանունները, երկրների, քաղաքների, գյուղերի, ծովերի, գետերի անունները, ամիսների և շաբաթվա օրերի անունները, փողոցների, հրապարակների, հյուրանոցների, նավերի անունները և այլն: Հասարակ անուններ են այն անունները, որոնք տրվում են նույն տեսակի բոլոր առարկաներին որպես նրանց ընդհանուր անուն (boy, book, pen): Հասարակ անուններ են վերացական գոյականները (work, love) և նյութերի անունները (water, chalk):

Հասարակ անուններն իրենց հերթին բաժանվում են **հաշվելի** և **անհաշվելի** գոյականների: Հաշվելի գոյականներ են այն առարկաների անունները, որոնք կարելի է հաշվել (two books, five pencils): Անհաշվելի գոյականներ են նյութերի անունները և վերացական գոյականները:

Անգլերենի գոյականներն ըստ կազմության լինում են պարզ, ածանցավոր և բարդ: Պարզ գոյականները բաղկացած են միայն մեկ ձևույթից. օրինակ՝ boy, hat, bus և այլն: Ածանցավոր գոյականները բացի հիմնական ձևույթից ունեն մեկ կամ ավելի երկրորդական ձևույթներ՝ work-er, friend-ship, mis-print, en-clos-ure և այլն: Բարդ գոյականները բաղկացած են երկու կամ ավելի հիմքերից (հիմնական ձևույթներից). օրինակ՝ railway, penknife, apple-tree և այլն:

Ժամանակակից անգլերենում գոյականն ունի երկու քերականական կարգ՝ թիվ և հոլով: Սեռի կարգը ժամանակակից անգլերենում քերականական կարգ չէ: Այն ստանում է իր ձևական արտահայտությունը, երբ գոյականները փոխարինվում են դերանուններով, ինչը տեղի է ունենում ըստ առարկայական նշանակության՝ man, boy (**he** - արական), woman, girl (**she** - իգական), pen, flower (**it** - չեզոք):

ԹԻՎ (NUMBER)

2. Անգլերենում գոյականն ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի: Եզակին ցույց է տալիս մեկ առարկա, հոգնակին՝ ավելի քան մեկ առարկա:

3. Գոյականների մեծ մասի հոգնակին կազմվում է **-s** վերջավորությամբ, իսկ **s, ss, x, sh, o, z** տառերով և տառակապակցություններով վերջացող հիմքերի դեպքում՝ **-es** վերջավորությամբ: Եթե գոյականը վերջանում է **o** տառով, որին նախորդում է ձայնավոր, կամ եթե **o** տառով վերջացող գոյականը փոխառություն է այլ լեզվից (radio, piano, photo), միայն **-s** է ավելացվում:

- S վերջավորությունն արտասանվում է՝

[s] խուլ բաղաձայններից հետո՝ books, lamps, hats, students:

[z] ձայնեղ բաղաձայններից և ձայնավորներից հետո՝ beds, pens, boys, photos, pianos:

[ɪz] - սուլական կամ շչական բաղաձայններից հետո՝ horses, roses, villages:

Մի խումբ գոյականների եզակի թվի վերջին բաղաձայնի արտասանությունը փոխվում է հոգնակի թվի ձևում՝

[s - zɪz] - house - houses

[θ - ðz] - bath - baths, mouth - mouths, path - paths, youth - youths:

- Es վերջավորությունն արտասանվում է՝

[ɪz] - սուլական կամ շչական [s], [ʃ], [tʃ], [z] բաղաձայններից հետո՝ classes, boxes, bushes, benches, quizzes:

[z] - [ou] երկբարբառից հետո՝ heroes, Negroes:

- Es վերջավորությամբ է կազմվում գոյակների մեկ այլ խմբի հոգնակին, որոնց հիմքը վերջանում է **y, f** կամ **fe** տառերով: Այս դեպքում **-es** վերջավորությունն արտասանվում է [z]:

Եթե գոյականի հիմքը վերջանում է **y** տառով, որին նախորդում է բաղաձայն, ապա գրավոր խոսքում նախքան **-es** վերջավորությունն ավելացնելը, **y** տառը փոխարինվում է **i**-ով, օրինակ՝ *city - cities, country - countries, fly - flies*:

Մի շարք գոյականների դեպքում, որոնց հիմքը վերջանում է **f** կամ **fe** տառերով, նախքան **-es** ավելացնելը **f** տառը փոխարինվում է **v**-ով. օրինակ՝ *shelf shelves, wife wives, wolf wolves, knife knives*: Կան գոյականներ, որոնք չեն ենթարկվում այս փոփոխությանը և կազմում են հոգնակին **-s** վերջավորությամբ. օրինակ՝ *roof roofs, cliff cliffs, proof - proofs, belief - beliefs, chief - chiefs*: **Scarf, hoot, handkerchief** գոյականները հոգնակի թվում ունեն երկու վերջավորությունն էլ. *scarf - scarfs / scarves, hoof - hoofs / hooves, handkerchief - handkerchiefs / handkerchieves*:

4. Մի խումբ գոյականների հոգնակին կազմվում է բառարմատի ձայնավորի փոփոխությամբ. **man - men, woman - women, tooth - teeth, foot - feet, goose - geese, mouse - mice, louse - lice**:

Child գոյականի հոգնակին կազմվում է բառարմատի ձայնավորի փոփոխության և **-(r)en** վերջավորության միջոցով՝ *shild shildren*: **Ox** գոյականի հոգնակին կազմվում է **-en** վերջավորությամբ՝ *ox - oxen*:

5. Անգլերենում կան լատիներենից և հունարենից փոխառյալ գոյականներ, որոնք պահպանել են այդ լեզուներում ունեցած հոգնակին:

Լատինական փոխառություններ

եզակի	հոգնակի
datum	data
memorandum	memoranda
formula	formulae
nucleus	nuclei
radius	radii

և այլն:

Memorandum և **formula** բառերն ունեն հոգնակիի անգլիական ձևեր՝ **memorandums formulas**:

Հոնական փոխառություններ

եզակի	հոգնակի
analysis	analyses
basis	bases
crisis	crises
criterion	criteria
thesis	theses
phenomenon	phenomena

և այլն:

6. Մի քանի գոյականների հոգնակի թվի ձևը համանուն է եզակի թվի ձևին. **a sheep - sheep, a deer - deer, a fish - fish, a fruit - fruit, a swine - swine** և այլն: **Fish** և **fruit** գոյականներն ունեն նաև **fishes** և **fruits** հոգնակի ձևերը, որոնք գործածվում են, երբ խոսքը տարբեր տեսակի ձկների և մրգերի մասին է:

7. Մի խումբ գոյականներ, որոնց եզակին վերջանում է **s**-ով, ունեն համանուն հոգնակի. օրինակ՝ **a means - means, a series - series, a species - species, a barracks - barracks, a headquarters - headquarters** և այլն:

8. Բարդ գոյականների հոգնակին կազմելիս փոփոխության է ենթարկվում բառի՝ իմաստի տեսակետից կարևոր բաղադրիչը. օրինակ՝ **schoolboy - schoolboys, passer-by - passers-by, drawback - drawbacks, fisherman - fishermen, mother-in-law - mothers-in-law**: Երբ բարդ գոյականի առաջին բաղադրիչն է **man** կամ **women** բառը, բարդ բառի երկու բաղադրիչներն էլ դրվում են հոգնակի թվով. **man servant - men servants, woman doctor - women doctors**:

9. Անգլերենում զգալի թվով գոյականներ ունեն միայն եզակի թվի ձև: Դրանք անհաշվելի գոյականներն են՝ նյութերի անունները (**iron, sand, chalk, bread, cheese, wine, tea** և այլն) և

վերացական գոյականները (**anger, love, excitement, progress, advice, information** և այլն):

News գոյականը և մի շարք գիտությունների անուններ, որոնք վերջանում են **-ics** վերջածանցով (**physics, optics** և այլն), գործածվում են որպես եզակի. **What is the news this morning? Optics is a branch of physics.**

Նույն **-ics** վերջածանցն ունեցող որոշ գոյականներ (**mathematics, phonetics, politics**) կարող են դիտվել որպես եզակի կամ հոգնակի: **Mathematics is his weak subject. His mathematics are weak.**

Որոշ վերացական գոյականներ (**idea, change, suggestion** և այլն) ունեն թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվի ձևեր. օրինակ՝ **This book gives you a good idea of life in ancient Greece. That man is full of new ideas.**

10. Նյութերի անունները ոճական նկատառումներով կարող են գործածվել հոգնակի թվով՝ նշելու համար նյութերի շատ մեծ քանակ. օրինակ՝ **the waters of the Atlantic, the sands of the Sahara, the blue skies of Italy:**

11. Անգլերենում մի խումբ գոյականներ ունեն միայն հոգնակի թվի ձև: Այդ խմբին են պատկանում՝

1. Այն գոյականները, որոնք ցույց են տալիս երկու միանման մասերից բաղկացած առարկա (զործիք կամ հագուստ). օրինակ՝ **scissors, spectacles, glasses, tongs, scales, trousers, shorts** և այլն:

2. Որոշ խաղերի անուններ. օրինակ՝ **billiards, cards, dominoes, draughts** և այլն:

3. Այլ տարբեր գոյականներ. օրինակ՝ **riches, clothes, troops, goods, surroundings, savings, belongings, proceedings** և այլն:

12. Հավաքական գոյականներ, որոնք ցույց են տալիս մարդկանց, երբեմն նաև կենդանիների խումբ, գործածվում են երկու կերպ: Նրանք կամ ներկայացնում են խումբը որպես մի

ամբողջություն, կամ խումբը կազմող անհատները դիտվում են առանձին-առանձին:

People «մարդիկ», **puplic, police, clergy, flock, cattle** հավաքական գոյականներն, ունենալով միայն եզակի թվի ձև, առնում են հոգնակի բայ. **Same people are very inquisitive. The police have not made any arrests. Cattle were allowed to graze on the village common:** Այս օրինակներում բայի հոգնակի թվով դրվելը բացատրվում է նրանով, որ գոյականի արտահայտած խմբի անդամները դիտվում են առանձին-առանձին:

Family, crew, team, group, committee, delegation, government, army, people «ազգ, ժողովուրդ» հավաքական գոյականներն ունեն եզակի և հոգնակի ձևեր (**families, crews, teams, groups, peoples** և այլն): Այս գոյականների եզակի ձևը կարող է առնել եզակի կամ հոգնակի բայ: Բայ-ստորոգյալը դրվում է եզակի թվով, երբ գոյականի արտահայտած անհատների խումբը դիտվում է որպես մի ամբողջություն. օրինակ՝ **His family is well known in their town:** Բայ-ստորոգյալը դրվում է հոգնակի թվով, երբ խումբը կազմող անհատները դիտվում են առանձին-առանձին. **His family are early risers:**

13. Անգլերենում կան մի խումբ գոյականներ, որոնց հոգնակի թվի ձևն ունի երկու (կամ ավելի) բառային իմաստ. ա) բառի եզակի ձևի իմաստը, բ) առանձնակի իմաստ, որը տարբերվում է եզակի ձևի իմաստից: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ այդ գոյականների հոգնակի թվի ձևը կարող է արտահայտել հոգնակիության տարբեր երանգներ՝ սովորական (անջատ) հոգնակիություն և հավաքականություն: Սովորական հոգնակիության դեպքում բառն ունի նույն իմաստը եզակի և հոգնակի ձևերում, հավաքական հոգնակիության դեպքում հոգնակի թվի ձևը ձեռք է բերում նոր բառային իմաստ.

colour գույն

part մաս

room սենյակ

brother եղբայր

penny փեննի

(մետաղադրամ

= 1 / 100

ֆունթ - սթունդինգի)

colours գույներ

parts մասեր

rooms սենյակներ

brothers եղբայրներ

pennies մեկից ավելի

նման

մետաղադրամներ

colours դրոշակ

parts տեղանք, վայր

rooms բնակարան

brethren եղբայրակիցներ

pence նման

մետաղադրամների

արտահայտած

գումարային արժեքը

Ստանալով նոր իմաստ՝ հոգնակին ընկալվում է որպես նոր բառ:

ՀՈԼՈՎ (CASE)

14. Ժամանակակից անգլերենում գոյականն ունի միայն երկու հոլով՝ ընդհանուր (**the common case**) և ստացական (**the possessive**)¹: Ընդհանուր հոլովով դրված գոյականը չունի առանձին հոլովական վերջավորություն: Ստացական հոլովի վերջավորությունն է **-s**:

15. Անգլերենի ընդհանուր հոլովն ունի շատ անորոշ իմաստ: Նախդիրների և նախադասության մեջ բառերի շարադասության միջոցով՝ ընդհանուր հոլովով դրված գոյականը կարող է արտահայտել այն իմաստները, որոնք արտահայտվում են հայերենի տարբեր հոլովներով.

The lecturer greeted the students.

Դասախոսը ողջունեց ուսանողներին:

The students greeted **the lecturer**.

Ուսանողները ողջունեցին դասախոսին:

This is the book **of the lecturer**.

Սա դասախոսի գիրքն է:

The students showed **the lecturer** the home task.

Ուսանողները ցույց տվեցին դասախոսին տնային հանձնարարությունը:

The students are proud **of the lecturer**.

Ուսանողները հպարտանում են դասախոսով:

The students and the lecturer meet **at the University**.

Ուսանողները և դասախոսը հանդիպում են համալսարանում:

16. Անգլերենի ստացական հոլովը ցույց է տալիս պատկանելություն բառիս լայն իմաստով. *the man's hat* «մարդու գլխարկը» *the girl's eyes* «աղջկա աչքերը», *the doctor's arrival* «բժշկի ժամանումը»:

¹ Զերականության որոշ ձեռնարկներում այս հոլովն անվանվում է **the genitive case** (սեռական հոլով):

Ծանոթություն. Պատկանելություն կարող է արտահայտել նաև գոյականի ընդհանուր հոլով կապակցությունը.

the man's hat	= the hat of the man
the girl's eyes	= the eyes of the girl
the doctor's arrival	= the arrival of the doctor

1. Գոյականների եզակի ստացականը կազմվում է բառահիմքին **-s** ավելացնելով, որն արտասանվում է՝

[s] - խուլ բաղաձայններից հետո՝ the student's answer.

[z] - ձայնեղ բաղաձայններից և ձայնավորներից հետո՝ the man's hat, the teacher's bag.

[ɪz] - սուլական կամ չչական բաղաձայններից հետո՝ the actress's voice, St. James's Park:

2. Հոգնակի ստացականը կազմելիս ավելացվում է միայն ապաթարց. the students' answers, the boys' ties.

3. **Men, women, children** հոգնակի ձևերի ստացական հոլովը կազմելու համար ավելացվում է **-s** ճիշտ այնպես, ինչպես եզակի ձևի դեպքում. the men's hats, the women's bags, the children's voices:

4. **S** և **x** տառերով վերջացող հատուկ անունների ստացական հոլովը կազմելիս սովորաբար ավելացվում է միայն ապաթարց. կարելի է ավելացնել նաև **-s**: Երկու դեպքում էլ հոլովական վերջավորությունն արտասանվում է [ɪz]. Soames' collection, Burns's poems:

5. Բարդ գոյականների դեպքում հոլովական վերջավորությունն ավելացվում է երկրորդ բաղադրիչին՝ my father-in-law's house, the passer-by's remark, the postman's arrival:

6. Երբ միևնույն առարկան պատկանում է երկու կամ ավելի անձանց, ստացական հոլովի վերջավորությունն ավելացվում է վերջին գոյականին՝ Mary and John's father, Smith and Brown's office:

17. Հիմնականում ստացական հոլով ունեն շնչավոր գոյականները: Ստացական հոլով կարող են ունենալ մայրցամաքների, երկրների, քաղաքների անունները՝ *Europe's security*, *Great Britain's foreign policy*, *London's parks*, ինչպես նաև **world**, **country**, **city**, **ship** գոյականները՝ *the city's new houses*, *the ship's crew* և մի շարք այլ գոյականներ՝ *the sun's rays*, *the play's title*:

Ստացական հոլով կարող են ունենալ նաև ժամանակ և տարածություն ցույց տվող գոյականները՝ *a month's absence*, *a mile's distance* և այլն:

18. Անգլերենն ունի զգալի թվով դարձվածաբանական միավորներ, որոնցում գոյականները դրված են ստացական հոլովով առանց տարբերակման. օրինակ՝ *at one's wit's end* «հուսահատությունից գլուխը (խելքը) կորցրած», *out of harm's way* «չարից հեռու», *to one's heart's content* «սիրտն ուզածի չափ» և այլն:

19. Ստացական հոլովի վերջավորությունը կարող է ավելացվել բառերի մի ամբողջ խմբի, երբ նրանք կազմում են իմաստային կուռ միավոր. օրինակ՝ **the teacher of music's room** «երաժշտության ուսուցչի սենյակը», **an hour and a half's discussion** «մեկ և կես ժամյա քննարկում», **a week or so's sunshine** «մոտավորապես մեկ շաբաթ տևող արևոտ եղանակ» և այլն:

20. Երբեմն **-s** ունեցող գոյականից առաջ գործածվում է **of** նախդիրը. ինչպես՝ **an opera of Verdi's** (= one of Verdi's operas), **a friend of the doctor's** (= one of the doctor's friends):

21. Ստացական հոլովով դրված գոյականը կարող է գործածվել ինքնուրույն՝ առանց հետադաս գոյականի: Այդ դեպքում այն ցույց է տալիս հաստատություն, շենք, տուն, խանութ. օրինակ՝ *She liked living at her daughter's* Նրան դուր է գալիս իր դստեր մոտ (տանը) ապրելը: *I was in the grocer's and heard some women say it* Ես նպարավաճառի խանութում էի և լսեցի այդ մասին կանանցից:

Գոյականի շարահյուսական կիրառությունները

22. Անգլերենում գոյականը նախադասության մեջ լինում է՝

1. Ենթակա.

Man is mortal.

David looked surprised.

2. Ստորոգելիական վերադիր.

That man is **an authority** on Shakespeare.

3. Խնդիր (ուղիղ, անուղղակի, նախդրավոր).

Sam frequently borrows **money**.

The general handed **the man** his medal.

She was afraid **of dogs**.

4. Պարագա (տեղի, ժամանակի, ձևի և այլն).

Her daughter is a great help to her **in the house**.

He was to arrive **in the afternoon**.

I listened **with concentrated attention**.

5. Որոշիչ (համապատասխանում է հայերենի հատկացչին).

He was a man **of good character**.

The stranger's appearance frightened everyone.

6. Բացահայտիչ.

I asked Miss Grey, **a neighbour and an old friend of mine**, to dinner.

ՀՈՂ (THE ARTICLE)

1. Հոդը սպասարկու բառ է ¹, որը գործածվում է գոյականի իմաստը ճշգրտելու համար: Անգլերենն ունի երկու հոդ՝ անորոշ և որոշիչ:

ԱՆՈՐՈՇ ՀՈՂ (THE INDEFINITE ARTICLE)

2. **A** [eɪ] անորոշ հոդն ունի երկու տարբերակ՝ **a** և **an**: Եթե հոդին հաջորդող բառը սկսվում է բաղաձայնով, գործածվում է **a** տարբերակը՝ *a book* [əˈbʊk]: Չայնավորից առաջ գործածվում է **an** տարբերակը՝ *an old dress* [ənˈəʊld dres]:

Անգլերենի անորոշ հոդը սերվել է **one** «մեկ» թվականից, ուստի և այն գործածվում է եզակի թվով դրված հաշվելի գոյականների հետ: Որպես կանոն, անորոշ հոդը հայերեն չի թարգմանվում: Հայերենում նրան համապատասխանում է «մի» անորոշ հոդը:

3. Անորոշ հոդի հիմնական իմաստն է առարկայի՝ նման առարկաների որևէ պատկանելը. *This is a pen* Սա գրիչ է (և ոչ տետր կամ որևէ այլ առարկա) *Give me a pencil* Տվեք ինձ մատիտ (և ոչ գրիչ):

4. Վերոհիշյալ ընդհանուր իմաստից բացի անորոշ հոդն ունի նաև այլ իմաստներ:

¹ Անգլերենի հոդը, ինչպես հայերենի «մի» անորոշ հոդը, բառ է, որը դրվում է գոյականից առաջ:

1. Գործածվելով վերացական գոյականների հետ, անորոշ հոդն արտահայտվում է՝

ա) գոյականի բառիմաստի փոփոխությունը.

science գիտություն

a science գիտության ճյուղ

work աշխատանք

a work աշխատություն, գործ

decision վճռականություն

a decision որոշում

silence լռություն

a silence ընդմիջում, դադար

grammar քերականություն

a grammar քերականության
ծեռնարկ

She spoke with decision.

You must carefully think before you take a decision.

They walked in silence along the path.

After a long silence he began his story.

բ) գոյականի բառիմաստի կոնկրետացում.

He had a patience which amazed his friends.

Նա ուներ մի համբերություն, որը զարմացնում էր նրա ընկեր-
ներին:

There was a bitterness in her voice.

Նրա ձայնում ինչ-որ դառնություն կար:

Ծանոթություն. Անհրաժեշտ է հիշել, որ **news, information, permission, advice, work** «աշխատանք», **weather, nature** վերացական գոյականները անորոշ հոդ չեն առնում:

What good news!

He gave me a piece of advice.

It was terribly hard work getting to the top of the mountain.

That's a useful bit of information.

He stays indoors in wet weather.

2. Գործածվելով նյութ ցույց տվող անհաշվելի գոյական-
ների հետ՝ անորոշ հոդը դարձնում է վերջիններս հաշվելի
գոյականներ՝ բառիմաստի փոփոխության միջոցով.

cheese պանիր

a cheese մի գլուխ պանիր

iron երկաթ

an iron արդուկ

ice սառույց

an ice պաղպաղակ

3. Անորոշ հոդը կարող է ցույց տալ նաև տվյալ նյութի տեսակ.

a very good cheese

շատ լավ պանիր

a very rare wine

շատ հազվադեպ գինի

5. Որոշ դեպքերում անորոշ հոդը պահպանել է թվականին հատուկ «մեկ» իմաստը.

Wait a minute. Սպասեցե՛ք մեկ րոպե: Մի րոպե:

He did not say a word. Նա ոչ մի բառ չասաց:

Անորոշ հոդն ունի «մեկ» իմաստը՝ **hundred, thousand, million** բառերից առաջ.

105 - a hundred and five

1237 - a thousand two hundred and thirty-seven

1600000 - a million six hundred thousand

ՈՐՈՇԻՉ ՀՈԴ (THE DEFINITE ARTICLE)

6. **The** [ðɪ:] որոշիչ հոդն արտասանվում է [ðə] բաղաձայնով սկսվող գոյականներից առաջ՝ the book [ðə 'buk] և [ðɪ] ձայնավորներով սկսվող գոյականներից առաջ՝ the apple [ðɪ 'æpl]: Որոշիչ հոդը սերվել է **that** ցուցական դերանունից. գործածվում է ինչպես անհաշվելի, նույնպես և հաշվելի (եզակի և հոգնակի) գոյականների հետ՝ առանձնացնելով մեկ կամ մի քանի առարկա մեծ և փոքր առարկաների խմբից:

Առարկան կարող է առանձնացվել մեծ և փոքր առարկաների խմբից՝

1. Որպես խոսողին և լսողին հայտնի առարկա.

Please close **the window** (Այն պատուհանը, որ բաց է:)

Shall we have a walk by **the river**? (խոսողին և լսողին հայտնի է գետը:)

2. Որպես խոսողի կողմից առանձնացվող առարկա (նախադասության մեջ կա առանձնացնող որոշիչ)։

This is **the house that Jack built**.

Սա այն տունն է, որ կառուցել է Ջեքը։

She read **the letter received in the morning**.

Նա կարդած առավոտյան ստացված նամակը։

3. Որպես կոնտեքստում արդեն նշված առարկա.

An old man and an old women once lived in a small hut by a river near a forest. One day **the old man** left **the hut** and went into **the forest** to gather wood. **The old women** went to the river to wash clothes.

7. Որոշիչ հոդը գործածվում է անհաշվելի գոյականների հետ, երբ նրանց իմաստը կոնկրետացվում է.

The milk in the glass is warm.

Բաժակի կաթը տաք է։

He was **the hope of the school**.

Նա դպրոցի հույսն էր։

8. Որոշիչ հոդը գործածվում է իր տեսակի մեջ եզակի առարկա ցույց տվող գոյականների հետ. ինչպես՝ **the sun, the moon, the earth, the world, the universe**։

9. Որոշիչ հոդ է գործածվում եզակի հաշվելի գոյականների հետ, երբ գոյականի ցույց տված առարկան ներկայացնում է առարկաների ամբողջ խումբը.

The owl cannot see well in the daylight.

Բուռն (բուրբ բուրբը) լավ չի տեսնում ցերեկը։

The telephone is a useful invention.

Հեռախոսը (բուրբ հեռախոսները) օգտակար գյուտ է։

Այլ դեպքերում, երբ խոսքը խումբը ներկայացնող որևէ անհատի մասին է, բայց ոչ ամբողջ խմբի, գործածվում է անորոշ հոդ.

A flower is always a beautiful decoration.

Ծաղիկը (ամեն մի ծաղիկ) միշտ գեղեցիկ զարդարանք է:

10. Որոշիչ հոդ են առնում գոյականացված ածականները, երբ նրանք ցույց են տալիս մարդկանց խումբ և ոչ առանձին անհատներ. ինչպես՝ **the rich** «հարուստները», **the poor** «աղքատները», **the young** «երիտասարդները», **the old** «ծերերը» և այլն:

11. Որոշիչ հոդ են առնում ազգություն ցույց տվող գոյականացված ածականները, երբ ընդգծված է հավաքականության գաղափարը, ինչպես՝ **the Russians** «ռուսները», **the British** «բրիտանացիները», **the Italians** «իտալացիները», **the French** «ֆրանսիացիները», **the Americans** «ամերիկացիները» և այլն: Բայց՝ **Italians are often good singers** իտալացիները (ոչ բոլորը) հաճախ լավ երգիչներ են:

12. Որոշիչ հոդը գործածվում է՝

ա) գետերի, ծովերի և օվկիանոսների անունների հետ՝ **the Nile, the Thames, the Black Sea, the Pacific (ocean), the Atlantic (ocean)** և այլն:

բ) լճերի անունների հետ, երբ անունից առաջ չի գործածվում **lake** «լիճ» բառը՝ **the Ontario, the Sevan**, բայց՝ **Lake Ontario, Lake Sevan** և այլն:

գ) լեռնաշղթաների անունների հետ՝ **the Alps, the Urals, the Pamirs**: Լեռնագագաթների անունները հոդ չունեն՝ **Elbrus, Everest, Ararat** և այլն:

դ) անապատների անունների հետ՝ **the Sahara, the Gobi, the Karakum** և այլն:

ե) ջրանցքների, նեղուցների անունների հետ՝ **the Suez, the Dardanelles** և այլն:

13. Որոշիչ հոդը գործածվում է աշխարհի չորս կողմերի անունների հետ՝ **the North, the South, the East, the West**: Հոդ չի գործածվում **from East to West, from North to South** արտահայտություններում:

14. Սովորաբար որոշիչ հոդ է գործածվում թատրոնների, թանգարանների, պատկերասրահների, համերգային դահլիճների, կինոթատրոնների, ակումբների, հյուրանոցների անունների հետ՝ the Coliseum, the British Museum, the National Gallery, the Festival Hall, the National Liberal Club, the Continental Hotel և այլն:

15. Որոշիչ հոդ է գործածվում նավերի անունների հետ՝ the Titanic, the Sedov և այլն:

16. Սովորաբար որոշիչ հոդ է գործածվում լրագրերի և ամսագրերի անունների հետ՝ The Times, the Guardian, The Lancet և այլն:

Հոդի բացակայությունը (զրո հոդ) ¹

17. Հոդ չունեն հոգնակի հաշվելի գոյականները, երբ համապատասխան եզակի ձևը կունենար անորոշ հոդ.

Horses are animals. A horse is an animal.

These are **boxes**. This is **a box**.

18. Հոդ չի գործածվում նյութ և վերացական հասկացություն ցույց տվող անհաշվելի գոյականների հետ, երբ նրանք արտահայտում են ընդհանուր հասկացություն.

Water is changed into **steam** by **heat**.

While there is **life**, there is **hope**.

19. Հոդ չունեն հատուկ անունները, քանի որ հատուկ անունը բավականին կոնկրետացված է և կարիք չունի լրացուցիչ ճշգրտման. ինչպես՝ England, London, Ann, John և այլն:

¹ Հոդի այս բացակայությունը չպետք է շփոթել հոդի բացակայության հետ՝ լրագրային վերնագրերում, հեռագրերում և այլն, որտեղ հոդը սղվում է ըստ ոճի:

Ծանոթություն. Որոշիչ հոդը գործածվում է ազգանվան հետ, երբ այն դրված է հոգնակի թվով և ցույց է տալիս ամբողջ ընտանիք the Jasksons, the Browns: Անորոշ հոդը գործածվում է եզակի ազգանվան հետ՝ ներկայացնելու ընտանիքի անդամներից մեկին. He is a **Brown** (Բրաունների ընտանիքից է):

20. Հոդ չունեն **Mother, Father, Aunt, Uncle, Grandmother, Grandfather, Baby, Nurse, Cook** գոյականները, երբ նրանք գործածվում են տվյալ ընտանիքի անդամների կողմից որպես հատուկ անուն: Այդ դեպքում այս գոյականները սովորաբար գրվում են մեծատառով: **Mother is still resting. is Father back?**

21. Հոդ չունեն այն գոյականները, որոնք գործածվում են որպես կոչական բառեր **How is my wife, doctor? What is your name, young man?**

22. Հոդ չունեն տիտղոս, զինվորական աստիճան կամ հասարակական դիրք ցույց տվող գոյականները, երբ նրանց հաջորդում է անձնանուն. ինչպես՝ **Captain Brown, Doctor Smith, Professor Manson, President Vilson, Queen Elizabeth, Lord Byron, Sir William** և այլն:

23. Հոդ չեն առնում ազգակցություն ցույց տվող գոյականները, երբ նրանց հաջորդում է անձնանուն. ինչպես՝ **Aunt Polly, Unsle Tom, Cousin Jack** և այլն: Միևնույն կապակցությունում այլ գոյականների դեպքում գործածվում է որոշիչ հոդ. **the boy Dick, the painter Turner, the composer Britten** և այլն:

Ծանոթություն. Լրագրային ոճում միտում կա այս վերջին դեպքում հոդ չգործածել. օրինակ՝ **world champion Dick Tider, shop steward Bill Francis:**

24. Որպես կանոն հոդ չունեն երկրների, երկրամասերի, քաղաքների, գյուղերի անունները. ինչպես՝ **France, Great Britain, California, London, Brighton** և այլն: Սակայն որոշ երկրների և երկրամասերի անուններ ավանդաբար ունեն որոշիչ հոդ. օրինակ՝ **the United States, the Crimea, the Caucasus** և այլն:

25. Հոդ չունեն կղզիների անունները. օրինակ՝ **Cuba, Sicily, Cyprus** և այլն: Կղզիների խմբերի անունները առնում են որոշիչ հոդ. ինչպես՝ **the Bermudas:**

Համապատասխան որոշիչ ունենալու դեպքում, կամ էլ համապատասխան կոնտեքստում, այս գոյականներն առնում են անորոշ կամ որոշիչ հոդ.

You can get a **good supper** here.

Walter wanted a **very special dinner**.

He was eating the lunch his mother had given him.

The dinner was well cooked.

35. Day, night, morning, evening, noon, afternoon գոյականները գործածվում են առանց հոդի, երբ նրանք նշանակում են օրվա որոշակի մաս և նախադասության մեջ կիրառվում են որպես վերադիր.

When he awoke it was **morning**.

It was **evening** when he decided to lay his books aside and take a walk.

Հոդ չի գործածվում, երբ **morning** և **evening** գոյականներին նախորդում է **early** կամ **late** ածականը:

It was **early morning**.

It was **late evening**.

Ծանոթություն. Նկարագրական որոշիչ ունենալու դեպքում այս գոյականներն առնում են անորոշ հոդ. It was a **warm night** and I decided to walk home.

36. Հոդը չի գործածվում, երբ **day** գոյականը նշանակում է «լույս», իսկ **night** գոյականը՝ «մութ, մթություն»:

Day was breaking when we set out.

Լույսը բացվում էր, երբ մենք ծանապարի ընկանք:

37. Հոդ չունեն օրվա մասերի անունները, երբ նրանց կից որպես որոշիչ գործածվում են շաբաթվա օրերի անունները և **tomorrow, yesterday** բառերը.

I shall see him **tomorrow evening**.

She was here **yesterday afternoon**.

He spoke to Lin on the telephone **on Thursday morning**.

38. Հոդ չի գործածվում մի շարք նախդրավոր կապակցություններում. ինչպես՝ **at night, at dawn, by day, before dawn, after sunset, all day (long), all night (through), day after day, night after night, from morning till night, late at night** և այլն: Բայց՝ **in the morning, in the evening, in the daytime, in the afternoon, in the night:**

39. Ընդհանրապես հոդ չի գործածվում օրերի, ամիսների, տարվա եղանակների անունների հետ՝ **on Monday, in October, in winter** և այլն: Սակայն համապատասխան որոշիչ ունենալու դեպքում կամ համապատասխան կոնտեքստում այս գոյականներն առնում են անորոշ կամ որոշիչ հոդ.

We had a short summer.

The summer of 1965 was very warm.

He returned after the Monday of the snowfall.

(The) winter is very long here.

Վերջին օրինակում հոդ չի գործածվում, երբ խոսքն ընդհանրապես ձմեռվա մասին է. որոշիչ հոդի դեպքում խոսքն այդ վայրում ձմեռվա մասին է:

40. Հոդ չի գործածվում, երբ գոյականին հաջորդում է քանակական թվական. ինչպես՝ **The two men walked in silence until they reached the door of Number 12.**

Հոդի տեղը

41. Հոդը միշտ դրվում է այն գոյականից առաջ, որին վերաբերում է: Եթե գոյականն ունի նախադաս որոշիչ կամ որոշիչներ, հոդը սովորաբար դրվում է նրանցից առաջ.

She had then on a dark-blue silk dress.

42. Կամ դեպքեր, երբ հոդը դրվում է որոշչից հետո.

1. Որոշիչ հոդը դրվում է **both** և **all** դերանուններից հետո:
Պետք է հիշել, որ որոշիչ հոդի գործածությունը **both**
դերանունից հետո պարտադիր չէ.

Both (the) boys were late for the lesson.

You've had **all the fun** and I've had **all the hard work**.

2. Անորոշ հոդը հաջորդում է **such** և բացականչական
what բառերին: Երբ գոյականն ունի ածական որոշիչ,
հոդը դրվում է ածականից առաջ.

I've never heard of **such a thing**!

We haven't had **such a good time** for years.

What a pity!

What a good idea!

43. Եթե գոյականին նախորդող ածականից առաջ որպես
չափի պարագա գործածվում է **quite** «միանգամայն» կամ **rather**
«բավականին» մակբայը, անորոշ հոդը դրվում է մակբայի
ածականի միջև, և կամ ամբողջ բառակապակցությունից առաջ.

He is **quite a good player**.

It is **rather a surprising result**.

ինչպես նաև՝

Its **a quite fundamental disagreement**.

It is **a rather surprising result**.

44. Հոդը դրվում է **half** բառից հետո.

It takes me **half an hour** to walk to work.

Half the boys are here.

Half the car was damaged.

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ (THE ADJECTIVE)

1. Ածական են կոչվում առարկայի որպիսություն կամ վերաբերություն ցույց տվող բառերը: Ինչպես հայերենում, այնպես էլ անգլերենում ածականները լինում են որակական (long, beautiful, interesting) և հարաբերական (wooden, woolen, monthly):

Անգլերենի ածականներն ըստ կազմության լինում են պարզ (big, long, soft), ածանցավոր (useful, unkind, foolish) և բարդ (snowwhite, dark-blue, life-giving):

2. Որակական ածականները փոփոխվում են ըստ համեմատության աստիճանների, որոնք երկուսն են՝ բաղդատական և գերադրական: Ածականի այն ձևը, որը համեմատություն չի արտահայտում, այլ միայն այս կամ այն հատկանիշ, կոչվում է դրական աստիճան (good, bright, important):

3. Անգլերենում ածականների բաղդատական և գերադրական աստիճանները կազմվում են երկու կերպ՝

1. Միավանկ ածականների և **-y**, **-ow**, **-er**, **-le** վերջածանց ունեցող երկվանկ ածականների բաղդատական աստիճանը կազմվում է բառի հիմքին **-er** [ə], իսկ գերադրական աստիճանը՝ **-est** [ɪst] վերջավորությունն ավելացնելով.

long - longer - longest

deep - deeper - deepest

happy - happier - happiest

narrow - narrower - narrowest

clever - cleverer - cleverest

simple - simpler - simplest

Նույն եղանակով են կազմվում այն երկվանկ ածականների համեմատության աստիճանները, որոնց երկրորդ վանկի վրա է ընկնում բառի շեշտը.

polite - politer - politest

complete - completer - completest

Անհրաժեշտ է պահպանել ուղղագրության հետևյալ կանոնները.

ա) Եթե ածականը վերջանում է **y** տառով, որին նախորդում է բաղաձայն, **y** տառը փոխարինվում է **i**-ով՝ նախքան համեմատության վերջավորությունն ավելացնելը.

easy - easier - easiest

early - earlier - earliest

Եթե **y** տառին նախորդում է ձայնավոր, **y**-ը մնում է անփոփոխ.

gay - gayer - gayest

բ) Բառավերջի **e**-ն սղվում է **-er** և **-est** վերջավորություններից առաջ.

brave - braver - bravest

wise - wiser - wisest

գ) Մեկ բաղաձայնով վերջացող միավանկ ածականների դեպքում, եթե բառավերջի բաղաձայնին նախորդում է կարճ ձայնավոր, վերջին բաղաձայնը կրկնապատկվում է **-er** և **-est** վերջավորություններից առաջ՝ փակ վանկը պահպանելու համար.

hot - hotter - hottest

big - bigger - biggest

Այս փոփոխությունը տեղի չի ունենում, երբ միավանկ ածականը վերջանում է տառակապակցությամբ.

thick - thicker - thickest

fresh - fresher - freshest

2. Բազմավանկ ածականների և երկվանկ ածականների մեծ մասի բաղդատական և գերադրական աստիճանները կազմվում են **more** «ավելի» և **most** «ամենա-» բառերի օգնությամբ.

careful - more careful - most careful

romantic - more romantic - most romantic

4. Որոշ ածականներ ունեն համեմատության անկանոն ձևեր.

good - better - best

bad - worse - worst

far - farther - farthest (տարածության վերաբերյալ)

further - furthest (ժամանակի և տարածության վերաբերյալ)

near - nearer - nearest (տարածության վերաբերյալ)

next (հաջորդականություն)

late - later - latest (ժամանակի վերաբերյալ)

latter - last (հաջորդականություն)

old - older - oldest (տարիքի վերաբերյալ)

elder - eldest (ընտանիքի անդամների տարիքային վերաբերյալ)

5. Գերադրական աստիճանով դրված ածական որոշի առկայության դեպքում գոյականն առնում է որոշիչ հոդ.

This is **the most interesting book** I have read.

That is **the best way** to get there.

Որոշիչ հոդը պահպանվում է գերադրական աստիճանով դրված ածականից առաջ նույնիսկ այն դեպքում, երբ գոյականը չի նշված և միայն հասկացվում է.

John is **the tallest** of the five men.

Ծանոթություն. **Most** բառին կարող է նախորդել **a** անորոշ հոդը՝ **a most difficult task** «շատ դժվար առաջադրանք»: **Most difficult** կապակցությունը ցույց է տալիս ոչ թե առարկայի հատկանիշի գերագույն աստիճան համեմատած այլ առարկաների հետ, այլ ուղղակի հատկանիշի շատ բարձր աստիճան՝ առանց համեմատության:

6. Համեմատության համար գործածվում են հետևյալ շաղկապները.

ա) հավասարություն՝ as ... as «այնքան ... որքան».

My room is as large as your room (is).

Իմ սենյակը ձեր սենյակի չափ է (այնքան մեծ է, որքան ձեր սենյակը):

John is as clever as his brother (is).

Ջոնը նույնքան խելացի է, որքան եղբայրը:

բ) անհավասարություն՝ not so ... as, not as ... as, less ... than «ոչ այնքան ... որքան».

My room is not so (as) large as your room (is).

Իմ սենյակն այնքան մեծ չէ, որքան ձեր սենյակը:

John is not so (as) clever as his brother (is).

John is **less clever than** his brother (is).

Ջոնն այնքան խելացի չէ, որքան եղբայրը:

գ) գերազանցություն՝ than «քան».

Ann is taller than her sister (is).

Էննը քրոջից ավելի բարձրահասակ է:

She looks younger than her years.

Նա իր տարիքի համեմատ երիտասարդ տեսք ունի:

ԳՈՅԱԿԱՆԱՑՎԱԾ ԱԾԱԿԱՆՆԵՐ (SUBSTANTIVIZED ADJECTIVES)

7. Ածականներն անգլերենում երբեմն գոյականացվում են՝ ձեռք են բերում գոյականի իմաստ, առնում են որոշիչ հոդ և նախադասության մեջ գործածվում են որպես գոյական: Գոյականացված ածականները կարող են ցույց տալ

1. Ընդհանուր հատկանիշ ունեցող մարդկանց խումբ. ինչպես՝ **the poor** (= poor people), **the rich**, **the young**, **the unemployed**, **the homeless** և այլն: Այսպիսի գոյականացված ածականները հոգնակի են իմաստով, և բայ-ստորոգյալը համաձայնում է նրանց հետ հոգնակի թվով.

The young are always romantic.

Երիտասարդները միշտ ռոմանտիկ են:

The old receive pensions.

Ծերերը կենսաթոշակ են ստանում:

Մեկ անձ ցույց տալու համար ավելացվում է գոյական. ինչպես՝ **a young man**, **an old man**, **a homeless person** և այլն:

Այս խմբին են պատկանում ազգություն ցույց տվող այնպիսի գոյականացված ածականներ, ինչպես՝ **the English** (= English people), **the French**, **the Irish**, **the Dutch** և այլն: Համապատասխան եզակին է՝ **an Englishman**, **a Frenchman**, **an Irishman**, **a Dutchman** և այլն:

2. Վերացական հասկացություն. ինչպես՝ **the beautiful** «գեղեցիկը», **the progressive** «առաջադիմականը», **the good** «լավը», **the bad** «վատը» և այլն: Բայ-ստորոգյալը համաձայնում է սրանց հետ եզակի թվով.

The unusual always attracts us.

Անսովորը միշտ գրավում է մեր ուշադրությունը:

Ածականի շարահյուսական կիրառությունները

8. Նախադասության մեջ ածականը լինում է՝

1. Որոշիչ.

She inherited a **large** fortune.

That is a **bad** mistake.

Որոշիչ ածականը սովորաբար նախադաս է: Եթե գոյականը հոդ ունի, ածականը դրվում է հոդի և գոյականի միջև: Հնարավոր է նաև ածականի գործածությունը որպես տրոհված անդամ.

Nervous, the man opened the letter.

The man opened the letter, **nervous**.

2. Ստորոգելիական վերադիր.

His pronunciation of English is **good**.

He looked **sober** and **calm**.

She lay **motionless**, as if she were **asleep**.

Little black cherries hung **thick** in the tree.

3. Օբյեկտային (խնդրի) վերադիր.

I think him very **intelligent**.

Ես նրան շատ խելացի եմ համարում:

He painted the door **green**.

Նա դուռը կանաչ ներկեց:

ԴԵՐԱՆՈՒՆ (THE PRONOUN)

1. Դերանուն են կոչվում այն բառերը, որոնք խոսքում գործածվում են գոյական, ածական, թվական անունների փոխարեն:

Անգլերենն ունի դերանունների հետևյալ խմբերը՝ անձնական, ստացական, ցուցական, անդրադարձ, շեշտող, փոխադարձ, հարցական, կապակցող, անորոշ, որոշյալ և ժխտական:

Անգլերենի տարբեր դերանուններ ունեն տարբեր քերականական կարգեր: Անձնական դերանունները և որոշ անորոշ դերանուններ ունեն հոլովի կարգ (I - me, somebody - somebodies): **This** և **that** ցուցական դերանուններն ունեն թվի կարգ (**this** - **these**, **that** - **those**): Սնացած դերանունները, չնչին բացառությամբ, չունեն որևէ քերականական կարգ:

Դերանունները նախադասության մեջ գործածվում են որպես գոյական դերանուններ կամ որպես ածական դերանուններ:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ (PERSONAL PRONOUNS)

2. Անգլերենում անձնական դերանուններն ունեն երկու հոլով՝ ուղղական և օբյեկտային:

Ուղղական հոլով		Օբյեկտային հոլով	
	I ես	me ինձ	
եզակի	you դու (քոքվ.ձև)	you քեզ, Ձեզ	
	he նա (արական)	him նրան	
	she նա (իգական)	her նրան	
	it այն (անշունչ առարկա)	it այն	

	we	մենք		us	մեզ
հոգնակի	you	դուք		you	ձեզ
	they	նրանք		them	նրանց

3. Ուղղական հոլովով դրված դերանունը նախադասության մեջ լինում է՝

1. Ենթակա.

I am a student

He speaks English quite well.

2. Ստորոգելիական վերադիր.

It was he who said so.

Ծանոթություն. Խոսակցական անգլերենում ուղղական հոլովով դրված դերանուն վերադիրը համարվում է պաշտոնական, ուստի նախընտրելի է օբյեկտային հոլովի ձևը (բացառությամբ վերը տրված կառույցի).

Who is it ? It's me (I)

-Ո՞վ է: -Ես եմ:

4. Օբյեկտային հոլովով դրված դերանունը նախադասության մեջ լինում է խնդիր: Անգլերենի այս հոլովածնը համապատասխանում է հայերենի տրական և հայցական հոլովածներին.

Give him this letter.

Տվեք նրան այս նամակը:

I see him on my way to work:

Ես հանդիպում եմ նրան աշխատանքի գնալիս:

5. Օբյեկտային հոլովով դրված անձնական դերանունը, գործածվելով **to** նախդրի հետ, արտահայտում է տրական հոլովի իմաստ: **To** նախդիրը գործածվում է այն դեպքում, երբ անուղղակի խնդիրը հաջորդում է ուղիղ խնդրին.

Give that pen to him (Զմնտ. Give him that pen.)

6. Օրբելտային հոլովով դրված դերանունները գործածվում են տարբեր նախդիրների հետ, համապատասխանելով հայերենի անձնական դերանունների մյուս հոլովածներին.

Tell me about him.

Պատմեցեք ինձ նրա մասին:

I have received a letter from him.

Ես նամակ եմ ստացել նրանից:

I went to the theatre with him.

Ես թատրոն գնացի նրա հետ:

ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ (POSSESSIVE PRONOUNS)

7. Ստացական դերանունները արտահայտում են պատկանելիություն: Անգլերենի ստացական դերանուններն ունեն երկու ձև: Առաջին ձևը գործածվում է որպես **ածական դերանուն**, երկրորդ ձևը՝ որպես **գոյական դերանուն**:

	1-ին ձև		2-րդ ձև	
	my	իմ	mine	իմը
եզակի	your	քո, Ձեր (քոքվ. ձև)	yours	քոնը, Ձերը
	his	} նրա	his	} նրանը
	her		hers	
	its		its	
հոգնակի	our	մեր	ours	մերը
	your	ձեր	yours	ձերը
	their	նրանց	theirs	նրանցը

Ստացական դերանունների առաջին ձևը գործածվում է որպես որոշիչ՝ **my bag**, **his new hat**, **their house** և այլն: Երկրորդ ձևը գործածվում է որպես **ենթակա, խնդիր և ստորոգելիական վերադիր**.

Your room is large, but **mine** is larger.

Ձեր սենյակն ընդարձակ է, բայց **իմն** ավելի ընդարձակ է:

I have lost my pencil, give me **yours**, please.

Ես կորցրել եմ մատիտս, տվե՛ք ինձ **ձերդ**, խնդրեմ:

That hat is **mine**.

Այդ գլխարկն **իմն** է:

8. Երբ երրորդ դեմքի ստացական դերանունները ցույց են տալիս, որ գոյական որոշյալի արտահայտած առարկան պատկանում է ենթակային, նրանք սովորաբար թարգմանվում են հայերեն իր, իրենց դերանուններով կամ բոլորովին չեն թարգմանվում.

He put **his** coat and left the room.

Նա հագավ վերարկուն և դուրս եկավ սենյակից:

They told us of **their** success.

Նրանք պատմեցին մեզ իրենց **հաջողության** մասին:

9. Անգլերենում հոդի փոխարեն ստացական դերանուն է գործածվում մարմնի մասեր, հագուստի պարագաներ և զանազան անձնական իրեր ցույց տվող գոյականների հետ.

Why are you standing there with **your hands** in **your pockets**?

He fell off his horse and injured **his back**.

She put **her cigarette** back into **her bag**.

Որոշ իդիոմատիկ դարձվածքներում մարմնի մասեր ցույց տվող գոյականների հետ ստացական դերանվան փոխարեն գործածվում է որոշիչ հոդ.

She got red in **the face**.

He took me **by the hand**.

The bullet struck him in **the foot**.

The dog bit the man in **the leg**.

10. Երբեմն ստացական դերանվան երկրորդ ձևի հետ գործածվում է **of** նախդիրը. He is a friend **of mine** Նա իմ ընկերներից է:

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ (DEMONSTRATIVE PRONOUNS)

11. Անգլերենի ցուցական դերանուններն են **this, that, such** և **same** դերանունները: Նրանք կարող են գործածվել որպես գոյական դերանուններ և որպես ածական դերանուններ:

12. **This** և **that** ցուցական դերանուններն ունեն եզակի և հոգնակի թվի ձևեր.

this սա - **these** սրանք

that դա, նա - **those** դրանք, նրանք

This (these) դերանունը մատնացույց է անում խոսողին մոտ գտնվող առարկա, **that (those)** դերանունը՝ խոսողից հեռու գտնվող առարկա:

13. **This (these)** և **that (those)** դերանունները նախադասության մեջ լինում են՝

1. Ենթակա

This is a pen. **These** are pens.

That is a pencil. **Those** are pencils.

2. Խնդիր

I can do **that**.

3. Որոշիչ. թարգմանվում է հայերեն այս, այդ, այն ցուցական դերանուններով.

This pencil is red.

Այս մատիտը կարմիր է:

Those boys are school children.

Այդ (այն) տղաները դպրոցականներ են:

14. **That (those)** ցուցական դերանունը գործածվում է նաև արդեն նշված գոյականը չկրկնելու համար: Նման դեպքերում դերանունը թարգմանվում է հայերեն այն գոյականով, որը փոխարինված է, կամ փոխանուն սեռականով.

The climate of England in summer is cooler than **that** of the Continent.

Ամառը Անգլիայի կլիման ավելի զով է, քան մայր ցամաքի կլիման (քան մայր ցամաքինը):

The rivers of the Continent are much longer than **those** of England.

Մայր ցամաքի գետերը շատ ավելի երկար են, քան Անգլիայի գետերը (քան Անգլիայինը):

15. Such «այսպիսի, այդպիսի, այնպիսի» ցուցական դերանունը գործածվում է որպես որոշիչ.

He wrote **such** desperate letters to me last year.

Անցիալ տարի նա այնպիսի հուսահատ նամակներ էր գրում ինձ: I've never heard of **such** a thing.

Ես նման բան չեմ լսել երբեք:

16. Same դերանունը ունի «նույն, միևնույն» իմաստը: Այս դերանվանը նախադաս միշտ դրվում է որոշիչ հոդ.

We have lived in **the same house** for fifteen years.

Are these **the same people** (whom) we saw here last week?

ԱՆԴՐԱԴԱՐԶ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ (REFLEXIVE PRONOUNS)

17. Անդրադարձ դերանունները ցույց են տալիս, որ բայ-ստորոգյալի արտահայտած գործողությունն ուղղված է ենթակային (գործողություն կատարողին): Անգլերենի անդրադարձ դերանուններն են՝

եզակի	հոգնակի
myself	ourselves
yourself	yourselves
himself	} themselves
herself	
itself	

Այս խմբին է պատկանում նաև **oneself** դերանունը:

He fell and hurt **himself**.

Նա վայր ընկավ և վնասվեց (վնասեց իրեն):

They found **themselves** on the edge of the wood.

Նրանք հայտնվեցին անտառի եզրին:

Նման դեպքում բայը և նրան հաջորդող անդրադարձ դերանունը թարգմանվում են հայերեն կրավորակերպ բայով:

To dress «հագնվել», **to wash** «լվացվել», **to comb** «սանրվել», **to shave** «սափրվել», **to hide** «թաքնվել» բայերից հետո անդրադարձ դերանունը սովորաբար զեղչվում է.

He **shaved** with care.

Նա խնամքով սափրվեց:

I must **wash** before dinner.

Ես պետք է լվացվեմ ճաշից առաջ:

18. Անդրադարձ դերանունները կարող են լինել անուղղակի կամ նախդրավոր խնդիր.

She cooked **herself** a big meal.

Նա իր համար լավ կերակուր պատրաստեց:

Look **after yourself**.

Ուշադրություն դարձրեք ձեզ:

Did she pay **for herself**?

Նա վճարե՞ց իր համար:

Բայց՝

Did you take your dog **with you**?

Has he any money **on him**?

They put the child **between them**.

Համեմատություն արտահայտող նախադասություններում միևնույն շարահյուսական կիրառությունը կարող են ունենալ թե անդրադարձ և թե անձնական դերանունները.

No one realizes it better than **myself** (me).

ՇԵՇՏՈՂ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ (EMPHATIC PRONOUNS)

19. Շեշտող դերանուններն ունեն մույն ձևերն, ինչ անդրադարձ դերանունները (նրանց համանուններն են). **myself, yourself, himself, ourselves, yourselves, themselves**: Շեշտող դերանունները գործածվում են որպես բացահայտիչ գոյականի կամ անձնական դերանվան համար՝ շեշտելով նրա իմաստը: Դրվում են գոյականից կամ դերանունից հետո և կամ նախադասության վերջում: Թարգմանվում են հայերեն **ինքս, ինքդ, ինքներս, ինքներդ, իրենք** անձնական դերանուններով:

He said so **himself**.

Նա ինքն ասաց այդպես:

Did you see the manager **himself**?

Դուք իրեն կառավարչի՞ն տեսաք:

They **themselves** have often made that mistake.

Նրանք իրենք հաճախ թույլ են տվել այդ սխալը:

ՓՈԽԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ (RECIPROCAL PRONOUNS)

20. Անգլերենի փոխադարձ դերանուններն են **each other, one another**, որոնք համապատասխանում են հայերենի իրար, միմյանց, մեկ-մեկու դերանուններին: Փոխադարձ դերանունները ցույց են տալիս իրար հետ փոխադարձ հարաբերության մեջ գտնվող առարկաներ: Երկու դերանուններն էլ կարող են գործածվել, երբ խոսվում է երկու անձի մասին: Երբ խոսքը երկուսից ավելի անձանց մասին է, հաճախ նախընտրելի է **one another** դերանունը:

Tom and Ann looked at **each other**.

The two young people looked at **one another**.

They are afraid of **each other**.

They have quarrelled and no longer speak to **one another**.

They don't like **one another**.

Seated in a row close to **one another** were three ladies.

Each other և **one another** դերանունները ունեն ստացական հոլովի ձև.

They had not met for so long that they had forgotten **each other's** names.

In their letters they made it a rule to inquire **after one another's** relatives.

ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ (INTERROGATIVE PRONOUNS)

21. Who (whom), whose, what, which, how much, how many հարցական դերանունները գործածվում են որպես գոյական դերանուններ և որպես ածական դերանուններ:

22. Who «ո՞վ» դերանունն անձնական դերանունների նման ունի երկու հոլով՝ ուղղական և օբյեկտային (**whom**).

Who is that man?

Whom did you meet in the street this morning?

Խոսակցական լեզվում **whom** ձևի փոխարեն գործածվում է **who** ձևը.

Who did you give the letter to?

Who did you meet this morning?

23. Whose «ու՞մ» դերանունը գործածվում է որպես ածական դերանուն.

Whose dog is this?

Whose house is that?

Whose books are these?

24. What «ի՞նչ» գոյական դերանունը վերաբերում է անշունչ առարկաների.

What is this?

What is your name?

What did he take from the shelf?

What դերանունը կարող է վերաբերել նաև մարդկանց: Այդ դեպքում հարցը վերաբերում է մարդու զբաղմունքին, մասնագիտությանը.

Who is he? He is **Mr Smith**.

What is he? He is an **office-worker**.

Who is she? She is **my sister**.

What is she? She is a **student**.

25. What դերանունը կարող է գործածվել որպես ածական դերանուն, համապատասխանելով հայերենի «ո՞ր», «ի՞նչ» դերանուններին: Հարցի պատասխանը ընդհանուր տեղեկություն է.

On **what** days do you have classes?

In **what** grades does he teach?

What languages do you know?

What books have you read recently?

What time is it?

26. Which «ո՞ր», «ո՞րը» դերանունը գործածվում է որպես ածական դերանուն և որպես գոյական դերանուն: Գործածվում է, երբ կա ընտրություն սահմանափակ քանակից: Կարող է վերաբերել մարդկանց և անշունչ առարկաների:

Which way shall we go - up the hill or along the river bank?

Which of the two men is your brother?

I have two pencils. **Which** do you want?

Ծանոթություն. Համեմատեցեք **what** և **which** դերանունների գործածությունը հետևյալ նախադասություններում.

What TV programs do you usually watch? **Which** of them is your favourite one?

What examinations are you going to take this term? **Which** of them do you find most difficult?

What car have you? **Which** car is yours?

27. How much «որքա՞ն» և **how many** «քանի՞», «քանի՞սը» դերանունները գործածվում են որպես ածական դերանուններ և որպես գոյական դերանուններ: **How much** դերանունը գործածվում է անհաշվելի, **how many** դերանունը՝ հաշվելի գոյականների հետ.

How much money do you need?

How much does this cost?

How many invitations have been sent out?

There are several pictures on sale. **How many** will you buy?

Ծանոթություն. **How many** դերանունից հետո գործածվող գոյականը միշտ դրվում է հոգնակի թվով՝ **how many books**, **how many questions**, **how many students** և այլն:

ԿԱՊԱԿՑՈՂ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ (CONJUNCTIVE PRONOUNS)

28. Կապակցող դերանունները մասնակցում են բարդ ստորադասական նախադասության ձևավորմանը: Նրանք երկրորդական նախադասությունը կապակցում են գլխավոր նախադասությանը: Ի տարբերություն շաղկապների, կապակցող դերանունները երկրորդական նախադասության կազմում ունեն ինքնուրույն շարահյուսական պաշտոն (հանդես են գալիս որպես ենթակա, ստորոգելիական վերադիր, խնդիր, որոշիչ).

Do you know **who** that man is? (ստորոգ. վերադիր)

I always say **what** I think. (խնդիր)

29. Ենթակա, ստորոգելիական վերադիր և խնդիր երկրորդական նախադասությունները կապակցվում են գլխավոր նախադասությանը **who (whom)**, **what**, **which**, **how much**, **how many** դերանուններով.

Who broke the window is not known. (ենթակա երկր. նախ.)

What we saw astonished us. (ենթակա երկր. նախ.)

Life in the country isn't **what** it used to be. (ստորոգ. վեր. երկր. նախ.)

Tell me **which way** they will come. (խնդիր երկր. նախ.)

30. Որոշիչ երկրորդական նախադասությունները կապակցվում են գլխավոր նախադասությանը **who (whom), whose, which, that** դերանուններով, որոնք մաս կոչվում են հարաբերական դերանուններ, քանի որ նրանք ունեն իրենց հարաբերյալը գլխավոր նախադասության կազմում:

31. Who (whom) «որ, որը (որին)» հարաբերական դերանունը գործածվում է մարդկանց, երբեմն էլ կենդանիների վերաբերյալ.

This is **the man who** wanted to see you.

Ահա այն մարդը, որը ցանկանում էր տեսնել ձեզ:

That is **the girl about whom** we were speaking.

Դա այն աղջիկն է, որի մասին խոսում էինք:

That's Tom's **dog who** bit me.

Թոմի շունն էր, որ կծեց ինձ:

Which «որ, որը» դերանունը գործածվում է կենդանիների, անշունչ առարկաների, վերացական հասկացությունների վերաբերյալ.

That's Tom's **dog which** bit me.

Թոմի շունն էր, որ կծեց ինձ:

This is **the picture which** caused such a sensation.

Սա այն նկարն է, որ այսպիսի սենսացիա առաջացրեց:

His **age, which** I think is 80, is the least noticeable thing about him.

Նրա տարիքը, որ իմ կարծիքով 80 է, համարյա աննկատելի է:

32. That «որ, որը» դերանունը գործածվում է թե մարդկանց և կենդանիների, թե անշունչ առարկաների վերաբերյալ.

You are **the only person that** can help me.

Դուք միակ մարդն եք, որ կարող է օգնել ինձ:

The dog that attacked the child was a stray dog.

Շունը, որ հարձակվեց երեխայի վրա, թափառող շուն էր:

The letter that came this morning is from my father.

Նամակը, որ ստացվեց այս առավոտ, իմ հորից է:

Միայն **that** դերանունն է գործածվում **all, everything, much, something, anything** դերանուններից, գերադրական աստիճանով դրված ածականներից, ինչպես նաև **first, last, same** բառերից հետո.

Has she got **all that** she needs?
 I have always had **everything that** I wanted.
 He never says **anything that** is worth listening to.
 Yesterday was one of the **coldest days that** I've ever known.
 It was **the first time that** he heard of the episode.
 She uses **the same scent that** you do.

33. Which «որը, ինչը» դերանունն է գործածվում, երբ որոշիչ երկրորդական նախադասության հարաբերյալը գլխավոր նախադասությունն է ամբողջությամբ.

He invited me to the theatre, which was very kind of him.
 Նա ինձ թատրոն հրավիրեց, ինչը շատ սիրալիր վերաբերմունք էր նրա կողմից:
He said he had no money, which was not true.
 Նա ասաց, որ դրամ չունի, որը ճիշտ չէր:

34. Խոսակցական անգլերենում որպես խնդիր գործածվող հարաբերական **whom** ձևը համարվում է պաշտոնական, և նրա փոխարեն գործածվում է **who** ձևը.

The man **whom I saw** told me to come back today.
 The man **who I saw** told me to come back today.

Խոսակցական լեզվում ընդունված է գեղջել հարաբերական դերանուն խնդիրը.

The man **I saw** told me to come back today.

35. Որպես խնդիր գործածվող հարաբերական դերանունից առաջ կարող է լինել նախդիր: Եթե հարաբերական դերանունը գեղջվում է, նախդիրը տեղափոխվում է երկրորդական նախադասության վերջը.

The man **to whom I spoke** told me to come back today.
 The man **who (whom) I spoke to** told me to come back today.
 The man **that I spoke to** told me to come back today.
 The man **I spoke to** told me to come back today.
 The ladder **on which I was standing** began to slip.
 The ladder **which I was standing on** began to slip.
 The ladder **that I was standing on** began to slip.
 The ladder **I was standing on** began to slip.

36. Whose «որի» դերանունը գործածվում է մարդկանց, կենդանիների և անշունչ առարկաների վերաբերյալ.

Is that the **student whose** knowledge of English is so poor?
 Դա այն ուսանողն է, որի անգլերենի գիտելիքները շատ խղճուկ են:
 He had a **dog whose** name was Balthazar.
 Նա շուն ուներ, որի անունը Բալթազար էր:
The house whose windows are broken is very old.
 Տունը, որի պատուհանները կոտրտված են, շատ հին է:

Վերջին դեպքում կարելի է գործածել նաև հետևյալ նախդրավոր կառույցը.

The house with the broken windows is very old.

Երբ **whose** դերանունը գործածվում է անշունչ առարկաների վերաբերյալ, նրա իմաստը համապատասխանում է **of + which** կապակցության իմաստին.

They crossed the **river whose** current was very rapid.
 They crossed the **river the current of which** was very rapid.

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ (INDEFINITE PRONOUNS)

37. Անորոշ դերանունները ցույց են տալիս տարբեր տեսակի անորոշություն: Անգլերենում անորոշ դերանունները բաժանվում են բուն անորոշ և քանակական դերանունների: Բուն անորոշ դերանուններն են՝ **some, any, somebody, anybody,**

someone, anyone, something, anything, one դերանունները: Քանակական դերանուններն են **much, many, little, few, a little, a few, a lot (of), lots (of), a great deal (of), a great many** և այլն: Անորոշ դերանունները կարող են գործածվել որպես գոյական դերանուններ և որպես ածական դերանուններ:

38. Some դերանունը և նրանից ածանցված **somebody, someone, something** դերանունները սովորաբար գործածվում են հաստատական նախադասություններում, մինչդեռ **any** դերանունը և նրանից ածանցված **anybody, anyone** և **anything** դերանունները՝ հարցական և ժխտական նախադասություններում, պայմանի պարագա երկրորդական նախադասություններում և անհամոզվածություն բովանդակող նախադասություններում:

39. Some ածական դերանունը հոգնակի հաշվելի գոյականների հետ գործածվելիս ցույց է տալիս որոշ թիվ (երեք կամ ավելի): Հի թարգմանվում հայերեն:

There are **some** children outside.

Դրսում երեխաներ կան:

There are **some** desks in the classroom.

Դասասենյակում նստարաններ կան:

He bought **some** coloured pencils.

Նա գնեց գունավոր մատիտներ:

Եզակի հաշվելի գոյականների հետ գործածվելիս **some** դերանունն ունի «որևէ», «ինչ-որ» իմաստները:

Please give me **some** novel to read.

Խնդրեմ տվեք ինձ որևէ վեպ կարդալու համար:

He is living at **some** place in East Africa.

Նա ապրում է ինչ-որ տեղ Արևելյան Աֆրիկայում:

Some man at the door is asking to see you.

Դռան մոտ ինչ-որ մարդ ցանկանում է տեսնել ձեզ:

Some ածական դերանունը կարող է ունենալ «որոշ» իմաստը:

Some people learn languages easily (and others with difficulty).
 Որոշ մարդիկ սովորում են լեզուներ հեշտությամբ (մյուսները՝ դժվարությամբ):

All work is not dull; **some** work is pleasant.

Ամեն աշխատանք ծանծրալի չէ. որոշ աշխատանք հաճելի է:

Some դերանունը ունի նաև «մոտավորապես» իմաստը:

It happened **some** ten years ago.

Դա պատահեց մոտավորապես տասը տարի առաջ:

40. Նյութերի անունների հետ գործածվելիս **some** դերանունը ցույց է տալիս որոշ քանակ: Այս դեպքում ևս դերանունը չի թարգմանվում հայերեն:

Please give me **some** milk.

Կաթ տվեք, խնդրեմ:

I have bought **some** bread.

Հաց եմ գնել:

41. Որպես գոյական դերանուն **some** բառը կարող է ունենալ եզակի կամ հոգնակի իմաստ:

Some of the food was packed in waterproof bags.

Սննդի մի մասը փաթեթավորված էր անջրանցիկ տոպրակների մեջ:

Some of these books are quite useful.

Այս գրքերից մի քանիսը չափազանց օգտակար են:

42. Some դերանունը գործածվում է հարցական և ժխտական նախադասություններում՝

1. Եթե հարցը կամ ժխտումը չի վերաբերվում **some** դերանվանը կամ գոյականին, որի որոշիչն է այն: Նախադասության **some** պարունակող մասը հաստատական է իմաստով:

May I give you **some** more tea?

Կարո՞ղ եմ նորից թեյ առաջարկել:

Why do **some** people always arrive late?

Ինչու՞ են որոշ մարդիկ միշտ ուշանում:

I could not answer **some** of the questions.

Ես չպատասխանեցի հարցերից մի քանիսին:

2. Երբ խոսողը ենթադրում է դրական պատասխան իր հարցին.

Can I have **some** coffee?

Կարելի՞ է սուրճ խնդրել:

Aren't there **some** stamps in the drawer?

Միթե՞ դարակում նամականիշներ չկան:

(Հմմտ. There are **some** stamps in the drawer, aren't there?)

Didn't he give you **some** money?

Միթե՞ նա քեզ փող չտվեց:

(Հմմտ. He gave you some money, didn't he?)

3. Եթե հարցական մախադասությունն իրականում արտահայտում է առաջարկ կամ խնդրանք.

Will you have **some** cake? (Հմմտ. Please have **some** cake.)

Will you please buy me **some** stamps when you go out? (Հմմտ.

Please buy me some stamps when you go out.)

Could you do **some** typing for me? (Հմմտ. Please do some typing for me.)

43. Somebody, someone «ինչ-որ մեկը», «որևէ մեկը», **something** «ինչ-որ բան», «որևէ բան» դերանուններն արտահայտում են եզակի թիվ և գործածվում են այն տիպի մախադասություններում, որոնցում գործածվում է **some** դերանունը:

There's **somebody** at the door.

Մարդ կա դռան մոտ (ինչ-որ մեկը):

If you don't know the answer, ask **somebody**.

Եթե պատասխանը չգիտեք, հարցրեք որևէ մեկին:

Someone left his umbrella behind yesterday.

Երեկ ինչ-որ մեկը մոռացել է (թողել է) հովանոցը:

I think I dropped **something**.

Կարծես ինչ-որ բան զգեցի:

Something must be done!

Որևէ բան պետք է անել:

44. Any ածական դերանունը գործածվում է **some** դերանվան փոխարեն՝ հարցական և ժխտական նախադասություններում: Չի թարգմանվում հայերեն:

Are there **any** letters for me?

Նամակներ կա՞ն ինձ համար: Նամակ ունե՞մ:

Have you got **any** money?

Փող ունե՞ս: Դրամ ունե՞ք:

Mr Black hasn't **any** flowers in his garden.

Պարոն Բլեքը ծաղիկներ չունի իր պարտեզում:

I never get **any** letters.

Ես նամակ չեմ ստանում:

Any դերանունը գործածվում է նաև պայմանի պարագա երկրորդական նախադասություններում և անհամոզվածություն քվանդակող խնդիր երկրորդական նախադասություններում:

Come and see me if you have **any** time.

Այցելեք ինձ, եթե ժամանակ ունենաք:

I don't think that there is **any** milk in the house.

Չեմ կարծում, որ կաթ ունեք տանը:

I wonder whether Mr Black has **any** flowers in his garden.

Դետաքքիի է, պարոն Բլեքը ծաղիկներ ունի՞ իր պարտեզում:

If շաղկապից հետո պայմանի պարագա երկրորդական նախադասություններում կարող է գործածվել նաև **some** դերանունը:

If you want **some/any** help, let me know.

If we had **some/any** money, we could buy it.

45. Նյութ ցույց տվող գոյականների հետ գործածվելիս **any** դերանունը չի թարգմանվում հայերեն:

Have you got **any** sugar?

Շաքար ունե՞ք:

We haven't **any** tea.

Թեյ չունենք:

46. Any դերանունը գործածվում է հաստատական նախադասություններում «ցանկացած» իմաստով:

Come **any** day you like.

Եկեք, երբ ցանկանաք (ցանկացած օրը):

We must find an excuse, **any** excuse will do.

Մենք պետք է պատրվակ գտնենք, միևնույն է թե ինչ պատրվակ:

47. Ածանցյալ anybody, anyone «որևէ մեկը», «ցանկացած մարդ», **anything** «որևէ բան», «ցանկացած բան» դերանուններն արտահայտում են եզակի թիվ և գործածվում են այն տիպի նախադասություններում, որոնցում գործածվում է **any** դերանունը.

If **anybody** calls, tell him I'm out, but take his name and address.
Եթե որևէ մեկը հարցնի, ասեք, որ տանը չեմ, բայց իմացեք անունը և հասցեն:

Is there **anyone** at home?

Տանը որևէ մեկը կա՞:

Is there **anything** in that box?

Այդ տուփի մեջ որևէ բան կա՞:

You can't see **anything** in the fog.

Ոչինչ չես կարող տեսնել, երբ մառախուղ է:

Anybody will tell you where the bus stop is.

Ցանկացած մարդ կասի, թե որտեղ է ավտոբուսի կանգառը:

I want something to eat, **anything** will do.

Ես ուտելու բան եմ ուզում, միևնույն է թե ինչ:

48. One անորոշ դերանունը ցույց է տալիս ցանկացած անձնավորություն՝ ներառյալ խոսողը կամ գրողը: Գործածվում է անորոշ-դիմավոր նախադասություններում որպես ենթակա: Ունի ստացական հոլովի ձև (**one's**): **One** դերանունով արտահայտված ենթակա ունեցող անորոշ-դիմավոր նախադասությունները թարգմանվում են հայերեն ընդհանրացնող - դիմավոր նախադասությամբ.

One cannot always find time for reading.

Չես կարող միշտ ժամանակ գտնել կարդալու համար:

One doesn't like to have one's word doubted.

Մարդ չի սիրում, երբ խոսքին չեն հավատում:

խոսակցական անգլերենում մեզան նախադասություններում որպես ենթակա ավելի շուտ գործածվում են **you** և **we** դերանունները.

We live and learn.

Ապրում ենք և դաս առնում (սովորում ենք ամբողջ կյանքում):

You never know.

Երբեք չես կարող նախորոշ իմանալ:

49. One անորոշ դերանունը չպետք է շփոթել **one** փոխարինող բառի հետ, որը գործածվում է ավելի վաղ նշված գոյականի փոխարեն՝ այն չկրկնելու համար: Ի տարբերություն **one** դերանվան, **one** փոխարինող բառից առաջ կարող է դրվել հոդ: Փոխարինող բառն ունի հոգնակի թվի ձև (**ones**), սակայն չունի ստացական հոլովի ձև.

There's a right answer and a wrong **one**. Yours may be the right answer and mine the wrong **one**.

If you don't like this magazine, take another **one**.

Here are some books for you to read. Which **one** would you choose?

I prefer white roses to red **ones**.

50. Many, much «շատ», **few, little** «քիչ» քանակական դերանունները գործածվում են որպես ածական դերանուններ և որպես գոյական դերանուններ: **Many** և **few** դերանունները գործածվում են հաշվելի գոյականների հետ կամ նրանց փոխարեն, **much** և **little** դերանունները՝ անհաշվելի գոյականների հետ կամ նրանց փոխարեն.

Many people think so.

Many of us left early.

Few people live to be 100.

Few of the children are tired.

He never eats **much** breakfast.

You have given me too **much**.

I have very **little** time for reading.

Little was known of his life when he was alive.

Ժամանակակից անգլերենում միտում կա հաստատական նախադասություններում **much**, **many** դերանունների փոխարեն, երբ նրանք ածական դերանուններ են, գործածել **a lot (of)**, **lots (of)**, **a great deal (of)**, **a great many**, **a large number (of)** և այլն: Այդ դեպքում **many** և **much** դերանունները համապատասխանաբար գործածվում են հարցական և ժխտական նախադասություններում: Հարցական նախադասություններում կարող են գործածվել նաև **a lot (of)**, **a great deal (of)** դերանունները:

A lot of time was wasted.

I have **a lot of** friends.

He had **a great deal of** trouble.

Lots of girls go out dancing every Saturday.

He has **a large number of** books.

Բայց՝

Do you know **many** people in London?

Did you take **a lot of** photos?

Did you take **a great deal of** trouble?

I haven't **many** friends now.

I had not very **much** advice to give him.

51. Գործածվելով անորոշ հոդի հետ՝ **few** և **little** դերանունները ձեռք են բերում նոր՝ դրական իմաստ. **a few** նշանակում է «մի քանի», **a little** «իմ քիչ»:

I know **a few of** these people.

Ես ճանաչում եմ այս մարդկանցից մի քանիսին:

We are going away for **a few** days.

Մենք մեկնում ենք մի քանի օրով:

He knows **a little of** everything.

Նա ամեն ինչի մասին գիտի մի քիչ:

Will you have **a little** cake?

Մի կտոր (մի քիչ) թխվածք վերցրե՞ք:

52. Many, much, few, little դերանուններն ունեն համեմատության աստիճաններ, երբ նրանք ածական դերանուններ են.

many	} շատ	more	} ավելի շատ	most	} ամենաշատ
much		more		most	
few	} քիչ	fewer	} ավելի քիչ	fewest	} ամենաքիչ
little		less		least	

ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ (DEFINING PRONOUNS)

53. Անգլերենի որոշյալ դերանուններն են՝ **all, each, every, everybody, everyone, everything, either, both, other, another**: Որոշյալ դերանունները գործածվում են որպես գոյական դերանուններ և ածական դերանուններ:

54. Որպես ածական դերանուն՝ **all** «բոլոր», «ամբողջ» դերանունը գործածվում է եզակի և հոգնակի թվով դրված գոյականների հետ որպես որոշիչ: Գոյականին վերաբերող որոշիչ հոդը, ցուցական կամ ստացական դերանունը, քանակական թվականը դրվում են **all** դերանունից հետո.

All horses are animals but not **all animals** are horses.

Բոլոր ձիերը կենդանիներ են, բայց ոչ բոլոր կենդանիները՝ ձիեր:
You've had all the fun and **I've had all the hard work.**

Չեզ բաժին ընկավ ամբողջ զվարճությունը, իսկ ինձ՝ ամբողջ ծանր աշխատանքը:

He has lived all his life in London.

Նա իր ամբողջ կյանքն անց է կացրել Լոնդոնում:

All these questions must be answered.

Անհրաժեշտ է պատասխանել այս բոլոր հարցերին:

All «բոլորը» գոյական դերանունը նախադասության մեջ լինում է ենթակա, խնդիր, ստորոգելիական վերադիր և բացահայտիչ.

All said the same thing.
 Բոլորն ասացին միևնույն բանը:
 I know **all**.
 Ես գիտեմ բոլորը:
 That's **all**.
 Ահա բոլորը:
 We **all** want to go.
 Մենք բոլորս ցանկանում ենք գնալ:

55. Each «յուրաքանչյուր», «յուրաքանչյուրը» դերանունը գործածվում է որպես ածական դերանուն և որպես գոյական դերանուն: Այս դերանունը գործածվում է, երբ խոսքը վերաբերվում է երկու կամ ավելի անձերից կամ առարկաներից յուրաքանչյուրին առանձին վերցրած.

He gave **each** boy a present.
 Նա յուրաքանչյուր տղայի նվեր տվեց:
Each house in the row had a garden.
 Շարքի յուրաքանչյուր տուն այգի ուներ:
Each of them wanted to try.
 Նրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր փորձել:

56. Every «յուրաքանչյուր, ամեն (մի)» ածական դերանունը տարբերվում է **each** դերանունից նրանով, որ սրա գործածության ժամանակ ուշադրության կենտրոնում է ոչ թե մասը կամ անհատը, այլ ամբողջը.

I have read **every** book (all the books) on that shelf.
 Ես կարդացել եմ այդ դարակի յուրաքանչյուր գիրք (բոլոր գրքերը):
Every boy in the class (all the boys, the whole class) passed the examination.
 Դասարանի բոլոր տղաները հանձնեցին քննությունը:
Every word in this dictionary is (= all the words are) important.
 Այս բառարանում ընդգրկված բոլոր բառերը կարևոր են:

Every դերանունից ածանցվում են **everybody, everyone** «ամեն մեկը, ամեն ոք», **everything** «ամեն ինչ» գոյական դերանունները.

Everybody (everyone) knows it.

Ամեն մեկը գիտի դա: Բոլորը գիտեն դա:

Everybody has arrived.

Բոլորը եկել են:

Tell me **everything** about it

Պատմեցե՛ք ինձ ամեն ինչ (բոլորը) այդ մասին:

Everything is ready now for the party.

Այժմ ամեն ինչ պատրաստ է երեկույթի համար:

Ծանոթություն. Խոսակցական լեզվում **everybody, anybody, somebody (someone)** դերանուններին հաճախ հետևում են հոգնակի **they** և **their** դերանունները՝ եզակի **he** կամ **she, his** կամ **her** դերանունների փոխարեն.

57. Either դերանունը գործածվում է որպես գոյական դերանուն և որպես ածական դերանուն:

Either ածական դերանունը ունի հետևյալ իմաստները.

1. այս կամ այն, մեկ կամ մյուս (երկուսից).

Take **either** half, they're exactly the same.

Վերցրե՛ք այս կամ այն կեսը. ոչ մի տարբերություն չկա նրանց միջև:

2. թե՛ մեկ, թե՛ մյուս (երկուսից).

There was an armchair at **either** end of the long table.

Երկար սեղանի թե՛ մեկ, թե՛ մյուս ծայրին կար մեկական բազկաթոռ:

Either գոյական դերանվան իմաստներն են՝ «երկուսից մեկը կամ մյուսը» և «թե՛ մեկը, թե՛ մյուսը (երկուսից)».

Is **either** of your parents at home now?

Ծնողներից մեկը կամ մյուսը տա՞նն է այժմ:

In **either** of these events you will benefit.
Երկու դեպքում էլ դուք կշահեք:

58. Both դերանունը գործածվում է որպես ածական դերանուն և որպես գոյական դերանուն:

Both ածական դերանունն ունի «թե՛ մեկ, թե՛ մյուս» իմաստը: Նրա գործածությունն այս իմաստով ավելի սովորական է, քան **either** դերանվան գործածությունը: **Both** դերանունը գործածվում է որպես որոշիչ հոգնակի թվով դրված գոյականի համար (վերաբերվում է երկու առարկայի): Գոյականին վերաբերող որոշիչ հոդը, ցուցական կամ ստացական դերանունը դրվում են **both** դերանունից հետո.

I want **both (the) books**.
Ես ցանկանում եմ թե՛ մեկ, թե՛ մյուս գիրքը:
I want **both these books**.
Ես ցանկանում եմ երկու գիրքն էլ:
Hold it in **both (your) hands**.
Բռնեք երկու ձեռքով:

Both գոյական դերանունն ունի «երկուսն էլ՝ թե՛ մեկը, թե՛ մյուսը» իմաստը: Նախադասության մեջ կարող է լինել ենթակա, խնդիր և բացահայտիչ:

Both are good.
Երկուսն էլ լավն են:
I want **both**.
Ես ցանկանում եմ թե՛ մեկը, թե՛ մյուսը:
We **both** want to go.
Մենք երկուսս էլ ցանկանում ենք գնալ:

59. Other դերանունը գործածվում է որպես ածական դերանուն և որպես գոյական դերանուն:

Other ածական դերանունն ունի հետևյալ իմաստները.

1. մյուս

The post office is on **the other** side of the street.

Փաստի բաժանմունքը փողոցի մյուս կողմում է:

I see Tom and John. Where are **the other** boys?

Ես տեսնում եմ Թոմին և Ջոնին: Որտե՞ղ են մյուս տղաները:

2. այլ, ուրիշ.

I have no **other** friends but you.

Չեզանից բացի այլ ընկերներ չունեմ:

John and some **other** boys went swimming.

Ջոնը և մի քանի ուրիշ տղաներ զնացին լողալու:

He is here for quite **other** reasons.

Նա եկել է այստեղ (այստեղ է) միանգամայն այլ նկատառումներով:

The other «մյուսը» գոյական դերանունն ունի հոգնակի թվի և ստացական հոլովի ձևեր (**others, other's, others'**).

The twins are so much alike that people find it difficult to tell (the) one from **the other**.

Երկվորյակներն այնքան նման են, որ դժվարանում են տարբերել մեկը մյուսից:

I see Tom and John. Where are **the others**?

Ես տեսնում եմ Թոմին և Ջոնին: Որտե՞ղ են մյուսները:

Six of them are mine; **the others** are John's.

Դրանցից վեցը իմն են. մյուսները պատկանում են Ջոնին:

One of her daughters is married to a student. **The other's** husband is a doctor.

Նրա դուստրերից մեկն ամուսնացած է ուսանողի հետ: Մյուսի ամուսինը բժիշկ է:

Առանց հոդի գործածվելու դեպքում **others** հոգնակի ձևն ունի «ուրիշները» իմաստը.

Others may laugh at her I think she is sweet.

Ուրիշները կարող են ծիծաղել նրա վրա, բայց ես կարծում եմ, նա գրավիչ է:

Some of the tourists went on the beach; **others** explored the town.

Ձրոսաշրջիկներից ոմանք զբոսնեցին ծովաօրին, ուրիշները դիտեցին քաղաքը:

60. **Another** դերանունը գործածվում է որպես ածական դերանուն և որպես գոյական դերանուն:

Another ածական դերանունն ունի «լրացուցիչ՝ էլի մեկ, ևս մեկ» իմաստը.

Will you have **another** cup of tea?

Եվս մի բաժակ թեյ խմեցե՞ք, խնդրեմ:

I won't say **another** word about it.

Այլևս ոչ մի բառ չեմ ասի դրա մասին:

Another գոյական դերանունն ունի «մեկ ուրիշը» իմաստը.

I don't like this hat; can you show me **another**?

Ես չեմ հավանում այս գլխարկը: Կարո՞ղ եք ցույց տալ մեկ ուրիշը:

ԺԻՏԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ (NEGATIVE PRONOUNS)

61. Անգլերենի ժխտական դերանուններն են՝ **no** «ոչ մի», **nobody**, **no one**, **none** «ոչ ոք», **nothing** «ոչինչ, ոչ մի բան», **neither** «երկուսից ոչ մեկը»: Քանի որ անգլերեն նախադասության մեջ, որպես կանոն, լինում է միայն մեկ ժխտում, ժխտական դերանունները գործածվում են հետևյալ կերպ.

There is **no** end to our troubles.

Վերջ չկա մեր հոգսերին:

We saw **nobody** we knew.

Մենք ծանոթ ոչ ոքի չտեսանք:

None of them has (have) come back yet.

Նրանցից ոչ մեկը դեռ չի վերադարձել:

Nothing ever pleases her.

Ոչինչ երբեք չի գոհացնում նրան:

I like **neither** of them.

Երկուսից ոչ մեկը դուր չի գալիս ինձ:

Neither statement is true.

Երկու հայտարարություններից ոչ մեկը ճիշտ չէ:

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ (THE NUMERAL)

1. Առարկայի թիվ կամ թվային կարգ ցույց տվող բառերը կոչվում են թվական անուններ կամ թվականներ: Թվականները լինում են քանակական (cardinal) և դասական (ordinal): Անգլերենի թվականներն ըստ կազմության լինում են պարզ (one, two, ten), ածանցավոր (fourteen, twenty, sixteenth) և բաղադրյալ (twenty-four, fifty-five, three hundred and ten):

Քանակական

Դասական

1 one	1st first
2 two	2nd second
3 three	3rd third
4 four	4th fourth
5 five	5th fifth
6 six	6th sixth
7 seven	7th seventh
8 eight	8th eighth
9 nine	9th ninth
10 ten	10th tenth
11 eleven	11th eleventh
12 twelve	12th twelfth
13 thirteen	13th thirteenth
14 fourteen	14th fourteenth
15 fifteen	15th fifteenth
16 sixteen	16th sixteenth

17 seventeen	17th seventeenth
18 eighteen	18th eighteenth
19 nineteen	19th nineteenth
20 twenty	20th twentieth
21 twenty-one	21st twenty-first
30 thirty	30th thirtieth
40 forty	40th fortieth
50 fifty	50th fiftieth
60 sixty	60th sixtieth
70 seventy	70th seventieth
80 eighty	80th eightieth
90 ninety	90th ninetieth
100 one hundred	100th (one) hundredth
101 one hundred and one	101st (one) hundred and first
1,000 one thousand	1,000th (one) thousandth
100,000 one hundred thousand	100,000th (one) hundred thousandth
1,000,000 one million	1,000,000th (one) millionth

Ծանոթություն. 1. Hundred, thousand, million բվականներից առաջ դրվող **one** բվականի փախարեն հաճախ գործածվում է **a** անորոշ հոդը. **a hundred, a thousand, a million**: 2. Դասական բվականներից առաջ գործածվում է որոշիչ հոդ. **seven - the seventh, seventeen - the seventeenth, seventy - the seventieth, one hundred - the (one) hundredth** և այլն: 3. Բաղադրյալ բվականների դասականը կազմելիս փոխվում է միայն վերջին բաղադրիչը. **the 25th - the twenty - fifth, the 101st - the (one) hundred and first, the 324th - the three hundred and twenty - fourth**: 4. Դասական բվականներից առաջ կարող է գործածվել նաև անորոշ հոդ: Այս դեպքում բվականը ձեռք է բերում նոր իմաստ՝ «լրացուցիչ, մի այլ»։ **They had a third race to decide who was the real winner** Նրանք նորից մրցեցին որոշելու համար, թե ով է իսկական հաղթողը:

ԲԱՅ (THE VERB)

ՅՎ.

ԴԱ

Ջ. ԲՈՂ

Ք

1. Առարկայի գործողություն կամ վիճակ ցույց տվող բառերը կոչվում են բայ: Անգլերենի բայերն ըստ կազմության լինում են պարզ (to live, to speak, to write), ածանցավոր (to terrify, to captivate, to undo), բարդ (to daydream, to sightsee, to white-wash) և բաղադրյալ (to stand up, to take in, to set out) ¹.

2. Անգլերենի բայերն ըստ իմաստի և նախադասության մեջ ունեցած գործառույթի բաժանվում են լիիմաստ և սպասարկու բայերի:

Լիիմաստ բայերը բառիմաստի տեսակետից լիարժեք բայեր են և ինքնուրույն արտահայտում են գործողություն կամ վիճակ. **Nobody knows where the man lives.**

Սպասարկու բայերը կարող են պահպանել կամ չպահպանել իրենց բառային իմաստը: Նույնիսկ այն դեպքում, երբ սպասարկու բայը պահպանում է իր բառային իմաստը, նախադասության մեջ այն չի կարող հանդես գալ ինքնուրույն, գործածվում է բաղադրյալ ստորոգյալի կազմում: Այդպիսի սպասարկու բայեր են եղանակավորող բայերը (He can do it very well) և բայ-հանգույցը (He will make a good teacher):

Սպասարկու բայերի մեկ այլ խումբ են ներկայացնում օժանդակ բայերը, որոնք զուրկ են բառային իմաստից և գործածվում են բայի վերլուծական ձևերում որպես սոսկ քերականական բաղադրիչ. **I have lost my umbrella. He is working in his garden.**

¹ Անգլերենում բայի անորոշ դերբայի (ինֆինիտիվ) ձևական նշանն է **to** մասնիկը, որը համարժեք է հայերենի անորոշ դերբայի -ալ, -ել վերջավորություններին:

3. Բայն ունի դիմավոր և անդեմ ձևեր: Անգլերենի բայի դիմավոր ձևերն արտահայտում են բայի հիմնական քերականական կարգերը՝ ժամանակ, կերպ, սեռ և եղանակ: Անգլերենում դեմքի և քվի կարգերը շատ թույլ են արտահայտված:

ԲԱՅԻ ԳԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ (THE BASIC FORMS)

4. Անգլերենում բայն ունի երեք հիմնական ձևեր, որոնք հիմք են ծառայում կազմելու բայի մյուս բոլոր ձևերը: Դրանք են՝ բայի հիմքը (ինֆինիտիվն առանց **to** մասնիկի), **Past indefinite** ձևը (տե՛ս «Բայ», 16) և **II դերբայը** (տե՛ս «Բայ» 150, 152, 154, 159): **Past Indefinite** ձևը համապատասխանաբար կոչվում է **II ձև**, **II դերբայը**՝ **III ձև**:

Ըստ **Past Indefinite** ձևի և **II դերբայի** կազմության, բայերն անգլերենում բաժանվում են կանոնավոր և անկանոն բայերի:

5. Կանոնավոր բայեր են ժամանակակից անգլերենի բայերի զգալի մասը: Կանոնավոր բայերի **II** և **III** ձևերը կազմվում են բայի հիմքին **-ed** վերջավորությունն ավելացնելով, որն արտասանվում է՝

[t] - խուլ բաղաձայններից հետո. **worked, helped.**

[d] ձայնեղ բաղաձայններից և ձայնավորներից հետո. **cleaned, bowed.**

[ɪd] - [t] և [d] բաղաձայններից հետո. **wanted, decided:**

Ծանոթություն. 1) Վանկի ձայնավորի կարճ արտասանությունը պահպանելու համար, նախքան **-ed** վերջավորությունն ավելացնելը, վերջին բաղաձայնը կրկնապատկվում է. **hop - hopped, stop - stopped:** 2) Նախքան **-ed** ավելացնելը բառավերջի **y**-ը փոխարինվում է **i**-ով, եթե **y**-ին նախորդում է բաղաձայն. **study - studied, try - tried:** Բայց՝ **stay - stayed, obey - obeyed:** 3) Բառավերջի **i**-ը կրկնապատկվում է միշտ. **travel - travelled, quarrel - quarrelled:**

6. Անկանոն բայերի **II** և **III** ձևերը կազմվում են՝

1. բառարմատի ծայնավորի փոփոխությամբ.
 drink [drɪŋk] - drank [dræŋk] - drunk [drʌŋk].

2. բառարմատի ծայնավորի փոփոխությամբ և -t վերջավորությամբ. leave [li:v] - left [left] - left [left]

Որոշ բայերի երեք հիմնական ձևերը համանուն են.

put - put - put

set - set - set

cut - cut - cut

Կան ոչ մեծ թվով բայեր, որոնք ունեն կանոնավոր և անկանոն ձևեր.

learn - learnt - learnt

learn - learned - learned

7. **To be** և **to go** բայերի հիմնական ձևերը կազմվում են այլ արմատներից.

ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ԿԵՐՊ (TENSE AND ASPECT)

8. Ժամանակը բայի այն կարգն է, որը ցույց է տալիս գործողության հարաբերությունը խոսելու պահի (կամ նրանից առաջ կամ հետո որոշակի պահի) նկատմամբ: Անգլերենում, ինչպես հայերենում, բայն ունի երեք ժամանակ՝ ներկա (**the Present Tense**), անցյալ (**the Past Tense**) և ապառնի (**the Future Tense**):

9. Կերպը բայի այն կարգն է, որը ցույց է տալիս, թե ինչպես է դիտվում գործողությունը: Անգլերենի բայն ըստ կերպի կարգի ունի շարունակական (**Continuous**) և ոչ շարունակական (**Non Continuous** կամ **Indefinite**) ձևեր: Շարունակական ձևերը գործողությունը ներկայացնում են ժամանակավոր զարգացման (ընթացքի) մեջ: Նրանք կարող են ունենալ նաև հուզական երանգավորում: Ոչ շարունակական ձևերն ունեն շատ լայն իմաստ, նրանք սոսկ ներկայացնում են գործողության տեղի ունենալու փաստը:

Ընդունված է ասել, որ անգլերենի ոչ բոլոր բայերն են գործածվում շարունակական ձևով: Դրանք այն բայերն են, որոնց արտահայտած գործողությունը հաճախ կարիք չկա ներկայացնելու զարգացման մեջ: Օրինակ՝ զգայական ընկալում արտահայտող բայերը (to see, to hear, to notice, to smell և այլն), մտավոր գործունեություն արտահայտող բայերը (to know, to understand, to forget, to agree, to imagine և այլն), պատկանելություն ցույց տվող բայերը (to belong, to have, to own և այլն), զգացմունք արտահայտող բայերը (to like, to love, to hate և այլն) և մի շարք այլ բայեր: Սակայն անհրաժեշտության դեպքում այս բայերը կարող են գործածվել շարունակական ձևով՝ գործողությանը ուժգնություն հաղորդելու համար.

Am I really hearing a voice at last?

God **was seeing** them die.

She **was imagining** all sorts of terrible things.

You **are** always **agreeing** with me.

10. Անգլերենում բայն ունի մաս **պերֆեկտային (Perfect)** և **ոչ պերֆեկտային (Non-Perfect)** ձևեր: Պերֆեկտի քերականական կարգը դեռևս չի ստացել իր վերջնական բնորոշումը: Պերֆեկտային ձևերն արտահայտում են մախորդում և ավարտվածություն, ոչ պերֆեկտային ձևերը չունեն որոշակի քերականական բնութագիր:

11. Վերը նշված երեք քերականական կարգերն այնքան սերտորեն են կապված միմյանց հետ, որ բայի միևնույն քերականական ձևը կարող է արտահայտել ժամանակ, կերպ, հաճախ մաս պերֆեկտ, այնպես որ անգլերենում բայի դիմավոր ձևերը դիտվում են որպես կերպաժամանակային ձևեր, որոնց արտահայտած քերականական կարգերից հիմնականը ժամանակի կարգն է: (Այդ պատճառով շատ դասագրքերում այս ձևերը համարվում են ժամանակի ձևեր):

Անգլերենի կերպաժամանակային ձևերն են՝ **the Present Indefinite, the Present Continuous, the Present Perfect, the Present Perfect Continuous, the Past Indefinite, the Past Continuous, the Past Perfect, the Past Perfect Continuous, the Future Indefinite, the Future Continuous, the Future Perfect, the Future Perfect Continuous:**

Բայն անգլերենում ունի մակ այսպես կոչված «անցյալի ապառնի» (**Future-in-the-Past**) ձևեր: Այս ձևերը գործածվում են հիմնականում խնդիր երկրորդական մախադասություններում, երբ գլխավոր մախադասության բայ-ստորոգյալը դրված է անցյալ ժամանակով: Դրանք են՝ **the Future Indefinite-in-the-Past, the Future Continuous-in-the-Past, the Future Perfect-in-the-Past, the Future Perfect Continuous-in-the-Past:**

THE INDEFINITE FORMS

The Present Indefinite Անորոշ ներկա

To Be «լինել»

Affirmative	Interrogative	Negative
I am	am I?	I am not
you are	are you?	you are not
he (she, it) is	is he (she, it)?	he (she, it) is not
we are	are we?	we are not
you are	are you?	you are not
they are	are they?	they are not

Խոսակցական լեզվում գործածվում են համապատասխան կրճատ ձևերը՝ I'm, you're, he's, it's և այլն: Կրճատ ժխտական ձևերն են՝ I'm not, you're not, he's not, it's not և այլն: Ժխտական - հարցական ձևերն են՝ am I not? (կրճատ՝ aren't I?), are you not? (aren't you?), is he not (isn't he?) և այլն:

To Have «ունենալ»

Affirmative	Interrogative	Negative
I have	have I?	I have not
you have	have you?	you have not
he (she, it) has	has he (she, it)?	he (she, it) has not
we have	have we?	we have not
you have	have you?	you have not
they have	have they?	they have not

Կրճատ ժխտական ձևերն են **haven't, hasn't** ժխտական-հարցական ձևերն են **have I not? (haven't I?), have you not? (haven't you?), has he not? (hasn't he?)** և այլն: Շատ հաճախ **not** ժխտական մասնիկի փոխարեն գործածվում է **not** ժխտական դերանունը: Այդ դեպքում գոյականին նախորդող հոդը զեղչվում է. **The room has not (hasn't) a window** կամ **The room has no window**: Երբ գոյականին նախորդող որոշիչն արտահայտված է բնականով, **many, much** քանակական դերանուններով և **any** անորոշ դերանունով, բայի ժխտական ձևը կազմվում է միայն **not** մասնիկի միջոցով. **They have not three children, they have two. She has not many English books. I have not much time.**

Խոսակցական լեզվում հաճախ **have** ձևի փոխարեն գործածվում է **have got** ձևը. **She's got a nice voice. I've got my ticket. He's got a flat in Leeds.**

To have breakfast (lunch, dinner, tea, supper), և նման այլ կապակցություններում բայը համարժեք է **to take (to take a meal)** և **to give (to give a party)** բայերին: Խոնարհման հարցական և ժխտական ձևերում գործածվում է **to do** օժանդակ բայը.

Do you have lunch at one? Yes, I do.

Do you have coffee or tea for breakfast? I have coffee.

How many English lessons do you have a week? I have six.

In Spain they don't have dinner till ten.

ԱՄՆ-ում և մյուս անգլիախոս երկրներում բոլոր դեպքերում հարցական և ժխտական ձևերում գործածվում է **to do** բայը.

Ամերիկացին կասեր.

Can you help me now? Do you have time?

Անգլիացին հավանաբար կասեր.

Can you help me now? Have you got time?

Անգլիայում, երբ խոսքը սովորություն դարձած կրկնվող գործողության մասին է, հարցական և ժխտական ձևերը կազմում են **to do** բայի միջոցով.

Customer: Do you ever **have** pineapples?

Shopkeeper: We **don't have** them very often.

To Work «աշխատել»

Affirmative	Interrogative	Negative
I work	do I work?	I do not work
you work	do you work?	you do not work
he (she, it) work	does he (she, it)?	he (she, it) does not work
we work	do we work?	we do not work
you work	do you work?	you do not work
they work	do they work?	they do not work

12. Present Indefinite հաստատական ձևը կազմում է բայի հիմքից առանց որևէ վերջավորության, բացառությամբ եզակի 3-րդ դեմքի, որն ունի **-s(es)** վերջավորությունը. **(he) knows, (he) goes:**

-s վերջավորությունն արտասանվում է՝

[z] - ձայնավորներից հետո՝ **knows, lies.**

[z] - ձայնեղ բաղաձայններից հետո՝ **lives, reads.**

[s] - խուլ բաղաձայններից հետո՝ **gets, writes.**

Եթե բայի հիմքը վերջանում է **ss, ch, x, o** տառակապակցություններով և տառերով, եզակի 3-րդ դեմքում ավելանում է **-es** վերջավորությունը, որն արտասանվում է՝

[ɪz] - սուլական և շչական բաղաձայններից հետո՝ **passes, washes, catches.**

[z] - ձայնավորներից հետո՝ **goes, does:**

Եթե բայի հիմքը վերջանում է **y** տառով, որին նախորդում է բաղաձայն, եզակի 3-րդ դեմքում ավելանում է **-es** վերջավորությունը, որից առաջ **y**-ը փոխարինվում է **i**-ով: Այս դեպքում **-es** վերջավորությունն արտասանվում է [z]. try - (he) tries, study - (he) studies: Եթե բառավերջի **y** տառին նախորդում է ձայնավոր, փոփոխություն տեղի չի ունենում, միայն ավելացվում է **-s** վերջավորությունը, որն արտասանվում է [z]. play - (he) plays, stay - (he) stays:

13. Հարցական և ժխտական ձևերը կազմում են **to do** օժանդակ բայի **Present Indefinite** ձևի և լիմաստ բայի ինֆինիտիվի (առանց **to** մասնիկի) հարադրությամբ: Ժխտական ձևում օժանդակ բայից հետո դրվում է **not** մասնիկը: Խոսակցական լեզվում **do not, does not** կապակցությունները կրճատվում են՝ **don't** [daʊnt], **doesn't** [dʌznt]. **I don't work?** (**don't I work?**), **does he not work?** (**doesn't he work?**) և այլն: Ժխտական - հարցական ձևերն են՝ **do I not work?** (**don't I work?**), **does he not work?** (**doesn't he work?**) և այլն:

14. Present Indefinite ձևը ցույց է տալիս՝

1. Գործողություն կամ վիճակ, որը բնորոշում է գործողություն կատարողին ներկա ժամանակում.

He **lives** in Yerevan.

Նա ապրում է Երևանում:

She **plays** the piano beautifully.

Նա շատ լավ է դաշնամուր նվագում:

She **has** a large family.

Նա բազմանդամ ընտանիք ունի:

2. Ներկա ժամանակում իրար հաջորդող գործադրություններ.

Miss Green **arrives** at the office before nine o'clock. She **takes** her hat and coat **off** and **puts** them on a hook on the wall. Then she **takes** the cover off the typewriter and **sits down** at her desk.

3. Սովորություն դարձած կամ կանոնավոր կերպով կրկնվող գործողություն: Գործողության կրկնվելը հաճախ նշվում է **often** «հաճախ», **seldom** «հազվադեպ», **sometimes, occasionally** «երբեմն», **always** «միշտ», **every year (month, week, day), on Sundays** և այլ մակրայներով կամ պարագայական կապակցություններով.

I **usually** get up at 7.

Ես սովորաբար վեր եմ կենում ժամը 7-ին:

We **often** go there.

Մենք հաճախ ենք գնում այնտեղ:

He **visits** me **occasionally**.

Նա երբեմն այցելում է ինձ:

4. Խոսելու պահին տեղի ունեցող գործողություն կամ վիճակ՝ արտահայտված **to understand, to know, to see, to hear, to like, to love** և այլ բայերով, որոնք սովորաբար չեն գործածվում **Continuous** ձևով.

You **don't understand** what a difficult position I am in.

Դուք չեք հասկանում, թե ինչ ծանր վիճակում եմ ես:

I am not guessing - I **really know**.

Ես չեմ գուշակում՝ ես իրոք գիտեմ:

I **see** it very well from here.

Այստեղից ես շատ լավ եմ տեսնում դա:

I **don't like** this hat, show me another, please.

Ես չեմ հավանում այս գլխարկը, ցույց տվե՛ք մեկ ուրիշը, խնդրեմ:

5. Վայրկենական գործողություն, որը տեղի է ունենում խոսելու պահին, սակայն խոսողի համար կարևոր չէ գործողության ընթացքի մեջ լինելը, նա միայն անվանում է գործողությունը.

I refuse to listen to you. You **talk** such nonsense.

Չեմ ցանկանում լսել քեզ: Դու անմիտ բաներ ես ասում:

I think the boy is behaving very badly. Why **don't** you **take** him home?

Կարծում եմ, տղան շատ վատ է պահում իրեն: Ինչու՞ տուն չեք տանում:

Այս դեպքում **Present Indefinite** ձևը թարգմանվում է հայերեն սահմանական ներկայով:

6. Մոտ ապագայում կատարվելիք պլանավորված՝ կամ նախատեսված գործողություն: Հիմնականում գործածվում են **to go, to come, to arrive, to leave, to start** բայերը ապառնի ժամանակ ցույց տվող մակբայների և պարագայական կապակցությունների հետ.

He leaves for London next week.

Նա մեկնում է (մեկնելու է) Լոնդոն հաջորդ շաբաթ:

Please tell me what time the game starts today.

Ասացե՛ք, խնդրեմ, երբ է սկսվում (սկսվելու) խաղն այսօր:

7. Ապառնի գործողություն ժամանակի, պայմանի և զիջական երկրորդական նախադասություններում՝ **when, before, after, as soon as, till, if, whenever** շաղկապներից հետո.

I shall see him when he is back.

Ես կտեսնեմ նրան, երբ վերադառնա:

It will be five years before we meet again.

Հինգ տարի կանցնի, նախքան մենք կհանդիպենք կրկին:

He will start as soon as he receives the telegram.

Նա կմեկնի, հենց որ ստանա հեռագիրը:

She won't go away till you promise to help her.

Նա չի հեռանա, մինչև չխոստանաք օգնել իրեն:

I'll discuss it with you whenever you like.

Ես կքննարկեմ այդ հարցը ծեղ հետ, երբ որ ցանկանաք:

Այս դեպքում **Present indefinite** ձևը թարգմանվում է հայերեն ըղձական ապառնիով, նաև ենթադրական ապառնիով:

Ծանոթություն. **When, if, whether** շաղկապները կարող են կապակցել նաև խնդիր երկրորդական նախադասություն: Այդպիսի նախադասություններում ապառնի գործողությունն արտահայտվում է բայի ապառնի ժամանակածեղով.

I don't know when they will come.

Զգիտեմ, թե նրանք երբ կգան:

I don't know whether she will be able to help you.

Զգիտեմ, արդյոք նա կկարողանա օգնել ձեզ:

The Past Indefinite Անորոշ անցյալ

To Be

Affirmative	Interrogative	Negative
I was	was I?	I was not
you were	were you?	you were not
he (she, it) was	was he (she, it)?	he (she, it) was not
we were	were we?	we were not
you were	were you?	you were not
they were	were they?	they were not

Կրճատ ժխտական ձևերն են՝ I wasn't, you weren't և այլն: Ժխտական-հարցական ձևերն են was I not? (wasn't I?), were you not? (weren't you?) և այլն:

To Have

Affirmative	Interrogative	Negative
I had	had I?	I had not
you had	had you?	you had not
he (she, it) had	had he (she, it)?	he (she, it) had not
we had	had we?	we had not
you had	had you?	you had not
they had	had they?	they had not

Կրճատ ժխտական ձևն է I hadn't և այլն: Ժխտական-հարցական ձևն է had I not? (hadn't I?) և այլն:

To Work

Affirmative	Interrogative	Negative
I worked	did I work?	I did not work
you worked	did you work?	you did not work
he (she, it) worked	did he (she, it) work?	he (she, it) did not work
we worked	did we work?	we did not work
you worked	did you work?	you did not work
they worked	did they work?	they did not work

To Write

Affirmative	Interrogative	Negative
I wrote	did I write?	I did not write
you wrote	did you write?	you did not write
he (she, it) wrote	did he (she, it) write?	he (she, it) did not write
we wrote	did we write?	we did not write
you wrote	did you write?	you did not write
they wrote	did they write?	they did not write

15. Հարցական և ժխտական ձևերը կազմում են **to do** բայի **Past Indefinite** ձևի և լիինաստ բայի ինֆինիտիվի (առանց **to** մասնիկի) հարադրությամբ: Ժխտական ձևում օժանդակ բայից հետո դրվում է **not** մասնիկը: Խոսակցական լեզվում **did not** կապակցությունը կրճատվում է. **I didn't work, he didn't work** և այլն: Ժխտական հարցական ձևն է **did I not work? (didn't I work?), did he not work? (didn't he work?)** և այլն:

16. Past Indefinite ձևը ցույց է տալիս՝

1. Գործողություն կամ վիճակ, որը տեղի է ունեցել անցյալում: Անցյալ ժամանակը նշվում է հետևյալ մակբայներով և պարագայական կապակցություններով. **ago** «(սրանից) առաջ», **yesterday** «երեկ», **the other day** «օրերս, անցյալ

օրը», **last week** «անցյալ շաբաթ», **last year** «անցյալ տարի» և այլն.

We had a meeting yesterday.

Մենք ժողով ունեինք երեկ:

I received his letter last week.

Ես ստացա նրա նամակն անցյալ շաբաթ:

Past Indefinite ձևը կարող է գործածվել նաև **this morning, today, tonight** և այլ մակբայների և պարագայական կապակցությունների հետ, երբ օրվա՝ նրանց նշած ժամանակամիջոցն անցյալ է արդեն. **I saw the announcement in the paper this morning.**

Past Indefinite ձևի արտահայտած գործողությունը կարող է տևած լինել որոշ ժամանակ: Այդ դեպքում ժամանակը նշվում է պարագայական կապակցությամբ.

Remember how we quarrelled about it? We quarrelled for three days.

Հիշու՞մ եք, թե ինչպես էինք վիճում այդ մասին: Վիճում էինք (վիճեցինք) երեք օր:

We stayed in the garden for a long time.

Մենք երկար ժամանակ մնացինք պարտեզում:

Հաճախ ժամանակը չի նշվում, քանի որ այն պարզ է կոնտեքստից.

Help came at last.

Վերջապես օգնություն ստացվեց:

They came to river.

Նրանք հասան (մի) գետի:

He built that place for Lord Henry.

Այդ տունը նա կառուցեց լորդ Հենրիի համար:

2. Իրար հաջորդող մի շարք գործողություններ անցյալում.

Miss Green arrived at the office before nine o'clock. She took her hat and coat off and put them on a hook on the wall. Then she took the cover off the typewriter and sat down at her desk.

3. Կրկնվող գործողությունն անցյալում: Գործողության կրկնվելը սովորաբար նշվում է **always, usually, often, sometimes** և այլ մակբայներով.

She called on us very often last summer.

Նա շատ հաճախ էր մեզ այցելում անցյալ ամառ:

He always made his own breakfast.

Նա միշտ ինքն էր պատրաստում իր նախաճաշը:

Sometimes he found his work difficult.

Երբեմն նա գտնում էր, որ իր աշխատանքը ծանր է:

Ծանոթություն. Անցյալում կրկնվող կամ սովորություն դարձած գործողություն են արտահայտում նաև հետևյալ կապակցությունները.

ա) **would + Infinitive**

He would sit there hour after hour looking at the traffic go by.

Նա ժամերով նստում էր (սովորություն ուներ նստելու) այնտեղ, դիտելով փողոցի երթևեկությունը:

She would call on me on her way home.

Պատահում էր, նա այցելում էր ինձ տուն գնալիս:

բ) **used [ju:st] to + Infinitive**

Every afternoon, when the children came from school, they **used to go and play** in the garden.

Ամեն կեսօրից հետո, երբ երեխաները վերադառնում էին դպրոցից, նրանք սովորաբար գնում և խաղում էին պարտեզում:

Անգլերենի **Past Indefinite** ձևն ըստ կոնտեքստի թարգմանվում է հայերեն սահմանականի անցյալ կատարյալով, ինչպես նաև անցյալ անկատարով:

4. Ապառնի գործողություն՝ ժամանակի և պայմանի երկրորդական նախադասություններում, եթե գլխավոր նախադասության բայ - ստորոգյալը դրված է անցյալ ժամանակով.

She said she would help me **when she finished** her work.

Նա ասաց, որ կօգնի ինձ, երբ վերջացնի աշխատանքը:

She said she would help me **if she finished** her work.

Նա ասաց, որ կօգնի ինձ, եթե վերջացնի աշխատանքը:

Այս դեպքում **Past Indefinite** ձևը թարգմանվում է հայերեն ըղծական ապառնիով:

17. When մակբայով սկսվող հարցական նախադասություններում, երբ անհրաժեշտ է ընդգծել գործողության կատարման ժամանակը, միայն **Past Indefinite** ձևն է գործածվում: Թարգմանվում է հայերեն անցյալ կատարյալով, ինչպես նաև ներկա վաղակատարով.

When did it happen?

Ե՞րբ պատահեց դա: Ե՞րբ է պատահել դա:

When did you get the telegram?

Ե՞րբ ստացաք հեռագիրը: Ե՞րբ եք ստացել հեռագիրը:

The Future Indefinite Անորոշ ապառնի

To Work

Affirmative

I shall/will work

we shall/will work

you will work

you will work

he (she, it) will work

they will work

Interrogative

shall I work?

shall we work?

will you work?

will you work?

will he (she, it) work?

will they work?

Negative

I shall/will not work

we shall/will not work

you will not work

you will not work

he (she, it) will not work

they will not work

18. Future Indefinite ձևը կազմվում է **shall** և **will** օժանդակ բայերի և լիմաստ բայի ինֆինիտիվի (առանց **to** մասնիկի) հարադրությամբ: Առաջին դեպքում գործածվում են **shall/will** բայերը (վերջինս հատկապես խոսակցական լեզվում), երկրորդ և երրորդ դեմքերում գործածվում է **will** բայը: Հարցական ձևում առաջին դեմքում սովորաբար գործածվում է **shall** բայը: Հարցական ձևը կազմելու համար օժանդակ բայը դրվում է ենթակայից առաջ: Ժխտական ձևում **not** մասնիկը դրվում է օժանդակ բայից հետո: Կրճատ ձևերն են՝ I'll work, he'll work և այլն, I shan't [ʃa:nt] work, he won't [wount] work և այլն: Ժխտական - հարցական ձևերն են՝ shall I not work? (shan't I work?), will he not work? (won't he work?) և այլն:

To be և **to have** բայերի **Future Indefinite** ձևը կազմվում է ինչպես մյուս բայերի այդ ձևը՝ I shall I will be, he will be, I shall I will have, he will have և այլն:

19. Future Indefinite ձևը ցույց է տալիս՝

1. Ապառնի գործողությունն առանց սահմանափակումների.

Life **will teach** her a lesson.

Կյանքը նրան դաս կտա:

We **shall meet** again one day.

Մենք մի օր նորից կհանդիպենք:

What **shall I do** without you?

Ի՞նչ կանեմ ես առանց ձեզ:

2. Ապառնի գործողություն, որի կատարման ժամանակը նշվում է tomorrow «վաղը», next week «հաջորդ շաբաթ», next month «հաջորդ ամիս», next year «հաջորդ տարի», in two days «երկու օրից» և այլ մակբայներով կամ պարագայական կապակցություններով.

I **shall do** it at once.

Ես կանեմ դա անմիջապես:

He **will arrive** tomorrow.

Նա ժամանելու է (կժամանի) վաղը:

We **will know** the result in three days.

Մենք արդյունքը կիմանանք երեք օրից:

3. Ապառնի գործողություն, որը կարող է տևել որոշ ժամանակ: Ժամանակամիջոցը նշվում է պարագայական կապակցությամբ.

I hope you'll live for many years.

Հուսով եմ՝ դուք երկար կապրեք:

I think I shall remain a student all my life.

Կարծում եմ՝ ուսանող կմնամ ամբողջ կյանքում:

4. Իրար հաջորդող ապառնի գործողություններ.

I'll take a walk to the sea and on my way back I'll buy you a newspaper.

Ես կգրեսնեմ մինչև ծովափ և վերադարձին լրագիր կգնեմ քեզ համար:

20. **Future Indefinite** ձևը գործածվում է ժամանակի և պայմանի երկրորդական նախադասություն պարունակող բարդ ստորադասական նախադասության գլխավոր նախադասությունում.

I shall talk to him when he comes.

Ես կխոսեմ նրա հետ, երբ նա գա:

You will be in time if you hurry.

Դուք չեք ուշանա, եթե շտապեք:

Անգլերենի **Future Indefinite** ձևը թարգմանվում է հայերեն ենթադրական ապառնիով, ինչպես նաև սահմանական ապառնիով:

The Future Indefinite-in-the-Past Անցյալ ապառնի

21. **Future Indefinite** ձևը կազմվում է օժանդակ **should** և **would** բայերի և լիմաստ բայի ինֆինիտիվի (առանց **to** մասնիկի) հարադրությամբ: Առաջին դեմքում գործածվում են **should/would** բայերը, մյուս դեմքերում՝ **would** բայը: Այս ձևն արտահայտում է գործողություն, որն ապառնի է անցյալ ժամանակակետի համեմատությամբ: Գործածվում է խնդիր

երկրորդական նախադասություններում, երբ գլխավոր նախադասության բայ ստորոգյալն արտահայտված է անցյալ ժամանակաձևերից որևէ մեկով՝ **I hoped (that) I should/would succeed. I knew (that) he would succeed:** ժխտական ձևում **not** մասնիկը դրվում է օժանդակ բայից հետո և հաճախ կազմում է կրճատ ժխտական ձևեր՝ **shouldn't, wouldn't:**

I said I should pay the money back.

Ես ասացի, որ կվերադարձնեմ (վերադարձնելու եմ) դրամը:

Bill said he would be 21 the following day.

Բիլն ասաց, որ հաջորդ օրը կլրանա իր 21 տարին:

Future Indefinite-in-the-Past ձևը թարգմանվում է հայերեն ենթադրական ապառնիով, ինչպես նաև սահմանական ապառնիով:

THE CONTINUOUS FORMS

The Present Continuous Շարունակական ներկա

To Work

Affirmative

I am working

we are working

you are working

you are working

he (she, it) is working

they are working

Interrogative

am I working?

are we working?

are you working?

are you working?

is he (she, it) working?

are they working?

Negative

I am not working

we are not working

you are not working

you are not working

he (she, it) is not working

they are not working

22. Present Continuous ձևը կազմվում է **to be** օժանդակ բայի **Present Indefinite** ձևի և լիինաստ բայի I դերբայի հարադրությամբ (I դերբայի մասին տե՛ս «Բայ», 150-151): Հարցական ձևը կազմելու համար օժանդակ բայը դրվում է ենթակայից առաջ: Ժխտական ձևում **not** մասնիկը դրվում է օժանդակ բայից հետո: Կրճատ հաստատական ձևերն են՝ I'm working, he's working, we're working և այլն: Կրճատ ժխտական ձևերն են՝ am I not working? (aren't I working), is he not working? (isn't he working), are we not working? (aren't we working?) և այլն: Ժխտական-հարցական ձևերն են՝ am I not working? (aren't I working?), is he not working? (isn't he working?), are we not working? (aren't we working?) և այլն:

23. Present Continuous ձևը ցույց է տալիս՝

1. խոսելու պահին ընթացքի մեջ գտնվող գործողություն: Գործողության ընթացքի մեջ լինելու պահը կարող է նշվել **now** մակբայով, **at this moment**, **at the moment**, **at present** պարագայական կապակցություններով. կարող է և չնշվել.

It is raining (now).

Անձրև է գալիս:

She is washing up at the moment.

Այս պահին նա ամաններն է լվանում:

What are you crying for?

Ինչու՞ եք լալիս:

2. Գործողություն, որն ընդգրկում է ներկայի ավելի մեծ ժամանակամիջոց, քան խոսելու պահը.

Where are you living now?

Որտե՞ղ եք ապրում այժմ:

I stay indoors most of the time. I'm **catching up** with my studies.

Անժ մասամբ տանն եմ լինում: Պարագլում եմ բաց թողած դասերս:

3. Գործողություն կատարողին բնութագրող գործողություն: Այս դեպքում հաճախ գործածվում են **always** և **constantly** «շարունակ» մակբայները.

She is always borrowing from me and never remembers to pay me back.

Նա միշտ պարտք է վերցնում ինձնից և երբեք չի վերադարձնում (չի հիշում, որ պետք է վերադարձնի):

Present Continuous ձևի այս գործածությունն ունի սուբյեկտիվ հուզական երանգավորում՝ խոսողը արտահայտում է դժգոհություն: Հուզական երանգավորման բացակայության դեպքում գործածվում է **Present Indefinite** ձևը.

Tom is always going away for weekends.

Tom always goes away for weekends.

Առաջին դեպքում խոսողի կարծիքով թոմը չափից ավելի հաճախ է բացակայում քաղաքից շաբաթվա վերջին: Երկրորդ դեպքում՝ խոսողը սոսկ արձանագրում է թոմի հաճախ բացակայելը:

Անգլերենի **Present Continuous** ձևը թարգմանվում է հայերեն սահմանական ներկայով:

4. Անձի որոշումից բխող մոտ ապագայում տեղի ունենալիք որոշակի գործողություն: Այս դեպքում ապառնի ժամանակը նշվում

I'm meeting Tom tonight. He is taking me to the theatre.

Այսօր երեկոյան տեսնվելու եմ թոմի հետ: Նա ինձ թատրոն է տանելու:

He is dining out tonight.

Այսօր երեկոյան նա տանը չի ճաշելու (ճաշելու է դրսում):

Present Continuous ձևն այս դեպքում թարգմանվում է հայերեն սահմանական ապառնիով:

24. **To have** բայն «ունենալ» իմաստով չի գործածվում **Present Continuous** ձևով. **Have you (got) a letter for me?** Այն ունի **Present Continuous** ձև հետևյալ բառակապակցություններում՝ **to have a smoke, to have a walk, to have a bath, to have a good time, to have dinner, to have coffee** և այլն.

I can't open the door; I'm having a bath.
We are having a wonderful time.

25. To feel, to hope, to look (= to seem), to wear բայերը կարող են գործածվել **Present Indefinite** և **Present Continuous** ձևերով առանց իմաստի զգալի փոփոխության.

How do you feel? I feel quite well.
How are you feeling? I'm feeling quite well.
You look quite happy today.
You are looking well today.

The Past Continuous Հարունակական անցյալ

To Work

Affirmative

I was working	we were working
you were working	you were working
he (she, it) was working	they were working

Interrogative

was I working?	were we working?
were you working?	were you working?
was he (she, it) working?	were they working?

Negative

I was not working	we were not working
you were not working	you were not working
he (she, it) was not working	they were not working

26. Past Continuous ձևը կազմվում է **to be** օժանդակ բայի **Past Indefinite** ձևի և լիմաստ բայի I դերբայի հարադրությամբ: Հարցական ձևում օժանդակ բայը դրվում է ենթակայից առաջ: Ժխտական ձևում **not** մասնիկը դրվում է օժանդակ բայից հետո: Կրճատ ժխտական ձևերն են՝ *he wasn't working, they weren't working* և այլն: Ժխտական-հարցական ձևերն են *was he not working? (wasn't he working?), were they not working? (weren't they working?)* և այլն:

27. Past Continuous ձևը ցույց է տալիս՝

1. Գործողություն, որն ընթացքի մեջ է եղել անցյալի որոշակի պահի: Գործողության ընթացքի մեջ լինելու պահը կարող է նշվել պարագայական կապակցությամբ կամ մեկ այլ գործողությամբ՝ արտահայտված **Past Indefinite** ձևով.

He was still working at 3 o'clock.

Նա ժամը 3-ին դեռ աշխատում էր:

He was working in his garden when I saw him.

Նա աշխատում էր իր պարտեզում, երբ ես տեսա նրան:

2. Գործողություն, որն ընթացքի մեջ է եղել անցյալի որոշակի ժամանակահատվածում: Անցյալ ժամանակահատվածը կարող է հասկացվել կոնտեքստից կամ կարող է նշվել տարբեր եղանակներով.

He was working from 5 till 7 in the evening.

Նա աշխատում էր երեկոյան 5-ից մինչև 7-ը:

What were you doing in Paris? I was working in a publishing house.

- Ի՞նչ էիք անում Փարիզում: - Աշխատում էի հրատարակչությունում:

3. Գործողություն կատարողին անցյալում բնութագրող գործողություն: Հաճախ գործածվում են **always** և **constantly** մակբայները: **Past Continuous** ձևի այսպիսի գործածությունն ունի սուբյեկտիվ հուզական երանգավորում.

She was constantly complaining of being lonely.

Նա շարունակ գանգատվում էր մենությունից:

Adeline was always suffering from a cut or a burn.

Էդելինը միշտ մատը կամ կտրում էր, կամ այրում:

Հուլական երանգավորման բացակայության դեպքում
Past Indefinite ձևն է գործածվում:

Past Continuous ձևը թարգմանվում է հայերեն սահմանական եղանակի անցյալի անկատարով:

The Future Continuous Հարունական ավառնի

To Work

Affirmative

I shall/will be working	we shall/will be working
you will be working	you will be working
he (she, it) will be working	they will be working

Interrogative

shall I be working?	shall we be working?
will you be working?	will you be working?
will he (she, it) be working?	will they be working?

Negative

I shall/will not be working	we shall/will not be working
you will not be working	you will not be working
he (she, it) will not be working	they will not be working

28. Future Continuous ձևը կազմվում է **to be** օժանդակ բայի **Future Indefinite** ձևի և լիմաստ բայի I դերբայի հարադրությամբ: Հարցական ձևում առաջին օժանդակ բայը դրվում է ենթակայից առաջ: Ժխտական ձևում **not** մասնիկը դրվում է

առաջին օժանդակ բայից հետո: Կրճատ ժխտական ձևերն են I shan't be working, he won't be working և այլն: Ժխտական-հարցական ձևերն են shall I not be working? (shan't I be working?), will he not be working? (won't he be working?) և այլն:

29. Future Continuous ձևը ցույց է տալիս՝

1. Գործողություն, որն ընթացքի մեջ է լինելու ապառնի որոշակի պահի: Գործողության ընթացքի մեջ լինելու պահը կարող է նշվել պարագայական կապակցությամբ կամ մեկ այլ ապառնի գործողությամբ՝ արտահայտված **Present Indefinite** ձևով.

This time tomorrow we shall be sitting in the cinema. We shall be watching a film.

Վաղը այս ժամանակ մենք նստած կլինենք կինոթատրոնում: Ֆիլմ դիտելիս կլինենք:

I shall be working in my garden **when you come**.

Ես աշխատելիս կլինեմ պարտեզում, երբ դուք գաք:

2. Գործողություն, որն ընթացքի մեջ է լինելու ապառնի որոշակի ժամանակահատվածում.

I shall be working from 5 till 7 in the evening.

Ես աշխատելու եմ (աշխատելիս կլինեմ) երեկոյան 5-ից - 7-ը:

Future Continuous ձևը վերը նշված իմաստներով թարգմանվում է հայերեն ենթադրական ապառնիի անկատարով կամ սահմանական ապառնիով:

30. Ժամանակակից անգլերենում **Future Continuous** ձևը գործածվում է՝ ցույց տալու համար դեպքերի բնական ընթացքով, տեղի ունեցող ապառնի գործողություն: Գործողության ժամանակը հիմնականում մոտակա ապագան է: Այն կարող է նշվել կամ չնշվել.

I shall be seeing them (shall meet them) **tomorrow**.

Ես տեսնելու եմ նրանց (հանդիպելու եմ նրանց հետ) վաղը:

He will be taking his exam **next week**.

Նա համծնելու է քննությունը հաջորդ շաբաթ:

Bob will not be coming. He's been taken ill.

Բոբը չի գա (չի գալու): Հիվանդացել է:

It is autumn; soon the leaves **will be changing** colour.

Աշուն է. շուտով տերևները կգունափոխվեն (գունափոխվելու են):

Այս դեպքում **Future Continuous** ձևը թարգմանվում է հայերեն սահմանական ապառնիով կամ ենթադրական ապառնիով:

The Future Continuous-in-the-Past **Անցյալի շարունակական ապառնի**

31. The Future Continuous-in-the-Past ձևը կազմվում է **to be** օժանդակ բայի **Future Indefinite-in-the-Past** ձևի և լիմաստ բայի **I դերբայի** հարադրությամբ՝ **I (we) should I would be working, you would be working, he (she, it) would be working, they would be working**: Հարցական ձևում առաջին օժանդակ բայը դրվում է ենթակայից առաջ: Ժխտական ձևում **not** մասնիկը դրվում է առաջին օժանդակ բայից հետո:

32. The Future Continuous-in-the-Past ձևը հիմնականում ցույց է տալիս դեպքերի բնական ընթացքով տեղի ունենալիք գործողություն, որն ապառնի է անցյալ ժամանակակետի համեմատությամբ: Գործածվում է խնդիր երկրորդական նախադասություններում, երբ գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը դրված է անցյալ ժամանակածևով:

I felt that in a moment we should be talking like two old acquaintances.

Ես զգացի, որ մեկ րոպեից մենք կխսենք (խոսելու ենք) երկու հին ծանոթների նման:

He said he would be seeing them that evening at the club.

Նա ասաց, որ կտեսնի (տեսնելու է) նրանց այդ երեկո ակումբում:

The Future Continuous-in-the-Past ձևը այս գործածությամբ թարգմանվում է հայերեն ենթադրական ապառնիով կամ սահմանական ապառնիով:

THE PERFECT FORMS

51

The Present Perfect Վաղակատար ներկա

To Work

Affirmative

I have worked	we have worked
you have worked	you have worked
he (she, it) has worked	they have worked

Interrogative

have I worked?	have we worked?
have you worked?	have you worked?
has he (she, it) worked?	have they worked?

Negative

I have not worked	we have not worked
you have not worked	you have not worked
he (she, it) has not worked	they have not worked

33. Present Perfect ձևը կազմվում է **to have** օժանդակ բայի **Present Indefinite** ձևի և լիմաստ բայի II դերբայի հարադրությամբ: Հարցական ձևում օժանդակ բայը դրվում է ենթակայից առաջ: Ժխտական ձևում **not** մասնիկը դրվում է օժանդակ բայից հետո: Կրճատ հաստատական ձևերն են՝ I've worked, he's worked և այլն: Կրճատ ժխտական ձևերն են՝ I haven't worked, he hasn't worked և այլն: Ժխտական հարցական ձևերն են haven't I worked?, hasn't he worked? և այլն:

34. Present Perfect ձևը ցույց է տալիս ներկա ժամանակակետից առաջ ավարտված գործողություն, որը սակայն կապված է ներկայի հետ իր հետևանքով:

I have read that novel.

Ես կարդացել եմ այդ վեպը (հետևանք՝ գիտեմ բովանդակությունը):

He has left London.

Նա մեկնել է Լոնդոնից (հետևանք՝ այժմ Լոնդոնում չէ):

Բայի այս ձևը հաճախ գործածվում է առանց գործողության ժամանակը նշելու, քանի որ խոսողին հետաքրքրում է գործողության հետևանքը:

Have you finished your work?

Վերջացրե՞լ եք ձեր աշխատանքը:

Have you read today's newspaper?

Կարդացե՞լ եք այսօրվա լրագիրը:

Ծանոթություն. Երբեմն, երբ գործողության ժամանակը չի նշվում, **Past Indefinite** ձևն է գործածվում, որովհետև խոսողը նկատի ունի անցյալ որոշակի իրադրություն.

Did you sleep well?

Did you enjoy the play?

Did you like the book?

Did you have a good time?

35. Present Perfect

They have just left.

Նրանք հենց մոր գնացին: (Հմնտ. **They left a few minutes ago**).

We have had no news from him **yet**.

Մենք մրանից լուր չունենք դեռ (լուր չենք ստացել):

I have already had breakfast.

Ես արդեն նախաճաշել եմ:

The postman **has already been** (has been already).

Փոստատարը արդեն քերել է փոստը:

He has done a great deal of work **lately**.

Նա շատ է աշխատել վերջերս:

Have you ever been up in an aeroplane?

Երբևէ ինքնաթիռ մատե՞լ եք:

He has never been abroad.

Նա երբեք չի եղել արտասահմանում:

36. Present Perfect ձևը գործածվում է **today** մակբայի և **this morning (afternoon, evening), this week, this week, this month, this year** պարագայական կապակցությունների հետ, որոնք ցույց են տալիս դեռևս անավարտ ժամանակամիջոց (անավարտ ժամանակամիջոցը կապում է ավարտված գործողությունը ներկայի հետ)։

I have translated five pages today. (օրը շարունակվում է)

Այսօր ես թարգմանել եմ հինգ էջ։

I have seen him this week. (շաբաթը դեռ չի ավարտվել)

Ես տեսել եմ նրան այս շաբաթ։

I haven't seen Tom this morning. (առավոտը շարունակվում է)

Ես չեմ տեսել Թոմին այս առավոտ։

Ծանոթություն. Եթե գործողությունը վերաբերում է անցյալին և կապված չէ ներկայի հետ որևէ կերպ, **today, this morning, this week** մակբայի և պարագայական կապակցությունների հետ գործածվում է **Past indefinite** ձևը։

I saw him this morning. (առավոտն ավարտվել է)

Ես տեսա նրան այս առավոտ։

I wasn't very well this morning, but I'm perfectly all right now.

(առավոտն ավարտվել է)

Այս առավոտ ես լավ չէի զգում, բայց այժմ միանգամայն առողջ եմ։

Present Perfect ձևը վերը բերված դեպքերում թարգմանվում է հայերեն հիմնականում սահմանական եղանակի վաղակատարով։

37. Present Perfect ձևը ցույց է տալիս գործողություն, որն սկսվել է անցյալում, շարունակվել է մինչև ներկա ժամանակակետը և դեռևս ընթացքի մեջ է։ Այս դեպքում նշվում է գործողության սկզբնակետը կամ ընթացքի մեջ լինելու ամբողջ ժամանակամիջոցը։ Գործողության սկզբնակետը նշելու համար գործածվում է **since** բառը, որը կարող է լինել նախդիր, շաղկապ կամ մակբայ։ **Since** շաղկապով կապակցվող երկրորդական նախադասության բայ-ստորոգյալը դրվում է **Present Indefinite** ձևով։

I have known her since her childhood. (մախդիր)

Ես նրան գիտեմ մանկությունից:

I have known her since she entered the University. (շաղկապ)

Ես նրան գիտեմ համալսարան ընդունվելու օրից:

We finished school in 1980 and I haven't seen her since.
(մակբայ)

Մենք դպրոցն ավարտեցինք 1980 թվականին, և այդ ժամանակից ես նրան չեմ տեսել:

Գործողության լրիվ ժամանակամիջոցը նշելու համար գործածվում է **for** մախդիրը.

I haven't seen Bill for three years.

Ես չեմ տեսել Բիլին երեք տարի:

She has lived in this house for ten years.

10 տարի է, ինչ նա ապրում է այս տանը:

Present Perfect ձևի այս գործածությունը հիմնականում վերաբերում է այն բայերին, որոնք սովորաբար չեն գործածվում **Continuous** ձևով: Այս դեպքում **Present Perfect** ձևը թարգմանվում է հայերեն հիմնականում անկատար ներկայով:

38. Present Perfect ձևը ցույց է տալիս ապառնի ավարտված գործողություն **when, before, after, as soon as, till, until** շաղկապներով կապակցվող ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում, երբ գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը դրված է **Future Indefinite** ձևով.

You will long for home when you have left it.

Տան կարոտը կզգաք, երբ հեռանաք (հեռացած լինեք) տնից:

As soon as we have had some tea, we shall go to see your house.

Թեյից հետո (հենց որ թեյ խմենք) կգնանք տեսնելու ձեր տունը:

The Past Perfect Վաղակատար անցյալ

To Work

Affirmative

I had worked	we had worked
you had worked	you had worked
he (she, it) had worked	they had worked

Interrogative

had I worked?	had we worked?
had you worked?	had you worked?
had he (she, it) worked?	had they worked?

Negative

I had not worked	we had not worked
you had not worked	you had not worked
he (she, it) had not worked	they had not worked

39. Past Perfect ձևը կազմվում է **to have** օժանդակ բայի **Past Indefinite** ձևի և լիինաստ բայի II դերբայի հարադրությամբ: Հարցական ձևում օժանդակ բայը դրվում է ենթակայից առաջ: Ժխտական ձևում **not** մասնիկը դրվում է օժանդակ բայից հետո: Կրճատ հաստատական ձևն է I'd worked, he'd worked և այլն: Կրճատ ժխտական ձևն է I hadn't worked, he hadn't worked և այլն: Ժխտական-հարցական ձևն է hadn't I worked? hadn't he worked? և այլն:

40. Past Perfect ձևը ցույց է տալիս անցյալ ժամանակակետից առաջ ավարտված գործողություն: Անցյալ ժամանակակետը կարող է նշվել մեկ այլ գործողությամբ՝ արտահայտված **Past Indefinite** ձևով կամ պարագայական կապակցությամբ.

They **had walked** only a few steps **when** it **began** to rain.
 Նրանք միայն մի քանի քայլ էին արել, երբ սկսեց անձրև գալ:
 He **had travelled** much **before** he **visited** America.

Նա շատ էր ճանապարհորդել նախքան Ամերիկա այցելելը:
 He **had finished** his work **by 5 o'clock**.

Նա ավարտել էր աշխատանքը մինչև ժամը 5-ը:
 She **had passed** five examinations **by the end of the term**.
 Նա հանձնել էր հինգ քննություն մինչև կիսամյակի վերջը:

Անցյալ ժամանակակետը կարող է հասկացվել կոնտեքստից.

She **saw** empty glasses and cups and **realized** that three people **had been** in the room.

She **was** sad the whole evening. She **had got** an unpleasant letter.

41. Continuous ձևով սովորաբար չգործածվող բայերի **Past Perfect** ձևը ցույց է տալիս գործողություն, որն սկսվել է անցյալ ժամանակակետից առաջ և շարունակվել մինչև այդ ժամանակակետը (կարող է շարունակվել նաև այդ պահին).

She **began** to do all the things that she **had wanted** to do for years.

Նա սկսեց անել այն բոլորը, որ տարիներ շարունակ ցանկացել էր անել:

He suddenly **understood** that she **had loved** him **all her life**.

Նա հանկարծ հասկացավ, որ կինը սիրել է իրեն ողջ կյանքում:

42. Past Perfect ձևը հաճախ գործածվում է **hardly ... when, scarcely ... when, no sooner ... than** զույգ շաղկապների հետ.

We **had hardly got** home **when** it began to rain.

Մենք հազիվ էինք տուն հասել, երբ սկսեց անձրև գալ:

They **had scarcely arrived** at the station **when** the train left.

Նրանք հազիվ էին ժամանել կայարան, երբ գնացքը մեկնեց:

They **had no sooner arrived** at the station **than** the train left.

Նրանք հենց նոր էին ժամանել կայարան, երբ գնացքը մեկնեց:

43. Past Perfect ձևը գործածվում է ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում հետևյալ կերպ.

1. When շաղկապով կապակցվող նախադասություններ.

Եթե երկրորդական և գլխավոր նախադասություններում արտահայտված գործողությունները հաջորդում են միմյանց, և երկրորդ գործողությունն անմիջապես հետևում է առաջինին, ապա երկու նախադասություններում էլ գործածվում է **Past Indefinite** ձևը.

When the play **ended** the audience **went** home.

When he **opened** the window the bird **flew out**.

Երբ հարկ կա ընդգծելու, որ առաջին գործողությունն ավարտվել էր մինչև երկրորդի սկսվելը, գործածվում է **Past Perfect** ձևը.

When she **had sung** her song she **sat down**.

When he **had seen** all the pictures he **left** the gallery.

2. Before, as soon as, till / until շաղկապներով կապակցվող նախադասություններ.

Այս շաղկապների դեպքում ևս գլխավոր և երկրորդական նախադասություններում գործածվում է **Past Indefinite** ձևը, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է ընդգծել, որ առաջին գործողությունը, որը կամ գլխավոր,

կամ երկրորդական նախադասությունում է, ավարտվել էր մինչև երկրորդ գործողության սկսվելը: Առաջին գործողության ավարտված լինելը նշելու համար գործածվում է **Past Perfect** ձևը:

It happened before you came.

He knocked at the door twice **before** a voice answered.

Before I **had known** him a week he **tried** to borrow money from me.

He **started as soon as** he **received** the news.

As soon as he **had gone** everybody **felt** much relieved.

He **refused** to go till he **had seen** all the papers.

We **waited until** the rain **stopped**.

I **had heard** nothing until you **told** me about it.

3. After շաղկապով կապակցվող նախադասություններ.

After շաղկապին հաջորդող նախադասության մեջ սովորաբար գործածվում է **Past Perfect** ձևը.

After I **had dressed** I **went** up to the sitting-room.

After the will **had been read** there **were** angry exclamations.

I **found** your coat **after** you **had left** the house.

To return, to rise, to go, to leave և այլ բայերի դեպքում կարող է գործածվել **Past Perfect** ձևը.

I arrived **after** he (had) **left**.

After we **rose** from the table I **went** to make a telephone call.

Past Perfect ձևը թարգմանվում է հայերեն սահմանական եղանակի անցյալ վաղակատարով: Խնդիր երկրորդական նախադասություններում այն, որպես կանոն, թարգմանվում է ներկա վաղակատարով. He said he **had read** the novel. Նա ասաց, որ կարդացել է այդ վեպը:

The Future Perfect Վաղակատար ապառնի

To Work

Affirmative

I shall/will have worked	we shall/will have worked
you will have worked	you will have worked
he (she, it) will have worked	they will have worked

Interrogative

shall I have worked?	shall we have worked?
will you have worked?	will you have worked?
will he (she, it) have worked?	will they have worked?

Negative

I shall/will not have worked	we shall/will not have worked
you will not have worked	you will not have worked
he (she, it) will not have worked	they will not have worked

44. Future Perfect ձևը կազմվում է **to have** օժանդակ բայի **Future Indefinite** ձևի և լիմաստ բայի II դերբայի հարադրությամբ: Հարցական ձևում առաջին օժանդակ բայը դրվում է ենթակայից առաջ: Ժխտական ձևում **not** մասնիկը դրվում է առաջին օժանդակ բայից հետո: Կրճատ հաստատական ձևն է I'll have worked, he'll have worked և այլն: Կրճատ ժխտական ձևերն են I shan't have worked, he won't have worked և այլն: Ժխտական-հարցական ձևերն են shan't I have worked? won't he have worked? և այլն:

45. Future Perfect ձևը ցույց է տալիս ապառնի ժամանակակետից առաջ ավարտված գործողություն: Ապառնի ժամանակակետը կարող է նշվել մեկ այլ գործողությամբ՝ արտահայտված **Present Indefinite** ձևով կամ պարագայական կապակցությամբ.

I shall have washed up before you come.

Ես ամանները կլվանամ (լվացած կլինեմ) մինչև քո գալը:

By the end of next month he will have been here for ten years.

Մինչև հաջորդ ամսվա վերջը կլրանա (լրացած կլինի) նրա այստեղ ապրելու 10 տարին:

David will have had his exam by 14 December.

Դեյվիդը հանձնած կլինի քննությունը մինչև դեկտեմբերի 14-ը:

Future Perfect ձևը թարգմանվում է հայերեն ենթադրական ապառնիի գլխավոր կամ երկրորդական ժամանակաձևերով:

The Future Perfect-in-the-Past Անցյալ վաղակատար ապառնի

46. Future Perfect-in the-Past ձևը կազմվում է **to have** օժանդակ բայի **Future Indefinite-in the-Past** ձևի և լիմաստ բայի **II դերբայի** հարադրությամբ. **I (we) should I would have worked, you would have worked, he (she, it) would have worked, they would have worked:**

47. Future Perfect-in the-Past ձևը ցույց է տալիս գործողություն, որն ավարտվելու է անցյալ ժամանակակետի համեմատությամբ ապառնի որոշակի պահից առաջ: Այս ձևը գործածվում է հազվադեպ, սովորաբար խնդիր երկրորդական նախադասություններում, երբ գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը դրված է անցյալ ժամանակաձևերից մեկով.

She said she would have answered the letter by the end of the week.

Նա ասաց, որ կպատասխանի (պատասխանած կլինի) նամակին մինչև շաբաթվա վերջը:

Future Perfect-in the-Past ձևը թարգմանվում է հայերեն ենթադրական ապառնիի գլխավոր կամ երկրորդական ժամանակաձևերով:

THE PERFECT CONTINUOUS FORMS

The Present Perfect Continuous

Վաղակատար շարունակական ներկա

To Work

Affirmative

I have been working	we have been working
you have been working	you have been working
he (she, it) has been working	they have been working

Interrogative

have I been working?	have we been working?
have you been working?	have you been working?
has he (she, it) been working?	have they been working?

Negative

I have not been working	we have not been working
you have not been working	you have not been working
he (she, it) has not been working	they have not been working

48. Future Perfect Continuous ձևը կազմվում է **to be** օժանդակ բայի **Future Perfect** ձևի և լիիմաստ բայի I դերբայի հարադրությամբ: Հարցական ձևում առաջին օժանդակ բայը դրվում է ենթակայից առաջ: Ժխտական ձևում **not** մասնիկը դրվում է առաջին օժանդակ բայից հետո: Կրճատ հաստատական ձևերն են I've been working, he's been working և այլն: Կրճատ ժխտական ձևերն են I haven't been working, he hasn't been working և այլն: Ժխտական-հարցական ձևերն են haven't I been working? hasn't he been working? և այլն:

49. Future Perfect Continuous ձևը ցույց է տալիս՝

17

1. Գործողություն, որն սկսվել է անցյալում և շարունակվում է դեռևս ներկա պահին: Գործողության սկզբնակետը նշելու համար գործածվում է **since** բառը, ընթացքի մեջ լինելու ամբողջ ժամանակամիջոցը նշելու համար՝ **for** նախդիրը.

I have been waiting for him since I came home.

Ես սպասում եմ նրան տուն գալու պահից:

I have been waiting for him since 10.

Ես սպասում եմ նրան ժամը 10-ից:

I have been waiting for him for half an hour.

Կես ժամ է, ինչ սպասում եմ նրան:

Թարգմանվում է հայերեն սահմանական ներկայով:

Ծանոթություն. Չպետք է շփոթել **Present Perfect Continuous** ձևի այս գործածությունը **Present Continuous** ձևի գործածության հետ: **Present Continuous** ձևը ցույց է տալիս ներկա պահին տեղի ունեցող գործողություն՝ առանց նշելու նրա տևողությունը, մինչդեռ **Present Perfect Continuous** ձևը նշում է տեղի ունեցող գործողության տևական լինելը.

I am waiting for Ann.

Ես սպասում եմ Էննին:

I have been waiting for Ann for an hour.

Մեկ ժամ է, ինչ սպասում եմ Էննին:

Երկու ձևերն էլ թարգմանվում են հայերեն սահմանական ներկայով:

2. Գործողություն, որն սկսվել է անցյալում և շարունակվել մինչև ներկա պահը: Դադարել է հենց նոր.

I'm so sorry I am late. Have you been waiting long?

Ներողություն, որ ուշացա: Երկա՞ր սպասեցիք (երկա՞ր եք սպասել):

Don't tell her what I've been saying.

Չասեք նրան, ինչ ասացի (ինչ ասել եմ):

Your shoes are wet. You've been walking in the rain.

Կոշիկներդ թրջվել են: Քայլել ես անձրևի տակ:

Այս դեպքում **Present Perfect Continuous** ձևը քարգմանվում է հայերեն սահմանական եղանակի անցյալ կատարյալով կամ ներկա վաղակատարով:

50. To live, to learn, to wait, to sit, to stand, to work, to teach և այլ բայերի **Present Perfect Continuous** և **Present Perfect** ձևերը զուգահեռաբար կարող են գործածվել արտահայտելու համար անցյալում սկսված և դեռևս շարունակվող կամ անցյալում սկսված և հենց նոր ավարտված գործողություն.

He has lived here for six weeks.

He has been living here for six weeks.

Վեց շաբաթ է, ինչ նա ապրում է այստեղ:

Here you are at last! I've been waiting for an hour.

Here you are at last! I've waited for an hour.

Վերջապես եկանք: Մեկ ժամ սպասել եմ:

The Past Perfect Continuous

Վաղակատար շարունակական անցյալ

To Work

Affirmative

I had been working

we had been working

you had been working

you had been working

he (she, it) had been working

they had been working

Interrogative

had I been working?

had we been working?

had you been working?

had you been working?

had he (she, it) been working?

had they been working?

Negative

I had not been working

we had not been working

you had not been working

you had not been working

he (she, it) had not been working

they had not been working

51. Past Perfect Continuous ձևը կազմվում է **to be** օժանդակ բայի **Past Perfect** ձևի և լիմաստ բայի I դերբայի հարադրությամբ: Հարցական ձևում առաջին օժանդակ բայը դրվում է ենթակայից առաջ: Ժխտական ձևում **not** մասնիկը դրվում է առաջին օժանդակ բայից հետո: Կրճատ հաստատական ձևն է **I'd been working, he'd been working** և այլն: Կրճատ ժխտական ձևն է **I hadn't been working, he hadn't been working** և այլն: Ժխտական-հարցական ձևն է **hadn't I been working? hadn't he been working?** և այլն:

52. Past Perfect Continuous ձևը ցույց է տալիս.

1. Գործողություն, որն սկսվել է անցյալ որոշակի ժամանակակետից առաջ, շարունակվել է և դեռևս ընթացքի մեջ է անցյալ այդ պահին: Գործողության սկիզբը նշելու համար գործածվում է **since** բառը, ընթացքի մեջ լինելու ամբողջ ժամանակամիջոցը նշելու համար **for** նախդիրը.

He was very tired as he had been working since early morning.
Նա շատ հոգնած էր, քանի որ աշխատում էր վաղ առավոտից:
He was very tired as he had been working for three hours.
Նա շատ հոգնած էր, քանի որ երեք ժամ էր, ինչ աշխատում էր:

Past Perfect Continuous ձևի այս գործածությունը տարբերվում է **Past Continuous** ձևի գործածությունից նրանով, որ **Past Perfect Continuous** ձևը նշվում է նաև նախորդող տևողություն:

2. Գործողություն, որն սկսվել է անցյալ որոշակի ժամանակակետից առաջ և շարունակվել է մինչև այդ ժամանակակետը կամ ավարտվել հենց դրանից առաջ.

She rose from the chair in which she had been sitting.
Նա վեր կացավ բազկաթոռից, որտեղ նստած էր մինչև այդ:
Adeline, who had been helping her mother, now joined them.
Էդելինը, որ մինչ այդ օգնում էր մորը, այժմ միացավ նրանց:

Past Perfect Continuous ձևը քարգմանվում է հայերեն սահմանական եղանակի անցյալ անկատարով:

The Future Perfect Continuous

Վաղակատար շարունակական ապառնի

To Work

Affirmative

I shall/will have been working	we shall/will have been working
you will have been working	you will have been working
he (she, it) will have been working	they will have been working

Interrogative

shall I have been working?	shall we have been working?
will you have been working?	will you have been working?
will he (she, it) have been working?	will they have been working?

Negative

I shall/will not have been working	we shall/will not have been working
you will not have been working	you will not have been working
he (she, it) will not have been working	they will not have been working

53. Future Perfect Continuous ձևը կազմվում է **to be** օժանդակ բայի **Future Perfect** ձևի և լիիմաստ բայի I դերբայի հարադրությամբ: Հարցական ձևում առաջին օժանդակ բայը դրվում է ենթակայից առաջ: Ժխտական ձևում **not** մասնիկը դրվում է առաջին օժանդակ բայից հետո: Կրճատ հաստատական ձևն է I'll have been working, he'll have been working և այլն: Կրճատ ժխտական ձևերն են I shan't have been working, he won't have been working և այլն: Ժխտական-հարցական ձևերն են shan't I have been working? won't he have been working? և այլն:

54. Future Perfect Continuous ձևը ցույց է տալիս գործողություն, որն սկսվելու է ապառնի որոշակի ժամանակակետից առաջ, շարունակվելու է և ընդգրկելու այդ ժամանակակետը.

By the end of the month he will have been working here for ten years.

Մինչև ամսվա վերջը նա աշխատելիս կլինի այստեղ արդեն 10 տարի:

Այս ձևը հազվադեպ է հանդիպում: Թարգմանվում է հայերեն ենթադրական ապառնիի անկատարով:

The Future Perfect Continuous-in-the-Past **Անցյալի վաղակատար շարունակական ապառնի**

55. Future Perfect Continuous-in-the-Past ձևը կազմվում է **to be** օժանդակ բայի **Future Perfect-in-the-Past** ձևի և լիինաստ բայի I դերբայի հարադրությամբ՝ I (we) should I would have been working, you would have been working, he (she, it) would have been working, they would have been working: Այս ձևը սովորաբար գործածվում է խնդիր երկրորդական նախադասություններում, երբ գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը դրված է անցյալ ժամանակաձևով:

56. Future Perfect Continuous-in-the-Past ձևը ցույց է տալիս գործողություն, որն ընթացքի մեջ է լինելու անցյալ ժամանակակետի համեմատությամբ ապառնի որոշակի պահից առաջ, կարող է շարունակվել և ընդգրկել այդ պահը.

He wrote that by the end of the year he would have been living in Paris for six months.

Նա գրում էր, որ մինչև տարվա վերջը ապրելիս կլինի Փարիզում արդեն 6 ամիս:

Future Perfect Continuous-in-the-Past ձևը հանդիպում է հազվադեպ: Թարգմանվում է հայերեն ենթադրական ապառնիի անկատարով:

ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՅՆԱՑՈՒՄ (THE SEQUENCE OF TENSES)

57. Ժամանակների համաձայնացումը որոշ երկրորդական նախադասությունների բայի ժամանակի կախվածությունն է գլխավոր նախադասության բայի ժամանակից:

Եթե գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը դրված է ներկա կամ ապառնի ժամանակով, երկրորդական նախադասության բայ-ստորոգյալը կարող է դրվել մտքով պահանջվող ցանկացած ժամանակով:

I know that she **travels** a good deal.
I don't think he'll ever **forgive** me.
I don't **see** why he **did** it.
She **will be** glad you've come.
I'll **tell** you what I'm **going to do** about it.

Եթե գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը դրված է անցյալ ժամանակածներից որևէ մեկով, երկրորդական նախադասության բայ-ստորոգյալը պետք է դրվի անցյալ ժամանակածնով՝ արտահայտելու համաժամանակություն կամ տարածամանակություն: Ժամանակների համաձայնեցումը կիրառվում է հիմնականում խնդիր երկրորդական նախադասություններում:

58. Եթե գլխավոր և երկրորդական նախադասությունների գործողությունները համաժամանակ են, և եթե գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը դրված է անցյալ ժամանակածնով, ապա խնդիր երկրորդական նախադասության բայ-ստորոգյալը դրվում է **Past Indefinite** կամ **Past Continuous** ձևով: Այս ձևերը, որպես կանոն, թարգմանվում են հայերեն սահմանական ներկայով.

Nobody **knew** what he **meant**.
Ոչ ոք չգիտեր, թե ինչ նկատի ունի նա:
She **said** she **did not know** the man.
Նա ասաց, որ չի ճանաչում այդ մարդուն:

I thought he was joking.

Ես մտածեցի, որ նա կատակում է:

He had not realized how nervous he was.

Նա չէր գիտակցել, թե որքան դյուրագրգիռ է ինքը:

Խնդիր երկրորդական նախադասությունը կարող է հաջորդել, ոչ միայն գլխավոր նախադասության բայ-ստորոգյալին, այլև ինֆինիտիվով արտահայտված այլ անդամի: Այս դեպքում ևս կիրառում է ժամանակների համաձայնեցումը, եթե գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը դրված է անցյալ ժամանակաձևով.

He had come to say he was leaving for England.

Նա եկել էր ասելու, որ մեկնում է Անգլիա:

Եթե խնդիր երկրորդական նախադասության գործողությունը նախորդել է գլխավոր նախադասության գործողությանը, երկրորդական նախադասության բայ-ստորոգյալը դրվում է **Past Perfect** կամ **Past Perfect Continuous** ձևով: **Past Perfect** ձևը թարգմանվում է հայերեն ներկա վաղակատարով, իսկ **Past Perfect Continuous** ձևը՝ ներկա անկատարով.

He said Betty had not changed at all.

Նա ասաց, որ Բեթին բոլորովին չի փոխվել:

She knew that her husband had been concealing something.

Նա գիտեր, որ ամուսինը ինչ-որ բան է թաքցնում:

Եթե խնդիր երկրորդական նախադասության բայ-ստորոգյալն արտահայտում է ապառնի գործողություն, որը հաջորդում է գլխավոր նախադասության գործողությանը, այն դրվում է **Future-in-the-Past** ձևերից մեկով.

I hoped (that) I should succeed.

Ես հուսով էի, որ հաջողություն կունենամ:

I feared that my companion would talk too much.

Ես վախեցնում էի, որ իմ ուղեկիցը չափից շատ կխոսի:

He knew that Kate would be waiting for him.

Նա գիտեր, որ Բեյթը կսպասի (սպասելիս կլինի) իրեն:

Future Indefinite-in-the-Past ձևը թարգմանվում է հայերեն ենթադրական ապառնիով, ինչպես նաև սահմանական ապառնիով: **Future Continuous-in-the-Past** ձևը թարգմանվում է ենթադրական ապառնիով, ինչպես նաև ենթադրական ապառնի անկատարով:

Եթե բարդ ստորադասական նախադասությունն ունի մեկից ավելի երկրորդական նախադասություններ, ժամանակների համաձայնեցումը կիրառվում է բոլոր երկրորդական նախադասություններում:

I thought I knew they had come.

I was sure she would visit me when (if) she had time.

Ես համոզված էի, որ նա կայցելի ինձ, երբ (եթե) ժամանակ ունենա:

59. Ժամանակների համաձայնեցումը կարող է չկիրառվել, երբ երկրորդական նախադասության գործողությունը ցույց է տալիս ոչ թե համաժամանակություն կամ տարաժամանակություն, այլ իրական ժամանակ՝ ներկա, անցյալ, ապագա: Դա տեղի է ունենում երկխոսություններում, լրագրային և ռադիո հաղորդումներում.

I wonder if you understood a word of what I have been saying.

I came to tell you that I'll vote against you.

I read the other day that they are going to raise the war pensions.

Ժամանակների համաձայնեցումը կարող է չկիրառվել, երբ խնդիր երկրորդական նախադասությունն արտահայտում է հանրահայտ ճշմարտություն.

You were told that the earth goes round the sun, and the moon goes round the earth.

You made me understand what love really is.

Ժամանակների համաձայնեցումը կարող է չկիրառվել.

1. Որոշիչ երկրորդական նախադասություններում.

Yesterday I met a friend of mine who works as doctor.

We were standing in the part of the market where flowers are sold.

2. Համեմատության երկրորդական նախադասություններում.

He was as fond of his father as I am of mine.

60. Ժամանակների համաձայնեցումը չի կիրառվում խնդիր երկրորդական նախադասություններում, երբ ստորոգյալի կազմում են **must, should, ought** և **need** եղանակավորող բայերը, որոնք ունեն միայն մեկ ձև.

He wrote that he **must** see me.

As he had broken it, he **agreed** that he **must** buy a new one.

She **advised** me recently that I **ought** to see a doctor.

I **didn't think** you **need** worry.

ՍԵՌ (VOICE)

61. Բայի սեռը ցույց է տալիս, արդյոք նախադասության ենթակայի կողմից նշվող առարկան ստորոգյալի արտահայտած գործողության կատարողն է, թե իր վրա է կրում այդ գործողությունը:

Անգլերենում բայն ունի երկու սեռ՝ **the Active Voice**, որը համապատասխանում է հայերենի ներգործական և չեզոք սեռերին, **the Passive Voice**, որը համապատասխանում է հայերենի կրավորական սեռին:

Active

They built this house in 1990.

Այս շենքը կառուցվել է 1990թ.:

(հայ. ներգործ. սեռ)

He arrived late at night.

Նա ժամանեց ուշ գիշերին:

(հայ. չեզոք սեռ)

Passive

This house was built in 1990.

Այս շենքը կառուցվել է 1990թ.:

(հայ. կրավ. սեռ)

62. Կրավորական սեռը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը մեկ ուրիշ առարկայից իր վրա է կրում նախադասության ենթակայի կողմից նշվող անձը կամ առարկան: Անգլերենի բայի կրավորական սեռը կազմվում է **to be** օժանդակ բայի համապատասխան կերպաժամանակային ձևի և լիմաստ բայի II դերբայի հարադրությամբ.

Indefinite:	Present	New houses are built every year.
	Past	This house was built last year.
	Future	A new house will be built here next year.
Perfect:	Present	Two house have been built in our street recently
	Past	That house had been built by the end of last year.
	Future	The house will have been built by the end of the year.
Continuous:	Present	A new house is being built in our steet.
	Past	This house was being built when I came to live in Yerevan.

սեռ

դր

Կրավորական սեռը գործածվում է **Indefinite** և **Present** խմբերի բոլոր ձևերում: **Continuous** խմբում կրավորական սեռը գործածվում է միայն **Present Continuous** և **Past Continuous** ձևերում: Կրավորական սեռը չի գործածվում **Perfect Continuous** խմբում:

Կրավորական սեռի հարցական ձևը կազմվում է առաջին օժանդակ բայը ենթակայից առաջ դնելով. **Was the house built in 1990? Will the house be built next year?** Ժխտական ձևում **not** մասնիկը դրվում է առաջին օժանդակ բայից հետո. **The house was not built in 1980. The house will not be built next year.**

63. Կրավորական սեռը կարելի է գործածել՝

1. Առանց նշելու գործողություն կատարողին, որը կամ անհայտ է, կամ ոչ կարևոր.

Her two sons **were killed** in the war.

Նրա երկու որդիները զոհվեցին պատերազմում:

He **was arrested** in a hotel.

Նա ձերբակալվեց հյուրանոցում:

The telegram **had been delivered** in time.

Հեռագիրը համընկել էր ժամանակին:

You can see that this glass **has been used**.

Պարզ է, որ այս բաժակն օգտագործված է:

2. Նշելով գործողություն կատարողին անհրաժեշտության դեպքում: Գործածվում է **by** նախդիրը:

The meeting **was attended by representatives** of different organizations.

Ժողովին մասնակցեցին տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

He **was killed by lightning**.

Նա սպանվեց կայծակից: Կայծակը սպանեց նրան:

She **was accompanied by her father** who was very nervous.

Նրան ուղեկցում էր հայրը, որը շատ հուզված էր:

He is very easily **influenced by the ideas** of anyone whom he meets.

Պատահած մարդու մտքերն ազդում են նրա վրա շատ հեշտությամբ:

The streets **are lighted by electricity**.

Փողոցները լուսավորվում են էլեկտրականությամբ:

64. Կրավորական սեռը անգլերենում ավելի լայն կիրառություն ունի, քան հայերենում: Հայերենում կրավորական կառույցի ենթակա է լինում համապատասխան ներգործական կառույցի ուղիղ խնդիրը (հայցական հոլովով դրված լրացումը): Անգլերենում կրավորական կառույցի ենթակա կարող են լինել ներգործական կառույցի ուղիղ, անուղղակի և նախադրավոր խնդիրները.

Active

I gave a book to each of the boys.

They thought highly of him in his village.

They often laughed at him.

Passive

A book was given to each of the boys.

Մեկական գիրք տրվեց տղաներից յուրաքանչյուրին:

Each of the boys was given a book.

Տղաներից յուրաքանչյուրին տրվեց մեկական գիրք:

He was highly thought of in his village.

Նրան մեծ հարգանքով էին վերաբերվում իր գյուղում:

He was often laughed at.

Հաճախ էին ծիծաղում նրա վրա:



Երբ ներգործական կառույցի նախդրավոր խնդիրը հանդես է գալիս որպես կրավորական կառույցի ենթակա, նախդիրը դրվում է անմիջապես լիմաստ բայից հետո:

65. Անգլերենի կրավորական սեռի ձևերը թարգմանվում են հայերեն կրավորական սեռի բայերով (կրավորական կառուցվածքով) կամ անորոշ դիմավոր նախադասության ներգործական սեռի բայով.

The letter **was sent** early in the morning.

Նամակն ուղարկեցին վաղ առավոտյան:

He **is listened to** with pleasure.

Նրան հաճույքով են լսում:

I **was told** some very interesting news.

Ինձ հաղորդեցին շատ հետաքրքիր լուր:

When the child **fell** ill, the doctor **was sent for**.

Երբ երեխան հիվանդացավ, բժիշկ կանչեցին:

His book **was commented on** by the newspapers.

Լրագրերը մեկնաբանեցին նրա գիրքը:

You **have been** a good deal **talked about**.

Ձեր մասին շատ է խոսվել:

66. To be + Participle II կապակցությունը միշտ չէ, որ կրավորական սեռի ձևն է: Այն կարող է լինել բաղադրյալ անվանական ստորոգյալ (բայ-հանգույց + ստորոգելիական վերադիր), երբ արտահայտում է վիճակ և ոչ թե գործողություն.

The window **is shut**.

Պատուհանը փակ է:

The cup **is broken**.

Գավաթը կոտրված է:

ԵՂԱՆԱԿ (MOOD)

67. Բայի եղանակը ցույց է տալիս գործողության հարաբերությունն իրականության նկատմամբ սահմանված խոսողի կողմից: Գործողությունը կարող է գնահատվել խոսողի տեսանկյունից որպես իրական կամ անիրական (ցանկալի, ենթադրական, պայմանական և այլն):

Անգլերենի բայն ունի երեք եղանակ՝ սահմանական, հրամայական և ստորադասական:

68. Սահմանական եղանակը (the Indicative) ցույց է տալիս, որ բայ-ստորոգյալի արտահայտած գործողությունը կամ վիճակը իրական փաստ է: Վերը դիտարկված անգլերենի բայի կերպածամանակային ձևերը սահմանական եղանակի ձևերն են:

69. Հրամայական եղանակը (the Imperative) արտահայտում է հրաման, թելադրանք, խնդրանք: Անգլերենում հրամայական եղանակն ունի միայն մեկ ձև (երկրորդ դեմք), որը համանուն է ինֆինիտիվի ձևին (առանց *to* մասնիկի)։

Come along with me.

Եկե՛ք ինձ հետ:

Open the window, please.

Բացե՛ք պատուհանը, խնդրեմ:

Ժխտական ձևը կազմվում է **to do** օժանդակ բայի և **not** մասնիկի օգնությամբ.

Don't make a noise.

Մի՛ աղմկեք:

Don't be angry.

Մի՛ զայրացեք:

Հրամանը կամ խնդրանքը շեշտելու համար գործածվում է **to do** օժանդակ բայը. **Do hurry. Do come over here.** Հրամայական այս կառույցը կարող է արտահայտել նաև զայրույթ:

Երբեմն հրամայական նախադասությունն ունի ենթակա արտահայտված **you** դերանունով.

You don't worry.

Բոլորովին կարիք չկա, որ անհանգստանաս:

You mind your own business.

Ձբաղվե՛ք ձեր գործով: Ձբաղվիր **քո** գործով:

Առաջին դեպքում այս կառույցը գործածվում է մտերիմ խոսակցության ժամանակ, երկրորդ դեպքում այն արտահայտում է զայրույթ:

70. Հրամանը կարող է ուղղված լինել առաջին և երրորդ դեմքերին: Այդպիսի հրամանն արտահայտվում է **to let** բայի օգնությամբ:

Երրորդ դեմքին ուղղված հրամանի դեպքում՝ **to let** բայի հրամայական ձևին հաջորդում է գոյական անուն կամ դերանուն (օբյեկտային հոլովով), որից հետո դրվում է հիմնական բայի ինֆինիտիվն առանց **to** մասնիկի. **Let him go** by taxi Թող նա գնա տաքսիով: Այս կառույցը չունի լայն գործածություն ժամանակակից անգլերենում: Նրա փոխարեն սովորաբար գործածում են **He had better go by taxi / He must go by taxi** կառույցները: Ժխտական ձևը կլինի **He had better not go taxi / He must not go by taxi**: Ժամանակակից անգլերենում **let him not go** «թող նա չգնա» տիպի կառույցը չի գործածվում:

71. Հոգնակի առաջին դեմքի հետ գործածվելիս՝ **to let** բայն արտահայտում է միասնական գործողություն կատարելու հորդոր. **Let us (let's) go** Եկեք գնանք տուն: Ժխտական ձևը կազմվում է ինֆինիտիվից առաջ **not** մասնիկն ավելացնելով. **Let's not tell** anyone Եկեք ոչ մեկին չասենք: Խոսակցական լեզվում հնարավոր է նաև հետևյալ կառույցը. **Don't let's tell** anyone.

Եզակի առաջին դեմքի հետ գործածվելիս՝ **to let** բայն արտահայտում է անուղղակի հրաման. **Let me help** you Թույլ տվեք օգնել ձեզ:

71. Ստորադասական եղանակը (**the Subjunctive**) ցույց է տալիս, որ գործողությունը դիտվում է խոսողի կողմից ոչ թե որպես իրական փաստ, այլ որպես ցանկություն, ենթադրություն, պայման կամ հնարավորություն: Ժամանակակից անգլերենում ստորադասական եղանակն ունի համադրական և վերլուծական ձևեր:

72. Ստորադասական եղանակի համադրական ձևերն են բոլոր բայերի **Present Subjunctive** ձևը և **to be** բայի **Past Subjunctive** ձևը: **Present** և **Past** բառերն այս անվանումներում սոսկ բաղադրիչներ են ժամանակակից անգլերենում և ոչ ժամանակի ցուցիչներ:

The Present Subjunctive

To Be

I be
you be
he (she, it) be
we be
you be
they be

To Have

I have
you have
he (she, it) have
we have
you have
they have

To Work

I work
you work
he (she, it) work
we work
you work
they work

The Present Subjunctive

To Be

I were
you were
he (she, it) were
we were
you were
they were

To Have

—

To Work

—

73. Present Subjunctive ձևը համանուն է բայի ինֆինիտիվի ձևին (առանց **to** մասնիկի) I be, he be, I have, he have, I work, he work և այլն: Այս եղանակածը ցույց է տալիս ենթադրական գործողություն, որը վերաբերվում է ներկային կամ ապագային: Խոստովը չգիտի, գործողությունը տեղի կունենա, թե ոչ:

Present Subjunctive ձևը գործածվում է՝

1. Ցանկություն կամ հույս արտահայտող որոշ բացականչություններում.

God **forgive** you!

Heaven **help** us!

Damn you!

Curse this fog!

2. Խնդիր երկրորդական նախադասություններում, երբ գլխավոր նախադասության ստորոգյալն է առաջարկություն, կարգադրություն կամ որոշում նշանակող **to suggest, to propose, to demand, to urge, to order, to insist, to decide, to require, to request** բայերից որևէ մեկը: Ժամանակների համաձայնեցումը չի վերաբերում ստորադասական եղանակի ձևերին.

I **propose** that the plan **be** adopted.

Ես առաջարկում եմ, որ նախագիծն ընդունվի:

I **proposed** that the plan **be** adopted.

Ես առաջարկեցի, որ նախագիծն ընդունվի:

I **suggest** we **go** to the theatre.

Ես առաջարկում եմ, որ գնանք թատրոն:

The judge **ordered** that the prisoner **be** remanded.

Դատավորը կարգադրեց, որ կալանավորին նորից բանտ տանեն:

3. Ենթակա երկրորդական նախադասություններում, երբ գլխավոր նախադասության ձևական ենթական է **it** դերանունը, ստորոգյալն է **is necessary (important, urgent, essential, desirable, advisable)** կապակցությունը.

It **is necessary** that you **be** careful.

Անհրաժեշտ է, որ ուշադիր լինեք:

It **is desirable** that all **be** ready by tomorrow.

Ցանկալի է, որ ամեն ինչ պատրաստ լինի մինչև վաղը:

It's **quite essential** that you **do** it at once.

Խիստ անհրաժեշտ է, որ դուք անեք դա անմիջապես:

It's **so important** that he **join** the expedition.

Շատ կարևոր է, որ նա մասնակցի արշավախմբին:

74. **Past Subjunctive** ձև ունի միայն **to be** բայը. I **were**, he **were**, they **were** և այլն: Այս ձևն արտահայտում է հազիվ իրականանալի կամ անիրականանալի ցանկություն: Գործածվում է խնդիր երկրորդական նախադասություններում, երբ գլխավոր նախադասության ստորոգյալն է **to wish** բայը.

76. Պարզ նախադասություններում գործածվում են **should/would + infinitive** (առաջին դեմք), **would + infinitive** (երկրորդ և երրորդ դեմքեր) ձևերը: Խոսակցական լեզվում գործածվում է **'d + infinitive** ընդհանուր կրճատ ձևը: Այս ձևերը ցույց են տալիս, որ այն, ինչ հաղորդվում է, իրական փաստ չէ և տեղի կունենար որոշակի հանգամանքների կամ պայմանների դեպքում՝ ներկայում կամ ապագայում:

I should (would) like to speak to her.

Ես կուզենայի խոսել նրա հետ:

That woman **would be** a load on you.

Այդ կինը բեռ կլիներ քեզ համար:

It **would be** a crime to sell such a house.

Հանցանք կլիներ վաճառել այդպիսի տունը:

Այս ձևերը թարգմանվում են հայերեն ենթադրական անցյալով:

77. **Should + infinitive** (բոլոր դեմքերում) ձևն ունի նույն գործածությունը, ինչ **Present Subjunctive** ձևը, միայն այս ձևն ավելի հաճախ է գործածվում:

Should + infinitive ձևը գործածվում է՝

1. Խնդիր երկրորդական նախադասություններում, երբ գլխավոր նախադասության ստորոգյալն է առաջարկություն, կարգադրություն կամ որոշում նշանակող **to suggest, to propose, to demand, to urge, to order, to insist, to decide, to require, to request** բայերից որևէ մեկը:

Tom **suggested** that the house **should be sold**.

Թոմն առաջարկեց, որ տունը վաճառեն (վաճառվի):

He **proposed** that the trip **should be postponed**.

Նա առաջարկեց, որ ուղևորությունը հետաձգվի:

The judge **ordered** that the prisoner **should be remanded**.

Դատավորը կարգադրեց, որ կալանավորին նորից բանտ տանեն:

2. Ենթակա երկրորդական նախադասություններում, երբ գլխավոր նախադասության ծնական ենթական է **it** դերանունը, ստորոգյալն է **is necessary (important, urgent, essential, desirable, advisable)** կապակցությունը.

Is it necessary that you should be so economical?

Արդյոք անհրաժեշտ է, որ դուք այդքան տնտեսող լինեք:

It is important that children should know the right things from the beginning.

Կարևոր է, որ երեխաներն իմանան (սովորեն) այն, ինչ ճիշտ է, վաղ հասակից:

It is essential that she should be prepared for this.

Անհրաժեշտ է, որ նրան նախօրոք ասվի դրա մասին:

It is most desirable that he should be invited to the party.

Շատ ցանկալի է, որ նրան հրավիրեն մասնակցելու այդ երեկույթին:

Այս կառույցում ստորադասական եղանակի փոխարեն սահմանական եղանակն է գործածվում, երբ գլխավոր նախադասության ստորոգյալն է **is strange (natural, terrible, absurd, odd)** կապակցությունը, ինչպես նաև **is possible (likely, probable)** կապակցությունը (վերջինս՝ հաստատական նախադասություններում).

It is strange that he behaved like that at the party.

Տարօրինակ է, որ նա իրեն այդպես պահեց երեկույթին:

It is possible that he will lend you that little sum.

Հնարավոր է, որ նա պարտք տա ձեզ այդ ոչ մեծ գումարը:

It's highly likely that he will succeed.

Միանգամայն հնարավոր է, որ նա հաջողություն ունենա:

3. Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասություններում, երբ գլխավոր նախադասության ենթական արտահայտված է **wish, desire, suggestion, proposal, aim, idea, decision** գոյականներից որևէ մեկով: Ժամանակների համաձայնեցումը չի կիրառվում այս դեպքում.

His **desire** was that life **should fall in** with his plans.

Նրա ցանկությունն էր, որ կյանքը համապատասխանի իր պլաններին:

My **suggestion** is that we **should go** there and **see** what can be done.

Իմ առաջարկությունն է, որ գնանք այնտեղ և տեսնենք, թե ինչ կարելի է անել:

My **suggestion** was that we **should go** there and **see** what could be done.

Իմ առաջարկությունն էր, որ գնանք այնտեղ և տեսնենք, թե ինչ կարելի է անել:

4. Նպատակի պարագա երկրորդական նախադասություններում **lest** շաղկապից հետո.

Put on your coat **lest** you **should catch** cold.

Հագիր վերարկուդ, որ չմոտեն:

He ran away **lest** he **should be seen**.

Նա փախավ, որ իրեն չտեսնեն:

Ստորադասական եղանակի այս ձևը թարգմանվում է հայերեն ըղծական եղանակի ապառնիով:

78. Ստորադասական եղանակի վերլուծական ձևերը երբեմն գործածվում են նախադասությանն ավելի մեղմ և քաղաքավարի տոն հաղորդելու համար.

'How long did you wait?' 'I **would say** a good five minutes'

Որքա՞ն սպասեցիք: - Երևի (կասեի) իմնգ րոպե:

79. Ստորադասական եղանակը գործածվում է պայմանի բարդ ստորադասական նախադասություններում (տե՛ս «Շարահյուսություն» 50-54):

80. Ժամանակակից անգլերենում ստորադասական եղանակի որոշ իմաստներ կարելի է արտահայտել սահմանական եղանակի **Past Indefinite** և **Past Perfect** ձևերի միջոցով հետևյալ դեպքերում.

1. Խնդիր երկրորդական նախադասություններում, երբ գլխավոր նախադասության ստորոգյալն է **to with** բայը: Այս կառույցն արտահայտում է հազիվ իրականանալի կամ անիրականանալի ցանկություն: Վերը նշվեց, որ այս տիպի նախադասություններում գործածվում է ստորադասական եղանակի **were** ձևը (տե՛ս «Բայ», 74): **Past Indefinite** ձևն այս կառույցում ցույց է տալիս, որ երկրորդական նախադասության գործողությունը համաժամանակ է գլխավոր նախադասության գործողությանը: **Past Perfect** ձևի արտահայտած գործողությունը նախորդում է գլխավոր նախադասության գործողությանը: Ժամանակների համաձայնեցումը չի կիրառվում այս կառույցում.

I wish I knew his address.

Ափսո՛ս չգիտեմ նրա հասցեն:

Երանի իմանալի նրա հասցեն:

I wished I knew his address.

Ես ափսոսացի, որ չգիտեմ նրա հասցեն:

I wish I had come earlier.

Ափսո՛ս ավելի վաղ չեկա: Երանի ավելի վաղ գալի (եկած լինելի):

I wished I had come earlier.

Ես ափսոսացի, որ ավելի վաղ չէի եկել:

She wished she had stayed at home.

Նա ափսոսաց, որ տանը չի մնացել:

Երբ երկրորդական նախադասության գործողությունը հաջորդում է գլխավոր նախադասության գործողությանը, երկրորդական նախադասությունում գործածվում է ստորադասական եղանակի **would + infinitive** ձևը: Այս դեպքում բրիտանական անգլերենում գլխավոր և երկրորդական նախադասությունների ենթակաները տարբեր են:

I wish you would stop complaining.

Կուգե՛նայի, որ այլևս չգանգատվես:

I wish the child would recover soon.

Երանի երեխան շուտ առողջանա:

I wish the snow would stop soon.

Երանի ձյունը շուտով դադարի:

I wished the snow would stop soon.

Ես ցանկանում էի, որ ձյունը շուտով դադարեր:

Ծանոթություն. **Wish** բային հաջորդող խնդիր երկրորդական նախադասության ստորոգյալը կարող է արտահայտվել նաև **could + infinitive, might + infinitive** կապակցություններով, որտեղ **could** և **might** ձևերը եղանակավորող **can** և **may** բայերի **Past Indefinite** ձևերն են.

I wish you could change your mind about leaving tomorrow.

Երանի փոխելի վաղը մեկնելու քո միտքը:

I wish she might be here.

Երանի նա այստեղ լիներ:

I wished she might stay with us a little longer.

Ես ցանկանում էի, որ նա մեզ հետ մի փոքր ավելի երկար մնար:

2. Իդիոմատիկ **it is time** «ժամանակն է» (նաև՝ **it is high time, it is about time**) արտահայտությամբ սկսվող նախադասություններում: Այս կառույցում գործածվում է **Past Indefinite** (նաև՝ **were**) ձևը: Ժամանակների համաձայնեցումը չի կիրառվում.

It's time we had dinner.

Ժամանակն է, որ ճաշենք:

It was time we had dinner.

Ժամանակն էր, որ ճաշեինք:

It's high time the children were in bed.

Վաղուց ժամանակն է, որ երեխաները անկողնում լինեն (քնեն):

It was high time the children were in bed.

Վաղուց ժամանակն էր, որ երեխաները քնեին:

It's time somebody taught you to behave yourself.

Ժամանակն է, որ ինչ-որ մեկը սովորեցնի քեզ լավ պահել:

3. Պայմանի պարագա երկրորդական նախադասություններում (տե՛ս «Շարահյուսություն», 54-56):

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՅԵՐ (MODAL VERBS)

81. Եղանակավորող բայերը ցույց են տալիս գործողություն կատարողի հարաբերությունը գործողության նկատմամբ, սահմանված խոսողի կողմից: Գործողությունն արտահայտվում է եղանակավորող բային հաջորդող ինֆինիտիվով (առանց **to** մասնիկի), **I can speak** English: Ես կարող եմ խոսել անգլերեն: Եղանակավորող բայերը ցույց են տալիս գործողություն կատարելու կարողություն, հնարավորություն, հավանականություն, անհրաժեշտություն, պարտավորություն և այլն:

Անգլերենի եղանակավորող բայերն են՝ **can, may, must, ought to, shall, should, will, would, need, dare, used to: To be** և **to have** բայերը որոշակի կոնտեքստում դիտվում են որպես եղանակավորող բայեր:

Եղանակավորող բայերը համարվում են պակասավոր բայեր, որովհետև նրանք

1. չունեն անդեմ ձևեր՝ ինֆինիտիվ, ածական դերբայ և գերունդ (տե՛ս «Բայ», 123).

2. չեն փոխվում ըստ թվի և դեմքի (ներկա ժամանակում եզակի երրորդ դեմքում չունեն **-s**).

3. կազմում են հարցական և ժխտական ձևերն առանց օժանդակ **to do** բայի: Հարցական ձևում եղանակավորող բայը դրվում է ենթակայից առաջ: Ժխտական ձևում **not** մասնիկը դրվում է եղանակավորող բայից հետո. **Can he read German? He cannot read German.**

CAN

82. **Can** բայն ունի երկու ձև՝ **can** (ներկա) և **could** (անցյալ): Կրճատ ժխտական ձևերն են՝ **can't** [kæ:nt] և **couldn't** ['kudnt]: Ժամանակների համաձայնեցման դեպքում գործածվում է **could** ձևը.

He **can help me**.

Նա կարող է օգնել ինձ:

He **said he could help me**.

Նա ասաց, որ կարող է օգնել ինձ:

83. Can բայն արտահայտում է.

1. Ֆիզիկական կամ մտավոր կարողություն.

I **can lift** this box.

I **can speak** Russian.

Միևնույն իմաստն ունեցող **to be able to** արտահայտությունը գործածվում է **can** բայի պակաս ձևերի փոխարեն.

I **he baby will be able to walk** in a few weeks.

Երեխան մի քանի շաբաթից կսկսի (կկարողանա) քայլել:

Since his accident he **hasn't been able to leave** the house.

Վթարի օրից նա ի վիճակի չէ դուրս գալ տնից:

2. Հանգամանքներից բխող հնարավորություն.

I **could not go** to the theatre yesterday because I **was busy**.

You **can sky** on the hills (there is enough snow).

You **can take** the book.

Կարող եք վերցնել գիրքը (այլևս պետք չէ ինձ):

3. Իրավունքից բխող հնարավորություն.

You **cannot park** here.

Զեք կարող (իրավունք չունեք) կանգնեցնել ավտոմեքենան այստեղ:

You **can take** two books home with you.

Կարող եք տուն տանել երկու գիրք (գրադարանը թույլ է տալիս):

Միևնույն իմաստն ունեցող **to be allowed to** արտահայտությունը գործածվում է **can** բայի պակաս ձևերի փոխարեն.

You will be allowed to take two books home with you.

Զեզ կթույլատրեն երկու գիրք տանել տուն (գրադարանը կթույլատրի):

He has been allowed to smoke ever since he left school.

Նրան թույլատրել են ծխել դպրոցն ավարտելու պահից:

4. Անհավատալիություն, կասկած, զարմանք.

It cannot be true.

Դա չի կարող ճիշտ լինել:

Where can they be?

Որտե՞ղ կարող են նրանք լինել:

Անցյալ գործողությունն արտահայտելու համար **can** ձևին հաջորդում է պերֆեկտային ինֆինիտիվ (տե՛ս «Բայ», 128):

He cannot have said it.

Նա չէր կարող ասել դա (հնարավոր չէ, որ ասեր դա):

Նա չի կարող ասած լինել դա:

What can he have meant?

Ի՞նչ կարող էր նա նկատի ունենալ:

5. Ներկային կամ ապագային վերաբերող թույլտվություն ստանալու խնդրանք: Գործածվում են **can** կամ **could** ձևերը: **Could** ձևն ավելի պաշտոնական է.

Can (could) I park here?

ԿԱՄ

Կարո՞ղ եմ ավտոմեքենա այստեղ կանգնեցնել:

Can (could) I leave my case here?

ԲՑ

Կարո՞ղ եմ պայուսակս այստեղ թողնել:

84. Could ձևը պերֆեկտային ինֆինիտիվի հարադրությամբ ցույց է տալիս, որ անցյալին վերաբերող գործողությունը տեղի չի ունեցել.

You could have told me about it long ago.

Դուք վաղուց կարող էիք ասել ինձ դրա մասին (սակայն չեք ասել):

I could have lent you the money. Why didn't you ask me?

Ես կարող էի տալ ձեզ այդ դրամը: Ինչու՞ չդիմեցիք ինձ:

He could have sent a message.

Նա կարող էր լուր ուղարկել (սակայն չի ուղարկել):

85. Could ձևը ոչ պերֆեկտային ինֆինիտիվի հարադրությամբ կարող է վերաբերել ներկային, եթե գործողության կատարումը կախված է որոշ ոչ իրական պայմաններից.

Could you run the business by yourself? (if this was necessary).

Կկարողանայի՞ք գործը վարել ինքնուրույն (եթե անհրաժեշտ լիներ):

Could he get another job? (if he left this one).

Կկարողանա՞ր նա այլ աշխատանք գտնել (եթե թողներ այս աշխատանքը):

I could get you a copy (if you want one).

Ես կկարողանայի ճարել քեզ համար մեկ օրինակ (եթե ցանկանում ես):

Այլ դեպքերում ներկային վերաբերող **could** ձևը գործածվում է որպես **can** ձևի ավելի մեղմ ձև, կամ արտահայտում է ավելի մեծ անորոշություն, քան **can** ձևը.

Can I use your pen?

Could I use your pen? (ավելի քաղաքավարի ձև)

Կարո՞ղ եմ գրել ձեր գրչով:

Can it be true?

Could it be true? (ավելի մեծ անհամոզվածություն)

Կարո՞ղ է դա ճիշտ լինել:

MAY

86. May բայն ունի երկու ձև՝ **may** (ներկա) և **might** (անցյալ): Ժամանակների համաձայնեցման դեպքում գործածվում է **might** ձևը:

Ann **may know** their address.

Էննը կարող է իմանալ նրանց հասցեն:

He **said** Ann **might know** their address.

Նա ասաց, որ Էննը կարող է իմանալ նրանց հասցեն:

87. May բայն արտահայտում է.

1. Ենթադրություն, անորոշություն.

He may come soon.

Հնարավոր է, որ նա գա շուտով:

Նա կարող է գալ շուտով:

It may rain today.

Կարող է անձրև գալ այսօր:

That may not be true.

Հնարավոր չէ, որ դա ճիշտ լինի:

Դա չի կարող ճիշտ լինել:

Այս նախադասություններում **may** ձևի փոխարեն կարող է գործածվել **might** ձևը՝ ավելի մեծ անորոշություն արտահայտելու համար.

He might come soon.

Նա հարող է գալ շուտով:

It might rain today.

Կարող է անձրև գալ այսօր:

May ձևին հաջորդող պերֆեկտային ինֆինիտիվը արտահայտում է անցյալ գործողություն.

He may have fallen ill.

Միգուցե նա հիվանդացել է:

He may have missed his train.

Միգուցե նա ուշացել է գնացքից:

2. Հանգամանքներից բխող հնարավորություն.

You may find the book at the library.

Այս գիրքը կարելի է գտնել գրադարանում:

You may order a taxi by telephone.

Կարելի է տաքսի պատվիրել հեռախոսով:

Ի տարբերություն **can** բայի, որը նույնպես կարող է արտահայտել հանգամանքներից բխող հնարավորություն, **may** բայն այս իմաստով գործածվում է միայն հաստատական նախադասություններում, մինչդեռ **can** բայը՝ հաստատական, հարցական և ժխտական նախադասություններում.

You **may order** a taxi by telephone.

You can order a taxi by telephone.

Can I order a taxi by telephone?

You **cannot order** a taxi by telephone here.

Ժամանակների համաձայնեցման դեպքում գործածվում է այս բայերի անցյալ ժամանակածևրը.

They **said I could order** a taxi by telephone.

They **said I might order** a taxi by telephone.

Might ձևը պերֆեկտային ինֆինիտիվի հարադրությամբ ցույց է տալիս, որ գործողությունը տեղի չի ունեցել որոշ հանգամանքների պատճառով.

Luckily he wasn't driving the car. He **might have been hurt**.

Բարեբախտաբար նա ինքը չէր վարում մեքենան, այլապես կվնասվեր:

You are so careless. You **might have broken** the cup.

Դու այնքան անուշադիր ես: Կարող էիր. կոտրել գավաթը (բայց չկոտրեցի):

This **might have cured** your cough if you had taken it.

Սա կարող էր բուժել քո հազը, եթե ընդունեիր (բայց չես ընդունել և դեռ հազում ես):

3. Թույլտվություն.

You **may smoke** in here.

Կարող եք ծխել այստեղ:

You **may come** if you wish.

Կարող եք գալ, եթե ցանկանում եք:

Միևնույն իմաստն ունեցող **to be allowed to** արտահայտությունը գործածվում է **may** բայի պակաս ձևերի փոխարեն.

He **will be allowed to visit** his sick friend.

Նրան կթույլատրեն այցելել հիվանդ ընկերոջը:

Since his accident he **hasn't been allowed to drive** a car.

Վթարի օրից նրան չեն թույլատրում ավտոմեքենա վարել:

Թույլտվություն խնդրող **May I smoke here?** հարցի հաստատական պատասխանն է **Yes, you may** կամ **Do, please:** ժխտական պատասխանն է **No, you mustn't** կամ **No, you can't:**

Հարցական նախադասություններում **may** ձևի փոխարեն կարող է գործածվել **might** ձևը՝ հարցին ավելի քաղաքավարի տոն հաղորդելու համար.

May I speak to him now?

Might I speak to him now?

Can բայը նույնպես կարող է արտահայտել թույլտվություն: Տարբերությունը **can** և **may** բայերի միջև այս դեպքում ավելի շուտ ոճական է, քան իմաստային: **May** բայի գործածությունն ավելի պաշտոնական է, մինչդեռ **can** բայի գործածությունը բնորոշ է խոսակցական անգլերենին.

May (might) I speak to you for a moment?

ՀԱՅ ԴՅ

Can (could) I have a cup of tea?

88. Might ձևը կարող է արտահայտել դժգոհություն, հանդիմանություն.

You might thank him.

Ինչու՞ չնորհակալություն չես հայտնում նրան:

You might have told me about it.

Դու կարող էիր ասել այդ մասին (ինչու՞ չասացիր):

89. May ձևը գործածվում է արտահայտելու համար հույս և մաղթանք.

May you both be happy!

May heaven reward you!

MUST

90. Must բայն ունի մեկ ձև: Ժխտական ձևն է **must not**: Կրճատ ժխտական ձևն է **mustn't** ['mʌsnt]: Անցյալ ժամանակում **must** ձևին փոխարինում է **to have to**¹ եղանակավորող բայի անցյալ ժամանակաձևը՝ **had to**, ապառնի ժամանակում՝ նույն բայի **shall/will have to** և **will have to** ձևերը.

I must leave at once.

Ես պետք է գնամ անմիջապես:

I had to leave at once.

Ես ստիպված էի գնալ (հեռանալ) անմիջապես:

The boy will have to obey the teachers when he goes to school.

Տղան ստիպված կլինի ենթարկվել ուսուցիչներին, երբ դպրոց հաճախի:

Ժամանակների համաձայնեցումը չի կիրառում **must** բայի դեպքում.

91. Must բայն արտահայտում է.

1. Պարտականություն կամ անհրաժեշտություն (խոսողի տեսանկյունից).

You must do as you're told.

Պետք է անեք՝ ինչպես ձեզ ասում են:

He must be here in time tomorrow; I can't wait for him.

Վաղը նա պետք է լինի այստեղ ժամանակին. ես չեմ կարող սպասել նրան:

I must admit I don't like her.

Պետք է ընդունեմ, որ նա դուր չի գալիս ինձ:

Soldiers must obey orders.

Զինվորները պարտավոր են ենթարկվել հրամաններին:

¹ To բառաձևը՝ **to have** եղանակավորող բային հաջորդող ինֆինիտիվի մասնիկն է:

Անհրաժեշտության բացակայության դեպքում գործածվում է **need not** ձևը.

Must I do that? Yes, you must. No, you needn't.

2. Արգելում, արգելք.

You mustn't do that.

Չպետք է անեք դա:

He must not leave his room for a while.

Նա չպետք է դուրս գա սենյակից որոշ ժամանակ:

3. Ընդգծված խորհուրդ.

You must not tell anyone.

Չպետք է ասես ոչ ոքի:

You must see the film. It is very good.

Պետք է անպայման տեսնես այդ կինոնկարը: Շատ լավ է:

4. Ենթադրություն, որ մոտ է հավանականության.

You must be joking!

Դուք հավանաբար կատակում եք (հնարավոր չէ, որ դա լուրջ լինի):

You must be hungry after your long walk.

Դուք հավանաբար քաղցած եք երկար քայլելուց հետո:

This must be the book you want.

Հավանաբար սա այն գիրքն է, որ դուք ցանկանում եք:

Երբ խոսքն անցյալ գործողության մասին է, **must** քայից հետո գործածվում է պերֆեկտային ինֆինիտիվ.

You must have known what he wanted.

Դուք հավանաբար գիտեիք, թե նա ինչ է ցանկանում:

It is six o'clock. **He must have finished** his work.

Ժամը վեցն է: Հավանաբար նա վերջացրել է աշխատանքը:

TO HAVE TO

92. Այս բայը, ի տարբերություն մյուս եղանակավորող բայերի, ունի բոլոր դիմավոր և անդեմ ձևերը. **have to, has to, had to, shall/will have to** և այլն:

Ներկա և անցյալ ժամանակների հարցական և ժխտական ձևերը կազմում են **to do** օժանդակ բայի միջոցով. **do I have to? does he have to? did you have to? he did not have to?** և այլն:

To have բայն արտահայտում է հանգամանքներից բխող պարտականություն կամ անհրաժեշտություն.

I have to do it by hand.

Ես ստիպված եմ դա անել ձեռքով:

Children don't have to go to school on Sundays.

Կիրակի օրերին երեխաները ստիպված չեն դպրոց գնալ:

As it was late, we had to take a taxi.

Քանի որ ուշ էր, մենք ստիպված էինք տաքսի նստել:

Did you have to walk all the way home?

Դուք ստիպված էիք ոտքով հասնել տուն:

If give in now, I shall have to give in again.

Եթե ես զիջեմ հիմա, ստիպված կլինեմ նորից զիջել:

93. Խոսակցական անգլերենում պարտավորություն և անհրաժեշտություն են արտահայտում նաև **have got to, has got to** բայաձևերը: Հարցական և ժխտական ձևերը կազմվում են առանց **to do** օժանդակ բայի.

Քր: **He has got to do all his work himself.**

Նա ստիպված է ամբողջ աշխատանքը մենակ կատարել:

Has he got to do all his work himself?

He hasn't got to do all his work himself.

Have got to ձևը գործածվում է մեկ անգամ կատարող գործողության անհրաժեշտությունը նշելու համար, **to have to** բայը նշում է անհրաժեշտությունն ինչպես մեկ անգամ կատարվող, նույնպես և կրկնվող, սովորություն դարձած գործողությունների.

Has that man got to carry all those parcels by himself?

Մի՞թե այդ մարդը ստիպված է մենակ տեղափոխել բոլոր ծանրոցները:

Do you have to wind your watch every day?

Արդյոք ստիպվա՞ծ եք լարել ձեր ժամացույցն ամեն օր:

TO BE TO

94. To be to եղանակավորող բայը գործածվում է ներկա և անցյալ ժամանակներում.

I am to go there at 5.

Ես պիտի գնամ այնտեղ ժամը 5-ին:

I was to see him this morning.

Ես պիտի տեսնեի նրան այս առավոտ:

95. To be to բայն արտահայտում է.

1. Նախատեսված կամ փոխադարձ համաձայնությունից բխող անհրաժեշտություն.

I am to be there at 5 sharp.

Ես պիտի այնտեղ լինեմ ուղիղ ժամը 5-ին:

She is to be married next month.

Նա ամուսնանալու է (պիտի ամուսնանա) հաջորդ ամիս:

The expedition was to start in a week's time.

Արշավախումբը պետք է ճանապարհվեր մեկ շաբաթից:

Երբ նախատեսված գործողությունը չի կատարվել, **to be** բային հաջորդում է պերֆեկտային ինֆինիտիվ.

He was to have gone.

Նա պիտի գնար (բայց չգնաց):

Երբ անցյալ ժամանակով դրված **To be** բային հաջորդում է ոչ պերֆեկտային ինֆինիտիվ, պարզ չէ՝ գործողությունը կատարվել է, թե ոչ.

He was to go.

Նա պիտի գնար (պարզ չէ, գնաց, թե ոչ):

2. Հրաման և կարգադրություն.

He **is to stay** here till we return.

Նա պետք է մնա այստեղ մինչև մեր վերադարձը:

You **are to wait** till he comes..

Դուք պետք է սպասեք մինչև նրա գալը:

33

3. Հնարավորություն.

Այս իմաստով **to be to** բայը համարժեք է **can** և **may** բայերին: **To be to** բային հաջորդում է կրավորական ինֆինիտիվ.

Where **is he to be found**?

Որտե՞ղ կարելի է նրան գտնել:

The book **is not to be found**.

Գիրքը հնարավոր չէ գտնել (սպառված է, վաճառքում չկա):

Nothing **was to be done** under the circumstances.

Նման պարագաներում ոչինչ չէր կարելի անել:

4. Վիճակվածություն.

He **was never to see** his native place again.

Նրան վիճակված չէր նորից տեսնել իր հարազատ քաղաքը:

OUGHT TO

96. **Ought to** եղանակավորող բայն ունի մեկ ձև, որը վերաբերում է ներկային և ապառնիին: Անուղղակի խոսքում՝ անցյալ ժամանակում գործածվում է այդ նույն ձևը: Կրճատ ժխտական ձևն է **oughtn't** ['ɔ:tn't]: Այս բային հաջորդող ինֆինիտիվի **to** մասնիկը պահպանվում է.

They **ought to widen** this road.

Peter **said that ought to widen** the road.

97. Ought to բայն արտահայտում է

1. Պարտավորություն, պարտականություն (հաճախ բարոյական).

At your age you **ought to be earning** your living.

Քո տարիքում պարտավոր ես հոգալ քո ապրուստը:

You **ought to feel** some respect for your elders.

Դու պետք է հարգանքով վերաբերվես քո ավագներին:

She **ought to look** after her children better.

Նա պետք է ավելի լավ խնամի իր երեխաներին:

Երբ **ought to** բային հաջորդում է պերֆեկտային ինֆինիտիվ, եղանակավորող բայը ցույց է տալիս, որ չի կատարվել ցանկալի մի գործողություն.

You **ought to have done** that earlier.

Դուք պետք է անեիք դա ավելի վաղ (իզուր չարեցիք):

She **ought to have taken** those books to the library.

Նա պետք է վերադարձրած լիներ այդ գրքերը գրադարան:

Պերֆեկտային ինֆինիտիվը կարող է հաջորդել **ought to** բայի ժխտական ձևին: Այդ դեպքում եղանակավորող բայը ցույց է տալիս, որ կատարվել է անցանկալի մի գործողություն.

I'm sorry. I **oughtn't to have said** it.

Ներեցեք: Ես չպետք է ասեի դա:

He **oughtn't to have married** that woman.

Նա չպետք է ամուսնանար այդ կնոջ հետ:

2. Ցանկալիություն.

You **ought to see** that new film.

Պետք է դիտեք այդ նոր կինոնկարը (ցանկալի է):

You **ought to say** a word or two about yourself.

Դուք պետք է ասեք մի քանի բառ ձեր մասին (ցանկալի է):

3. Ենթադրություն, որ մոտ է հավանականությանը.

Harry ought to win the race.

Հարրին հավանաբար կհաղթի ծիարչավում:

The new hotel ought to be very comfortable.

Նոր հյուրանոցը պետք է որ շատ հարմարավետ լինի:

SHALL

98. Shall եղանակավորող բայը երկրորդ և երրորդ դեմքերում գործածվում է խոստում, սպառնալիք և զգուշացում արտահայտող հաստատական և ժխտական նախադասություններում.

You shall have my answer tomorrow. (խոստում)

Դուք կստանաք իմ պատասխանը վաղը:

Next time I go, you shall come with me. (խոստում)

Հաջորդ անգամ դու կգաս ինձ հետ:

He shan't come here (I won't let him come). (զգուշացում)

Նա չի գա այստեղ (նրա ոտքն այստեղ չի լինի):

99. Հարցական նախադասություններում **shall** բայն առաջին դեմքում արտահայտում է զրուցակցին ուղղված հարցում, որի նպատակն է ստանալ կարգադրություն, խորհուրդ կամ առաջարկություն.

Shall I help you?

Օգնե՞մ ձեզ:

Shall I wait for you?

Սպասե՞մ ձեզ:

Where shall we meet?

Որտե՞ղ եք հանդիպելու:

Which one shall I buy?

Ո՞ր մեկը գնեմ:

SHOULD

100. **Should** եղանակավորող բայն ունի միայն մեկ ձև, որը վերաբերում է ներկային և ապառնիին: Անուղղակի խոսքում անցյալ ժամանակում գործածվում է այդ նույն ձևը.

You **should go** today/tomorrow.

He said that I **should go** that day/the next day.

101. **Should** եղանակավորող բայն արտահայտում է.

1. Պարտք, բարոյական պարտականություն.

You **should pay** your debts.

Պետք է վճարեք ձեր պարտքերը:

You **shouldn't tell** lies.

Չպետք է սուտ խոսեք:

You **should not argue** with your father.

Չպետք է վիճես հորդ հետ:

2. Ցանկալիություն, խորհուրդ.

You **should eat** more fruit.

Պետք է ավելի շատ միրգ ուտել:

You **shouldn't miss** the opportunity.

Չպետք է բաց թողնեք հնարավորությունը:

Երբ **should** բային հաջորդում է պերֆեկտային ինֆինիտիվ, եղանակավորող բայը ցույց է տալիս, որ չի կատարվել ցանկալի մի գործողություն.

The letter **should have been** posted yesterday.

Նամակը պետք է ուղարկվեր (ուղարկված լիներ) երեկ:

You **should have bought** more bread.

Պետք է ավելի շատ հաց գնեիր:

Պերֆեկտային ինֆինիտիվը կարող է հաջորդել **should** բայի ժխտական ձևին: Այդ դեպքում եղանակավորող բայը ցույց է տալիս, որ կատարվել է անցանկալի մի գործողություն.

You **shouldn't have been** rude to him.

Զպետք է կոպիտ վարվեիք նրա հետ:

You **shouldn't have gone** out yesterday without a coat. No wonder you caught cold.

Զպետք է երեկ դուրս գնայիր առանց վերարկուի: Ձարմանալի չէ, որ մրսել ես:

3. Ենթադրություն, որ մոտ է հավանականության.

He **should be** there by now.

Նա հավանաբար այնտեղ է արդեն:

They **should have finished** work by now.

Նրանք պետք է որ ավարտած լինեն աշխատանքը մինչև այժմ:

102. Should բայը կարող է ունենալ մաս հուզական երանգավորում: Այդ դեպքում այն գործածվում է որոշակի կառույցներում.

1. **Why** մակբայով սկսվող հռետորական հարցերում, երբ հարցը տրվում է միայն տպավորություն գործելու համար.

Why should I do it?

Իսկ ինչու՞ պիտի անեմ դա:

Why shouldn't you invite him?

Իսկ ինչու՞ չիրավիրել նրան:

Why should they obey him?

Իսկ ինչու՞ պիտի նրանք ենթարկվեն նրան:

2. **Why** մակբայով սկսվող խնդիր երկրորդական մախաղասություններում.

I don't know **why he should want** to see you.

Ես չգիտեմ, թե ինչու պիտի նա ցանկանա տեսնել ձեզ:

I can't think **why she should have said** that it was my fault.

Զեմ կարող հասկանալ, թե ինչու նա պիտի ասեր, որ ես եմ մեղավոր:

WILL

103. **Will** եղանակավորող բայն ունի երկու ձև՝ **will** (ներկա) և **would** (անցյալ): **Would** ձևը դիտվում է որպես առանձին եղանակավորող բայ (տես «Բայ», 109):

104. **Will** բայն առաջին դեմքում արտահայտում է խոսողի կամքը, մտադրությունը՝ կատարելու որոշակի ապառնի գործողություն.

I say I will do anything for him.

Ասում եմ, որ ցանկացած բան կանեն նրա համար:

We will pay the money back soon.

Մենք շուտով կվերադարձնենք դրամը:

All right, I'll come.

Շատ լավ, ես կգամ:

Ծանոթություն. Ենթակայի՝ որոշակի ապառնի գործողություն կատարելու կանխամտածված մտադրությունը բոլոր դեմքերում կարող է արտահայտվել **be going to** ձևով, որտեղ **to go** բայն ունի իդիոմատիկ գործածություն.

I'm going to buy a bicycle.

Ես մտադիր եմ հեծանիվ գնել:

He is going to be a dentist when he grows up.

Նա մտադիր է ատամնաբույժ դառնալ, երբ մեծանա:

105. Հարցական նախադասություններում **will** բայը երկրորդ դեմքում արտահայտում է պատրաստակամություն, համաձայնություն: Ամբողջ նախադասությունը դիտվում է որպես հրավեր, խնդրանք.

Will you come in? (հրավեր)

Ներս եկեք, խնդրեմ:

Will you come to tea tomorrow? (հրավեր)

Եկեք վաղը թեյ խմելու:

Will you type this? (խնդրանք)

Խնդրեմ մեքենագրեք սա:

106. If շաղկապով կապակցվող պայմանի երկրորդական նախադասություններում **ևս will** բայը արտահայտում է գործողություն կատարելու պատրաստականություն, համաձայնություն.

We shall be delighted if you'll lunch with us.

Մենք շատ ուրախ կլինենք, եթե համաձայնեք նախաճաշել մեզ հետ:

107. Հաստատական նախադասություններում will բայն արտահայտում է.

1. Հաստատականություն, համառություն.

He will have his own way.

Նա իր ուզածով կանի:

I will not fill up this form.

Ես չեմ լրացնի այս հարցաթերթը:

2. Անխուսափելիություն.

Accidents will happen.

Դժբախտ պատահարներն անխուսափելի են (տեղի կունենան):

3. Ինչ-որ բան անելու սովորություն ներկայում.

He will sit for hours looking at the traffic go by.

Նա նստում է ժամերով և դիտում փողոցի երթևեկությունը:

4. Հավանականություն.

This will be the book you are looking for.

Սա հավանաբար այն գիրքն է, որ դուք փնտրում եք:

108. Ժխտական նախադասություններում will բայն արտահայտում է՝

1. Մերժում, հրաժարում.

He **won't help** me.

Նա երբեք չի օգնի ինձ:

I **won't do** it again.

Ես դա չեմ անի այլևս:

2. Անշունչ որևէ առարկային հատուկ գործողության խափանում.

This pen **won't write**.

Այս գրիչը ոչ մի կերպ չի գրում:

This window **won't open**.

Այս պատուհանը չի բացվում:

WOULD

109. Would եղանակավորող բայը **will** բայի անցյալ ժամանակաձևն է: Պահպանելով **will** բայի իմաստները՝ այն հիմնականում արտահայտում է անցյալին վերաբերող եղանակավորում:

110. Would բայն առաջին դեմքում արտահայտում է պատրաստակամություն, համաձայնություն.

I said I **would do** anything for him.

Ես ասացի, որ ցանկացած բան կանեմ նրա համար:

We said we **would help** them.

Մենք ասացինք, որ կօգնենք նրանց:

111. Հաստատական նախադասություններում would բայն արտահայտում է.

1. Հաստատականություն, համառություն.

We all tried to stop him smoking in bed but he **would do** it.

Մենք բոլորս ջանում էինք, որ նա չծխի անկողնում, բայց նա շարունակում էր ծխել:

2. Որևէ բան անելու սովորություն անցյալում.

On Sundays he **would get up** early and go fishing.

Կիրակի օրերին նա սովորաբար վաղ էր վեր կենում և գնում ծուկ որսալու:

3. Հավանականություն.

She **would be** about 60 when she died.

Նա հավանաբար 60 տարեկան էր, երբ մահացավ:

112. Ժխտական նախադասություններում **would** բայն արտահայտում է.

1. Մերժում, հրաժարում.

She **would not say** where she was going.

Նա չէր ասում, թե ուր է գնում:

2. Անշունչ առարկային հատուկ գործողության խափանում անցյալում.

The door **would not open**.

Դուռը ոչ մի կերպ չէր բացվում:

113. Հարցական նախադասություններում **would** բայը երկրորդ դեմքում գործածվում է **will** բայի փոխարեն՝ ավելի քաղաքավարի հրավեր կամ խնդրանք արտահայտելու համար.

Would you come to lunch tomorrow?

Եկեք նախաճաշելու վաղը:

Would you sign here please?

Ստորագրեք այստեղ, խնդրեմ:

114. If շաղկապով կապակցվող պայմանի երկրորդական նախադասություններում **would** բայն արտահայտում է ներկայում գործողություն կատարելու պատրանստեղծություն, համաձայնություն.

If you **would wait** a moment I'll see if Ann is in.

Եթե սպասեք (համաձայնեք սպասել) մեկ րոպե, ես կպարզեմ, արդյոք Էննը տանն է:

If Tom **would tell** me what he wants for his dinner, I'd cook it for him.

Եթե Թոմն ասեր (կամենար ասել) ինձ, թե ինչ է ցանկանում ճաշի համար, ես կպատրաստեի:

NEED

115. Need եղանակավորող բայն ունի միայն մեկ ձև (ներկա): Անուղղակի խոսքում ժամանակների համաձայնեցման դեպքում գործածվում է այդ նույն ձևը: Ինֆինիտիվը **need** պակասավոր բայից հետո գործածվում է առանց **to** մասնիկի: **Need** բայն արտահայտում է անհրաժեշտություն: Գործածվում է հարցական և ժխտական նախադասություններում: Ժխտական նախադասություններում արտահայտում է անհրաժեշտության բացակայություն.

Need anybody know?

Հարկ կա՞, որ որևէ մեկն իմանա:

Need you go yet?

Արդյո՞ք ձեր գնալու ժամանակն է արդեն:

You **needn't take** the trouble.

Հարկ չկա, որ դուք անհանգստանաք:

He told me he **needn't come**.

Նա ասաց ինձ, որ հարկ չկա, որ ինքը գա:

Need բային կարող է հաջորդել պերֆեկտային ինֆինիտիվ: Այդ դեպքում նշվում է կատարված գործողության ավելորդ լինելը.

You **needn't have come**. The lecture is over.

Իզուր եք եկել: Դասախոսությունն ավարտված է:

We **needn't have hurried**.

Զպետք է շտապեինք: Իզուր շտապեցինք:

You **needn't have sent** for a doctor. I am perfectly well.

Իզուր եք բժիշկ կանչել: Ես միանգամայն առողջ եմ:

116. Need բայն նույն իմաստով կարող է լինել կանոնավոր բայ, որը կազմում է հարցական և ժխտական ձևերը **to do** օժանդակ բայի միջոցով: Նրան հաջորդող ինֆինիտիվը պահպանում է **to** մասնիկը: Գործածվում է հաստատական, հարցական և ժխտական նախադասություններում.

He needs to go now.

Անհրաժեշտ է, որ նա գնա այժմ:

Does he need to know?

Ա. ԱՅ

Կարիք կա՞, որ նա իմանա:

Did you need to read all those books?

Հարկ եղա՞վ կարդալ այդ բոլոր գրքերը:

He did not need to explain.

Հարկ չեղավ, որ նա բացատրություն տա:

117. Need բայն եղանակավորող բայ չէ, երբ այն ունի «կարիք ունենալ» իմաստը.

The boy needs a new winter coat.

Տղան նոր ծնեռային վերարկուի կարիք ունի:

Do you need any help?

Օգնության կարիք ունե՞ք:

DARE

118. Dare եղանակավորող բայն ևս կարող է գործածվել որպես պակասավոր կամ կանոնավոր բայ: Արտահայտում է որևէ բան անելու համարձակություն կամ հանդգնություն: Այս բայի հաստատական ձևը հազվադեպ է գործածվում:

119. Որպես պակասավոր բայ **dare** բայն ունի երկու ձև՝ **dare** (ներկա) և **dared** (անցյալ).

I dare not go there.

Ես չեմ համարձակվում այնտեղ գնալ:

How dare you say such a thing?

Ինչպե՞ս եք համարձակվում այդպիսի բան ասել:

They dared not move.

Նրանք չէին համարձակվում շարժվել:

120. Որպես կանոնավոր բայ **dare** բայը գործածվում է հիմնականում ժխտական նախադասություններում.

He doesn't dare to say anything.

Նա չի համարձակվում որևէ բան ասել:

No one dared to live in the house since.

Այն ժամանակից ի վեր ոչ ոք չէր համարձակվում ապրել այդ տանը:

She said she had never dared to ask him about it.

Նա ասաց, որ չէր համարձակվել հարցնել նրան դրա մասին:

USED TO

121. Used to ձևը անցյալ ժամանակաձև է: Չկա համապատասխան ներկա ժամանակաձև: **Used** ձևին հաջորդող ինֆինիտիվը պահպանում է **to** մասնիկը: **He used to swim every day when he lived in the country** Նա սովորաբար լողում էր ամեն օր, երբ ապրում էր գյուղում: Հարցական և ժխտական ձևերը կազմվում են երկու կերպ. **did he use to?** և **used he to?** **he didn't used/use to** և **he used not to**:

122. Used to եղանակավորող բայաձևը ցույց է տալիս.

1. Անցյալ սովորույթ կամ իրադրություն, որն ընդհատված է ներկայում և հակադրության մեջ է ներկայի հետ.

He used to drink beer; now he drinks wine.

Նա սովորաբար գարեջուր էր խմում, այժմ խմում է գինի:

I'm surprised to see you smoking; you didn't use to.

Ձարմացած եմ տեսնելով, որ ծխում եք: Դուք սովորաբար չէիք ծխում:

She used not to like fish (but now she does).

Նա չէր սիրում ձուկ (այժմ սիրում է):

2. Գործունեության որոշակի կարգ անցյալում.

Tom and Ann were a young married couple. Every morning Tom used to kiss Ann and set off for work. Ann used to stand at the window and wave goodbye. In the evening she used to welcome him home and ask him to tell her all about his day.

ԲԱՅԻ ԱՆԴԵՍ ՉԵՎԵՐ (THE VERBALS)

123. Բայի անդեմ ձևեր են կոչվում այն բայաձևերը, որոնք ցույց են տալիս գործողություն առանց նշելու եղանակ, դեմք և թիվ: Անգլերենում բայի անդեմ ձևերն են **ինֆինիտիվը**, **գերունդը** և **ածական դերբայը**: Բայն անգլերենում ունի երկու ածական դերբայ՝ **I դերբայ (Participle I)** և **II դերբայ (Participle II)**: Գերունդը և **I դերբայն** ունեն համանուն ձևեր (ունեն **-ing** վերջավորություն): Կանոնավոր բայերի **II դերբայն** ունի **-ed** վերջավորություն, անկանոն բայերի **II դերբայը** կազմվում է տարբեր ձևերով:

Ծանոթություն. Վերջին տարիներին քերականության մի շարք ձեռնարկներում գերունդը և **I դերբայը** դիտվում են որպես նույն բայաձևը, որն ունի **-ing** վերջավորություն և գերունդին կամ **I դերբային** հատուկ իմաստ համապատասխան կոնտեքստում: Այդ բայաձևի անունն է **-ing** ձև: Այդպիսի մոտեցումը հիմնված է բազմիմաստության հասկացության վրա: Եթե ընդունենք այս տեսակետը, անգլերենում բայի անդեմ ձևերը կլինեն **ինֆինիտիվը**, **-ing** ձևը և **ածական դերբայը (II դերբայ)**:

124. Բայի անդեմ ձևերն ունեն **բայական** և **անվանական** հատկանիշներ: **Ինֆինիտիվը** և **գերունդն** ունեն **բայի** և **գոյականի** հատկանիշներ, **ածական դերբայը՝ բայի** և **ածականի**: **Ինֆինիտիվը**, **գերունդը** և **I դերբայն** ունեն **պերֆեկտի** և **սեռի** քերականական կարգեր: Պերֆեկտային **ինֆինիտիվը**, **պերֆեկտային** **գերունդը** և **պերֆեկտային I դերբայն** արտահայտում են **գործողություն**, որը **նախորդել է** **բայ-ստորոգյալի** արտահայտած **գործողությանը**: **Ինֆինիտիվն** ունի **նաև** **կերպի կարգ՝** **շարունակական** և **պերֆեկտային** **շարունակական** ձևեր: **II դերբայն** ունի **միայն սեռի կարգ**:

ԻՆՖԻՆԻՏԻՎ (THE INFINITIVE)

125. Ինֆինիտիվն ունի հետևյալ ձևերը.

	Active	Passive
Indefinite	to take	to be taken
Perfect	to have taken	to have been taken
Continuous	to be taking	—
Perfect Continuous	to have been taking	—

Ինֆինիտիվի ժխտական ձևը կազմվում է **not** մասնիկն ինֆինիտիվից առաջ դնելով՝ **not to take, not to be taken** և այլն: Ինֆինիտիվի բաղադրյալ ձևերը կազմվում են **to be** կամ **to have** օժանդակ բայի ինֆինիտիվի և լիմաստ բայի I կամ II դերբայի հարադրությամբ:

126. Ոչ պերֆեկտային ինֆինիտիվի արտահայտած գործողության ժամանակը համընկնում է բայ-ստորոգյալի արտահայտած ժամանակին.

She **is** happy **to be** a student.

Նա երջանիկ է, որ ուսանողուհի է:

She **was** happy **to be** a student.

Նա երջանիկ էր, որ ուսանողուհի է: (համաժամանակություն)

127. Ոչ պերֆեկտային շարունակական ինֆինիտիվը ցույց է տալիս ընթացքի մեջ գտնվող գործողություն, որի ժամանակը համընկնում է բայ-ստորոգյալի արտահայտած գործողության ժամանակին: Ինֆինիտիվի այս ձևը հիմնականում գործածվում է գործողության ընթացքի մեջ լինելը շեշտելու համար.

She **seems to be** listening in.

Թվում է, որ նա ռադիո է լսում:

She **seemed to be** listening in.

Թվում էր, որ նա ռադիո է լսում:

128. ՊերՖեկտային ինֆինիտիվն արտահայտում է գործողություն, որը նախորդել է բայ-ստորոգյալի արտահայտած գործողությանը.

I'm glad to have seen you.

Ուրախ եմ, որ տեսա ձեզ:

He was happy to have joined the expedition.

Նա երջանիկ էր, որ մասնակցել էր արշավախմբին:

Եղանակավորող բայ+ինֆինիտիվ կապակցությունում գործողության ժամանակը արտահայտվում է ինֆինիտիվի ձևի միջոցով: ՊերՖեկտային ինֆինիտիվը ցույց է տալիս անցյալ գործողություն.

He must have arrived.

Հավանաբար նա ժամանել է:

Նա պետք է որ ժամանած լինի:

He may have arrived.

Երևի նա ժամանել է:

Հնարավոր է, որ նա ժամանած լինի:

He cannot have arrived.

Նա չի կարող ժամանած լինի:

Հնարավոր չէ, որ նա ժամանած լինի:

129. ՊերՖեկտային շարունակական ինֆինիտիվն արտահայտում է գործողություն, որը սկսվել է բայ-ստորոգյալի արտահայտած գործողությունից առաջ և դեռևս ընթացքի մեջ է.

She seems to have been feeling unwell for some time.

Թվում է, նա վատառողջ է զգում իրեն արդեն որոշ ժամանակ:

She seemed to have been feeling unwell for some time.

Թվում էր, նա վատառողջ է զգում իրեն արդեն որոշ ժամանակ:

ԻՆՖԻՆԻՏԻՎԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

130. Նախադասության մեջ ինֆինիտիվը (առանձին կամ լրացումներով) լինում է՝

1. Ենթակա.

To smoke is bad for health.

Ծխելը վտանգավոր է առողջության համար:

To work is everybody's duty.

Աշխատելը յուրաքանչյուրի պարտքն է:

2. Ստորոգելիական վերադիր.

Our duty is **to help** our friends.

Մեր պարտքն է օգնել մեր ընկերներին:

His aim is **to master** English.

Նրա նպատակն է տիրապետել անգլերենին:

3. Բաղադրյալ բայական ստորոգյալի մաս.

He must **read** much.

Նա պետք է շատ կարդա:

She began **to cry**.

Նա սկսեց լաց լինել:

He intends **to leave** town this week.

Նա մտադիր է մեկնել քաղաքից այս շաբաթ:

They happened **to meet** at the bus-stop.

Նրանք պատահաբար հանդիպեցին ավտոբուսի կանգառում:

4. Ուղիղ խնդիր (to like, to forget, to ask, to promise և այլ անցողական բայերից հետո).

I like **to read** detective stories.

Ես սիրում եմ դետեկտիվ պատմվածքներ կարդալ:

Don't forget **to post** the letters.

Չմոռանաք ուղարկել նամակները:

5. Որոշիչ.

He will make a report at the conference **to be held** in June.

Նա զեկուցելու է հունիսին կայանալիք կոնֆերանսում:

She was the **to answer** at the examination.

Նա վերջինը պատասխանեց քննության ժամանակ:

6. Նպատակի պարզա.

To know a foreign language well one must read and speak as much as possible.

Օտար լեզու լավ իմանալու համար պետք է, որքան հնարավոր է, շատ կարդալ և խոսել:

To drive a car in a big city one must be an experienced driver.

Մեծ քաղաքում ավտոմեքենա վարելու համար պետք է փորձված վարորդ լինել:

7. Հետևանքի պարզա.

He was too tired to answer any questions.

Նա չափազանց հոգնած էր, ուստի չէր կարող պատասխանել որևէ հարցի:

8. Բարդ խնդրի, ենթակայի, որոշչի, պարագայի մաս հետևյալ կառույցներում՝ **the Objective Infinitive Construction, the Subjective Infinitive Construction, the for-to-Infinitive Construction**:

131. The Objective Infinitive Construction: Նախադասության մեջ այս կառույցը գործածվում է որպես բարդ խնդիր ¹: Ինֆինիտիվին նախորդում է ընդհանուր հոլովով դրված գոյական անուն կամ օբյեկտային հոլովով անձնական դերանուն: Գոյականի կամ դերանվան արտահայտած անձը կամ առարկան հանդիսանում է ինֆինիտիվի արտահայտած գործողության կատարողը: Բարդ խնդիրը թարգմանվում է հայերեն խնդիր երկրորդական նախադասությամբ, ընդ որում բարդ խնդրի անվանական մասը հանդես է գալիս որպես երկրորդական նախադասության ենթակա, ինֆինիտիվը՝ որպես ստորոգյալ. I expect Ann (her) to arrive tomorrow ես կարծում եմ, որ էմնը (նա) կժամանի վաղը:

¹ Որոշ քերականներ բարդ խնդրի փոխարեն այս դեպքում տեսնում են խնդիր և նրան հաջորդող ինֆինիտիվով արտահայտված մեկ այլ անդամ. որը կոչվում է օբյեկտային վերադիր:

132. Բարդ խնդիրը գործածվում է.

1. Զգայական ընկալում ցույց տվող **to see, to hear, to feel, to watch, to observe, to notice** և նման այլ բայերից հետո: Այս դեպքում ինֆինիտիվը գործածվում է առանց **to** մասնիկի.

I saw him leave the house.

Ես տեսա, թե ինչպես նա տնից դուրս եկավ:

I heard him go out.

Ես լսեցի, թե ինչպես նա դուրս գնաց:

I felt her take hold of my arm.

Ես զգացի, որ նա թևս բռնեց:

2. Մտավոր գործողություն ցույց տվող **to know, to think, to believe, to suppose, to expect, to find** և նման այլ բայերից հետո.

I know him to be a good sportsman.

Ես գիտեմ, որ նա մարզիկ է:

I believe him to be wrong.

Ես կարծում եմ, որ նա ճիշտ չէ:

I expect you to be punctual.

Գուսով եմ, որ դուք ճշտապահ կլինեք:

3. Ցանկություն և մտադրություն ցույց տվող **to want, to wish, to desire, to mean** և նման այլ բայերից հետո.

I want you to dine with me.

Ես ցանկանում եմ, որ դուք ճաշեք ինձ հետ:

I wish the book to be returned in time.

Ես ցանկանում եմ, որ գիրքը ժամանակին վերադարձվի:

I didn't mean you to read the letter.

Ես նկատի չունեի, որ դուք կարդաք այդ նամակը:

4. Ձգացնունք ցույց տվող **to like, to dislike, to love, to hate** և նման այլ բայերից հետո.

I like people to tell the truth.

Ես սիրում եմ, երբ մարդիկ ճշմարտությունն են ասում:

I hate you to be troubled.

Ես բոլորովին չեմ ուզում, որ դուք անհանգստանաք:

5. Հարկադրանք ցույց տվող **to make** բայից հետո ինֆինիտիվը գործածվում է առանց **to** մասնիկի.

They made me repeat the story.

Նրանք ստիպեցին ինձ կրկնել պատմությունը:

Նրանք ստիպեցին, որ ես կրկնեմ պատմությունը:

His jokes made us laugh.

Նրա կատակները ծիծաղեցրին մեզ (ստիպեցին մեզ ծիծաղել):

Այս դեպքում բարդ խնդիրը թարգմանվում է հայերեն համարժեք կառույցով, մաև երկրորդական նախադասությամբ:

Ծանոթություն. *I was made to repeat the story* (ինձ ստիպեցին կրկնել պատմությունը) կրավորական կառույցում **to make** բային հաջորդող ինֆինիտիվը պահպանում է **to** մասնիկը:

133. The Subjective Infinitive Construction: They saw him enter the house ներգործական կառուցվածք ունեցող նախադասության բարդ խնդիրը (**him enter the house**) դառնում է համապատասխան կրավորական կառուցվածք ունեցող նախադասության բարդ ենթական՝ **He was seen to enter the house:** Նախադասության ստորոգյալն է **was seen:** Այսպիսի կառույցը կոչվում է **the Subjective Infinitive Construction:** Կառույցի բարդ ենթական բաղկացած է ընդհանուր հոլովով դրված գոյականից կամ ուղղական հոլովով անձնական դերանունից և ստորոգյալին հաջորդող ինֆինիտիվից ¹:

¹ Զերականության որոշ ձեռնարկներում ինֆինիտիվն այս կառույցում դիտվում է որպես ստորոգյալի մաս:

The delegation is reported to arrive in two days.

Հաղորդում են, որ պատվիրակությունը ժամանելու է երկու օրից:

The delegation is reported to have arrived already.

Հաղորդում են, որ պատվիրակությունը ժամանել է արդեն:

134. Բարդ ենթական գործածվում է հետևյալ բայերի կրավորական ձևի հետ.

1. Չգայական ընկալում ցույց տվող to see, to hear: Այս կառույցում զգայական ընկալում ցույց տվող բային հաջորդող ինֆինիտիվը պահպանում է **to** մասնիկը.

The man was seen to disappear in the distance.

Տեսան, թե ինչպես մարդն անհետացավ հեռվում:

He was heard to laugh heartily.

Լսելի էր, թե նա ինչպես է լիաթոք ծիծաղում:

Լսեցին, թե ինչպես նա լիաթոք ծիծաղեց:

2. Մտավոր գործունեություն ցույց տվող to think, to consider, to know, to expect, to believe, to suppose.

He was considered to be a foreigner.

Համարում էին, որ նա օտարերկրացի է:

She is known to be an outstanding pianist.

Նա հայտնի է որպես նշանավոր դաշնակահարուհի:

The portrait is believed to have been painted in the 17th century.

Ենթադրում են, որ այդ դիմանկարը նկարված է 17-րդ դարում:

3. Ասացողական to say, to report.

He is said to be a good doctor.

Ասում են, որ նա լավ բժիշկ է:

She was said to be very ill.

Ասում էին, որ նա լուրջ հիվանդ է:

The conference is reported to be held next year.

Հաղորդում են, որ կոնֆերանսը տեղի կունենա հաջորդ տարի:

Վերը բերված օրինակներում **the Subjective Infinitive Construction** կառույցը թարգմանվում է հայերեն բարդ ստորադասական նախադասությամբ, որի գլխավոր նախադասությունն անորոշ-դիմավոր նախադասություն է: Անգլերեն նախադասության ստորոգյալը հանդես է գալիս որպես հայերեն գլխավոր նախադասության ստորոգյալ, բարդ ենթակայի բաղադրիչները՝ որպես հայերեն երկրորդական նախադասության ենթակա և ստորոգյալ:

135. Բարդ ենթական գործածվում է **to be likely, to be sure** բառակապակցությունների հետ.

He is sure to come soon.

Նա անկասկած կգա շուտով:

She is likely to marry him.

Նա հավանորեն կամուսնանա նրա հետ:

He is not likely to pass the examination.

Հազիվ թե նա հանձնի քննությունը:

Այս դեպքում **the Subjective Infinitive Construction** կառույցը թարգմանվում է հայերեն եղանակավորող բառ պարունակող պարզ նախադասությամբ:

136. Բարդ ենթական գործածվում է **to seem, to appear** բայերի հետ.

He seems to have forgotten me.

Թվում է, որ նա մոռացել է ինձ:

She appears to be well but really she is rather ill.

Թվում է, թե նա առողջ է, բայց իրականում բավականին հիվանդ է:

Այս դեպքում **the Subjective Infinitive Construction** կառույցը թարգմանվում է հայերեն բարդ ստորադասական նախադասությամբ, որի գլխավոր նախադասությունը միադիմի նախադասություն է: Անգլերեն նախադասության ստորոգյալը հանդես է գալիս որպես հայերեն գլխավոր նախադասության ստորոգյալ, բարդ ենթակայի բաղադրիչները՝ որպես հայերեն երկրորդական նախադասության ենթակա և ստորոգյալ:

137. The for-to Infinitive Construction: Ինֆինիտիվ պարունակող այս բարդ կառույցը կապակցվում է **for** նախդրով: **For** նախդրին հաջորդում է ընդհանուր հոլովով դրված գոյական անուն կամ օբյեկտային հոլովով անձնական դերանուն, որին հաջորդում է ինֆինիտիվ: Կառույցի անվանական բաղադրիչը ցույց է տալիս անձ, որն ինֆինիտիվի արտահայտած գործողության կատարողն է: Այս կառույցը կարող է լինել բարդ ենթակա, բարդ նախդրավոր խնդիր, բարդ որոշիչ, բարդ պարագա.

For him to go there was out of the question. (բարդ ենթակա)

Նրա այնտեղ գնալը անկարելի էր:

They waited for the moon to rise. (բարդ նախդրավոր խնդիր)

Նրանք սպասեցին, որ լուսինը ծագի:

There is really nothing for me to do here. (բարդ որոշիչ)

Իրոք, այստեղ ինձ համար անելու ոչինչ չկա:

He opened the door for me to enter. (բարդ նպատակի պարագա)

Նա բացեց դուռը, որ ես մերս մտնեմ:

ԳԵՐՈՒՆԴ (THE GERUND)

138. Գերունդն ինֆինիտիվի նման ունի բայական և գոյականական հատկանիշներ: Հայերենը չունի նման ձև: Գերունդը կազմվում է բայի հիմքին **-ing** վերջավորությունն ավելացնելով. *take - taking* (գերունդի կազմության կանոնները նույնն են՝ ինչ դերբայինը): (Տե՛ս «Բայ», 151):

139. Գերունդն ունի հետևյալ գոյականական հատկանիշները.

1. Գերունդին կարող է նախորդել նախդիր.

He dreams of becoming an engineer.

Նա երազում է ինժեներ դառնալ:

2. Գերունդը կարող է ունենալ որոշիչ՝ արտահայտած ստացական դերանունով կամ ստացական հոլովով դրված գոյականով.

We look forward to **his coming** to see us.

Մենք անհամբեր սպասում ենք նրա այցին:

I rely on **Ann's doing** it in time.

Ես վստահ եմ, որ էննը կանի դա ժամանակին:

140. Գերունդի բայական հատկանիշներն են՝

1. Կարող է ունենալ մակբայով արտահայտված պարագա.

She began **reading** the story **aloud**.

Նա սկսեց բարձրաձայն կարդալ պատմվածքը:

2. Կարող է ունենալ ուղիղ խնդիր՝

Excuse my **bothering** you.

Ներեցեք, որ անհանգստացնում եմ ձեզ:

Որպես բայ՝ գերունդն ունի հետևյալ ձևերը.

	Active	Passive
Indefinite	taking	being taken
Perfect	having taken	having been taken

Գերունդի ժխտական ձևը կազմվում է **not** մասնիկի միջոցով, որը դրվում է գերունդից առաջ՝ **not taking, not having taken, not being taken** և այլն: Շատ ավելի գործածական է գերունդի ոչ պերֆեկտային ձևը:

141. Գերունդի ոչ պերֆեկտային ձևը ցույց է տալիս գործողություն, որի կատարման ժամանակը համընկնում է բայ-ստորոգյալի արտահայտած գործողության ժամանակին.

I **am** quite used to **waiting** in queues.

Ես միանգամայն սովոր եմ հերթերում սպասելուն:

Do you feel like going for a swim?

Ցանկանու՞մ ես հիմա զնալ լողալու:

He stood a moment without **speaking**.

Նա առանց խոսելու կանգնեց մի պահ:

I **apologized** to the teacher for **being** late.

Ես ուսուցչից ներողություն խնդրեցի ուշանալու համար:

To intend և **to insist** բայերից հետո գերունդի ոչ պերֆեկտային ձևը ցույց է տալիս ապառնի գործողություն՝ այս բայերի բառային իմաստի շնորհիվ.

He intends **going** there tomorrow.

Նա մտադիր է այնտեղ գնալ վաղը:

He insists on my **going** there.

Նա պնդում է, որ ես գնամ այնտեղ:

142. Գերունդի պերֆեկտային ձևը ցույց է տալիս գործողություն, որը նախորդել է բայ-ստորոգյալի արտահայտած գործողությանը.

He mentioned **having read** it in the paper.

Նա ասաց, որ կարդացել է դա լրագրում:

Excuse my **having been** so rude.

Ներեցեք, որ այդքան կոպիտ վարվեցի:

On (upon) և **after** նախդիրներից հետո գերունդի պերֆեկտային ձևի փոխարեն սովորաբար գործածվում է ոչ պերֆեկտային ձևը, որն արտահայտում է նախորդող գործողություն՝ այս նախդիրների իմաստի շնորհիվ.

He paused **on hearing** his mother's voice.

Նա կանգ առավ՝ լսելով մոր ձայնը:

She began to cry **on receiving** the news.

Լուրն ստանալով՝ նա սկսեց լաց լինել:

After washing the child she put him to bed.

Երեխային լողացնելուց հետո նա նրան պառկեցրեց քնելու:

Անհրաժեշտ է հիշել, որ ընդհանրապես ավելի գործածական է ոչ պերֆեկտային գերունդը:

143. Գերունդ է գործածվում **to dread, to prevent, to avoid, to deny, to recollect, to postpone, to enjoy, to forgive, to finish, to excuse, to suggest, to keep (= to continue), to mind (= to object), to resist** և այլ բայերից հետո.

She dreads **getting** old.

Նա սարսափում է ծերանալուց:

You can hardly avoid **meeting** her if you work in the same office.

Հազիվ թե խուսափեք նրան հանդիպելուց, եթե երկուսդ էլ աշխատում եք միևնույն գրասենյակում:

They tried to prevent the river (from) **flooding** the town.

Նրանք փորձեցին կանխել քաղաքի հեղեղումը գետի կողմից:

He denied **knowing** anything about their plans.

Նա ժխտեց նրանց պլանների մասին իր որևէ բան իմանալը:

I've enjoyed **talking** to you about old times.

Ես հաճույք ստացա անցած օրերի մասին ձեզ հետ զրույցից:

I suggested **going** home.

Ես առաջարկեցի, որ տուն գնանք:

Why does she keep on **giggling**?

Ինչու՞ է նա շարունակում քթի տակ ծիծաղել:

Would you mind **waiting** a moment?

Կարո՞ղ եք սպասել մեկ րոպե: Սպասե՛ք մեկ րոպե:

144. Գերունդ է գործածվում **can't stand (= endure), can't help (= prevent/avoid)** արտահայտություններից և **worth** ածականից հետո.

She can't stand **waiting**.

Նա չի սիրում սպասել (չի կարող տանել):

I couldn't help **laughing**.

Ես չկարողացա զսպել ծիծաղս:

It's no use **complaining**.

Անօգուտ է բողոքելը:

It's no good (my) **talking** to him.

Ավելորդ է նրա հետ (իմ) խոսելը:

There is nothing here worth **buying**.

Այստեղ գնելու ոչինչ չկա:

145. Գերունդ կամ ինֆինիտիվ է գործածվում **to begin, to start, to continue, to cease, to remember, to forget, to prefer, to permit, to allow, to advise, to recommend, to propose, to mean, to go on, to love, to like, to hate** և այլ բայերից հետո:

1. **To begin, to start, to continue, to cease** բայերից հետո գերունդը և ինֆինիտիվը գործածվում են առանց իմաստի տարբերակման. I began **working** կամ I began **to work** ես սկսեցի աշխատել:

2. Խմբի մյուս բայերի դեպքում գերունդի և ինֆինիտիվի գործածությունը տարբերակվում է:

ա) Գերունդն արտահայտում է գործողություն՝ ավելի ընդհանուր առումով, ինֆինիտիվը՝ գործողության առանձին դեպք.

I like **talking** to you.

Ես սիրում եմ ձեզ հետ զրուցել (այն միշտ հաճույք է պատճառում ինձ):

I should like **to talk** to you.

Կուզեմայի խոսել ձեզ հետ (առանձին դեպք ներկայում):

She hates **getting** to the theatre late.

Նա չի սիրում ներկայացումից ուշանալ (ընդհանրապես):

I hate **telling** lies.

Ես չեմ սիրում, երբ սուտ եմ խոսում (ընդհանրապես):

I hate **to tell** you this.

Ինձ համար չատ ծանր է սրա մասին ձեզ ասելը (առանձին դեպք ներկայում):

I prefer **staying** quietly at home to going to a cinema.

Ես նախընտրում եմ տանը հանգիստ մնալ, քան կինո գնալ (ընդհանրապես):

Come and see a film tonight. - No, thanks; I prefer **to stay** at home.

- Եկեք կինոնկար նայելու: - Շնորհակալություն. ես նախընտրում եմ տանը մնալ (առանձին դեպք):

բ) **To regret, to remember, to forget** բայերից հետո գերունդ է գործածվում, եթե գերունդի արտահայտած գործողությունը նախորդել է այս բայերի արտահայտած գործողությանը: Հակառակ դեպքում գործածվում է ինֆինիտիվը.

I regret **spending** so much money.

Ավստսում եմ, որ այդքան շատ դրամ ծախսեցի:

I remember **reading** about it in the papers.

Հիշում եմ, որ կարդացել եմ դրա մասին լրագրերում:

I remember **being taken** to Paris as a small child.

Ես հիշում եմ, որ ինձ տարան Փարիզ, երբ փոքր երեխա էի:

I remember his **telling** me about it.

Հիշում եմ, որ նա ասել է ինձ դրա մասին:

Բայց՝

I'll

I regret **to say** that I cannot help you.

Ցավում եմ, բայց պետք է ասեմ, որ չեմ կարող օգնել ձեզ:

I must remember **to post** the letter.

Զնոռանամ ուղարկել նամակը:

I'll remember **to ring** Tom.

Զեմ մոռանա զանգահարել Թոմին:

Don't forget **to post** the letters.

Զմոռանաք ուղարկել նամակները:

զ) **To allow, to permit, to advise, to recommend** բայերից հետո ինֆինիտիվ է գործածվում, եթե նշվում է այն անձը, որին թույլատրվում կամ խորհուրդ է տրվում որևէ բան անել: Հակառակ դեպքում գործածվում է գերունդ.

The librarian does not allow (permit) **us to talk** here.

Գրադարանավարը մեզ թույլ չի տալիս խոսել այստեղ:

The librarian does not allow (permit) **talking** here.

Գրադարանավարը թույլ չի տալիս խոսել այստեղ:

He advised **me to apply** at once.

յն.

Նա խորհուրդ տվեց ինձ դիմել անմիջապես:

He advised **applying** at once.

Նա խորհուրդ տվեց դիմել անմիջապես:

դ) երբ **to propose** բայն ունի «առաջարկել» իմաստը, նրան հաջորդում է գերունդ.

I propose **waiting** till they get here.

Ես առաջարկում եմ սպասել մինչև նրանց գալը:

To propose բայից հետո սովորաբար գործածվում է ինֆինիտիվ, երբ նրա իմաստն է «մտադիր լինել».

I propose **to start** tomorrow.

Ես մտադիր եմ մեկնել վաղը:

ե) **To mean** բային՝ «մտադիր լինել» իմաստի դեպքում հաջորդում է ինֆինիտիվ.

I mean **to work** harder next year.

Ես մտադիր եմ ավելի լարված աշխատել հաջորդ տարի:

Երբ **to mean** բայն ունի «նշանակել» իմաստը, նրան հաջորդում է գերունդ.

Having a party tonight will mean (our) **working** extra hard tomorrow.

Այս երեկո հյուրեր ընդունել՝ կնշանակի սովորականից ավելի լարված աշխատել վաղը:

զ) **To go on** «շարունակել» բայից հետո սովորաբար գործածվում է գերունդ.

He went on **apologizing** for nearly five minutes.

Մոտ հինգ րոպե նա շարունակում էր ներողություն խնդրել:

Բայց՝

He began by showing us where the island was and went on **to tell** us about its climate.

Նա սկզբում ցույց տվեց մեզ կղզու տեղը, այնուհետև սկսեց խոսել նրա կլիմայի մասին:

Այս կառույցում սովորաբար գործածվում է **to tell, to talk, to explain** բայերի ինֆինիտիվը, որը ցույց է տալիս, որ խոսողը շարունակում է խոսել նույն թեմայի շուրջ, սակայն շոշափում է նոր ասպեկտ (այստեղ՝ սկսեց խոսել կղզու կլիմայի մասին):

ԳԵՐՈՒՆԴԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

146. Նախադասության մեջ գերունդը (առանձին կամ լրացումներով) լինում է՝

1. Ենթակա.

Reading is my favourite occupation.

Ընթերցանությունն իմ սիրած զբաղմունքն է։

It is useless **talking about it**.

Անօգուտ է դրա մասին խոսելը։

2. Ստորոգելիական վերադիր.

His aim is **mastering** English.

Նրա նպատակն է տիրապետել անգլերենին։

Seeing is **believing**.

Տեսածին կհավատան։

3. Բաղադրյալ բայական ստորոգյալի մաս (to begin, to start, to go on, to continue, to stop, to finish, to give up և այլ բայերից հետո).

Have you started **working** yet?

Սկսե՞լ եք արդեն աշխատել։

Have you finished **reading** the book?

Վերջացրե՞լ եք կարդալ գիրքը։

4. I hope it won't go on **raining** all day.

Հուսով եմ, անձրևը չի շարունակվի ամբողջ օրը։

She continued **crying**.

Նա շարունակում էր լաց լինել։

Ծանոթություն. To stop բայից հետո գերունդը և ինֆինիտիվն ունեն տարբեր պաշտոններ.

He stopped **smoking**. (բաղադրյալ բայական ստորոգյալի մաս)

Նա դադարեց ծխել։

He stopped **to smoke**. (նպատակի պարագա)

Նա կանգ առավ ծխելու։

4. Ուրիշ խնդիր (to like, to dislike, to hate, to remember, to suggest, to excuse, to need, to avoid բայերից հետո)։

Excuse my **bothering** you.

Ներեցեք, որ անհանգստացնում եմ ձեզ։

Avoid **making** mistakes.

Խուսափեցեք սխալների կատարելուց։

I remember **seeing** that man somewhere.

Հիշում եմ, որ տեսել եմ այդ մարդուն ինչ-որ տեղ։

I don't like **troubling** her.

Ես չեմ սիրում անհանգստացնել նրան։

5. Նախդրավոր խնդիր (to think of, to persist in, to rely on, to suspect of, to accuse of, to depend on, to object to, to thank for, to prevent from, to insist on, to succeed in բայերից հետո)։

I thanked him for **helping** me.

Ես շնորհակալություն հայտնեցի նրան ինձ օգնելու համար։

She **persist** in wearing that old-fashioned hat.

Նա համառորեն կրում է այդ հնաձև գլխարկը։

He **succeeded** in passing the examination.

Նրան հաջողվեց հանձնել քննությունը։

Գերունդը գործածվում է որպես նախդրավոր խնդիր՝ to be fond of, to be tired of, to be proud of, to be used to, to be interested in, to be surprised at բառակապակցություններից հետո.

He is fond of **playing** chess.

Նա շատ է սիրում շախմատ խաղալ։

He is well used to **travelling**.

Նա միանգամայն սովոր է ճանապարհորդության։

She is never tired of **talking** to me about herself.

Նա երբեք չի ծանձրանում իր մասին ինձ հետ խոսելուց։

He is proud of **being** so successful.

Նա հպարտանում է իր հաջողություններով։

6. Որոշիչ (գործածվում է տարբեր նախդիրների հետ, ավելի հաճախ of նախդրի հետ)։

Those are different methods of **teaching foreign languages**.

Դրանք օտար լեզու դասավանդելու տարբեր մեթոդներ են:

He is in the habit of **getting up late**.

Նա սովոր է ուշ վեր կենալու:

7. Պարագա (գործածվում է **on (upon), in, for, after, before, by, without** նախդիրների հետ).

On returning home he found the family at dinner. (Ժամանակի պարագա)

Տուն վերադառնալով նա տեսավ, որ ընտանիքի անդամները ճաշում են:

Երբ նա տուն վերադարձավ, ընտանիքի անդամներին տեսավ ճաշելիս:

In reciting the poem, she missed out a line. (Ժամանակի պարագա)

Բանաստեղծությունն արտասանելիս նա բաց թողեց մեկ տող:

He is here **for repairing his car**. (նպատակի պարագա)

Նա եկել է այստեղ իր ավտոմեքենան վերանորոգելու:

The children kissed their mother good-night **before going to bed**.

(Ժամանակի պարագա)

Քնելուց առաջ երեխաները համբուրեցին և բարի գիշեր մաղթեցին իրենց մորը:

He returned to town **after spending a month in the country**.

(Ժամանակի պարագա)

Մեկ ամիս ամառանոցում մնալուց հետո նա վերադարձավ քաղաք:

You will improve your pronunciation **by reading aloud every day**.

(ձևի պարագա)

Դուք կուղղեք ձեր արտասանությունը ամեն օր բարձրաձայն կարդալով:

He left the room **without saying a word**. (ուղեկցող

հանգամանքների պարագա)

Նա դուրս եկավ սենյակից առանց մի բառ ասելու:

147. Գերունդը կարող է գործածվել բարդ կառույցում: Այդպիսի կառույցում գերունդին նախորդում է ստացական դերանուն կամ ստացական հոլովով դրված գոյական անուն. I rely on **Ann's (her) answering the letter in time** Ես վստահ եմ, որ էննը (նա) ժամանակին կպատասխանի նամակին: Գերունդին նախորդող

գոյականը կամ դերանունը ցույց է տալիս անձ, որը գերունդի արտահայտած գործողության կատարողն է: Գերունդ պարունակող բարդ կառույցը նախադասության մեջ կարող է լինել բարդ ենթակա, բարդ խնդիր, բարդ պարագա:

His knowing English well is an advantage over the other students. (բարդ ենթակա)

Նրա անգլերեն լավ իմանալը առավելություն է մյուս ուսանողների նկատմամբ:

It was quite unexpected his coming back. (բարդ ենթակա)

Նրա վերադարձը (վերադառնալը) բոլորովին անսպասելի էր:

Excuse my interrupting you. (բարդ խնդիր)

Ներեցեք, որ ընդհատում եմ ձեզ:

On coming home he was told of his wife's being unwell. (բարդ նախադրավոր խնդիր)

Երբ նա տուն եկավ, նրան հայտնեցին կնոջ հիվանդ լինելու մասին:

They got out without his seeing them. (բարդ պարագա)

Նրանք դուրս եկան առանց նրա կողմից նկատվելու:

148. Գերունդը թարգմանվում է հայերեն անորոշ դերբայով, անորոշ դերբայի հոլովված ձևերով, գոյականով, անկատար դերբայով, բայի դիմավոր ձևով:

ԲԱՅԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ (THE VERBAL NOUN)

149. Բայական գոյականը և ոչ պերֆեկտային գերունդը համանուն ձևեր են: Սակայն, ի տարբերություն գերունդի, բայական գոյականն ունի միայն գոյականի հատկանիշներ՝ հոգ է առնում, ունի հոգնակի թվի ձև, կարող է ունենալ ածական որոշիչ:

She gave her hair a good brushing.

Նա մազերը մի լավ սանրեց:

He was interrupted by the ringing of the telephone.

Հեռախոսի զանգն ընդհատեց նրան:

I have heard of his doings.

Ես լսել եմ նրա արարքների մասին:

ԱԾԱԿԱՆ ԴԵՐՔԱՅ (THE PARTICIPLE)

150. Ածական դերբայն ունի բայի և ածականի հատկանիշներ: Անգլերենն ունի երկու ածական դերբայ՝ **I դերբայ (Participle I)** և **II դերբայ (Participle II)**:

151. **I դերբայը** կազմվում է բայի հիմքին **-ing** վերջավորությունն ավելացնելով: Անհրաժեշտ է հիշել հետևյալ ուղղագրական կանոնները՝

1. Եթե բայը վերջանում է համը **e**-ով, այն սղվում է նախքան **-ing** վերջավորությունն ավելացնելը. live - living, hope - hoping.

2. Եթե բայը վերջանում է բաղաձայնով, որին նախորդում է շեշտված կարճ ձայնավոր, ապա բառավերջի բաղաձայնը կրկնապատկվում է նախքան **-ing** վերջավորությունն ավելացնելը. sit - sitting, stop - stopping, begin - beginning.

3. Եթե բայի հիմքը վերջանում է **i**-ով, որին նախորդում է կարճ ձայնավոր, ապա **i**-ը կրկնապատկվում է՝ անկախ շեշտից. travel - travelling, compel - compelling.

4. **To die, to lie, to tie** բայերի **I դերբայը** կազմվում է հետևյալ կերպ՝ **dying, lying, tying**:

5. Բառավերջի **y**-ը պահպանվում է **-ing** վերջավորությունից առաջ. study - studying, deny - denying:

152. Կանոնավոր բայերի **II դերբայը** կազմվում է բայի հիմքին **-ed** վերջավորությունն ավելացնելով: Անկանոն բայերն ունեն **II դերբայի** ուրույն ձև (տե՛ս «Բայ», 5-6):

153. Անցողական բայերի I դերբայն ունի հետևյալ ձևերը.

	Active	Passive
Indefinite	writing	being written
Perfect	having written	having been written

Անանցողական բայերի I դերբայը չունի կրավորական սեռի ձև.

	Active
Indefinite	going
Perfect	having gone

154. Բոլոր բայերի II դերբայն ունի միայն մեկ անփոփոխ ձև:

155. I դերբայի ոչ պերֆեկտային (**Indefinite**) ձևը սովորաբար ցույց է տալիս գործողություն, որի կատարման ժամանակը համընկնում է բայ-ստորոգյալի արտահայտած գործողության ժամանակին:

They walked by the lake holding hands.

Նրանք զբոսնում էին լճի ափին՝ իրար ձեռք բռնած:

Seeing their uneasiness she smiled.

Տեսնելով նրանց կաշկանդվածությունը՝ նա ժպտած:

Being a student he is naturally interested in museums.

Ուսանող լինելով՝ նա, բնականաբար, հետաքրքրվում է բանգարաններով:

156. I դերբայի պերֆեկտային ձևն արտահայտում է գործողություն, որը նախորդել է բայ-ստորոգյալի արտահայտած գործողությանը:

Having failed twice, he didn't want to try again.

Երկու անգամ ձախողվելուց հետո նա ցանկություն չունեի նորից փորձելու:

Having slept two hours he felt refreshed.

Երկու ժամ քնելուց հետո նա իրեն զգում էր թարմացած:

Having arrived two days before the opening of the congress, he had enough time to do the city.

Համագումարի բացումից երկու օր առաջ ժամանելով՝ նա բավականին ժամանակ ուներ քաղաքը դիտելու:

Որպես ժամանակի պարագա գործածվող **to arrive, to enter, to close, to open, to cross** բայերի I դերբայի ոչ պերֆեկտային ձևը ցույց է տալիս նախորդող գործողություն՝ շնորհիվ այդ բայերի բառային իմաստի: Բայ-ստորոգյալի արտահայտած գործողությունն անմիջապես հետևում է դերբայի արտահայտած գործողությանը:

Entering his room, he switchen on the light.

Իր սենյակը մտնելով՝ նա վառեց լույսը:

Opening the drawer, he took out a jetter.

Դարակը բացելով՝ նա հանեց մի նամակ:

Arrived at the airport, he hurried to have his buggage registered.

Օդանավակայան ժամանելով՝ նա շտապեց գրանցել տալ իր ուղեբեռը:

157. II դերբայի միակ ձևը կարող է արտահայտել գործողություն, որի կատարման ժամանակը համընկնում է բայ-ստորոգյալի արտահայտած գործողության ժամանակին: Այն կարող է արտահայտել նաև նախորդող գործողություն.

She entered, accompanied by her mother.

Նա ներս մտավ մոր ուղեկցությամբ:

There was an unusual silence in the room, broken only by the ticking of the clock.

Սենյակում տիրում էր մի անսովոր լռություն, որը խանգարվում էր միայն ժամացույցի աշխատանքով:

Aroused by the crash he leapt to his feet.

Արթնանալով աղմուկից (աղմուկից արթնացած)՝ նա ուղքի ցատկեց:

The long expected answer came at last.

Երկար սպասված պատասխանը վերջապես ստացվեց:

ԴԵՐԲԱՅԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

158. Նախադասության մեջ I դերբայը լինում է՝

1. Որոշիչ.

Որպես որոշիչ գործածվում է միայն I դերբայի ոչ պերֆեկտային ձևը, որը դրվում է որոշյալից առաջ կամ հետո: Որոշյալից հետո դրվող I դերբայն ունենում է մեկ կամ ավելի լրացումներ և կազմում է դերբայական դարձված:

She looked at the falling rain.

Նա նայում էր տեղացող անձրևին:

She looked at the rain falling in torrents.

Նա նայում էր հորդ անձրևին:

A desolate loneliness settled on me, almost a frightening loneliness.
Անմխիթար մենություն համակեց ինձ, համարյա վախեցնող մենություն:

He stood on the steps leading down to the street.

Նա կանգնած էր դեպի փողոց տանող աստիճանների վրա:

Նախադաս որոշիչ I դերբայը թարգմանվում է հայերեն ենթակայական դերբայով: Հետադաս որոշիչ դերբայական դարձվածը թարգմանվում է կամ դերբայական դարձվածով, կամ որոշիչ երկրորդական նախադասությամբ:

2. Պարագա.

Որպես պարագա գործածվում են I դերբայի պերֆեկտային և ոչ պերֆեկտային ձևերը:

ա) Ժամանակի պարագա.

Coming near. I found the man to be an old friend of mine.

Մոտենալով, ես տեսա, որ այդ մարդն իմ հին ընկերներից է:

Being asked into the office, he left his hat and stick in the reception room.

Երբ նրան գրասենյակ հրավիրեցին, նա թողեց գլխարկը և ձեռնափայտը ընդունարանում:

Having waited for some time in the reception room, he was asked into office.

Ընդունարանում որոշ ժամանակ սպասելուց հետո նրան հրավիրեցին գրասենյակ:

Ի դերբայի ոչ պերՖեկտային ձևը՝ որպես ժամանակի պարագա, կարող է գործածվել **when** և **while** շաղկապների հետ.

He continued to speak **while walking** down the path.

Արահետով քայլելիս նա շարունակում էր խոսել:

While working on a ship he studied navigation.

Նավի վրա աշխատելիս նա սովորում էր նավավարություն:

When travelling I have now and then watched the sunrise.

Ծանապարհորդելիս ես երբեմն դիտել եմ արևածագը:

Ժամանակի պարագա դերբայական դարձվածը կարելի է փոխարինել ժամանակի պարագա երկրորդական նախադասությամբ.

Being asked into the office, he left his hat and stick in the reception room.

When he was asked into the office, he left his hat and sick in the reception room.

Having waited for some time in the reception room, he was asked into the office.

After he had waited for some time in the reception room, he was asked into the office.

Ժամանակի պարագա դերբայական դարձվածը թարգմանվում է հայերեն դերբայական դարձվածով կամ ժամանակի պարագա երկրորդական նախադասությամբ:

բ) Պատճառի պարագա.

Not receiving an answer to his letter, he sent a telegram.

Իր նամակին պատասխան չստանալով՝ նա հեռագիր ուղարկեց: Նա հեռագիր ուղարկեց, որովհետև պատասխան չստացավ իր նամակին:

Having arrived two days before the opening of the congress, he had enough time to do the city.

Նա բավականին ժամանակ ուներ դիտելու քաղաքը, քանի որ ժամանել էր համագումարի բացումից երկու օր առաջ:

Պատճառի պարագա դերբայական դարձվածը կարելի է փոխարինել պատճառի պարագա երկրորդական նախադասությամբ.

Not receiving an answer to his letter, he sent a telegram.

As he did not receive an answer to his letter, he sent a telegram.

Having arrived two days before the opening of the congress, he had enough time to do the city.

As he had arrived two days before the opening of the congress, he had enough time to do the city.

Պատճառի պարագա դերբայական դարձվածը թարգմանվում է հայերեն դերբայական դարձվածով կամ պատճառի պարագա երկրորդական նախադասությամբ:

գ) Ձկի պարագա.

He walked down the road limping.

Նա կաղալով քայլում էր ճանապարհով:

We wasted a whole day trying to repair the car.

Մենք վատնեցինք մի ամբողջ օր՝ փորձելով վերանորոգել ավտոմեքենան:

դ) Ռդեկցող հանգամանքների պարագա.

She went out, slamming the door.

Նա դուրս գնաց՝ շրխկացնելով դուռը:

I fell, striking my head against the door.

Ես վայր ընկա և գլուխս խփեցի դռանը:

ե) Համեմատության պարագա՝ **as if, as though** շաղկապներից հետո.

He said it as if thinking aloud.

Նա ասաց դա կարծես բարձրաձայն մտածելով:

3. Ստորոգելիական վերադիր.

Որպես վերադիր գործածվում են՝ **amusing, tiring, boring, horrifying** և որոշ այլ ածականացված դերբայներ.

The work is **tiring**.

Այս աշխատանքը հոգնեցուցիչ է:

The play was **boring**.

Ներկայացումը ծանծրալի էր:

The scene was **horrifying**.

Տեսարանը սարսափելի էր:

- (1)

4. Բարդ խնդրի մաս՝ the Objective Participial Construction կառույցում. You may see him **walking** to his office every morning Ամեն առավոտ նրան կարելի է տեսնել ոտքով աշխատանքի գնալիս:

Ի դերբայն այս կառույցում գործածվում է **to hear, to feel, to see, to watch, to observe, to listen, to find** և այլ բայերից հետո: Ի դերբային նախորդում է ընդհանուր, հոլովով դրված գոյական անուն կամ օբյեկտային հոլովով անձնական դերանուն: Ի դերբայը ցույց է տալիս գործողություն, նրան նախորդող գոյականը կամ դերանունը ցույց է տալիս անձ, որը դերբայի արտահայտած գործողության կատարողն է: Այս և the Objective Infinitive Continuous (տե՛ս «Բայ», 131-132) կառույցները սովորաբար գործածվում են տարբերակված, սակայն երբեմն չեն տարբերակվում:

To hear, to feel, to see, to watch, to notice բայերից հետո բարդ խնդրի մաս կազմող ինֆինիտիվի կամ Ի դերբայի գործածությունը կախված է նրա բառային իմաստից. **to come, to go, to drive, to start, to say, to cross** բայերի ինֆինիտիվը ցույց է տալիս ավարտված գործողություն, Ի դերբայը՝ ընթացքի մեջ գտնվող գործողություն.

I saw him cross the road.

Ես տեսա, որ նա անցավ ճանապարհի մյուս կողմը:

I saw him crossing the road.

Ես տեսա, որ նա անցնում է ճանապարհի մյուս կողմը:

Ես տեսա նրան ճանապարհի մյուս կողմն անցնելիս:

Bridget heard Luke drive up. She came out on the steps to meet him.

Բրիջիթը լսեց ինչպես Լյուքի ավտոմեքենան մոտեցավ տանը:

Բրիջիթը դուրս եկավ դիմավորելու նրան:

He heard footsteps coming from the direction of the library.

Նա լսեց գրադարանի կողմից մոտեցող ոտնաձայներ:

To talk, to work, to discuss բայերի ինֆինիտիվի և **I** դերբայի գործածությունը չի սահմանափակվում նրանց իմաստով: Ինֆինիտիվը և **I** դերբայը կարող են փոխարինել միմյանց:

I was watching the doctor work.

Ես դիտում էի, թե ինչպես է աշխատում բժիշկը:

I noticed him working in the garden.

Ես նկատեցի, որ նա աշխատում է պարտեզում:

They listened to him talk about the picture.

Նրանք լսում էին նրա խոսքը նկարի մասին:

I listened to them discussing it.

Ես լսում էի, թե ինչպես են նրանք քննարկում դա:

5. Բարդ ենթակայի մաս` the Subjective Participial Construction կառույցում: Բարդ ենթական բաղկացած է ընդհանուր հոլովով դրված գոյականից կամ ուղղական հոլովով անձնական դերանունից և ստորոգյալին հաջորդող **I** դերբայից: Նախադասության ստորոգյալն արտահայտված է **to find, to hear, to report, to see, to watch** բայերի կրավորական ձևով. **He was seen leaving the house** Տեսան, որ նա դուրս է գալիս տանից:

The Subjective Participial Construction և **the Subjective Infinitive Construction** (տե՛ս «Բայ», 133-136) կառույցները գործածվում են տարբերակված, երբեմն՝ առանց տարբերակման: Երկու կառույցներում էլ որպես ստորոգյալ գործածվում է **to find, to hear, to report, to see, to watch** բայերի կրավորական ձևը:

To hear, to see, to watch բայերից հետո ինֆինիտիվի կամ I դերբայի գործածությունը կախված է նրա իմաստից՝ **to shut, to take, to turn, to slam** բայերի ինֆինիտիվը ցույց է տալիս ավարտված գործողություն, I դերբայը՝ ընթացքի մեջ գտնվող գործողություն.

The front door was heard **to slam**.

Լսեցին, թե ինչպես մուտքի դուռը փակվեց աղմուկով:

The door was heard **shutting**.

Լսելի էր, թե ինչպես է դուռը փակվում:

He was seen **to take** the money.

Տեսան, թե ինչպես նա վերցրեց դրամը:

He was seen **turning** round the corner.

Տեսան, որ նա թեքվում է անկյունից:

To discuss, to laugh, to move, to talk բայերի ինֆինիտիվի և I դերբայի գործածությունը չի սահմանափակվում նրանց իմաստով: Նրանք կարող են փոխարինել միմյանց.

They were heard **to discuss** the possibility.

Լսվում էր, թե ինչպես են նրանք քննարկում այդ հնարավորությունը:

They were heard **talking** together.

Լսվում էր, թե ինչպես են նրանք զրուցում:

He was heard **laughing** in the next room.

Լսվում էր, թե ինչպես է նա ծիծաղում հարևան սենյակում:

II ԴԵՐԲԱՅԻ ՇԱՐԱԳՅՈՒՄԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

159. Նախադասության մեջ II դերբայը լինում է՝

1. Որոշիչ.

Որոշիչ II դերբայը դրվում է որոշյալից առաջ կամ հետո: Որոշյալին հաջորդող II դերբայն ունենում է մեկ կամ ավելի լրացումներ՝ կազմելով դերբայական դարձված.

He answered through the **locked** door.

Նա պատասխանեց փակ (փակված) դռան հետևից:

In the building **lighted** windows were shining here and there.

Շենքում այստեղ-այնտեղ փայլում էին լուսավոր պատուհաններ:

Vegetables **grown in hot-houses** are not so rich in colour and taste as vegetables growing in natural surroundings.

Ջերմոցներում աճեցվող բանջարեղենը գույնով և համով զիջում է բնական պայմաններում աճող բանջարեղենին:

2. Պարագա.

Պարագա II դերբայը գործածվում է **when, till, untill, unless, though, if** շաղկապներից հետո, որոնք դերբային հաղորդում են պարագայի իմաստ: Թարգմանվում են հայերեն երկրորդական նախադասությամբ.

When asked after his health, he said he was all right.
(Ժամանակի պարագա)

Երբ նրան հարցրին իր առողջության մասին, ասաց, որ լավ է զգում իրեն:

Men returning home could doze in their seats **until roused by their journey's end.** (Ժամանակի պարագա)

Տուն վերադարձող մարդիկ կարող էին մնջել իրենց տեղերում մինչև ուղևորության վերջը (մինչև ուղևորության վերջը կարթնացներ նրանց):

He did not usually utter a word **unless spoken to.** (պայմանի պարագա)

Նա սովորաբար չէր խոսում, եթե չէին խոսեցնում:

Ice melts if heated. (պայմանի պարագա)

Սառույցը հալվում է, եթե տաքացնում են:

3. Ատորոգելիական վերադիր.

Որպես վերադիր գործածվում են **amused, tired, bored, excited, disappointed** և որոշ այլ ածականացված դերբայներ.

I was naturally very disappointed.

Ես, բնականաբար, շատ հիասթափված էի:

He was cold but too excited to mind it.

Նա մրսում էր, բայց չափազանց հուզված էր և ուշադրություն չէր դարձնում դրան:

The audience was bored.

Հանդիսականները ծանծրացել էին:

The workers soon became tired.

Բանվորները շուտով հոգնեցին:

4. Բարդ խնդրի մաս to get, իսկ ավելի հազվադեպ՝ to want, to see, to hear, to find բայերից հետո.

He had his watch repaired.

Նա վերանորոգել տվեց իր ժամացույցը:

She got her breakfast brought to her room.

Նա նախաճաշը բերել տվեց իր սենյակը:

I want it done quick.

Ես ցանկանում եմ, որ դա արագ արվի:

She heard her name mentioned.

Նա լսեց, թե ինչպես տվեցին իր անունը:

He had his leg amputated.

Նրա ոտքը անդամահատեցին:

Այս կառույցում II դերբայի արտահայտած գործողությունը կատարվում է անհայտ անձնավորության կողմից հոգուտ ենթակայի արտահայտած անձի, կամ ենթակայի արտահայտած անձը կրում է II դերբայի արտահայտած գործողությունը:

160. The Nominative Absolute Participial Construction

Անկախ դերբայական կառույց: Ի տարբերություն դերբայական դարձվածի, այս կառույցում I կամ II դերբային նախորդում է ընդհանուր հոլովով դրված գոյական անուն կամ ուղղական հոլովով անձնական դերանուն, որը ցույց է տալիս դերբայի արտահայտած գործողության կատարողին: Ձևականորեն այս կառույցն անկախ է նախադասությունից, սակայն տրամաբանորեն կապված է նրա հետ և ծառայում է որպես պարագա.

It being very cold, they had to stay at home. (պատճառի պարագա)

Քանի որ շատ ցուրտ էր, նրանք ստիպված էին տանը մնալ:

Circumstances permitting, we shall start in a week. (պայմանի պարագա)

Եթե հանգամանքները թույլատրեն, մենք կճանապարհվենք մեկ շաբաթից:

The difficulties having been overcome, they went on to make further experiments. (ժամանակի պարագա)

Երբ դժվարությունները հաղթահարված էին, նրանք սկսեցին նոր փորձեր կատարել:

The experiment completed, he left the laboratory. (ժամանակի պարագա)

Երբ փորձն ավարտվեց, նա հեռացավ լաբորատորիայից:

Անկախ դերբայական կառույցը կարող է կապակցվել **with** նախդրով.

He lay with his eyes closed. (ուղեկցող հանգամանքների պարագա)

Նա պառկած էր աչքերը փակ (փակված):

She sat quite silent, with her eyes fixed on the ground. (ուղեկցող հանգամանքների պարագա)

Նա նստած էր միանգամայն լուռ, հայացքը գետնին հառած:

Անգլերենի անկախ դերբայական կառույցը հազվադեպ է գործածվում խոսակցական լեզվում, հիմնականում հանդիպում է գիտական և գեղարվեստական գրականության մեջ:

ՄԱԿՐԱՅ (THE ADVERB)

1. Գործողության տեղ, ժամանակ, ձև, չափ և քանակ ցույց տվող բառերը կոչվում են մակբայ: Մակբայը կարող է ցույց տալ նաև հատկանիշի չափ, աստիճան: Նախադասության մեջ մակբայը լինում է պարագա:

He was born **here**. (տեղի պարագա)

She arrived **yesterday**. (ժամանակի պարագա)

They study **well**. (ձևի պարագա)

He is **very** clever. (չափի պարագա)

2. Անգլերենում մակբայներն ըստ կազմության լինում են՝ պարզ (now, here, there, well), ածանցավոր (usually, happily, partly), բարդ (sometimes, everywhere, nowhere) և նկարագրական (for good, by no means):

Ծանոթություն. Ածանցավոր մակբայները կազմում են հիմնականում **-ly** ածանցով՝ ածականական, դերբայական, երբեմն գոյականական հիմքերից.

usual սովորական	— usually սովորաբար
marked նկատելի	— markedly զգալիորեն
part մաս	— partly մասամբ

Բառավերջի **y**-ը փոխարինվում է **i**-ով նախքան **-ly** ածանցն ավելացնելը. **happy** - **happily**, **angry** - **angrily**: Ածականական հիմքի **-le**, **-ue** տառակապակցությունների համար **e**-ն սղվում է մակբայակերտ ածանցից առաջ. **simple** - **simply**, **true** - **truly**:

3. Մի խումբ մակբայներ (**fast, long, far, low, early**) ձևով չեն տարբերվում նույնարմատ ածականներից: Այդպիսի մակբայները կարելի է տարբերել նկատի ունենալով նախադասության մեջ նրանց պաշտոնը:

I have known him for a **long** time. (ածական)
 I am not going to stay here **long**. (մակբայ)
 She spoke in a **low** voice. (ածական)
 The plane flew very **low**. (մակբայ)

4. Մի քանի մակբայներ ունեն երկու ձև, որոնցից մեկը չի տարբերվում նույնարմատ ածականի ձևից, մյուսը վերջանում է **-ly** ածանցով: Այս երկու ձևերը մեծ մասամբ ունեն տարբեր իմաստներ.

He works **hard**.
 Նա լարված է աշխատում:
 He could **hardly** walk.
 Նա հազիվ էր քայլում:
 She lives quite **near**.
 Նա շատ մոտ է ապրում:
 It is **nearly** two o'clock.
 Մոտավորապես ժամը երկուսն է:
 We came home **late** last night.
 Երեկ երեկոյան մենք ուշ եկանք տուն:
 I have been very busy **lately**.
 Վերջերս ես շատ զբաղված եմ:

Երբեմն մակբայի երկու ձևերի տարբերակված գործածությունը կախված է մակբայի բառային շրջապատից, ինչպես, օրինակ՝

ճանճ The plane flew **high** above.
 Սավառնակը թռչում էր բարձր գլխավերևում:
 They think **highly** of him.
 Նրանք բարձր կարծիքի են նրա մասին:

Don't talk (speak) so **loud**.
 They laughed **loud** and long.
 Come **quick**: something terrible **has happened**!
 You're walking too **quick** for me!
 He wants to get rich **quick**.
 He **quickly** changed his clothes.
 You speak too **quickly**.

Որոշ դեպքերում երկու ձևերը գործածվում են առանց տարբերակման, ինչպես՝

How **slow** the time passes!
 How **slowly** the time passes!

Բայց՝

He **slowly** walked up the path.

5. Որոշ մակբայներ ունեն համեմատության աստիճաններ, որոնք կազմվում են ինչպես ածականների համեմատության աստիճանները: Միավանկ մակբայների բաղդատական աստիճանը կազմվում է **-er**, գերադրական աստիճանը՝ **-est** վերջավորություներով.

hard — harder — hardest
 soon — sooner — soonest

Երկվանկ և բազմավանկ մակբայների համեմատության աստիճանները կազմվում են **more** և **most** բառերի միջոցով.

easily — more easily — most easily
 comfortably — more comfortably — most comfortably

Ծանոթություն. **Quickly, slowly, often** մակբայների համեմատության աստիճանները կազմվում են երկու ձևով՝ **quickly - more quickly, most quickly**, կամ **quickly - quicker - quickest**: **Early** մակբայի համեմատության աստիճանները կազմվում են միայն մեկ ձևով՝ **early - earlier - earliest**:

6. **Well, badly, much, little** մակբայներն ունեն համեմատության անկանոն ձևեր.

well — better — best
 badly — worse — worst
 much — more — most
 little — less — least

7. Անգլերենում գործածական է մակբայի բաղդատական աստիճանի ձևը.

He runs **faster** than the wind.
 She dances **more beautifully** than her sister.

Գերադրական աստիճանի ձևերից առավել գործածական են **best, most, worst** և **least** ձևերը.

He works **best** in the morning.
 What is troubling you **most**?
 Tom played badly, Harry played worse and I played **worst**.
 He works **hardest** and is being paid **least**.

8. Անգլերենի մակբայները ըստ իմաստի բաժանվում են հետևյալ խմբերի՝

1. Ժամանակի մակբայներ. now, then, ago, yesterday, lately, already, still, soon, yet, presently, today, afterwards, when և այլն:

2. Հաճախականության մակբայներ. often, seldom, ever, never, sometimes, always, constantly, occasionally, twice և այլն:

3. Տեղի և ուղղության մակբայներ. here, there, everywhere, below, abroad, inside, outside, backwards, where և այլն:

4. Չևի մակբայներ. well, badly, fast, quickly, clearly, sincerely, deeply, willingly, how, somehow և այլն:

5. Չափի և աստիճանի մակբայներ. very, quite, somewhat, extremely, really, enough, so, too, rather, highly, completely, nearly և այլն:

6. Կապակցող մակբայներ. first (ly), secondly, next, then, thus, so, hence, besides, however, nevertheless, still, yet, therefore, consequently, accordingly և այլն:

9. Տարբեր իմաստային խմբերի պատկանող **when, where, how** և **why** մակբայները ծառայում են որպես հարցական և կապակցող մակբայներ: Որոշիչ երկրորդական մախադասություն կապակցելու դեպքում դրանք կոչվում են մակ հարաբերական մակբայներ:

ՄԱԿԲԱՅԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

10. Չևի մակբայները սովորաբար դրվում են բայից հետո. She sings **well**. Եթե բայ-ստորոգյալին հաջորդում է խնդիր, ձևի մակբայը դրվում է բայ-ստորոգյալից առաջ կամ խնդրից հետո. She **distinctly** pronounced the word. She pronounced the word **distinctly**.

Հատկանիշի չափ ցույց տվող մակբայները (բացառությամբ **enough** մակբայի) դրվում են այն ածականից կամ մակբայից առաջ, որի լրացումն են իրենք. You are **quite** right. He speaks English **very** well:

Enough մակբայը դրվում է այն բառից հետո, որի լրացումն է ինքը. The room is large **enough**. She speaks French **well enough**:

Today, yesterday, tomorrow մակբայները դրվում են կամ նախադասության վերջում, կամ սկզբում:

Before, recently, lately մակբայները սովորաբար դրվում են նախադասության վերջում. I've seen that film **before**. That happened long **before**. I haven't been there **lately**:

Տեղի մակբայները սովորաբար դրվում են ժամանակի մակբայներից առաջ. I hope to go **there** tomorrow:

Always, ever, never, usually, often, seldom, sometimes, still մակբայները դրվում են բայից առաջ (բայց՝ **to be** բայից հետո). We **often** go there. The sun **always** rises in the east. She **never** letters from him. He **still** hopes for a letter from her. He is **often** late for work:

Sometimes մակբայը կարող է դրվել նաև նախադասության սկզբում. Sometimes we go the cinema and at other times we go for a walk:

Բայի վերլուծական ձևերի դեպքում այս մակբայները դրվում են օժանդակ բայից հետո. I have **sometimes** had letters from him. We have **often** been there. He is **still** working at his report. When you arrive she will **still** be cooking the meal:

Բաղադրյալ բայական ստորոգյալի դեպքում նույն մակբայները դրվում են եղանակավոր բայերից հետո. You must **never** do such things:

Yet մակբայը ժխտական նախադասություններում դրվում է կամ նախադասության վերջում, կամ **not** մասնիկից հետո. They are not here **yet**. They are not **yet** here.

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ (MODAL WORDS)

1. Եղանակավորող բառերն արտահայտում են խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը նախադասության արտահայտած մտքի նկատմամբ: Այս բառերի օգնությամբ խոսողն արտահայտում է նախադասության նշված գործողության իրական կամ ենթադրական, ցանկալի կամ անցանկալի լինելու տարբեր աստիճաններ: Եղանակավորող բառերն անփոփոխ խոսքի մաս են:

2. Անգլերենի եղանակավորող բառերն ըստ իմաստի բաժանվում են հետևյալ հիմնական խմբերի.

1. **Համոզվածություն** արտահայտող (հաստատական) բառեր. *certainly, surely, definitely, undoubtedly* «անշուշտ, իհարկե, անկասկած», *really, indeed* «իրոք, իրականում», *naturally* «բնականաբար» և այլն.

Surely you know him.

Անշուշտ դուք գիտեք նրան:

She was **certainly** a beautiful girl.

Նա, անկասկած, գեղեցիկ աղջիկ էր:

It was **indeed** an unusual situation.

Իրոք անսովոր իրավիճակ էր:

2. **Ենթադրություն** արտահայտող (երկբայական) բառեր. *maybe, perhaps, possibly*, «միգուցե, հավանորեն, հավանաբար, ըստ երևույթին» և այլն.

Perhaps I am wrong, but I think he is 41 years old.

Միգուցե ես սխալվում եմ, սակայն կարծում եմ, որ նա 41 տարեկան է:

John **probably** told his father all about the matter.

Ջոնը, հավանաբար, պատմեց հորը ամեն ինչ դրա մասին:

3. Ցանկալիություն (կամ անցանկալիություն) արտահայտող բառեր. happily unhappily, luckily unluckily, fortunately - unfortunately «բարեբախտաբար - դժբախտաբար» և այլն.

Luckily he found the money that he had lost.

Բարեբախտաբար նա գտավ կորցրած դրամը:

Unfortunately we never found out the truth.

Դժբախտաբար մեզ չհաջողվեց հայտնաբերել ճշմարտությունը:

3. Անգլերենի եղանակավորող բառերի զգալի մասը ծագել է մակբայից, ուստի հաճախ որոշ եղանակավորող բառեր համանուն են համապատասխան մակբայներին (certainly, surely, happily և այլն): Դրանք կարելի է տարբերակել միայն նախադասության մեջ շարահյուսական կիրառությամբ: Մակբայը լինում է պարագա, եղանակավորող բառը՝ միջանկյալ բառ (parenthesis).

He works slowly but **surely**. (մակբայ)

You know him, **surely**? (եղանակավորող բառ)

4. Եղանակավորող բառերը կարող են գործածվել որպես բառախաղասություն.

Will you be able to come tomorrow? **Probably**.

— Կկարողանա՞ք գալ վաղը: — Հավանաբար:

ՆԱԽԴԻՐ (THE PREPOSITION)

1. Նախդիրը սպասարկու բառ է, որը ցույց է տալիս նախադասության անդամների միջև գոյություն ունեցող հարաբերությունները:

Ժամանակակից անգլերենում մեծ է նախդիրների դերը գոյականի, դերանվան և գերունդի՝ նախադասության մյուս բառերի հետ հարաբերություններն արտահայտելիս: Հայերենում նախադասության մյուս բառերի հետ գոյականի և դերանվան հարաբերություններն արտահայտվում են հոլովական վերջավորություններով, նախադրություններով և հետադրություններով:

Անգլերենի **of**, **to**, **with** նախդիրները կարող են արտահայտել հարաբերություններ, որոնք հայերենում արտահայտվում են հոլովական վերջավորություններով՝ առանց կապի: Այդ դեպքում վերոհիշյալ նախդիրները քերականացված են. **of** նախդիրը արտահայտում է այն հարաբերությունները, որոնք հայերենում արտահայտվում են սեռական հոլովով՝ **a box of matches** (լուցկու տուփ), **the door of the room** (սենյակի դուռը): **Of** նախդիրը կարող է համարժեք լինել նաև հայերենի բացառական հոլովի -ից վերջավորությանը՝ **three of the matches** (լուցկիներից երեքը): **To** նախդիրը խնդրից առաջ համարժեք է հայերենի տրական հոլովի վերջավորությանը. **She gave the doll to the girl** (Նա տիկնիկը տվեց աղջկան): **With** նախդիրը համարժեք է հայերենի գործիական հոլովի վերջավորությանը. **We cut bread with a knife** (Հացը կտրում ենք դանակով):

Երբեմն այդ նույն նախդիրները գործածվում են ինքնուրույն իմաստով.

I can't think of his name at the moment.

Չեմ կարող հիշել նրա անունը այս պահին:

Who first thought of the idea?

Ո՞վ առաջինը մտածեց դրա մասին (առաջարկեց այդ միտքը):

He often walks to work.

Նա հաճախակի ոտքով է գործի գնում:

I shall stay with you.

Ես կմնամ քեզ հետ:

Անգլերենում շատ նախդիրներ բազմիմաստ են և կարող են արտահայտել տարբեր հարաբերություններ, ինչպես՝

She made some coffee for us.

Նա մեզ համար սուրճ պատրաստեց:

She is tall for her age.

Տարիքի համեմատ նա բարձրահասակ է:

He won a medal for bravery.

Նա մեդալ ստացավ խիզախության համար:

They sent for a doctor.

Նրանք բժիշկ կանչեցին (ուղարկեցին բժշկի հետևից):

Նախդրի ընտրությունը կախված է տարբեր հանգամանքներից: Երբեմն այն ամբողջությամբ կախված է խոսողի հաղորդած մտքից, ինչպես՝ There was a photograph on his desk (In his desk, over his desk): Ավելի հաճախ նախդրի ընտրությունը կախված է բառակապակցության գլխավոր բառից: Այդ դեպքում նախդրի իմաստը մթազնվում է. She is quite good at painting Նա շատ լավ է նկարում He looked pleased with himself Նա ինքնագոհ տեսք ուներ: Նախդրի ընտրությունը կարող է կախված լինել նաև նրան հաջորդող գոյականից: Այդ դեպքում նախդիրը և նրան հաջորդող գոյականը կազմում են կայուն դարձվածք (set expression) և այլն.

Are you here on business?

Դուք գործո՞վ եք այստեղ:

We shall discuss it in detail.

Մենք կքննարկենք դա մանրամասնորեն:

She is shy at a first meeting.

Նա անհամարձակ է առաջին հանդիպման ժամանակ:

2. Նախդիրը սովորաբար շեշտ չի կրում: Այն կարող է թեթևակիորեն շեշտվել դերանունից առաջ. *I wrote a letter to him.* Երբեմն կարիք է զգացվում ընդգծել նախդրի իմաստը, որի հետևանքով էլ այն շեշտվում է՝ *Are you going to town or coming from town?* Որոշ դեպքերում նախդիրը շեշտվում է և դրվում նախադասության վերջում հեռու այն գոյականից (դերանունից), որին վերաբերում է: Դա տեղի է ունենում՝

1. Մասնավոր հարցերում.

What are they talking about?

Ինչի՞ մասին են նրանք խոսում:

Who are you waiting for?

Ու՞մ եք սպասում:

2. Որոշ տիպի երկրորդական նախադասություններում.

I know what he is worried about.

Ես գիտեմ, թե ինչն է անհանգստացնում նրան:

That is **what** he wanted to talk **about**.

Ահա թե ինչի մասին էր նա ցանկանում խոսել:

3. Որոշ կրավորական կառույցներում.

The children were taken good care of.

Երեխաների նկատմամբ լավ խնամք կար:

Their marriage was very much talked **about**.

Շատ էին խոսում նրանց ամուսնության մասին:

3. Անգլերենի նախդիրներն ըստ կազմության լինում են՝ պարզ (in, on, at, for, with և այլն), ածանցավոր (behind, below, across, along և այլն), բարդ (into, upon, throughout և այլն) և նկարագրական (in front of, by means of, as for և այլն): Ըստ իմաստի նրանք բաժանվում են տեղ, ուղղություն, ժամանակ և տարբեր վերացական հարաբերություններ ցույց տվող նախդիրների:

1. Տեղացույց նախդիրներ

at — ա) մոտ.

բ) արտահայտում է հայերենի ներգոյական հոլովի իմաստը՝ առարկայի որևէ տեղում գտնվելը

There is somebody **at** the door.

Դռան մոտ ինչ-որ մեկը կա:

He is **at** his office now.

Նա իր գրասենյակում է այժմ:

I met her **at** my aunt's.

Ես նրա հետ ծանոթացա իմ մորաքրոջ տանը:

in — մեջ. սովորաբար թարգմանվում է ներգոյական հոլովով

He lives **in** London.

Նա ապրում է Լոնդոնում:

That was the village **in** which he was born.

Դա այն գյուղն էր, որտեղ նա ծնվել էր:

I read about it **in** the newspaper.

Ես լրագրում կարդացի դրա մասին:

The girl had a doll **in** her hand.

Աղջիկը ձեռքին տիկնիկ ուներ:

on — վրա

The book is **on** the table.

Գիրքը սեղանի վրա է:

There was a ring **on** her finger.

Նրա մատին մատանի կար:

above — վրա, վեր

The sun rose **above** the horizon.

Արևը ծագեց հորիզոնում:

We were flying **above** the clouds.

Մենք թռչում էինք ամպերի վրայով (ամպերից վեր):

over — վրա, վերևում

She spread a cloth **over** the table.

Նա սեղանին սփռոց փռեց:

The lamp hung **over** the table.

Լամպը կախված էր սեղանի վերևում:

The sky is **over** our heads.

Երկինքը մեր գլխավերևում է:

under — տակ

The cat was **under** the table.

Կատուն սեղանի տակ էր:

It is shady **under** the trees.

Ստվերոտ է ծառերի տակ:

below — ցած, ներքև

Shall I write my name on, above or **below** the line?

Անունս գրեմ տողի վրա՞, տողից վերև՞, թե՞ ներքև:

When the sun sets it goes **below** the horizon.

Երբ արևը մայր է մտնում, ցած է իջնում հորիզոնից:

by — մոտ

She is standing **by** the window.

Նա կանգնած է պատուհանի մոտ:

My house is **by** the river.

Իմ տունը գետի մոտ է:

beside — կողքին, մոտ

She would like to live **beside** the sea.

Նա կցանկանար ապրել ծովափին:

Come and sit **beside** me.

Եկ, նստի՛ր իմ կողքին:

near — մոտ, կողքին

It is convenient living so **near** the station.

Հարմար է կայարանին այդքան մոտ ապրելը:

Come and sit **near** me.

Եկ, նստի՛ր իմ կողքին:

between — միջև

The letter B comes **between** A and C.

B տառը գտնվում է A և C տառերի միջև:

The Mediterranean Sea is **between** Europe and Africa.

Միջերկրական ծովը գտնվում է Եվրոպայի և Աֆրիկայի միջև:

among — մեջ, միջև

I saw her sitting **among** her children.

Ես տեսա նրան նստած՝ իր երեխաներով շրջապատված:

I saw him **among** the crowd.

Ես տեսա նրան ամբոխի մեջ:

He divided his property **among** his sons.

Նա իր ունեցվածքը բաժանեց որդիների միջև:

before — առաջ, առջև

Your name comes **before** mine in the list.

Ցուցակում ձեր անունը իմ անունից առաջ է:

The boy stood **before** the teacher.

Տղան կանգնած էր ուսուցչի առջև:

in front of — առաջ, առջևում, դիմաց

There are some trees **in front of** the house.

Տան դիմաց ծառեր կան:

Several people were standing **in front of** the notice-board.

Հայտարարությունների տախտակի առաջ մի քանի մարդ էր կանգնած:

behind — հետևում

The boy was hiding **behind** a tree.

Տղան թաքնվել էր ծառի հետևում:

There is an archard **behind** the house.

Տան հետևում կա մրգատու այգի:

after — հետևից, հետո

Shut the door **after** you when you leave the room.

Ծածկիր դուռը քո հետևից, երբ դուք գնաս սենյակից:

Put the direct object **after** the verb.

Ուղիղ խնդիրը դրեք բայից հետո:

2. Ուղղության նախդիրներ.**to** — (շարժում) դեպի որևէ առարկա կամ տեղ

She stood up and walked **to** the window.

Նա վեր կացավ և քայլեց դեպի պատուհանը:

She threw the ball **to** me.

Նա գնդակը նետեց ինձ:

We're hoping to go **to** London for our holidays this year.

Մենք հուսով ենք այս տարի Լոնդոն մեկնել արձակուրդներին:

from — ելման կետ, անջատում առարկայից

The train starts **from** London.

Գնացքը մեկնում է Լոնդոնից:

Tom went away **from** the door.

Թոմը հեռացավ դռնից:

into — ներս, մեջ

Come **into** the house.

Ներս եկեք տուն:

He fell **into** the water.

Նա ջուրն ընկավ:

out of — միջից. (շարժում) մի այլ առարկայից դեպի դուրս

He walked **out of** the shop.

Նա դուրս եկավ խանութից:

We pulled the cart **out of** the ditch.

Մենք սայլը փոսից դուրս քաշեցինք:

toward (s) — դեպի, ուղղությամբ

They walked **towards** the sea.

2100

Նրանք քայլեցին ծովի ուղղությամբ:

He sat with his back turned **towards** the window.

Նա նստած էր՝ մեջքը դեպի պատուհանը:

up — դեպի վեր, ի վեր. երկայնքով

They walked **up** the stairs.

12

Նրանք աստիճաններով վեր գնացին:

They walked **up** the road.

Նրանք քայլեցին ճանապարհի երկայնքով:

4

down — ի վար. ընթացքով. ուղղությամբ

The tears ran **down** her face.

910

Արցունքը հոսում էր նրա դեմքով (դեմքն ի վար):

He ran **down** the hill.

16

Նա վազեց բլուրն ի վար:

Her hair was hanging **down** her back.

Նրա մազերը թափված էին մեջքին:

55

along — երկայնքով

16

We walked **along** the road.

Մենք քայլեցինք ճանապարհի երկայնքով:

There are trees all **along** the river banks.

Ծառեր կան գետի ափերի ողջ երկայնքով:

21

21

3. Անցում ցույց տվող նախդիրներ.

1 — 333

across — մի կողմից մյուսը

They build a bridge **across** the river.

Նրանք գետի մի ափից մյուսը կամուրջ կառուցեցին:

We swam **across** the river.

Մենք լողալով դուրս եկանք գետի մյուս ափը:

262

through — միջով, մի ծայրից մյուսը

Water flows **through** this pipe.

Այս խողովակի միջով ջուր է հոսում:

The road **through** the forest.

Ճանապարհն անցնում է անտառի միջով:

past — կողքով

He walked **past** the house.

Նա քայլեց տան կողքով:

He hurried **past** me without stopping to speak.

Նա արագ անցավ իմ կողքով և կանգ չառավ, որ խոսի:

4. Ժամանակացույց նախդիրներ.

at — ցույց է տալիս որոշակի ժամանակամիջոց

at that moment — այդ պահին

at that time — այդ ժամանակ

at 3 o'clock — ժամը 3-ին

at dawn — լուսաբացին

In — գործածվում է օրվա մաս, ամիս, տարվա եղանակ և տարեթիվ նշանակող բառակապակցություններում

In the morning — առավոտյան

In May — մայիս ամսին

In spring — գարնանը

In 1985 — 1985 թվականին

on — գործածվում է շաբաթվա որոշակի օր կամ ամսաթիվ նշանակող բառակապակցություններում

on Monday — երկուշաբթի օրը

on the 1st of May — մայիսի 1-ին

on New Year's Day — Նոր Տարվա օրը, Ամանորին

on that day — այդ օրը

by — մինչև

by 5 oclock — մինչև ժամը 5-ը

by tomorrow — մինչև վաղը

by this time (by now) — մինչև այժմ

for — ցույց է տալիս տևողություն, ժամանակամիջոց

I have known him **for** two years.

Երկու տարի է, ինչ ճանաչում եմ նրան:

In — ընթացքում, հետո

Can you finish the work **in** an hour?

Կարո՞ղ եք վերջացնել աշխատանքը մեկ ժամում:

I shall come to see you **in** a week.

Ես ձեզ կայցելեմ մեկ շաբաթից (մեկ շաբաթ հետո):

during — ընթացքում

The sun gives us light **during** the day.

Արևը լույս է տալիս ցերեկը:

after — հետո

They went for a walk **after** dinner.

Ճաշից հետո նրանք գնացին զբոսնելու:

before — մինչև, նախքան

Please come **before** ten o'clock.

Խնդրեմ, եկեք մինչև ժամը տասը:

till — մինչև, մինչ

50

I shall wait **till** ten o'clock.

Ես կսպասեմ մինչև ժամը տասը:

He works from morning **till** night.

Նա աշխատում է առավոտից (մինչև) երեկո:

until — մինչև, մինչ

51

Until now I knew nothing about it.

Մինչև հիմա ես ոչինչ չգիտեի դրա մասին:

You had better wait **until** his return.

Ավելի լավ կանեք սպասեք մինչև նրա վերադարձը:

since — որոշ ժամանակից սկսած

I have been here **since** six o'clock.

Ես այստեղ եմ ժամը 6-ից:

He has been ill **since** last seeing.

Նա հիվանդ է մեր վերջին հանդիպման օրից:

52

5. Տարբեր վերացական հարաբերություններ ցույց տվող նախդիրներ

by — արտահայտում է հայերենի գործիական հոլովի իմաստը

He is a doctor **by** profession.

Մասնագիտությամբ նա բժիշկ է:

He did it all **by** himself.

Նա արեց այդ միանգամայն ինքնուրույն (իր ուժերով):

It is 2 o'clock **by** my watch.

Իմ ժամացույցով ժամը 2-ն է:

against — ա) հակառակ դեմ, ընդդեմ

բ) ցույց է տալիս երկու առարկաների բախվելը

We were rowing **against** the current.

53

Մենք քիավարում էինք հոսանքին հակառակ:

Take some medicine **against** the disease.

Որևէ դեղ ընդունեք հիվանդության դեմ:

She was married **against** her will.

Նրան ամուսնացրին իր կամքին հակառակ:

He hit his head **against** the wall in the dark cellar.

Նա մութ նկուղում գլուխը պատին խփեց:

with — ա) ցույց է տալիս համատեղ գործողություն՝ հետ.

բ) մի բանի առկայություն, գործող անձի կամ առարկայի մի բան ունենալը.

գ) գործողության կատարման միջոց.

դ) չնայած, հանդերձ.

He was **with** a friend.

Նա իր ընկերոջ հետ էր:

The woman **with** red hair is my neighbour.

Շիկակարմիր մազերով կինը իմ հարևանուհին է:

I have no money **with** me.

Մոտս դրամ չունեմ:

He cut the bread **with** a knife.

Նա հացը կտրեց դանակով:

With all her faults I still liked her.

Չնայած նրա բոլոր թերություններին, ես դարձյալ սիրում էի նրան:

because of — պատճառով

Because of his bad leg, he couldn't walk so fast as the others.

Ցավոք ոտքի պատճառով նա չէր կարող քայլել մյուսների նման արագ:

instead of — փոխարեն

I will go **instead of** you.

Ես կգնամ քո փոխարեն:

owing to — պատճառով

Owing to the rain the football match was cancelled.

Անձրևի պատճառով ֆուտբոլի խաղը հետաձգվեց:

according to — ըստ, համաձայն

The books are placed on the shelves **according to** authors.

Գրքերը դասավորված են դարակների վրա ըստ հեղինակների:

ՀԱՂԿԱՊ

(THE CONJUNCTION)

1. Նախադասության անդամներ կամ նախադասություններ իրար կապող բառերը կոչվում են շաղկապ: Շաղկապները լինում են երկու տեսակ՝ համադասական և ստորադասական: Համադասական են այն շաղկապները, որոնք կապում են նախադասության համազոր անդամներ կամ համադաս նախադասություններ: Ստորադասական են այն շաղկապները, որոնք բարդ նախադասության երկրորդական նախադասությունը կապակցում են գլխավոր նախադասությանը:

2. Անգլերենի շաղկապները կազմությամբ լինում են՝ պարզ (and, or, but, till, that, so, where, when և այլն), ածանցավոր (until, unless և այլն) և բարդ (however, whereas, wherever և այլն): Որոշ շաղկապներ գործածվում են զույգերով՝ both and, either or, neither nor, not only but (also) և այլն:

1. Հիմնական համադասական շաղկապներ.

and — և

He flung the door open and entered.

Նա դուռը լայն բացեց և ներս մտավ:

but — բայց, սակայն

We tried to open the door but couldn't.

Մենք փորձեցինք բացել դուռը, բայց չկարողացանք:

or — թե

Are you coming or not?

Գալի՞ս ես, թե՞ ոչ:

either ... or — կամ ... կամ

Either the dog **or** the cat has eaten it.

Կամ շունն է կերել դա կամ կատուն:

neither ... nor — ոչ ... ոչ

He **neither** knows **nor** cares what happened.

Նա ոչ տեղյակ է, ոչ էլ անհանգստանում է, թե ինչ է պատահել:

not only ... but (also) — ոչ միայն ..., այլև

Not only the cat **but** also the dog has been fed.

Ոչ միայն կատուն, այլև շունն է կերակրված:

yet — բայց և այնպես, սակայն

It is strange, **yet** (it is) true.

Տարօրինակ է, սակայն ճշմարիտ է:

2. Հիմնական ստորադասական շաղկապներ.

that — որ

She said **that** she would come.

Նա ասաց, որ կգա:

It so happens **that** I know the man.

Պարզվում է, որ ես գիտեմ այդ մարդուն:

so that, (in order) that — որպեսզի

Bring it nearer **so that** I may see it better.

Ավելի մոտեցրեք դա, որպեսզի կարողանամ ավելի լավ տեսնել:

if — ա) եթե

բ) արդյոք

If you ask him, he will help you.

Եթե խնդրեք նրան, կօգնի ձեզ:

Ask the girl **if** her name is Ann.

Հարցրու այդ աղջկան, արդյոք իր անունը էնն է:

whether — արդյոք

I don't know **whether** she will be able to come.

Չգիտեմ, արդյոք նա կկարողանա գալ:

Let me know **whether** I am to come.

Հայտնեցեք ինձ, արդյոք պետք է գամ:

as — ա) երբ

բ) քանի որ

I saw him **as** he was getting off the bus.

Ես տեսա նրան, երբ դուրս էր գալիս ավտոբուսից:

As he wasn't ready in time we went without him.

Քանի որ նա պատրաստ չէր ժամանակին, մենք գնացինք առանց նրան:

though — չնայած

Though it's hard work, I enjoy it.

Չնայած դժվար աշխատանք է, ես հաճույք եմ ստանում դրանից:

although — չնայած

Although it was so cold he went out without an overcoat.

Չնայած շատ ցուրտ էր, նա դուրս գնաց առանց վերարկուի:

till — մինչև

Let's wait **till** the rain stops.

Եկեք սպասենք, մինչև անձրևը դադարի:

until — մինչև

She won't go away **until** you promise to help her.

Նա չի հեռանա, մինչև չխոստանաք օգնել իրեն:

since — այն ժամանակից, երբ

Where have you been **since** I last saw you?

Որտե՞ղ էիք այն ժամանակից, երբ ձեզ տեսա վերջին անգամ:

when — երբ

When speaking French I often make mistakes.

Ֆրանսերեն խոսելիս ես հաճախ սխալներ եմ թույլ տալիս:

before — մինչև, նախքան

I must finish my work **before** I go home.

Ես պետք է վերջացնեմ աշխատանքս նախքան տուն գնալը:

after — այն բանից հետո, երբ

I arrived at the station **after** the tram had left.

Ես ժամանեցի կայարան այն բանից հետո, երբ գնացքն արդեն մեկնել էր:

while — ա) մինչ

բ) մինչդեռ

He fell asleep **while** reading (**while he was reading**).

Նա քնեց կարդալիս (մինչ կարդում էր):

Jane was dressed in brown **while** Mary was dressed in blue.

Ջեյնը հագել էր շականակագույն զգեստ, մինչդեռ Մերին՝ կապույտ:

because — որովհետև

I can't come **because** I'm too busy.

Ես չեմ կարող գալ, որովհետև չափազանց զբաղված եմ:

unless — եթե չ ...

Unless had weather stops me, I go for a walk every day.

Եթե վատ եղանակը չի խանգարում, ես զբոսնում եմ ամեն օր:

lest — որպեսզի չ ...

He ran away **lest** he should be seen.

Նա փախավ, որպեսզի իրեն չտեսնեն:

as if — կարծես

He talks **as if** he knew all about it.

Նա այնպես է խոսում, կարծես ամեն ինչ գիտի դրա մասին:

than — քան

He is several years older **than** I am.

Նա մի քանի տարով (ավելի) մեծ է, քան ես:

ԲԱՌ - ՄԱՍՆԻԿ (THE PARTICLE)

1. Բառ-մասնիկը սպասարկու բառ է, որը գործածվում է նախադասության մեջ բառերի, կապակցությունների, նաև երկրորդական նախադասությունների իմաստը շեշտելու, սահմանափակելու կամ ժխտական դարձնելու համար: Նախադասության մեջ բառ-մասնիկն ինքնուրույն պաշտոն չունի:

2. Անգլերենի շեշտող և ճշգրտող բառ-մասնիկներն են՝ **only**, **merely**, **but** «միայն», **even** «նույնիսկ», **also**, **too** «նույնպես», **simply** «ուղղակի», **just** «հենց ճիշտ» և այլն: Ժխտական բառ-մասնիկն է **not** բառը:

We're **only** half an hour to wait now.

It was cold there **even** in July.

Tom has been to Canada. Harry **also** been to Canada.

I have **not** given up hope.

Ծանոթություն. Անհրաժեշտ է տարբերել **too**, **just**, **simply** բառ-մասնիկները համանուն **too** «չափազանց», **just** «հենց նոր», **simply** «պարզ ձևով» մակբայներից.

Have you been to Paris **too**, Ann? (բառ-մասնիկ)

Է՛նց, դու նույնպես եղել ես Փարիզում:

The dress is **too** small for me. (մակբայ)

Այս զգեստը չափազանց փոքր է ինձ համար:

It's **just** two oclock. (բառ-մասնիկ)

Ուղիղ ժամը երկուսն է:

I have **just** had dinner. (մակբայ)

Ես հենց նոր ճաշեցի:

It is **simply** a matter of working hard. (բառ-մասնիկ)

Ուղղակի պետք է շատ աշխատել:

He did it quite **simply**. (մակբայ)

Նա արեց դա միանգամայն պարզ ձևով:

ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ (THE INTERJECTION)

1. Ջգացմունք, հուզմունք, կոչ և նմանաձայնություն արտահայտող բառերը կոչվում են ձայնարկություն: Ձայնարկությունները նախադասության մեջ չունեն որևէ շարահյուսական պաշտոն:

2. Որոշ ձայնարկություններ հատուկ բառեր են, օրինակ՝ **oh** [ou], **ah** [a:], **eh** [eɪ], **aha** [a:ha], **alas** [ə'læs], **bravo** [ˌbra:vou], **hurrah** [hʊ'ra:] և այլն: Որպես ձայնարկություն են գործածվում մի շարք այլ խոսքի մասեր, օրինակ՝ **bother, come, damn, now, there, well, why** և այլն:

3. Ձայնարկություններից մի քանիսն արտահայտում են միանգամայն որոշակի զգացմունք. **alas** ձայնարկությունն արտահայտում է վիշտ և մտահոգություն, **bravo** ձայնարկությունը՝ գոհունակություն, **hurrah** ձայնարկությունը՝ ուրախություն և այլն: Մյուս ձայնարկությունները կարող են արտահայտել տարբեր հույզեր.

Ah! I hurt my foot on that stone. (դառնություն, ցավ)

Aha, so it's you hiding there. (գոհունակություն, հաղթանակ)

Why, it's quite easy. (զարմանք կամ անհամաձայնություն)

Come, come! Don't be so foolish! (կշտամբանք կամ հորդոր)

Հաճախ գործածվող **well** ձայնարկությունը բազմիմաստ է, արտահայտում է զարմանք, թեթևություն, հնազանդություն, համաձայնություն, զիջում:

Well, who would have thought it? (զարմանք)

Well, here we are at last! (թեթևություն)

Well, there's nothing we can do about it. (հնազանդություն)

Well, all right, I agree. (համաձայնություն)

Well, you may be right. (զիջում)

Well ձայնարկությունը գործածվում է նաև ընդհատված խոսքը վերսկսելու համար.

Well, as I was saying,

Well, the next day ...

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ (SYNTAX)

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ (THE SENTENCE)

1. Նախդիրների, բառերի դասավորության կամ համապատասխան քերականական ձևերի միջոցով բառերը կազմում են բառակապակցություններ և նախադասություններ: Նախադասությունը լսողին կամ ընթերցողին հաղորդում է որևէ բովանդակություն:

2. Ըստ ասույթի նպատակի՝ նախադասությունները լինում են պատմողական, հարցական, հրամայական և բացականչական: Ըստ կառուցվածքի՝ նրանք լինում են պարզ և բարդ:

ՊԱՐՁ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ (THE SIMPLE SENTENCE)

3. Պատմողական նախադասություն (the Declarative Sentence): Պատմողական նախադասություններն արտահայտում են դատողություն որևէ իրական կամ ենթադրվող փաստի առկայության կամ բացակայության մասին: Անգլերենում պատմողական նախադասություններն ունեն ուղիղ շարադասություն՝ ենթակա + ստորոգյալ: Արտասանվում են հիմնականում իջնող ձայնաստիճանով:

4. Պատմողական նախադասությունները լինում են հաստատական կամ ժխտական: Անգլերենում տարբերում են հիմնական և մասնավոր ժխտում: Հիմնական ժխտումը վերաբերում է ստորոգյալին, արտահայտվում է **not** ժխտական մասնիկով: Մասնավոր ժխտումը վերաբերում է նախադասության մյուս

անդամներին, արտահայտվում է **no, no one, nobody, nothing** դերանուններով, **never, nowhere** մակբայներով, **lest, unless** շաղկապներով: Ի տարբերություն հայերենի, անգլերեն նախադասությունում համարյա միշտ գործածվում է միայն մեկ ժխտում (ընդհանուր կամ մասնավոր):

I do **not** know anything about it.

I know **nothing** about it.

Ես դրա մասին ոչինչ չգիտեմ:

Nobody knows about it.

Ոչ ոք չգիտի դրա մասին:

Close the window **lest** you should catch cold.

Փակեք պատուհանը, որպեսզի չմրսեք:

5. Հարցական նախադասություն (the Interrogative Sentence):

Անգլերենում հարցական նախադասությունները լինում են ընդհանուր, մասնավոր, երկնտրական և տրոհված: Հարցական նախադասությունները ունեն իրենց շարադասությունը և հնչերանգը:

6. Ընդհանուր հարցերը (general questions) զրուցակցից պահանջում են խոսողի կողմից արտահայտված մտքի հաստատում կամ ժխտում: Այդպիսի հարցերն արտասանվում են բարձրացող ձայնաստիճանով: Ընդհանուր հարցերում շարադասությունը հետևյալն է՝

1. Եթե ստորոգյալը արտահայտված է **to be** կամ **to have** բայով, որը հանդես է գալիս որպես լիիմաստ բայ, այն դրվում է ենթակայից առաջ.

Was she at the theatre yesterday?

Has he many friends?

2. Մյուս դեպքերում ենթակայից առաջ են դրվում օժանդակ և եղանակավորող բայերը, բայ-հանգույցը.

Do you often go to the cinema?

Have you read this story?

Could you help me?

Is your friend a worker?

Ընդհանուր հարցին սովորաբար տրվում է կարճ՝ հաստատական կամ ժխտական պատասխան.

Do you know French? **Yes, I do.**

No, I don't.

Can you draw well? **Yes, I can.**

No, I can't.

7. Ընդհանուր հարց նախադասությունը կարող է լինել ժխտական: Այդ դեպքում **not** մասնիկը դրվում է ենթակայից հետո.

Will he **not** come tonight?

Have you **not** brought the book?

Բայց՝

Won't he come tonight?

Haven't you brought the book?

8. Մասնավոր հարցերը (**special questions**) սկսվում են հարցական բառով (դերանունով կամ մակբայով), որը դրվում է նախադասության այն անդամի փոխարեն, որին ուղղված է հարցը: Մասնավոր հարցերն արտասանվում են իջնող ձայնաստիճանով:

Եթե հարցն ուղղված է նախադասության ենթակային կամ ենթակայի որոշչին, նախադասության շարադասությունը նման է պատմողական նախադասության շարադասությանը.

Who knows the rule?

Who can explain it?

What happened?

Whose friend works at this office?

Մյուս դեպքերում, երբ հարցն ուղղված է նախադասության որևէ այլ անդամի, բառերը դասավորվում են այնպես, ինչպես ընդհանուր հարց նախադասության մեջ.

What do you want?

What book are you reading?

Where shall we go?

When did he arrive?

9. Մասնավոր հարցերը կարող են լինել ժխտական նախադասություններ.

Why haven't you brought the book?

Who hasn't done the home task?

10. Երկընտրական հարցերում (alternative questions) or «թե» շաղկապը կապակցում է կամ երկու ինքնուրույն նախադասություն, կամ նախադասության համադաս անդամներ.

Will you visit her or shall I do it?

Կայցելե՞ք նրան, թե՞ ես այցելեմ:

Does she live in Yerevan or in Moscow?

Նա Երևանու՞մ է ապրում, թե՞ Մոսկվայում:

11. Տրոհված հարցերը (disjunctive questions) կազմված են երկու բաղադրիչներից: Առաջինը հաստատում է կամ հերքում որևէ դրույթ, երկրորդը հարց է (question tag) որը կասկածի տակ է առնում առաջին դրույթը.

He speaks English well, doesn't he?

Նա լավ է խոսում անգլերեն, այնպես չէ՞:

Տրոհված հարցի առաջին բաղադրիչն արտասանվում է իջնող ձայնաստիճանով, երկրորդը՝ բարձրացող ¹:

¹ Երբ տրոհված հարցը պատասխան չի պահանջում, հարցի երկու բաղադրիչներն էլ արտասանվում են իջնող ձայնաստիճանով. ինչպես՝ *He speaks English well, doesn't he? That's very good.*

Եթե տրոհված հարցի առաջին բաղադրիչը հաստատական նախադասություն է, երկրորդում գործածվում է **not** ժխտական մասնիկը (կրճատ ձևով), որին նախորդում է համապատասխան ժամանակով դրված օժանդակ կամ եղանակավորող բայ.

You have breakfast at 8, don't you?

He has arrived already, hasn't he?

You went to the theatre yesterday, didn't you?

Students must work hard, mustn't they?

Եթե տրոհված հարցի առաջին բաղադրիչի ստորոգյալն արտահայտված է **to be** կամ **to have** բայով, երկրորդ բաղադրիչում այդ բայը կրկնվում է.

He is here isn't he?

You have a dictionary, haven't you?

Տրոհված հարցի առաջին բաղադրիչը կարող է լինել ժխտական նախադասություն: Այդ դեպքում երկրորդ բաղադրիչն իրենից ներկայացնում է ընդհանուր հարց՝ արտահայտված միայն օժանդակ կամ եղանակավորող բայով և ենթակայով (չկա **not** մասնիկը).

You did not like the story, did you?

Ձեզ դուր չեկավ պատմվածքը, այնպես չէ՞:

She cannot speak German, can she?

Նա չի կարող խոսել գերմաներեն, այնպես չէ՞:

Եթե առաջին բաղադրիչի ստորոգյալն արտահայտված է **to be** կամ **to have** բայով, երկրորդ բաղադրիչում այդ բայը կրկնվում է.

He is not here, is he?

You have no dictionary, have you?

Տրոհված հարցի պատասխանը կրճատ պատասխան է հաստատական կամ ժխտական.

You are a student, aren't you? **Yes, I am.**

No, I am not.

You are not a student, are you? **Yes, I am.**

No, I am not.

Գործածական է տրոհված հարցի մեկ այլ կաղապար, երբ հաստատական նախադասություն բաղադրիչին հաջորդում է հաստատական (և ոչ ժխտական) երկրորդ բաղադրիչ, որը միշտ արտասանվում է բարձրացող ձայնաստիճանով: Այս կաղապարում երկրորդ բաղադրիչը կարող է արտահայտել հետաքրքրություն, անհանգստություն, զարմանք կամ զայրույթ:

So you're getting married, are you? How nice!

So she thinks she's going to become a doctor, **does she?** Well, well.

12. Հրամայական նախադասություն (the Imperative Sentence):
Հրամայական նախադասություններն արտահայտում են հրաման, խնդրանք, հրավեր և այլն:

Հրամանն արտասանվում է իջնող ձայնաստիճանով.

Stop talking.

Tell him to come at once.

Խնդրանքը և հրավերը արտասանվում են բարձրացող ձայնաստիճանով.

Open the window, please.

Do come to see me on Sunday.

13. Բացականչական նախադասություն (the Exclamatory Sentence):

Բացականչական նախադասություններն արտահայտում են հույզ կամ զգացմունք: Այդպիսի նախադասություններն սկսվում են **what** կամ **how** բառերով: Արտասանվում են իջնող ձայնաստիճանով.

What fine weather we are having!

Ինչպիսի՜ հրաշալի եղանակ:

How blue the sky is!

Որքա՜ն կապույտ է երկինքը:

14. Պարզ նախադասություններն ըստ կառուցվածքի լինում են երկկազմ և միակազմ: Երկկազմ նախադասություններն ունեն ենթակա և ստորոգյալ: Միակազմ նախադասություններն ունեն միայն մեկ գլխավոր անդամ՝ արտահայտված կամ գոյականով, կամ բայով:

Երկկազմ նախադասությունները կարող են լինել ոչ լրիվ, երբ զեղչված են նրանց որոշ անդամներ: Այդպիսի նախադասությունները կարելի է հեշտությամբ վերափոխել լրիվ նախադասության, օրինակ՝ *I ran after him, but he — over the garden wall* = *I ran after him, but he ran over the garden wall*:

Անգլերենում կարող են զեղչվել երկկազմ նախադասության ենթական, ստորոգյալը, ստորոգյալի մի մասը, խնդիրը: Երբեմն միաժամանակ զեղչվում են նախադասության մի քանի անդամներ: Այդպիսի նախադասությունները բնորոշ են երկխոսությանը, հատկապես պատասխան նախադասություններին.

'You are late.' 'Only five minutes.'

'Where is he?' 'In the picture-gallery.'

'What did he say to you?' 'Nothing.'

Միակազմ նախադասությունները սովորաբար գործածվում են նկարագրություններում և հուզական խոսքում.

Dusk — of a summer night.

To die out here — lonely, wanting them, wanting home.

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ (PARTS OF THE SENTENCE)

15. Նախադասության գլխավոր անդամներն են ենթական և ստորոգյալը, երկրորդական անդամները՝ խնդիրը, պարագան, որոշիչը ¹ և բացահայտիչը:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐ (PRINCIPAL PARTS OF THE SENTENCE)

Ենթակա (The Subject)

16. Նախադասության ենթական բառ է կամ բառերի խումբ, որը ցույց է տալիս անձ, առարկա կամ երևույթ, որոնց մասին տեղեկացնում է նախադասությունը: Անգլերենում ենթական արտահայտվում է՝

1. Գոյականով.

The rose is a lovely flower.
A book makes a good present.
Hospitality is a passion with him.

2. Դերանունով.

I cannot promise you anything.
Everyone was silent for a minute.
This is my son Henry.

¹ Անգլերենում որոշիչը և հատկացուցիչը չեն տարբերվում:

3. Թվականով.

Seven is my favourite number.

There were three questions in the test. **The second** was particularly difficult.

4. Գոյականացված ածականով կամ դերբայով.

The young often complain that **the elders** do not understand them.

The wounded were taken good care of.

5. Ինֆինիտիվով.

To work is everybody's duty.

To visit them is always a pleasure.

To know all about English is one thing, **to know English** is quite another.

6. Գերունդով.

Smoking is bad for health.

Getting up early is healthy.

Watching TV has become his favourite pastime.

Որպես ենթակա ինֆինիտիվը և գերունդը մեծ մասամբ գործածվում են իրենցից կախյալ բառերի հետ:

7. Ինֆինիտիվի կամ գերունդի բարդ կառույցով (տե՛ս «Բայ», 137,147).

17. **It դերանունը որպես նախադասության ենթակա:** Որպես ենթակա **It** դերանունը կարող է հանդես գալ անձնական կամ ցուցական դերանվան կարողությամբ.

I tried the door. **It** was locked. (անձնական)

There was a knock at the door. **It** was the postman (ցուցական)

It դերանունը կարող է գործածվել որպես ձևական ենթակա.

1. Անդեմ նախադասություններում, որտեղ խոսվում է բնության երևույթների, ժամանակի, տարածության մասին: Անգլերեն նախադասության ձևական ենթական չի թարգմանվում հայերեն.

It is cold. Յուրտ է:

It is autumn. Աշուն է:

It often rains in autumn. Հաճախ անձրևում է աշնանը:

It is late. Ուշ է:

It is evening. Երեկո է:

It is a long way to the station. Կայարանը հեռու է:

It is ten miles to Oxford. Տասը մղոն է մինչև Օքսֆորդ:

2. Նախադասություններում, որտեղ իրական (լիմաստ) ենթական արտահայտված է ինֆինիտիվի կամ գերունդի դարձվածով (մաս բարդ կառույցով) և կամ ենթակա երկրորդական նախադասությամբ: Այս դեպքում ևս **it** դերանունը չի թարգմանվում հայերեն.

It is a pleasure to see you again.

Հաճույք է ծեզ կրկին տեսնելը:

It's no use saying so.

Անօգուտ է այդպես ասելը:

It was a surprise that he had come back so soon.

Ձարմանալի էր, որ նա այդքան վաղ էր վերադարձել:

It was hard for him to live on his small pension.

Նրա համար դժվար էր ապրել իր ցածր թոշակով:

It seems unlikely that he will catch the train.

Անհավանական է թվում, որ նա հասնի գնացքին:

It doesn't matter whether we start now or later.

Կարևոր չէ, արդյոք կճանապարհվենք այժմ կամ ավելի ուշ:

3. Էմֆատիկ (շեշտող) նախադասություններում: Այս կառույցը, որը բարդ ստորադասական նախադասություն է, գործածվում է շեշտելու պարզ նախադասության անդամների որևէ մեկը.

She started the discussion. = It was she who started the discussion.

Նա էր, որ սկսեց բանավեճը:

I met him yesterday. = It was yesterday that I met him.

Երեկ էր, որ հանդիպեցի նրան:

Ստորոգյալ (The Predicate)

18. Նախադասության ստորոգյալը բառ է կամ բառերի խումբ, որը տեղեկացնում է այն մասին, թե ինչ է կատարվում նախադասության ենթակայի ցույց տված անձի, առարկայի կամ երևույթի հետ:

19. Ըստ կառուցվածքի և ձևաբանական բնութագրի անգլերենի ստորոգյալը լինում է՝ պարզ բայական, բաղադրյալ բայական և բաղադրյալ անվանական:

1. Պարզ բայական ստորոգյալն արտահայտվում է լիմաստ բայի համադրական կամ վերլուծական ձևով.

His ship **sails** tomorrow.

I've **given** him every chance.

She **did not catch** what I **said**.

I **knew** that he **had been thinking** about it for a long time.

Պարզ ստորոգյալ է համարվում այսպես կոչված դարձվածաբանական ստորոգյալը, որն արտահայտվում է դարձվածաբանական միավորով՝ to have breakfast, to have a smoke, to give a cry, to take a walk և այլն: Այս կապակցություններում բայը կորցրել է իր բառային իմաստը և հաջորդող գոյականի հետ կազմում է մեկ միավոր, որտեղ գոյականը չի կարող դիտվել որպես խնդիր.

They **are having breakfast** now.

Նրանք նախաճաշում են այժմ:

The woman **gave a cry**.

Կինը ճչաց:

He **had a smoke**.

Նա ծխեց:

They **took a walk** as far as the river.

Նրանք զբոսնեցին մինչև գետը:

2. Բաղադրյալ բայական ստորոգյալը կարող է կազմված լինել.

ա) եղանակավորող բայից և ինֆինիտիվից:

He may not know about it.
She can read a little French.

բ) **to be + infinitive, to have + infinitive** եղանակավորող արտահայտություններից.

He has to work for his living.
She was to arrive by train at half past twelve.

գ) եղանակավորում արտահայտող **to want, to decide, to intend, to try** և այլ բայերից ու ինֆինիտիվից.

We wanted to rest.
He didn't try to do it.
In the end she decided to buy the green hat.

դ) **to begin, to start, to continue, to finish, to cease, to stop** բայերից և ինֆինիտիվից կամ գերունդից.

The water began to boil.
Have you started working yet?
He continued to live with his parents after his marriage.
It has stopped raining.

Ծանոթություն. Վերջերս քերականության որոշ դասագրքերում ինֆինիտիվը և գերունդը **to want, to decide, to intend, to try, to begin, to start, to continue, to cease** և այլ բայերից հետո դիտվում են որպես խնդիր:

ե) **to happen, to chance, to prove, to turn out** բայերից և ինֆինիտիվից.

He chanced to be there when I called.
She turned out to have no feelings for her nephew.

3. Բաղադրյալ անվանական ստորոգյալը կազմված է բայ-
հանգույցից և ստորոգելիական վերադրից: Ամենատա-
րածված հանգույցներն են **to be, to become, to get, to grow, to turn, to look, to seem** բայերը.

He **is an** enginner by profession.

He **has become** a famous man.

She **looked** unhappy.

Her hair **has turned** grey.

Ստորոգելիական վերադիրը կարող է արտահատվել գոյա-
կանով, ածականով, թվականով, դերանունով, ինֆինիտի-
վով գերունդով, II դերբայով, ինչպես նաև ծակբայով.

It **was a** perfect morning.

The spring **was late** that year.

We were only **two** at table.

That hat **is mine**.

To live **is to work**.

It's all **your doing**.

The streets were **deserted**.

All the lights were **out**.

Ստորոգելիական վերադիրը կարող է արտահատվել ինֆ-
ինիտիվի կամ գերունդի բարդ կառույցով.

That **is for him to decide**.

Դա նա պետք է որոշի:

The topic of their conversation **was his writing for the papers**.

Նրանց խոսակցության թեման նրա՝ լրագրերին թղթակցելն էր:

20. Բաղադրյալ անվանական ստորոգյալի կազմում որպես
հանգույց կարող են գործածվել **to sit, to stand, to lie, to come, to return** և այլ բայեր, որոնք այս դեպքում պահպանում են
իրենց բառային իմաստը և ցույց են տալիս գործողություն կամ
վիճակ: Սրանց հաջորդում է ստորոգելիական վերադիր.

One evening she **came** home **elated**.

Մի երեկո նա տուն եկավ բարձր տրամադրությամբ:

He sat silent and helpless.

Նա նստած էր լուռ ու անօգնական:

Այսպիսի բաղադրյալ ստորոգյալը որոշ քերականներ անվանում են երկստորոգյալ (**a double predicate**), որն արտահայտում է գործողություն և հատկանիշ միաժամանակ:

Ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնությունը (Agreement)

21. Անգլերենում ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության կանոնները կիրառվում են բայի ներկա ժամանակի ձևերի նկատմամբ: Բացառություն է կազմում **to be** բայը, որի անցյալ ժամանակի ձևերը ևս ենթարկվում են այս կանոններին:

Ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության կանոնները հետևյալն են.

1. Ստորոգյալը դրվում է հոգնակի թվով, եթե նախադասությունն ունի **and** շաղկապով կամ առանց շաղկապի միավորված բազմակի ենթականեր.

Her father and mother were obviously haunted and harassed. The top of a low black cabinet, the old oak table, the chairs were littered with the children's toys, books, and garden garments.

2. Եթե բազմակի ենթականերն արտահայտված են ինքի-նիտիվով, ստորոգյալը դրվում է եզակի թվով.

To labour in peace and devote her labour and her life to her poor son, was all the window sought.

3. Ստորոգյալը սովորաբար դրվում է եզակի թվով, երբ եզակի երկու ենթականեր միավորված են՝ **not only ... but (also), neither ... nor, either ... or, or, or, nor** շաղկապներով.

Not only the cat but (also) the dog has been fed.

There was neither heroic swift defeat nor heroic swift victory.

Երբ բազմակի ենթակաները տարբերվում են թվով կամ դեմքով, ստորոգյալը համաձայնում է կից ենթակայի հետ.

Neither **he** nor his friends know about it.
Neither **you** nor I am to blame.

4. Ստորոգյալը դրվում է եզակի թվով, երբ եզակի երկու ենթականեր միավորված են **as well as** շաղկապով.

Ann as well as her sister was present.

Երբ ենթակաները տարբերվում են թվով կամ դեմքով, ստորոգյալը համաձայնում է առաջին ենթակայի հետ.

The students as well as the teacher were present.
The teacher as well as the students was present.

5. Ստորոգյալը դրվում է եզակի թվով, եթե ենթական արտահայտված է **each, either, everybody, everyone, everything, somebody, nobody, no one, nothing, neither** դերանուններով.

There's somebody at the door.
Nothing ever **pleases** her.
In a small village **everyone knows everyone else.**

6. Ստորոգյալը սովորաբար դրվում է եզակի թվով, եթե ենթական արտահայտված է **who** կամ **what** հարցական դերանունով.

Who is to apply for permission?
What is there in that box?

7. Ստորոգյալը դրվում է եզակի թվով, եթե ենթական արտահայտված է ժամանակ, չափ կամ տարածություն ցույց տվող հոգնակի գոյականով, և նրա ցույց տված ժամանակը, չափը կամ տարածությունը դիտվում է որպես մի անբոլջություն.

The last three days has been a busy time for me.

Three pounds is a considerable sum.

Two hundred miles is a huge distance.

8. Ստորոգյալը սովորաբար դրվում է եզակի թվով, եթե ենթական հոգնակի գոյական է՝ գրքի, ամսագրի, լրագրի անուն.

The Times is a quality paper. It appeals to the more serious reader, who wants to read about politics and foreign affairs.

9. Ստորոգյալը դրվում է եզակի կամ հոգնակի թվով, եթե ենթական արտահայտված է **family, committee, crew, crowd, audience, army, board, government, party, team** հավաքական գոյականներից որևէ մեկով: Եթե խումբը դիտվում է որպես մի ամբողջություն, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Եթե խմբի անդամները դիտվում են առանձին-առանձին, ստորոգյալը դրվում է հոգնակի թվով.

My family is large.

My family are early risers.

My favourite team has done well this season.

The team are resting now.

The audience was enormous.

The audience were enjoying every minute of it.

10. Ստորոգյալը դրվում է միայն հոգնակի թվով, եթե նախադասության ենթական է **people** «մարդիկ», **police, jury, cattle, poultry** և այլ հավաքական գոյականներից որևէ մեկը.

Some people are very inquisitive.

The police have not made any arrest.

The cattle were grazing on the village common.

ՆԱԽԱՂԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ (SECONDARY PARTS OF THE SENTENCE)

ԽՆԴԻՐ (The Object)

22. Խնդիրը ծառայում է որպես լրացում բայերի, ածականների և գոյականների համար:

Անգլերենում խնդիրը կարող է արտահայտել գոյականով, դերանունով, գոյականացված ածականով կամ դերբայով, ինֆինիտիվով և գերունդով:

23. Անգլերենի խնդրառու բայերը կարող են ունենալ ուղիղ, անուղղակի և նախդրավոր խնդիրներ.

He put **his large hands** on the counter of the office.

I bought **him a present** on his birthday.

Մի շարք բայեր կարող են պահանջել ինչպես ուղիղ, այնպես էլ անուղղակի խնդիր: Նման դեպքում անուղղակի խնդիրը (որը համապատասխանում է հայերենի տրականով արտահայտված խնդրին) սովորաբար նախորդում է ուղիղ խնդրին՝ դրվելով անմիջապես բայ-ստորոգյալից հետո.

Show **me the picture**.

Don't forget to buy **him a present** on his birthday.

Երբ երկու խնդիրների առկայության դեպքում ուղիղ խնդիրն է դրվում անմիջապես բայ-ստորոգյալից հետո, նրան հաջորդող անուղղակի խնդրից առաջ գործածվում է **to** նախդիրը. Show the picture **to me**: Այսպիսին է միշտ երկու խնդիրների շարադասությունը, երբ ուղիղ խնդիրն արտահայտված է **it** դերանունով. Show **it** Show the picture **to me**. Give **it to Mary**.

To explain, to dictate, to repeat, to suggest և այլ բայերից հետո հնարավոր է նախդրավոր խնդրի գործածությունն անմիջապես բայ-ստորոգյալից հետո.

Please explain to me what this means.
 I shall dictate to you his new address.
 She repeated to me what she had told you before.
 What did you suggest to the manager?

24. Որպես նախդրավոր խնդրի բաղադրիչ կարող են գործածվել **at, to, for, of, after, on, upon, with, about, against** և այլ նախդիրներ.

Everybody looked at the newcomer.
 He was used to having early breakfast.
 I'm looking for my pen.
 He thought of going away for the week-end.
 He is keen on collecting stamps.
 I don't care about it.
 She helped him with his English.

25. Խնդիրը կարող է լինել ինֆինիտիվ, ածականական դերբայ կամ գերունդ պարունակող բարդ կառույց: Այդպիսի խնդիրը կոչվում է բարդ խնդիր (տե՛ս «Բայ», 131, 147, 158, 159):

She watched the children play in the garden.
 They waited for the storm to pass.
 She was not aware of his being there.
 I found her sitting at the breakfast table.
 He had his watch repaired.

26. **To think, to consider, to find, to make** և այլ բայերից հետո որպես խնդիր գործածվող **it** դերանունը ձևական խնդիր է, երբ նրան հաջորդում է նախադասության իրական խնդիրը՝ արտահայտված ինֆինիտիվի կամ գերունդի դարձվածով և կամ խնդիր երկրորդական նախադասությամբ: Այս դեպքում **it** դերանունը չի թարգմանվում.

He found it difficult to explain himself.
 Նա դժվարացավ պարզաբանել իր միտքը:
 She thought it no use going over the subject again.
 Նա ավելորդ էր համարում այդ թեմային նորից անդրադառնալը:
 I think it a pity that you didn't come in time.
 Ափսոսում եմ, որ ժամանակին չեկար:

Պարագա (The Object)

27. Պարագաները բայի այն լրացումներն են, որոնք ցույց են տալիս գործողության կատարման կամ եղելության հանգամանքները՝ վայրը, ժամանակը, ձևը, նպատակը, պատճառը և այլն: Պարզ նախադասության մեջ պարագան արտահայտվում է մեկ բառով կամ բառակապակցությամբ:

28. Անգլերենում պարագաները կարող են արտահայտվել մակբայով, նախդրավոր գոյականական բառակապակցությամբ, շաղկապ + ածական բառակապակցությամբ, գերունդի, դերբայի, ինֆինիտիվի դարձվածով կամ բարդ կառույցով:

Անգլերենի պարագաներն իմաստով լինում են՝

1. Տեղի և ուղղության պարագա.

He found himself in a lonely street.

They walked down to the village and had a drink at the pub.

2. Ժամանակի պարագա.

I'll give you a telephone call tonight.

The train arrived in the evening.

When tired, he has his supper in his room.

3. Հաճախականության պարագա.

She has music lessons twice a week.

I sometimes have letters from him.

I have seldom seen such large apples.

4. Չափի կամ աստիճանի պարագա.

He knows his subject perfectly.

It is rather cold in this room.

At that moment I did not entirely dislike him.

5. Ձևի պարագա.

That will suit me **nicely**.
 The house is **well** situated.
 I looked at him **with a smile**.
 The bus passed us **without stopping**.

6. Ուղեկցող հանգամանքների պարագա.

Mr Kelada lay on his bed **smoking a cigarette**.
 I don't like going out **in this weather**.
 She stood by the open window, **trying to make up her mind**.

7. Պատճառի պարագա.

Our flight was delayed **owing to the storm**.
Being very tired he soon fell asleep and forgot his troubles.
Because of his bad leg he could't walk so fast as the others.

8. Հետևանքի պարագա.

She was too fond of the child **to leave it**.
 He was clever enough **to understand it**.

9. Պայմանի պարագա.

But for the rain we should have had a pleasant journey.
 He said he would do it **if necessary**.

10. Համեմատության պարագա.

I know you better **than him**.
 I want a box twice as large **as this**.

11. Զիջման պարագա.

It was fine and dry, **though cold**.
With all her faults, he still liked her.

12. Նպատակի պարագա.

He spoke loudly and clearly **for all to hear**.
He'll come home **to have dinner with the family**.

29. Պարագայի շարադասությունը

1. Չնի պարագան սովորաբար դրվում է բայ-ստորոգյալից հետո.

She danced **beautifully**.
He gave her the money **reluctantly**.
They speak English **well**.
He looked at me **suspiciously**.

Երբեմն ձևի պարագան դրվում է ենթակայի և ստորոգյալի միջև, ինչպես նաև բայ-ստորոգյալի բաղադրիչների միջև.

The girl bent down and **gently** scooped the butterfly into the palm of her hand.
She knew she had **deeply** hurt her husband.
His voice was not angry as I had **vaguely** feared.

2. Տեղի և ուղղության պարագան սովորաբար դրվում է նախադասության վերջում.

The young people were enjoying themselves **outside**.
On Sunday they didn't go **anywhere**.

3. Ժամանակի պարագան սովորաբար դրվում է նախադասության սկզբում կամ վերջում.

He is coming **tomorrow**.
Eventually it stopped raining.
Then we went home.

Ժամանակի որոշ պարագաներ կարող են դրվել ստորոգյալի բաղադրիչների միջև.

Mother is now busy in the kitchen.
He will soon be back.

Եթե նախադասությունն ունի ժամանակի, տեղի և ձևի պարագաներ, նրանց շարադասությունը կլինի՝ He played very well at Wembley on Monday.

4. Հաճախականության պարագան սովորաբար դրվում է ենթակայի և ստորոգյալի, ինչպես նաև ստորոգյալի բաղադրիչների միջև.

He usually comes early.
She is always late for meals.
He can sometimes be seen in the library.

Երբ հարկ կա ընդգծելու հաճախականության պարագան, այն դրվում է նախադասության սկզբում.

Sometimes we go to the cinema and at other times we go for a walk.
Usually he comes early.

5. Չափի և աստիճանի պարագան սովորաբար դրվում է լրացյալից առաջ.

I quite forgot her birthday.
He came back so soon.
They spoke very highly of him.
It's too hot for work.

Enough մակբայը դրվում է լրացյալ ածականից կամ մակբայից հետո.

You are old enough to understand it.
He spoke frankly enough.

Չափի և աստիճանի մակբայը կարող է դրվել նաև նախադասության վերջում, երբ մակբայը բայի լրացում է.

He ignored me completely.

Որոշիչ (The Attribute)

30. Որոշիչը ցույց է տալիս որոշյալի բնույթը, որակը, չափն ու քանակը: Անգլերենում նախադասության **the attribute** կոչվող երկրորդական անդամը համապատասխանում է հայերենի որոշչին և հատկացուցչին:

31. Անգլերենի որոշիչը որոշյալի նկատմամբ դիրքով լինում է նախադաս կամ համադաս: Կարող է արտահայտվել՝

1. Ածականով.

A **sudden** fear came over him.
She inherited a **large** fortune.

2. Դերանունով.

He hurt **his** hand.
Water always finds **its** own level.
What books have you read on **this** subject?
You must not favour **either** side in the dispute.
Some children learn languages easily.

3. Թվականով.

There are **ten** books on the shelf.
January is the **first** month of the year.

4. Ընդհանուր հոլովով դրված գոյականով.

She wore a **straw** hat.
The **village** post-office was in a small house.

5. Ստացական հոլովով դրված գոյականով.

The letter was from **Jane's** brother.

6. Նախդրավար բառակապակցությամբ՝ 500) ԲԲ

The woman **in white** is his wife.
It was an act of **despair** on her part.

7. Մակբայով.

The room **above** is large and light.

8. Դերբայով.

The fence **surrounding** the garden was painted green.
In the building the **lighted** windows were shining here and there.

9. Գերունդ պարունակող նախդրավոր դարձվածով.

She admired his way of **doing things**.
He had few opportunities of **meeting interesting people**.

10. Ինֆինիտիվով.

I can't go to the party; I haven't anything **to wear**.
He had no opportunity **to speak to her**.
What a funny name to give a dog!

Բացահայտիչ (The Apposition)

32. Բացահայտիչը գոյականի լրացումն է, որը գոյականին տալիս է նոր անուն: Ինքը՝ բացահայտիչը, սովորաբար, արտահայտվում է գոյականով: Անգլերենում բացահայտիչը՝ բացահայտյալի նկատմամբ դիրքով լինում է նախադաս կամ հետադաս.

Aunt Polly made Tom whitewash the fence.
Professor Smith taught linguistics at Leeds University.
Ann, the daughter of the landlady, was always ready to help us.
I asked **Miss Grey, an old friend of mine,** to dinner.

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐ (DETACHED PARTS OF THE SENTENCE)

33. Նախադասության առանձնակի անդամները, ունենալով որոշ քերականական և իմաստային անկախություն, գրավոր խոսքում անջատվում են ստորակետով կամ զօիկով: Այսպիսով թուլանում է նրանց կապն այն բառի հետ, որի լրացումն են նրանք: Հաճախ դա տեղի է ունենում նախադասության տվյալ անդամը ընդգծելու համար: Անգլերեն նախադասության առանձնակի անդամներն են **պարագան, որոշիչը, բացահայտիչը և նախդրավոր խնդիրը:**

1. Առանձնակի պարագա.

As always, there were people in the park.

The Corporal lit a pipe, **carefully**, because the enemy was close.

And, **with a start**, John looked up at her.

2. Առանձնակի որոշիչ.

It was a wide white building, **one storey high**.

On a table he found a half-finished letter, **abandoned in the middle of a sentence**.

Stout, middle-aged, full of energy, she bustled backwards and forwards from the kitchen to the dining-room.

3. Առանձնակի բացահայտիչ.

Dr Winchcliffe, **my predecessor**, was a classmate of my father's.

The event he had always declared to be impossible — **a war between the 'civilized' nations** — was at hand.

4. Առանձնակի նախդրավոր խնդիր.

She doesn't change — **except her hair**.

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐ (HOMOGENEOUS PARTS OF THE SENTENCE)

34. Անգլերեն նախադասությունը հայերենի նման կարող է ունենալ երկու կամ ավելի այնպիսի անդամներ, որոնք տվյալ նախադասության մեջ կատարում են միևնույն շարահյուսական պաշտոնը: Այդպիսիք կոչվում են նախադասության բազմակի անդամներ:

1. Բազմակի ենթակա.

A woman and two children got off the train.
In the afternoon **he and Jolly** went out to the fields.

2. Բազմակի ստորոգյալ.

He neither **spoke** nor **moved**.
In his own small room Martin **lived, slept, studied, wrote and kept** house.

3. Բազմակի խնդիր.

He could imitate **other people's speech, their accent, their mannerisms**.
All at once he was conscious of **his nervousness, his inexperience, his complete unpreparedness** for such a task.

4. Բազմակի որոշիչ.

It was a **wet and windy** afternoon.
The **unlighted, unused** room behind the sitting-room seemed to absorb and even intensify the changing moods of the house.

5. Բազմակի պարագա.

And **upstairs** in her room she sat absorbed in a book.
She extended a slender hand and smiled **pleasantly and naturally**.

ՆԱԽԱԴԱՍՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽ ՏԱՐԻՆԵՐ (INDEPENDENT ELEMENTS OF THE SENTENCE)

35. Նախադասությունը կարող է ունենալ մեկ բառեր և բառակապակցություններ, որոնք չունեն որևէ շարահյուսական պաշտոն մախադասության կազմում: Այդպիսի բառերը և բառակապակցությունները կոչվում են մախադասության անկախ տարրեր:

Անգլերենում մախադասության անկախ տարրերն են՝

1. Չայնարկությունները.

Oh, pooh, look at these stockings!

Well, what about it?

2. Կոչականները.

'Here is a letter for you, Jane.

'Don't make a joke of it, darling.

3. Միջանկյալ բառերը և բառակապակցությունները.

Surely you know it.

To tell you the truth, I don't want to go there.

4. **Yes** և **no** բառերը, որոնք մախորդում են մախադասությանը: Նրանք կարող են հանդես գալ որպես բառ-մախադասություն:

'Have you read the book?' **No**, I haven't got it. (**No**.)

Did you know about it? «**Yes**, I did. (**Yes**.)»

'Have you read the book?' '**No**, I haven't got it. (**No**.)'

'Did you know about it?' '**Yes**, I did. (**Yes**.)'

ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ (WORD ORDER)

36. Շարադասությունը նախադասության բառերի, բառակապակցությունների դասավորության կարգն է: Յուրաքանչյուր լեզվի նախադասություն ունի բառերի և բառակապակցությունների դասավորության իր կարգը կամ մի քանի կարգեր: Ժամանակակից անգլերենում և հայերենում պատմողական նախադասությունում սովորական է ենթակա — ստորոգյալ — խնդիր շարադասությունը, սակայն հայերենում այն շարժուն է և կարող է ունենալ առավել կամ պակաս շրջուն տարբերակներ: Անգլերենում ենթակա — ստորոգյալ — խնդիր շարադասությունը հիմնականում կայուն է: Որոշ դեպքերում, սակայն, անգլերենի պատմողական նախադասությունը կարող է ունենալ շրջուն շարադասություն, երբ ստորոգյալն ամբողջությամբ կամ նրա մի մասը դրվում է ենթակայից առաջ:

Անգլերենում շարադասությունը շրջուն է հետևյալ դեպքերում.

1. **There** ներմուծող բառով սկսվող նախադասություններում.

There is a man at the door.

There can be no doubt about it.

2. **Hardly, scarcely, no sooner, never** մակբայներով և **only** բառ-մասնիկով սկսվող նախադասություններում.

Hardly had he left the house when it began to rain.

Never in all my life have I heard such nonsense.

Only then did I understand my mistake.

No sooner had he arrived home than he was asked to start on another journey.

3. Here, there, now, than մակբայներով սկսվող նախադասություններում, եթե ենթական արտահայտված է գոյականով.

Here is the book. Բայց՝ **Here it is.**

Ահա՝ գիրքը:

Now comes our stop.

Այժմ մեր կանգառն է:

4. In, out, down, away, up ուղղության մակբայներով սկսվող նախադասություններում, երբ ենթական արտահայտված է գոյականով.

Up went the elevator.

In run the children.

Շարահասությունն ուղիղ է, երբ ենթական արտահայտված է դերանունով.

Down he fell.

5. Երբ նախադասության սկզբում դրված է ածական ստորոգելիական վերադիրը, իսկ ենթական արտահայտված է գոյականով.

Sweet was that evening.

Such is life.

6. Երբ օժանդակ կամ եղանակավորող բայը, ինչպես նաև **to be** կամ **to have** բայը կրկնվում է պատասխան նախադասությունում՝ նախորդ նախադասության գործողությունը վերագրելով նոր անձի կամ առարկայի: Այդ դեպքում պատասխան հաստատական նախադասությունն սկսվում է **so**, ժխտական նախադասությունը՝ **neither** կամ **nor** բառով.

We shall see him tomorrow. — So shall I.

She studies French. — So does her brother.

He went to the cinema yesterday. — **So did I.**

I am glad to meet you. — **So am I.**

She has a large family. — **So have I.**

We cannot help them. — **Neither can he.**

He can't do it. — **Nor can anybody.**

7. Երբեմն ուղղակի խոսքից հետո, երբ ենթական արտահայտված է գոյականով, իսկ ստորոգյալը՝ **to say, to ask, to answer** և այլ բայերով.

'May I come in?' **asked the boy.**

'Wash your hands,' **said Mother.**

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԴ ՀԱՍԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ (THE COMPOUND SENTENCE)

37. Բարդ համադասական նախադասությունը կազմված է երկու կամ ավելի համագործ նախադասություններից: Անգլերենում բարդ համադասական նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունները կապակցվում են **and, or, but** և այլ համադասական շաղկապներով, **otherwise, else, however, yet, nevertheless** կապակցող մակբայներով.

The schoolmaster was leaving the village, and everybody seemed sorry.

And now I mustn't talk any more, or I shall have to sit up with this all night.

She seemed to be asking a very serious question, but she couldn't put that question into words.

Do what you've been told; otherwise you will be punished. He worked hard, yet he failed.

There was no news; nevertheless she went on hoping.

Բարդ համադասական նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունները կարող են միանալ մաև առանց կապակցող բառի.

The wind had fallen, the sun broke through unexpectedly.

My parents are quite young, they live their own life.

ԲԱՐԴ ՍՏՈՐԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ (THE COMPLEX SENTENCE)

38. Բարդ ստորոդասական նախադասությունը կազմված է գլխավոր նախադասությունից (**the principal clause**) և մեկ կամ ավելի երկրորդական նախադասություններից (**subordinate clauses**): Բարդ ստորադասական նախադասությունը հարաբերակից է պարզ նախադասությանը, քանի որ այստեղ պարզ նախադասության անդամներից որևէ մեկը արտահայտվում է երկրորդական նախադասությամբ, որի հետևանքով ձևավորվում է բարդ ստորադասական նախադասությունը: Անգլերենում երկրորդական նախադասությունը կապակցվում է գլխավոր նախադասությանը ստորադասական շաղկապներով, կապակցող դերանուններով և մակբայներով: Ի տարբերություն շաղկապների, կապակցող մակբայները և դերանունները երկրորդական նախադասության կազմում ունեն շարահյուսական կիրառություն (լինում են ենթակա, խնդիր և պարագա): Երկրորդական նախադասությունը կարող է կապակցվել մաս առանց շաղկապի կամ այլ բառի:

Ենթակա երկրորդական նախադասություն (Subject Clauses)

39. Ենթակա երկրորդական նախադասությունը փոխարինում է գլխավոր նախադասության ենթակային: Կապակցվում է գլխավոր նախադասությանը **that, it, whether** շաղկապներով, **who, what, whoever, whatever** կապակցող դերանուններով, **when, where, how, why** կապակցող մակբայներով.

That the expedition was here can be proved.

It is quite clear **that the expedition was here**.

It is uncertain **whether she will come or not**.

What he says is not true.

Why she said so is a mystery.

Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասություն (Predicative Clauses)

40. Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասությունը կատարում է գլխավոր նախադասության ստորոգելիական վերադրի դերը: Կապակցվում է գլխավոր նախադասությանը **that, if, whether, as if** շաղկապներով, **where, when, why, how** կապակցող մակբայներով.

My idea is **that things are getting worse and worse.**

This is **what I think.**

The thing is **whether he will be able to come.**

That is **why I left early.**

That is **where I went.**

He looks **as if he had seen a ghost.**

Խնդիր երկրորդական նախադասություն (Object Clauses)

41. Խնդիր երկրորդական նախադասությունը ծառայում է որպես լրացում գլխավոր նախադասության խնդրառու բառերի (բայերի և ածականների) համար: Կապակցվում է գլխավոր նախադասությանը **that, it, whether** շաղկապներով, **who, what, whoever, whatever** կապակցող դերանուններով, **where, when, how, why** կապակցող մակբայներով.

She said **that she would help me.**

I asked him **if he knew English.**

I'll do **what I say.**

Do **whatever you like.**

I don't know **where he lives.**

I wonder **why she is late.**

I am glad **that you have succeeded.**

Aren't you sorry for **what you've done?**

Հաճախ խնդիր երկրորդականը կապակցող **that** շաղկապը գեղջվում է.

We see (that) the plan is unwise.

He said (that) he would come.

Ժամանակի պարագա երկրորդական նախադասություն (Adverbial Clauses of Time)

42. Ժամանակի պարագա երկրորդական նախադասությունը փոխարինում է գլխավոր նախադասության ժամանակի պարագային: Կապակցվում է գլխավոր նախադասությանը **when, while, whenever, as, till, until, as soon as, as long as, since, after, before** շաղկապներով.

He finished school **when he was sixteen**.
While there is life there is hope.
 I'll discuss it with you **whenever you like**.
 He started **as soon as he received the news**.
 I saw him **as he was getting off the bus**.
 You can stay here **as long as you want**.
 Let's wait **till the rain stops**.

Տեղի պարագա երկրորդական նախադասություն (Adverbial Clauses of Place)

43. Տեղի պարագա երկրորդական նախադասությունը փոխարինում է գլխավոր նախադասության տեղի պարագային: Կապակցվում է գլխավոր նախադասությանը **where, wherever** շաղկապներով:

I found my books **where I had left them**.
 Farming is difficult **where there is no rain**.
 Sit **wherever you like**.

Պատճառի պարագա երկրորդական նախադասություն (Adverbial Clauses of Cause)

44. Պատճառի պարագա երկրորդական նախադասությունը փոխարինում է գլխավոր նախադասության պատճառի պարագային: Կապակցվում է գլխավոր նախադասությանը **as, because, since** և այլ շաղկապներով.

As it is wet, we shall stay at home.
 We stayed at home **because it rained**.
Since I haven't got enough money, I cannot buy this coat.

Նպատակի պարագա երկրորդական նախադասություն (Adverbial Clauses of Purpose)

45. Նպատակի պարագա երկրորդական նախադասությունը փոխարինում է գլխավոր նախադասության նպատակի պարագային: Կապակցվում է գլխավոր նախադասությանը **that, in order that, so that, lest** և այլ շաղկապներով.

Bring the picture nearer **that** I may see it better.

They sent a telegram **in order that** he might receive the news in time.

Speak clearly, **so that** they may understand you.

She put on her coat **lest** she should catch cold.

Զիջական երկրորդական նախադասություն (Adverbial Clauses of Concession)

46. Զիջական երկրորդական նախադասությունը փոխարինում է գլխավոր նախադասության զիջման պարագային: Կապակցվում է գլխավոր նախադասությանը **though, although** շաղկապներով, **whoever, whatever** կապակցող դերանուններով, **however** կապակցող մակբայով.

Though it was very late, he went on working.

Although it was cold, he went out without an overcoat.

She could always eat, **however** excited she was.

You are certainly right, **whatever** others may say.

Հետևանքի երկրորդական նախադասություն (Adverbial Clauses of Result)

47. Հետևանքի երկրորդական նախադասությունը փոխարինում է գլխավոր նախադասության հետևանքի պարագային: Կապակցվում է գլխավոր նախադասությանը **so that, that** շաղկապներով.

Չևի պարագա երկրորդական նախադասություն (Adverbial Clauses of Manner)

48. Չևի պարագա երկրորդական նախադասությունը փոխարինում է գլխավոր նախադասության ձևի պարագային: Կապակցվում է գլխավոր նախադասությանը **as** շաղկապով.

Leave it **as it is**.

Do **as I do**.

Համեմատության երկրորդական նախադասություն (Adverbial Clauses of Comparison)

49. Համեմատության երկրորդական նախադասությունը փոխարինում է գլխավոր նախադասության համեմատության պարագային: Կապակցվում է գլխավոր նախադասությանը **that, as, as if, as though** և այլ շաղկապներով.

She works **as carefully as she does quickly**.

He talked **as if he knew all about it**.

You know her better **than I do**.

Պայմանի պարագա երկրորդական նախադասություն (Adverbial Clauses of Condition)

50. Պայմանի պարագա երկրորդական նախադասությունը բովանդակում է գլխավոր նախադասության ստորոգյալի գործողության կատարման կամ այն բանի պայմանը՝ ինչ ասվում է գլխավոր նախադասությունում: Կապակցվում է գլխավոր նախադասությանը **if, unless, in case, on condition that, provided that** և այլ շաղկապներով.

He will come **if he has time**.

Նա կգա, եթե ժամանակ ունենա:

He will fail **unless he works hard**.

Նա անհաջողության կհանդիպի, եթե չառ չաշխատի:

You can go swimming **on condition that you don't too far from the river bank**.

Դու կարող ես գնալ լողալու, այն պայմանով, որ զետի ավելից չառ չիտանա:

Երկրորդական նախադասությունը կարող է արտահայտել իրական (իրագործելի) կամ անիրական (ցանկալի, ենթադրելի) պայման:

51. Իրական պայմանի դեպքում թե՛ երկրորդական և թե՛ գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը դրվում է սահմանական եղանակով:

Երկրորդական նախադասության արտահայտած պայմանը և նրա հետևանքը, որն արտահայտված է գլխավոր նախադասությամբ, կարող են վերաբերել ներկային (I), անցյալին (II) և ապագային (III).

(I) If he **is not detained** at the office, he **always comes** home in time.

Եթե նրան չեն զբաղեցնում հիմնարկում, նա միշտ տուն է վերադառնում ժամանակին:

(II) If he **was not detained** at the office, he **always came** home in time.

Եթե նրան չէին զբաղեցնում հիմնարկում, նա միշտ տուն էր գալիս ժամանակին:

(III) If he **is not detained** at the office, he **will come** home in time.

Եթե նրան չզբաղեցնեն հիմնարկում, նա տուն կգա ժամանակին:

Երբ պատճառը և հետևանքը վերաբերում են ապագային (III), բայի ժամանակների համաձայնեցման կանոնի համաձայն, պայմանի երկրորդական նախադասության բայ-ստորոգյալը դրվում է ներկա ժամանակով, գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը՝ ապառնի ժամանակով:

I և II դեպքերում անգլերենի սահմանական եղանակի ձևերը թարգմանվում են հայերեն նույնպես սահմանական եղանակաձևերով: III դեպքում անգլերենի սահմանական եղանակի ձևերը թարգմանվում են ըղծական ապառնիով (երկրորդական նախադասություն) և ենթադրական ապառնիով (գլխավոր նախադասություն):

52. Անգլերենն ունի ապագային վերաբերող պայման արտահայտող նախադասության մեկ այլ տիպ, որտեղ պայմանի իրականացումը դիտվում է որպես հնարավոր, սակայն անհավանա-

կան: Այս դեպքում պայմանի երկրորդական նախադասությունում գործածվում է ստորադասական եղանակի **should + infinitive** ձևը, գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը դրվում է սահմանական կամ հրամայական եղանակով.

It he **should come** to my house, I **shall be delighted** to welcome him.
Եթե պատահի, նա գա իմ տունը, ես ուրախությամբ կընդունեմ նրան:
It the pain **should return**, take another pill.

Եթե հանկարծ նորից ցավ զգաք, ընդունեցեք ևս մեկ հաբ:
If you **should have** any difficulty, **ring** this number.

Եթե հանկարծ դժվարության հանդիպեք, զանգահարեք այս համարով:

Հնարավոր է զեղչել **if** շաղկապը, որի դեպքում **should** բայը տեղափոխվում է նախադասության սկիզբը.

Should you **have** any difficulty, **ring** this number.

Should the pain **return**, **take** another pill.

53. Անհրական պայմանը կարող է վերաբերել ներկային, անցյալին և ապագային: Ներկային և ապագային վերաբերող անհրական պայման արտահայտող երկրորդական նախադասությունների բայ-ստորոգյալները ունեն միևնույն ձևը՝ արտահայտված **to be** բայի դեպքում **Past Subjunctive** ձևով, մյուս բայերի դեպքում՝ սահմանական եղանակի **Past Indefinite** ձևով: Գլխավոր նախադասությունների բայ-ստորոգյալները նույնպես ունեն միևնույն ձևը՝ արտահայտված ստորադասական եղանակի վերլուծական ձևերով՝ **should/would + Infinitive** (առաջին դեմք) և **would + infinitive** (երկրորդ և երրորդ դեմքեր).

If Tom **were** here he **would tell** us what to do.

Եթե Թոմը այստեղ լիներ, կասեր, թե ինչ անենք:

If I **had** a map I **would lend** it to you.

Եթե ես քարտեզ ունենայի, կտայի քեզ:

If you **tried** again you **would succeed**.

Եթե նորից փորձեիր, կհաջողվեր:

I **would (should) be** pleased if you **came**.

Ես գոհ կլինեի, եթե գայիք:

If he **went** there he **would see** them.

Եթե նա գնար այնտեղ, կտեսներ նրանց:

If I **were** you I **should not accept** his offer.

Ձեր փոխարեն ես չէի ընդունի նրա առաջարկը:

Ներկային կամ ապագային վերաբերող անիրական պայման արտահայտող բայաձևերը թարգմանվում են հայերեն ըղձական անցյալով, հետևանք արտահայտող բայաձևերը՝ ենթադրական անցյալով:

54. Անցյալին վերաբերող անիրական պայմանը արտահայտում է չիրականացված ենթադրություն: Այս դեպքում պայմանի երկրորդական նախադասության բայ-ստորոգյալը արտահայտվում է սահմանական եղանակի **Past Perfect** ձևով (նաև **to be** բայի դեպքում): Գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը արտահայտվում է ստորադասական եղանակի վերլուծական ձևերով՝ **should/would + perfect infinitive** (առաջին դեմք), **would + perfect infinitive** (երկրորդ և երրորդ դեմքեր).

We should (would) have started yesterday, if it hadn't been for the rain.

Մենք կճանապարհվեինք (ճանապարհված կլինեինք) երեկ, եթե անձրև չլիներ:

If I had had time, I should have visited you.

Եթե ժամանակ ունենայի (ունեցած լինեի), կայցելեի քեզ:

It I had known that you were coming, I would have met you at the airport.

Եթե իմանայի, որ դու գալու ես, կդիմավորեի քեզ օդանավակայանում:

If you had obeyed orders this disaster would not have happened.

Եթե ենթարկվեիր կանոններին, այս դժբախտությունը չէր պատահի:

Անցյալին վերաբերող անիրագործելի պայման արտահայտող բայաձևերը թարգմանվում են հայերեն ըղձական անցյալի ձևերով, հետևանք արտահայտող բայաձևերը՝ ենթադրական անցյալի ձևերով:

55. Հնարավոր է նաև այնպիսի նախադասություն, որտեղ պայմանը վերաբերում է անցյալին, հետևանքը՝ ներկային:

If you had followed his advice, you would be successful in everything.
Եթե դուք հետևեիք նրա խորհրդին, այժմ հաջողություն կունենայիք բոլոր հարցերում:

If it **had not rained**, the roads **would not be** so muddy.

Եթե անձրև եկած չլիներ, ճանապարհները այսքան ցեխոտ չէին լինի հիմա:

56. Հետևանք արտահայտող գլխավոր նախադասությունում օժանդակ բայի փոխարեն անհրաժեշտության դեպքում կարող է գործածվել եղանակավորող բայ.

If your documents **are** in order you **may leave** at once.

Եթե ձեր փաստաթղթերը կարգին են, կարող եք մեկնել անմիջապես:

If you **went** to lose weight you **must eat** less bread.

Եթե ցանկանում եք նիհարել, պետք է ավելի քիչ հաց ուտեք:

If you **tried** again you **might succeed**.

Եթե կրկին փորձեիր, հավանաբար կհաջողվեր:

If I **knew** her number I **could ring** her up.

Եթե նրա հեռախոսի համարն իմանայի, կզանգահարեի:

If they **had arrived** ten minutes earlier they **might have caught** the plane.

Եթե նրանք տասը րոպե ավելի վաղ ժամանեին, հնարավոր է՝ հասած լինեին (հասնեին) ինքնաթիռին:

Որոշիչ երկրորդական նախադասություն (Attributive Clauses)

57. Որոշիչ երկրորդական նախադասությունը լրացնում է գլխավոր նախադասության գոյականով (երբեմն դերանունով) արտահայտված որևէ անդամի՝ բնորոշելով այն որակական, քանակական, տարածական կամ ժամանակային որևէ հատկանիշով:

Անգլերենում որոշիչ նախադասությունը կապակցվում է գլխավոր նախադասությանը **who**, **whose**, **which**, **that** հարաբերական դերանուններով, հարաբերական մակբայներով: Որոշիչ երկրորդական նախադասությունը կարող է լինել սահմանափակող կամ նկարագրական:

Երբ որոշիչ երկրորդականը հաղորդում է լրացուցիչ տեղեկություն հարաբերյալի մասին, այն նկարագրական է, կարող է զեղչվել՝ առանց ազդելու նախադասության իմաստի վրա: Նկարագրական որոշիչ երկրորդական նախադասությունից առաջ հաճախ դրվում է ստորակետ.

I know a man who can help us.

An hour later she returned with a heavy hairy man, **who carried a small Gladstone bag.**

Mr Prusty, who kept no assistant, slowly got off his stool.

Երբեմն գլխավոր նախադասությունը ամբողջությամբ կարող է լինել նկարագրական որոշիչ երկրորդականի հարաբերյալը: Այս դեպքում որոշիչ երկրորդականը կապակցվում է միայն **which** դերանունով, և նրանից առաջ միշտ դրվում է ստորակետ.

He invited me to the theatre, which was very kindly of him.

Սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասությունը ավելի սերտորեն է կապակցված գլխավոր նախադասությանը, նրանից առաջ ստորակետ չի դրվում.

He is the cleverest man that I ever met.

You're the only person that can help me.

All that could be done had been done.

Որոշիչ երկրորդական նախադասությունը՝ հատկապես սահմանափակող երկրորդականը, կարող է կապվել գլխավոր նախադասությանը առանց կապակցող բառի.

I think my father is the best man I have ever known.

The man I was talking to had just arrived from Canada.

The photographs you were looking at were taken by my brother.

Բացահայտիչ երկրորդական նախադասություն (Appositive Clauses)

58. Բացահայտիչ երկրորդական նախադասությունը բացահայտում է հիմնականում վերացական գոյականով արտահայտված հարաբերյալի իմաստը: Կապակցվում է գլխավոր նախադասությանը **that**, երբեմն **whether** շաղկապներով, ինչպես նաև **how**, **why** կապակցող մակբայներով:

Andrew had a warm desire that the conversation might continue.

The thought that she was unhappy kept him awake all night.

There was no reason why she should not go there.

The question how his life would end seemed the deepest of possible enigmas.

ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ (DIRECT AND INDIRECT SPEECH)

1. Որևէ մեկի ասածը անփոփոխ ներկայացնող խոսքը կոչվում է ուղղակի խոսք: Անուղղակի խոսքը հաղորդում է որևէ մեկի խոսքի բովանդակությունը անուղղակիորեն, հաճախ ոչ բառացի:

2. Անգլերենում ուղղակի խոսք ներմուծող բայերից ամենագործածականն է **to say** բայը, որը կարող է դրվել ուղղակի խոսքից առաջ կամ հետո.

He said, 'I've just heard the news.'
'I've just heard the news,' he said.
Tom said, 'I've just heard the news.'
'I've just heard the news,' Tom said.

Երբ ուղղակի խոսք ներմուծող կապակցության ենթական արտահայտված է գոյականով, և կապակցությունը հաջորդում է ուղղակի խոսքին, հնարավոր է այդ կապակցության շրջուն շափաղասությունը.

'I've just heard the news,' said Tom.

3. Ուղղակի խոսքից անուղղակի խոսքի անցնելիս անհրաժեշտ է կիրառել հետևյալ կանոնները.

1. Եթե ուղղակի խոսքին մախորդող **to say** բային հաջորդում է խնդիր, որը ցույց է տալիս, թե ում է ուղղված խոսքը, անուղղակի խոսքում **to say** բայի փոխարեն գործածվում է **to tell** բայը.

'I'm leaving at once,' Tom said to me.
= Tom told me he was leaving at once.

2. Անձնական և ստացական դերանունները փոխվում են համապատասխանաբար ըստ դեմքի.

She said, 'I know **your** name.'

= She told me that **she** knew **my** name.

3. **This (these)** ցուցական դերանունը, գործողության տեղ և ժամանակ ցույց տվող մի շարք մակբայներ և պարագայական կապակցություններ փոխվում են հետևյալ կերպ.

Ուղղակի խոսք

this

these

here

now

today

yesterday

the day before yesterday

tomorrow

the day after tomorrow

next week (month, year)

last week (month, year)

a year ago

two years ago

Անուղղակի խոսք

that

those

there

then, at that moment/at that time

that day

the day before/the previous day

two days before

the next day/the following day

in two days' time

the following week (month, year)

the previous week (month, year)

a year before/the previous year

two years before

Here, today, tomorrow մակբայները չեն փոխվում, երբ անուղղակի խոսքում պահպանում են ճիշտ այն իմաստը, որ նրանք ունեն ուղղակի խոսքում.

At breakfast this morning he said, 'I'll be very busy **today**.'

At breakfast this morning he said that he would be very busy **today**.

4. Անուղղակի խոսքում խնդիր երկրորդական նախադասությունում կիրառվում է բայի ժամանակների համաձայնեցման կանոնը, եթե գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը դրված է անցյալ ժամանակաձևով: Այդ դեպքում խնդիր երկրորդական նախադասության բայի ժամանակաձևը փոխվում է հետևյալ կերպ.

Ուղղակի խոսք

Անուղղակի խոսք

Present Indefinite →

Past Indefinite

He said, 'I like my new house.'

= He said (that) he liked his new house.

Present Continuous →

Past Continuous

He said, 'I'm waiting for Ann.' = He said he was waiting for Ann.

Present Perfect →

Past Perfect

She said, 'I have lost my umbrella.'

= She said she had lost her umbrella.

Present Perfect Continuous →

Past Perfect Continuous

He said, 'I've been waiting for an hour.'

= He said he had been waiting for an hour.

Past Indefinite →

Past Perfect

He said, 'I knew her well.'

= He said he had known her well.

Future Indefinite →

Future Indefinite-in-the-Past

He said, 'I'll ask Tom to help me.'

= He said he would ask Tom to help him.

Future Continuous →

Future Continuous-in-the-Past

He said, 'I shall not be using my dictionary this afternoon.'

= He said he would not be using his dictionary that afternoon.

5. Անցյալ ժամանակի ձևերը երբեմն մնում են անփոփոխ.

ա) **Past Indefinite** ձևը պահպանվում է, երբ կոնտեքստից պարզ է երկու գործողությունների ժամանակային փոխհարաբերությունը.

He said, 'Ann arrived on Monday.'

= He said Ann arrived on Monday կամ He said Ann had arrived on Monday.

p) Past Continuous ձևը տեսականորեն փոխարինվում է **Past Perfect Continuous** ձևով.

She said, 'We **were thinking** of selling the house but we have decided not to.'

= She said that **had been thinking** of selling the house but had decided not to.

Բայց՝

He said, 'When I **saw** them they **were planning** to sell the house.'

= He said when he **saw** them they **were planning** to sell the house.

զ) Անցյալ ժամանակածները չեն փոխվում ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում: Գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը կարող է փոխվել կամ մնալ անփոփոխ.

He said, 'When we **were living/lived** in Paris we often **saw** Paul.'

= He said that when they **were living/lived** in Paris they often **saw/had often seen** Paul.

դ) Բայ-ստորոգյալը չի փոխվում անիրական պայման արտահայտող նախադասություններում.

She said, 'If **had** a balcony I **would grow** plants in pots.'

= She said that if she **had** a balcony she **would grow** plants in pots.

6. Սովորաբար չեն փոխվում would, should, ought to, might, used to, could և must բայածները.

He said, 'You **must start** at once.'

= He said that she **must start** at once. **կամ** He said that she **had to start** at once.

'I **should/would like** to take some photographs,' said Tom.

= Tom said that he **would like** to take some photographs.

'They **ought to/should** widen this road,' said Pater.
= Pater said that they **ought to/should** widen the road.

7. Ուղղակի հարցն անուղղակի խոսքում դառնում է անուղղակի հարց, որն ունի ուղիղ շարադասություն՝ ենթակա + ստորոգյալ: Անուղղակի ընդհանուր հարցը կապակցվում է գլխավոր նախադասությանը **if** կամ **whether** շաղկապով.

'Do you know Bill?' he said.
= He asked **if (whether) I knew Bill**.
'Is there anyone here who speaks Italian?' she said.
= She asked **if there was anyone there who spoke Italian**.
'Did you see the accident?' the policeman asked.
= The policeman asked **if I had seen the accident**.
'Will the guests arrive at 5?' she asked.
= She asked **if the guests would arrive at 5**.
'Can I phone from your house?' he said.
= He asked **if he could phone from my house**.

Անուղղակի մասնավոր հարցը կապակցվում է այն դերանունով կամ մակբայով, որով սկսվում է ուղղակի հարցը.

He asked, 'What have you got in your bag?'
= He asked (me) **what I had got in my bag**.
He said, 'Who do you want to speak to?'
= He asked me **who I wanted to speak to**.
He said, 'Where is the station?'
= He asked **where the station was**.
He said, 'Mary, when is the next train?'
= He asked Mary **when the next train was**.
His landlady said, 'What shall do with your mail when you are away?'
= His landlady asked **what she should do with his mail when he was away**.

8. Հրամանը, խնդրանքը և խորհուրդը անուղղակի խոսքում արտահայտվում են բայ + լրացում + ինֆինիտիվ կառույցով, որտեղ գործածվում են՝ **tell, order, ask, beg, advise, warn, encourage, invite, command, request** և այլ բայեր: Կառույցի ժխտական ձևը կազմվում է ինֆինիտիվից առաջ **not** ավելացնելով:

'Pull up your socks,' said his mother.

= His mother told him to pull up his socks.

'Forget all about this young man,' said her parents.

= Her parents ordered her to forget all about the young man.

'Don't swim out too far, boys,' I said.

= I warned the boys not to swim out too far.

'Please don't take any risks,' said his wife.

= His wife begged him not to take any risks.

'Try again,' said Ann's friends encouragingly.

= Ann's friends encouragingly her to try again.

'You had better hurry, Bill!' she said.

= She advised Bill to hurry.

9. Անուղղակի առաջարկությունը արտահայտվում է հետևյալ կերպ.

He said, 'Shall we meet at the theatre?'

= He suggested meeting at the theatre.

He said, 'Suppose you wait till dark?'

= He suggested my waiting till dark.

= He suggested that I should wait till dark.

He said, 'Will you have a drink?'

= He offered me a drink.

He said, 'Shall I bring you some tea?'

= He offered to bring me some tea.

10. Ողջույնի կամ այլ դարձվածքները հետևյալ կերպ են արտահայտվում անուղղակի խոսքում.

He said, 'How do you do?'

He greeted me.

He said, 'Good-bye!'

He bade me good-bye.

He said, 'Thank you!'

He thanked me.

He said, 'Curse this wind.'

He cursed the wind.

He said, 'Welcome!'

He welcomed me.

He said, 'Happy Christmas!'

He wished me a happy Christmas.

He said, 'Congratulations!'

He congratulated me.

He said, 'Liar!'

He called me a liar.

He said, 'Damn!'

He swore.

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ (PUNCTUATION)

Կետադրությունը կարևոր է գրավոր խոսքը հեշտությամբ և արագ հասկանալու համար:

Անգլերենի կետադրությունը, ի տարբերություն հայերենի կետադրության, ավելի քիչ է կարգավորված, ինչը զգացվում է հատկապես ստորակետի գործածության ժամանակ: Սակայն կան կայուն կանոններ, ինչպես նաև բավականին շատ ցուցումներ, որոնք կարելի է սովորել և կիրառել:

(.) Վերջակետ (Full Stop)

Ի տարբերություն հայերենի, անգլերենի վերջակետը մեկ կետ է: Վերջակետը դրվում է յուրաքանչյուր ավարտված նախադասության վերջում՝ համեմատաբար ավելի մեծ դադար արտահայտելու համար:

The car stood outside the railway station among the lines of parked vehicles. He walked across towards it.

(?) Հարցական նշան (Question Mark)

Դրվում է ուղղակի հարցի վերջում: Ձևով և տեղով տարբերվում է հայերենի հարցական նշանից: Նախադասության վերջում հարցական նշանից հետո այլևս վերջակետ չի դրվում:

Could you spare a minute?

Who was the first to arrive?

Անուղղակի հարցից հետո հարցական նշան չի դրվում.

I asked if he could spare a minute.

He asked who had been the first to arrive.

(I) Բացականչական նշան (Exclamation Mark)

Դրվում է նախադասության վերջում՝ արտահայտելու ուժեղ հույզ, մեծ զայրույթ, զարմանք և այլն.

Get out of here and never come back!
What a wonderful surprise! she cried.

(,) Ստորակետ (Comma)

Անգլերենում կա ստորակետի գործածության միայն մի քանի հաստատուն կանոն: Ստորակետի գործածությունը կախված է ամբողջ նախադասության կամ նրա առանձին մասերի երկարությունից, գրողի կողմից որոշ բառեր շեշտելու ցանկությունից, այն բանից, թե ուրիշ ինչ կետադրական նշաններ կան նախադասությունում: Խորհուրդ է տրվում առանձին դեպքերում ստորակետ դնել միայն նախադասության իմաստը պարզ դարձնելու համար, այլապես նախընտրելի է այն չդնել: Անգլերենի կետադրությունը թույլ է տալիս այնպիսի դեպքեր, երբ ստորակետի գործածությունը հնարավոր է, սակայն ոչ պարտադիր: Հնարավոր է շատ երկար նախադասություն առանց ստորակետի:

Ստորակետը դրվում է.

1. Նախադասության համագոր առդամների միջև, երբ նրանք կապված չեն շաղկապներով.

Red, pink, yellow and white roses filled the huge vases.
My new car is fast, roomy and quite economical.
You could finish your homework, practise the piano and still come out.

2. Հետադաս բացահայտիչը առանձնացնելու համար.

The Glory, a British steamship, was to arrive on Monday.
Wilson, the police superintendent, took charge of the case.

3. Նախադասության առանձնակի առդամներն առանձնացնելու համար.

Defeated, the team left the field.
 Happy and contented, the child fell asleep.
 Before going out, he lit the fire.
 As always, there were people in the park.
 I sat against the rock, facing the mountains.

4. Բարդ համադասական նախադասության բաղադրիչները առանձնացնելու համար (հատկապես՝ երբ նրանք կապակցված են **but** շաղկապով)։

The wind had fallen, the sun broke through unexpectedly.
 He would like to go, but he is busy.
 We were coming to see you, but it rained.
 It's not cheap, but it's very good.
 Do as I say, or you will have to leave.
 My cousin has no talent for drawing, nor have his children.

5. Բարդ համադասական նախադասությունում **and** շաղկապից առաջ, երբ համադաս բաղադրիչների ենթակաները տարբեր են.

I opened the box, and Michael took out a cigar.
 We stood waiting for a long time in the rain, and the bus went past without stopping.

6. Բարդ համադասական նախադասության կազմում **besides, still, nevertheless, however** կապակցող մակբայներն առանձնացնելու համար.

It's too late to go for a walk now; besides, it's beginning to rain.
 He has treated you badly: still, he's your brother and you ought to help him.
 There was no news; nevertheless, she went on hoping.
 Its raining hard; however, I think we should go out.

7. Բարդ ստորադասական նախադասության պարագաերկրորդական նախադասություններն առանձնացնելու համար, եթե նրանք նախորդում են գլխավոր նախադասությանը.

When the sun is shining brightly above, the world seems a happier place.

However cold it is, she always goes swimming.

Since we have no money, we can't buy it.

If she telephones, let me know.

Պարագա երկրորդական մախադասությունները չեն առանձնացվում ստորակետով, եթե նրանք հաջորդում են գլխավոր մախադասությանը.

He finished school when he was sixteen.

You can stay here as long as you want.

I found my books where I had left them.

He will fail unless he works harder.

She will come if she has time.

Ստորակետով չի առանձնացվում մալ հետադաս խնդիր երկրորդական մախադասությունը.

I thought (that) he was joking.

She said (that) she was unwell.

I don't know where he lives.

I'll do what I say.

Ստորակետ կարող է դրվել, երբ խնդիր երկրորդական մախադասությունը մախորդում է գլխավոր մախադասությանը.

Why she had come to see them, nobody knew.

Երկրորդական մախադասությունները միշտ առանձնացվում են ստորակետով, եթե գլխավոր մախադասությունը, հաճախ մալ երկրորդական մախադասությունը, ունի բարդ կառուցվածք (բազմակի անդամներ, առանձնակի անդամներ և այլն).

She kept his copy-books, his drawings and compositions, and showed them about in her little circle, as if they were miracles of genius.

8. Նկարագրական որոշիչ երկրորդական նախադասությունից առաջ և հետո.

**Paris, which is so attractive in spring, is too hot in summer.
The children, who have their meals at school, are well fed.**

Սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասությունը չի առանձնացվում ստորակետներով.

**All the presents (that) he had given her were in their usual places.
The pen (which) I lost was a birthday present.**

9. Միջանկյալ և ներդրյալ բառակապակցությունները և նախադասություններն առանձնացնելու համար.

**To tell you the truth, I don't like that man.
In fact, I don't even know her name.
My brother, I can assure you, will not let you down.
Our team will win, that is certain.**

Միջանկյալ բառերի առանձնացումը ստորակետով պարտադիր չէ.

**Surely this wet weather won't last much longer!
You didn't want to hurt his feelings, surely!**

10. Կոչականներն առանձնացնելու համար.

**Joan, can you come here?
I do think, James, that you could work harder if you tried to.
Can you hold this piece of work for me, Joan?**

11. Չայնարկություններն առանձնացնելու համար.

**Well then, get on with your work.
Oh, so that's what you want.**

12. Նախադասությանը նախորդող **yes** և **no** բառերն առանձնացնելու համար.

Yes, we do agree with what you say.

No, it isn't Monday today.

13. Տրոհված հարց նախադասության հարց ներկայացնող մասն առանձնացնելու համար.

You can come tomorrow, can't you?

He won't help at all, will he?

(:) Կրկնակետ (Colon)

Կրկնակետը դրվում է՝

1. Այն նախադասությունից հետո, որին հաջորդում է որևէ բացատրություն, մեկնաբանություն.

The garden had been neglected for a long time: it was overgrown and full of weeds.

2. Երկար ցանկից, թվարկումից առաջ.

My sister finds all school subjects easy: French, history, maths, everything.

(;) Միջակետ (Semicolon)

Միջակետը դրվում է՝

1. Մտքով սերտ ամբողջություն կազմող, սակայն ինչ-որ չափով ինքնուրույնություն ունեցող նախադասությունների միջև.

We entered the hall; lights blazed in every corner; the festival had begun.

2. Ստորակետի փոխարեն այն նախադասություններում, որտեղ արդեն կան ստորակետներ.

There are two facts to consider: first, the weather; second, the expense.

(—) Անջատման գիծ (Dash)

Անջատման գիծը դրվում է՝

1. Կրկնակետի և միջակետի փոխարեն՝ գրավոր խոսքը ավելի կենդանի կամ դրամատիկ դարձնելու համար.

Sirens blared, men shouted, and people crowded in to witness the scene — it was chaos.

So you've been lying to me for years and years — how can I ever trust you again?

2. Ավելի վառ կամ դրամատիկ կերպով ներկայացնելու լրացուցիչ տեղեկություն, հետևություն կամ մեկնաբանություն.

Schooldays are the happiest days of our lives — or so we are told. Susan had left all the lights on — another example of her carelessness.

3. խոսքում դադար կամ ընդմիջում նշելու համար.

It was — it was — I can't — it was a horrible, slimy thing with a massive tail.

Այս դեպքում կարող է գործածվել նաև բազմակետ (there dots).

The report said, 'All shops ... should stay open ... until six o'clock.'

() Փակագծեր (Brackets)

Փակագծերի մեջ են առնվում այն միջանկյալ և ներդրյալ բառերը, բառակապակցություններն ու նախադասությունները, որոնք կարող են տրոհվել նախադասության մյուս անդամներից՝ արտահայտելով լրացուցիչ տեղեկություն, դիտողություն, նշելով հեղինակի վերաբերմունքը հաղորդված փաստի նկատմամբ, ինչպես նաև հաղորդման աղբյուրը:

Schools (**so we are told**) are the happiest days of our lives.
He said he'd never seen the sea before (**but I think he was joking**).

Yesterday I saw a revival of Dangerous Corner (**do you like Priestly?**) on television.

(' ') Չակերտներ (Quotation Marks կամ Inverted Commas)

Բրիտանական անգլերենում չակերտները սովորաբար մեկական են՝ 'Fire!', ամերիկյան անգլերենում՝ զույգ՝ "Fire!": Անգլերենում չակերտները դրվում են տողից վերև:

Չակերտները դրվում են՝

1. Ուրիշի առանձին բառեր կամ արտահայտություններ առանձնացնելու, ինչպես նաև որևէ բառի վրա ուշադրություն հրավիրելու համար.

He called himself a 'gentleman' but you would never have thought so from the way he behaved.

I could not understand what the waiter meant by 'vitello'. I think it is an Italian word, isn't it?

My daughter says her flat is 'unfit for a dog to live in'.

'Progress' in the twentieth century means more noise, more smoke, and great expense for everyone.

Երբ չակերտների մեջ առնված նախադասությունում անհրաժեշտ են նոր չակերտներ, բրիտանական անգլերենում նախ դրվում են մեկական չակերտներ, ապա՝ զույգ.

'I think the greatest of Shakespeare's plays is "King Lear."'
'Have you read "Faster Reading"?'

Ամերիկյան անգլերենում հակառակն է՝

"I think the greatest of Shakespeare's plays is 'King Lear.'"
"Have you read 'Faster Reading'?"

2. Ուրիշի ուղղակի խոսքը ներկայացնելու համար.

'I now have a new camera,' Michael said.

Ուրիշի ուղղակի խոսքի կետադրությունը

Անգլերենում ուրիշի ուղղակի խոսքի վերջակետը կամ ստորակետը դրվում է չակերտներից ներս, հայերենում՝ չակերտներից դուրս: Անգլերենում ուրիշի ուղղակի խոսքից առաջ և հետո անջատման գիծ չի դրվում.

He said, 'You have no right to blame me.'

Նա ասաց. «Դուք իրավունք չունեք ինձ նախատելու»:

'You,' he said, 'have no right to blame me.'

— Դուք, — ասաց նա, — իրավունք չունեք ինձ նախատելու:

'You have no right to blame me,' he said

— Դուք իրավունք չունեք նախատելու ինձ, — ասաց նա:

Մեջբերումների կետադրությունը

Մեջբերումն անջատվում է ներմուծող նախադասությունից կրկնակետով և առնվում է չակերտների մեջ.

It was Disraeli who said: 'Little things affect little minds.'

Անավարտ մեջբերումից հետո դրվում է քաղմակետ.

'A little learning is a dangerous thing ...' I can never remember the next line.

ՏՈՂԱԴԱՐԶ (WORD DIVISION)

Անգլերենը պահանջում է զգուշություն տողադարձի դեպքում: Խորհուրդ է տրվում խուսափել տողադարձից հատկապես ձեռագրում: Եթե դա հնարավոր չէ, նկատի է առնվում բառի ձևաբանական կառուցվածքը: Պարզ հիմքային բառերը կարելի է տողադարձ անել, եթե նրանք ունեն մեկից ավելի վանկեր, օրինակ՝ tem - pest, cus - tom և այլն: Ածանցյալ բառերի դեպքում հնարավոր է տողադարձ անել ածանցը՝ worth - less, սո - happy և այլն: Բարդ բառերի դեպքում խորհուրդ է տրվում տողադարձ անել առանձին հիմքերը՝ a draw - back, to white - wash, time - tested և այլն: Կրկնակ բաղաձայնները միշտ տրոհվում են տողադարձի դեպքում՝ stam - mer, pat - tern, but - ter և այլն: **Ch, sh, th, gh** տառակապակցությունները երբեք չեն տրոհվում: Խորհուրդ է տրվում տողադարձ չանել, երբ տողադարձը կարող է խախտել բառի արտասանությունը. սխալ կլինի տողադարձ անել city, pity, riding բառերը:

Վերը նշված կանոնները երբեմն խախտվում են տպագիր տեքստում: Ձեռագրում դրանք պետք է պահպանվեն:

Հավելված 1

Անկանոն բայեր

Infinitive	Past Indefinite	Participle II
abide	abode, abided	abode, abided
arise	arose	arisen
awake	awoke	awaked, awoken
be	was, were	been
bear	bore	boren
beat	beat	beaten
become	became	become
befall	befell	befallen
begin	began	begun
behold	beheld	beheld
bend	bent	bent
bereave	bereaved, bereft	bereaved, bereft
beseech	besoght	besought
beset	beset	beset
bet	bet, betted	bet, betted
bid	bade, bid	bidden, bid
bind	bound	bound
bite	bit	bitten, bit
bleed	bled	bled
blend	blended, blent	blended, blent
bless	blessed, blest	blessed, blest
blow	blew	blown
break	broke	broken
breed	bred	bred
bring	brought	brought
broadcast	{ broadcast, broadcasted	{ broadcast, broadcasted
build	built	built
burn	burnt, burned	burnt, burned
burst	burst	burst
buy	bought	bought

Infinitive	Past Indefinite	Participle II
cast	cast	cast
catch	caught	caught
choose	chose	chosen
cling	clung	clung
clothe	clothed, clad	clothed, clad
come	came	come
cost	cost	cost
creep	crept	crept
crow	crowed, crew	crowed
cut	cut	cut
dare	dared, durst	dared
deal	dealt	dealt
dig	dug	dug
do	did	done
draw	draw	drawn
dream	dreamt, dreamed	dreamt, dreamed
drink	drank	drunk
drive	drove	driven
dwell	dwelt	dwelt
eat	ate	eaten
fall	fell	fallen
feed	fed	fed
feel	felt	felt
fight	fought	fought
find	found	found
flee	fled	fled
fling	flung	flung
fly	flew	flown
forbid	forbade, forbad	forbidden
foresee	foresaw	foreseen
foretell	foretold	foretold
forget	forgot	forgotten
forgive	forgave	forgiven
forsake	forsook	forsaken
freeze	froze	frozen

Infinitive	Past Indefinite	Participle II
get	got	got, gotten
give	gave	given
go	went	gone
grind	ground	ground
grow	grew	grown
hang	hung, hanged	hung, hanged
have	had	had
hear	heard	heard
hide	hid	hidden
hit	hit	hit
hold	held	held
hurt	hurt	hurt
keep	kept	kept
kneel	knelt	knelt
knit	knitted, knit	knitted, knit
know	knew	known
lay	laid	laid
lead	led	led
lean	leant, leaned	leant, leaned
leap	leapt, leaped	leapt, leaped
learn	learnt, learned	learnt, learned
leave	left	left
lend	lent	lent
let	let	let
lie	lay	lain
light	lit, lighted	lit, lighted
lose	lost	lost
make	made	made
mean	meant	meant
meet	met	met
melt	melted	melted, molten
mislead	misled	misled
misspell	misspelt	misspelt
mistake	mistook	mistaken

Infinitive	Past Indefinite	Participle II
misunderstand	misunderstood	misunderstood
mow	mowed	mown, mowed
outdo	outdid	outdone
outgrow	outgrew	outgrown
overcast	overcast	overcast
overcome	overcame	overcome
overdo	overdid	overdone
overhear	overheard	overheard
overrun	overran	overrun
oversee	oversaw	overseen
oversleep	overslept	overslept
overtake	overtook	overtaken
partake	partook	partaken
pay	paid	paid
prove	proved	proved, proven
put	put	put
quit	quitted, quit	quitted, quit
read [ri:d]	read [red]	read [red]
rend	rent	rent
rapay	repaid	repaid
retell	retold	retold
rewrite	rewrote	rewritten
rid	rid, rided	rid, rided
ride	rode	ridden
ring	rang	rung
rise	rose	risen
run	ran	run
say	said	said
see	saw	seen
seek	sought	sought
sell	sold	sold
send	sent	sent
set	set	set
sew	sewed	sewn, sewed
shake	shook	shaken

Infinitive	Past Indefinite	Participle II
shave	shaved	shaved, shaven
shed	shed	shed
shine	shone [ʃɒn]	shone [ʃɒn]
shoot	shot	shot
show	showed	shown, showed
shrink	shrank, shrunk	shrunk, shrunken
shut	shut	shut
sing	sang	sung
sink	sank	sunk, sunken
sit	sat	sat
slay	slew	slain
sleep	slept	slept
slide	slid	slid
smell	smelt, smelled	smelt, smelled
smite	smote	smitten
sow	sowed	sown, sowed
speak	spoke	spoken
speed	sped, speeded	sped, speeded
spell	spelt, spelled	spelt, spelled
spend	spent	spent
spill	spilt, spilled	spilt, spilled
spin	spun, span	spun
spit	spat	spat
split	split	split
spoil	spoilt, spoiled	spoilt, spoiled
spread	spread	spread
spring	sprang	sprung
stand	stood	stood
steal	stole	stolen
stick	stuck	stuck
sting	stung	stung
stink	stank, stunk	stunk
strew	strewed	strewn, strewed
stride	strode	stridden

Infinitive	Past Indefinite	Participle II
strike	struck	struck, stricken
string	strung	strung
strive	strove	striven
swear	swore	sworn
sweep	swept	swept
swell	swelled	swollen, swelled
swim	swam	swum
swing	swung	swung
take	took	taken
teach	taught	taught
tear	tore	torn
tell	told	told
think	thought	thought
thrive	throve, thrived	thriven, thrived
throw	threw	thrown
thrust	thrust	thrust
tread	trod	trodden, trod
unbend	unbent	unbent
unbing	unbound	unbound
undergo	underwent	undergone
understand	understood	understood
undertake	undertook	undertaken
undo	undid	undone
upset	upset	upset
wake	woke, woked	woken, waked
wear	wore	worn
weave	wove	woven
weep	wept	wept
win	won	won
wind	wound	wound
withdraw	withdrew	withdrawn
withhold	withheld	withheld
withstand	withstood	withstood
wring	wrung	wrung
write	wrote	written

Հավելված 2
Անգլերենի բայի կերպաժամանակային ձևերի աղյուսակ
Active

	Present		Past			Future		Future-in the-Past				
Indefinite	ask		asked			shall/will will		}	+ ask	should/would would	}	+ ask
	asks											
Continuous	am	}	+ asking	}	+ asking	shall/will be will be		}	+ asking	should/would be would be	}	+ asking
	is are											
Perfect	have	}	+ asked	}	had + asked	shall/will have will have		}	+ asked	should/would have would have	}	+ asked
	has											
Perfect Continuous	hav been	}	+ asking	}	had been + asking	shall/will have been will have been		}	+ asking	would have been would have been	}	+ asking
	has been											

Passive

Indefinite	am is are	+ asked }	was were	+ asked }	shall/will be will be	+ asked }	should/would be would be	+ asked }
Continuous	am being is being are being	+ asked }	was being were being	+ asked }			—	
Perfect	have been has been	+ asked }	had been + asked	+ asked	shall/will have been will have been	+ asked }	should/would have been would have been	+ asked }
Perfect Continuous	—	—	—	—	—	—	—	—

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Akhmanova O.S. (Ed) The Morphology of the English Verb - M. 1975.
- Allen S.W. Living English Structure - Longman, 1977
- Blokh M.Y. A Course in Theoretical English Grammar - M., 1983.
- Burrows Arthur. Grammar Exercises - Vermont, 1985.
- Close R.A. A Reference Grammar for Students of English - M. 1979.
- Gordon E.M., Krylova I.P. A Grammar of Present-Day English - M., 1986.
- Gordon I. Practical Punctuation - London - Moscow, 1981.
- Ilyish B.A. The Structure of Modern English - L., 1975.
- Kobrina N.A., Komeyeva E.A. An Outline of Modern English Syntax - M., 1965.
- Quirk Randolph, Greenbaum Sidney. A University Grammar of English - Longman, 1973.
- Quirk Randolph with Supplements by Gimson A.C. & Warburg J. The Use of English - G.B., 1973.
- Strang B. Modern English Structure - London, 1962.
- Swan Michael. Practical English Usage - Oxford, 1984.
- Taylor Grant. Learning American English - USA, 1956.
- Thomson A.J. and Martinet A.V. A Practical English Grammar - Oxford, 1980.
- Hornby A.S. Oxford Advanced Learner's Dictionary of Current English - Oxford, 1980.
- Longman Dictionary of Contemporary English - G.B., 1978.
- Аракин В.Д. Сравнительная типология английского и русского языков - Л., 1979.
- Бармина Ж.А., Бирштейн Б.И. и др. Сборник упражнений по синтаксису сложного предложения в английском языке - М., 1973.
- Бархударов Л.С. Структура простого предложения современного английского языка - М., 1966.
- Бархударов Л.С., Шмелин Д.А. Грамматика английского языка - М., 1973.
- Иванова И.П., Бурлакова В.В., Почепцов Г.Г. Теоретическая грамматика современного английского языка - М., 1981.
- Каушанская В.Л., Ковнер Р.Л. и др. Грамматика английского языка - Л., 1963.
- Кобрина Н.А., Малаховский Л.В. Английская пунктуация - М., 1961.
- Смирницкий А.И. Морфология английского языка - М., 1959.
- Смирницкий А.И. Синтаксис английского языка - М., 1957.
- Фролова Т.В. Грамматика английского языка - М., 1961.
- Աղայան Է., Բարսեղյան Հ. Հայոց լեզու - Ե., 1971.
- Ասատրյան Մ.Ե. Ժամանակակից հայոց լեզու - Ե., 1984.
- Բաղիկյան Խ.Գ. Ժամանակակից հայոց լեզվի շարահատությունը և նրա ուսուցումը - Ե., 1984.
- Գարեգինյան Գ.Լ. Ժամանակակից հայոց լեզու - Ե., 1984.
- Իշխանյան Ռ.Ի. Արդի հայերենի շարահյուսություն - Ե., 1986.

Խմբագիր՝	Ռ.Աղայան
Տեխնիկական խմբագիր՝	Հ.Մելքոնյան
Սրբագրիչներ՝	Է.Սեդրակյան
	Ա.Աթանեսյան

Շարվածքը՝ «Փյունիկ» հրատարակչատան
համակարգչային ծառայության

ԳՄԴ 81.2 Անգլ-2
Թ 844

4602020102
Թ _____
780 (01) - 95

ԳՄԴ 81.2 Անգլ-2

ISBN b-8079-0931-3

© «Փյունիկ» հրատարակչատուն, 1995

Տպագրված է Հրատգործվարչության
էրտաշատի շրջանային տպարանում